



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. ԱՐԴՅՈՒՆ

ՑԵՍՏԻՆԻ

Լեն
1834







1998

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՓՈՔԻ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅԱ

II


ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՓՈՔՔ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅՍ

I

Հ.

ՄԻԼԹԱՐԵԱՆ Վ. Ա. Բ. Պ. Ա. Պ Ե Տ Ի



ՎԵՆԵՑԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑԵ Պ. Ա. Զ. Ա. Պ Ո Ւ

1864-ԱՅԺ

新嘉坡中華書局印

新嘉坡中華書局印

新嘉坡中華書局印

新嘉坡中華書局印

28 1840

41834-60

新嘉坡中華書局印

新嘉坡中華書局印

新嘉坡中華書局印

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Փ

Վասն իրկիք իրկիք պատճառաց ցարդ անտպագիր մնացեալ ուղևորութիւնս
այս՝ սկսեալ է յամի Տետրոն 1843 և աւարտեալ յամին 1853: Ի տասնամեայ
շրջադայութեանն իւրում՝ հեղինակն սկիզբն ընթացից արարեալ յարեմտեան
ծագաց փոքրոն Ասից, 'ի Զմիւռնից, խաղացեալ է յարեելս ընդ փոքր և ընդ
Մեծ Հայս մինչև ցԱրպատական, 'ի սահմանակցութիւն բաժնի Պարսից և
Օսմանեանց, ընդ եօթնեւտասն աստիճանս աշխարհագրական երկայնութեան.
Խակ ընդ լայնութիւն չորից աշտիճանաց որ ընդ մէջ Ամեայ և Ցիկեաց. և բա-
զում անդամ դարձ 'ի դարձ կրկնութիւն ճանապարհին ընդ կողմանս կողմանս,
յերկարելով զմդոնաչափին՝ ընդ նմին հարկաւ բազմապատիկ զանազանէր և
զտեսալանսն և զդէսս ճանապարհորդութեանն՝ յաշխարհս և 'ի դաւառս այն-
պիսիս, որք ոչ միայն հայրենիք մեր գոլով՝ հետաքննագոյնք և անձկալիք են մեղ,
այլ և նորաձեւ և սակաւածանօթ բնական հանդամնօք երկրին և բնակչայն այլ-
ազգեաց և մերազնէից: Բայց հեղինակիս ուշ՝ եղեալ զկրկնութիւն ճանապար-
հին և զժամանակի՝ ծախել առաւելապէս 'ի ճշգութիւն նկարագրութեան շի-
նից և մանաւանդ հնացեալ աւերակացն, և 'ի հաւատարիմ ընդօրինակութիւն
արձանաց և յիշաստակաց՝ որք 'ի քարինս և որք 'ի պրակս գրոց, ոչ հաճայ թուե-
ցաւ աւանդել զդէսս անցից ուղևորութեանն՝ ըստ օրինակի շատաշրջիկ և շատա-
խօսիկ Եւրոպէացւոց ոմնանց, որք յաճախ թուին իմն յիշեցուցանել զշնորհուկան՝
զր այցելութեամբ իւրեանց արարին պատկառելի մնացորդացն հնութեան:

Արդ. զոր կէտ նպատակի եղեալ էր խը՝ զնոյն հաստացանէ այժմ՝ ուղեռս մեր՝ թափանձողաց և փափագողաց հայրենական հնութեանց և յիշատակաց, հակիրճ և հոծ տեղագրութեամբ, զբաղսմ՝ ցարդ անծանօթ մնացեալս և զնե ևս յայլոց նշանակեալ չէնս և արձանս՝ գաղափարեալ մոռադիւր ջանիւ և խնա մով. յորոց ոմանք առ հնութեան և խանդարման մերճ իսկ էին յանհետանալ, և ոմանք անհետացեալ խակ իցեն կամ կործանեակք՝ յընթացս յետին քան ամայ՝ յորմէ սկսաւ սորայս ուղեռութիւն։ Բայց զիսաւոր շնից և քաղաքաց զարդիս բարդաւաճելոց՝ ճոխագոյն են նկարագիրը և տեղեկութիւնք ներկայիս։ Նշանաւոր շինուածոց, և յաէտ եկեղեցեաց, ոչ միայն արձանքն գրաւորը, այլ և յատափիծք լսկ՝ այլ ճիշդ չափով ընծային, և պատկերը շնից կամ տեղեաց ու մանց ՚ի փոքրն Աստիա, ուր յանդեցաւն գտանել ձեռն պատկերահամ։

Մեծաւ խնամով և հաւատարմութեամբ գաղափարեալ են և այլալեզու արձանագիրք ոմանք, յոյն, արարիկ կամ թուրք և մանսաւանդ վրացիք, որքան ներեր անծանօթի նոցին ճշգրտել զափան. յորոց մասն ինչ ջանամք ըստ նոյն գաղափարաց վիմագրել, դիմոնց և հմտից լեզուացն թողեալ զստոգելն և ըղմացեալսն։ Խակ զմերայ լեզուիս հայկական արձանս՝ հրատարակեմք մերովք մերովայտեան տառիւք՝ անփոփոխ պահելով դշանդամանս ուղղագրութեան նոյնն, և զսխալ և զմերիւ, Եթէ հետաքննիք և սիրովք այսպիսեաց հայրենի յիշատակաց՝ փորձիցեն բաղդատառել զբնթերցուած արձանացն ընդ այլոց նախ քան դայս հրատարակելոց յուղեռութիւնս վարդապետաց ոմանց մերազնէից, կամ յօրագիրս և ՚ի թարգմանութիւնս Եւրոպէացոց հայագիտաց, առցեն քաջիկ զչափ ընտրութեան սոյին, և բազում անիմանալիք յայլն՝ սոքօք պարզեցցին։

Թէպէտ և գրեա թէ ընդ համօրէն երկայնութիւն չայատանեայց էանց ուղեռս մեր, այլ ոչ եթէ ընդ բովանդակ աշխարհն շրջեցաւ. յոր սակս ոչ միայն երկարադպյն ժամանակի պէտք էին, այլ և այլոց ինչ իրաց որք գիւրեն զճանապարհն և յերկարեն զժամանակին։ Արդ աշխարհք կամ նահանդք յորս շատ կամ սակաւ շրջադպյեցաւ՝ են, նախ արտաքց մերոց սահմանաց, ըստ մասնէ՝ Լիւդիա, Բիւթանիա, Գաղպատիա, Պափուղանիա, Փոնտոս, Խաղողիք, Ա. և Բ. Հայք, Պոյզն մասսմէ Երրորդին և Եփրատացոց, Դ Հայք, Բարձր Հայք, Տայք, Գուգարք, Ալրարատ, Վասպուրական, Տարօն, Ալճնիք. յորս ուրեք ուրեք հանեալ է և Պաշխարհացոյց կամ զինագիծ գաւառաց, զոր օրինակ զԱկերաստիոյ, զիարնոյ, Բաբերդայ, Թորթումայ, Շիրակայ, Պոլրաս ծալուն վանայ, և այլն, որպէս տեսային յընթացս գործոյս տախտակք տեղեացն՝ նշանակաւ անուանց, առանց պատկերակերպ ձեւագրութեան մերանց և գետոց։

Արդ զվատակս զայս տանամեայ քրտանց և ոչ սակաւ տառապանայ, որոց փորձ են ճանապարհորդք այնպիսի տեղեաց, ընծայելով ՚ի վայելս մերոց հայրենասիրաց և օտարաց աշխարհաքննաց, մինչ ակն ունիմք ներողամիտ հաճութեան նոցին ընդ չափաւորութիւն գործոյս, յօժարակամ սիրով և փութով և

մեր՝ ուղևոր և հրատարակող Եղբարք, փափագեմք լու 'ի լու ամենայն ընթերցանելեաց և ծանօթից հրապարակել զնորհակալիս երախտեաց և օդնականութեան՝ ամենայն քաղաքացեաց և շինականաց և վանականաց՝ որք մարդասիրապէս ասպնջական և ձեռնտու եղեն հեղինակիս 'ի տարագէմ և յանծանօթկողմանսն, զանուանս նոցին առաւել քան 'ի քարտէն՝ գրոշմեալ 'ի սրտի. յորմէ սրտէ և ներողութիւն այնոցիկ՝ որք զիարդ և է հանդիպութեամք խափանինչ եղեն յերկարագոյն և մանրագոյն խուզարկութեանց նորին 'ի ցանկալի շէնս և աւերակո, և 'ի համօրէն նիշ և նշխար մերոց հրաշաղարդ հայրենեաց . թողլով զժերին նոու բարերաստիցն քան զմեղ :

Ե ՓՈՔՐ ԵՒ Ե ՄԵԾ ՀԱՅԱ

ՓՈՔՐ ԱՍԻԱ

ԶՄԻՒԽԵՆԻԱ

ՆՈՅՆ ԵՒ ՏԵՍԻԼ ԶՄԻՒԽԵՆԻԱՅ Ի ԵՐԱՎԵ : — Խորչն կամ ծոցն Զմիւռնիոյ¹ բերանացեալ՝ ի յոնիականն ծով՝ ընդգէմ՝ հիւսիսոյ, յարևմտեան ծայր շրթանցն ունի զգարապուռաւն հրուանդան, կելչնէ նախնեաց, և ձգի ընդ հարաւ մինչև ի կողմանս վառլայի, ուրանօր հինն կազոմնենէ. և ապա ընդ արեւելս՝ մինչև ի քաղաքն մեծ ՚ի Զմիւռնիա. յորմէ գառնաց ընդ արեւմուս, և անափ ՚ի հիւսիս, մինչև ՚ի հրուանդանն ֆոկէայ, որ է յարևելսան եզր ծոցցն հանդէպ կելչնեայ: Բացյայլոց մանր գետոց ընդունի ծովածոցն զգետն մեծ չերմոս² թէտիզ չայ կոչեցեալ՝ ՚ի հիւսիսոյ կողմանէ. և ծովեղերք այդք կողման հարուստ մի տարածութեամբ յարեւելս կոյս մինչև ցՄԻԱԿԱՆԻ իսկելէսի չեն նաւարկելիք սակա ծանծաղութեան ջրոյն. նմին իրի անհմուտ զեկավարացն հանդիպի երբեմն յաւաղուտ իրել զնաւն յանցանելն առ Աւելագ գաղէսի կամ Ենի գալէ ասացեալ ամրոցաւ, ընդ որ անձկագոյն է նաւարկելիք վայրն քան զայլ տեղեաց: Խոկ խորչն շրջապատեալ է ՚ի լեռանց, յորոց բարձրագոյնքն են իքէ-գարտաշ-րար յարևմտից կուսէ, և ՚ի հիւսիսոյ Եւմանլար? Անցեալ ընդ Ենի գալէ, որ ՚ի հարաւ կուսէ երկայնեալ ձգի ՚ի խորչն, և հասեալ ՚ի նաւահանդիսան, հանդիպակաց մինի քաղաքն ամենայն ծայր ՚ի ծայր. որոց գերք բոլորանիստ ՚ի հարաւոյ երկայնեալ ձգին ՚ի հիւսիս սրածայլ աւարտեալ մինչև ՚ի Ցառաղաճ ուր հողմաղացն է: Ցաղակողմն քաղաքին է թալն ֆառնիաց կոչեցեալ, ուր և ընակարանք հիւսպատուսացն են առ ծովեղերն. և ՚ի ձախմէ ՚ի ծայր քաղաքին զինուուրանցն մեծաստարած և նորաշէն, և առ նովաս գերեզմանոց Հրէից ՚ի ըրբի, և բարձրարերձ նոճիքն խիստ առ խիստ ՚ի գերեզմանոցին Ցաճկաց ոչ շատ հեռի ՚ի միւսոյն. խոկ ՚ի միջոց վայրի են շակայքն, իջևանք, պեղևոքէնք. և ՚ի թիկանց նոցին այլ թաղք իւրաքանչիւր աղգաց. յորոց Ցաճկացն և Հրէիցն ՚ի ստորոտէ Պագոս լերինն սկսեալ, ձգին ՚ի վեր կոյս, տեսարան գեղեցիկ գործեալ նատուածով տանցն՝ որ ՚ի բացուստ աստիճանաձև երեւն մի զմիոլ ելմելիքն. և ՚ի գագաթ լերինն ամրոցն Խայտէքի կոչեցեալ:

1. Σμυρναίων καλπος. Σμυρναῖς σίνους.

2. Յորմէ և Երժան ծոց կոչեցաւ. Եզրակաց հալուս. որուէս և Մէլքոն ծոց՝ վասն՝ Մէլքոն վասակի ՚ի նու թափելցու:

ԱՍՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՂՋՔԻՆ : — Զմիւռնիա ՚ի նախնի գալրուց անտի մեծահամբաւ ՚ի ծովեղերեսյ քաղաքս փոքրոն Ասիոյ վաճառականութեամբն և խուռնընթաց բազմութեամբ արևելեան և արևելուեան ազդաց, անշաք է շինուածովքն, ¹ և ոչ վսեմ պարզութեամբ . և փողոցն մեծաւ մասամբ անձուկք են և անկանոնք . և անհարթ յատակօք, նմին իրի և յանձրեացին աւուրս կարի տղմաշաղախ լինին . և եթէ յանձկադյոնս ՚ի փողոցաց դեմքնդդէմ հանդիպեացին կարաւանք ուղղուց՝ որ անմիւն են անդ ՚ի բազմութենէ, և բեռնակիր իշոց՝ որոց սապատք բեռանցն երկրուստեք դրեթէ յորմանն փողոցացն հասաննեն, հարկ է հանդիպակաց կարաւանին դառնալ յետս և կամ բնդ կողմնակի փողոցն անցանել, եթէ հնար իցէ . և վայ եթէ ՚ի խուան անդ շփոթիցն հանդիպեացին և բեռնակիրք փայտի և երկաթոյ և այլոց : Անշաք են ձեռ ատանցն հասաննեն, այլ նորոցն վայերւչք զոր և քարակերսս յօրինեն, գրեա թէ առ հասարակ կրկնացարկս : Փայտաշէն պատշգամբ տանց անձուկ փողոցացն այնքան մօտ են առ միմեանս՝ մինչեւ հնար է դիւրութեամբ անցանել ՚ի պատուհանէ առ պատուհան . և ընդ երդոս տանց սովորութիւն է ունել գրեթէ ամենեցոն բացօթեայ փայտաշէն ճեմելիս, յորս են և ամրաշէնք քարուկիր յատակօք և կողմնամիք : Այլ տանցն քան զամենացն ինչ գեղեցիկ են բակքն սալայտակք, մանաւանդ մեծամեծացն՝ որ կճապատ են, և որեք մետս և սպիտակ մանր խճովք յատակեառք, ձեւ գունովքն ձեւացուցեալ զամազանս . և մանր խիճքս այսոքիկ գան ՚ի բիոս (Սագրդ) կղզւյ : Առատութիւն է ջրոց ՚ի քաղաքին աղբերաց և ջրհորոց, և ՚ի բազումն ՚ի տանցն փողորակօք անցուցեալ զուրին՝ աղբիւրս յօրինեալ են . համբաւեալ է ջուրին ժատուշեան սույուշ ասոցեալ ՚ի թաղին ֆուանկաց, մինչեւ յառակս լինել թէ որ միանդամ զայդ ջուր լրմակէ, գժուարաւ մեկնի ՚ի քաղաքէն :

ՀԱՍՏՐԱՎԱԾ ՇԽՈՒԱՆԵՐ ՔԱՂՋՔԻՆ . ԵԿԵՂԵՑԻՎ ԵՒ ԴՊՐՈՅՔ : — ՚ի հասարակաց շինուածոց քաղաքին երկեղիք են մեծ թշնանն վեզիր խան, պէզէստենք դմբեթայրիք և բազմնէք, որ յաւերախաց հնոյն Զմիւռնից ասին շինեալ . խակ շէնք կրպակաց բովանդակ շոււկայիցն փայտաշէնք են և անշաք : Երկեղի են և մժերանոցն վաճառականաց և բազմաթիւք, մեծաւ մասամբ նորաշէնք և ՚ի թազի անդ ֆուանկաց : Մի միայն գործարան է ծաղկէնկար տպեալ կտաւոց, և է ՚ի ձեռս չայսոց . են ՚ի նմա աշխատաւորք իրիք չորեքհարիւր : Եւ միւս ևս գործարան հասարակ անօթոյ :

Երեք եկեղեցիք են Լատինացւոց հանդերձ վանորէինք ՚ի նոսին . և են ՚ի թազին ֆուանկաց մօտ առ միմեանս . առաջինն՝ Աստուածածին ՚ի ձեռս ֆրանչիսկեանց, յորում է և եպիսկոպոսարանն . երկրորդն Սուրբ Պողիկարպոս ՚ի ձեռս քարուշնաց . խակ երրորդն Սիրտ Յիսուսի ՚ի ձեռս Լազարեանց . ժողովրդապետութիւնն է ՚ի ձեռս երկոց առաջնոցն և աշխարհական քահանայից . և պաշտպանեալ են առաջինն յաւարիական հիւլատոսէն, երկրորդն և երրորդն ՚ի գաղղիականէն : Առ Լազարեանս է գպրոց յորում ուսանին մանկունք ձրի զսկզբանս կարևոր ուսմանց ՚ի գաղղիական լեզու, և են թուով աւելի քան զե-

1. Արգէս նշանակեցաւ ՚ի յառաջաբանիդք՝ քսան խութիւն գործեցին և ՚ի նմա . զնոյն է իմանալ և անաւ յառաջ զրեալ է նկարագիր քաղաքիս, յետ զայլոց քաղաքաց :

րեքհարիւր : Ի կարգէ նոցա են գաղղիացի կուսանկըն Քոզք դիմովեան անուա-
նեաք, թէպէտ և ժուռով սակաւք, այլ արդինք նոցա մեծ . զի է նոցա գպրոց
մեծ և վայելուչ յայլ և այլ սենեակս բաժանեալ, յորս աղջկոնք երր չորեքհա-
րիւր կրթին ՚ի նոցանէ յասուուածպաշտութիւն՝ ձրի, հանդերձ ստորին դասո-
ուսմամբ ՚ի բարբառ գաղղիացի, ուսանին ասդէնկար գործել բեհեղս սոկեթել
նկարուք . անխատիր յամենայն ազգաց ընդունին կուսանկըս սցագքիկ աղջը-
կունս, նմին իրի և առ հասարակ յամենայն տունն յորոց աղջկունք կրթեալ են
առ նոսա, տարածեալ է խօսել և գաղղիարէն : Սպասաւորեն նորա և հիւան-
դաց՝ երթեալ ՚ի տունս նոցա, ոչ խարելով ոչ զջաճիկ և ոչ զջրեայ, այլ ա-
մենեցուն ձրի աշխատին . և եթէ տնանկ որ իցէ հիւանդն, դրամովք ևս լուն
զկարուութիւն նորա . նմին իրի և պատկառելիք են տուաջի ամենայն ազգաց :
Խակ թոշակ նոցա որպէս և լազարեան կրօնաւորացն մասակարարի ՚ի գաղղիոյ :
Ե և այլ գպրոց մեծ և վայելուչ Քոյէն Բրորականուայի ասացեալ, ընդ իշխա-
նութեամբ լսափն եպիսկոպոսին . յորում թոշակաւոր մանկունք աւելի քան
զհարիւր ՚ի քաղաքէն և ՚ի շրջակայ սահմանաց՝ ուսանին գաղղիարէն և անդիսա-
քէն լեզու . գպրոցս այս հասուատեցաւ ամօք յառաջ ՚ի Գմհամի եպիսկո-
պոսէն :

Յեկեղեցիս Յունաց երեւելիք են, Այի Տիմիորի՝ նորաշէն և վառաւոր, և Ջօ-
դինի, ուր և առաջնորդարանն է նոցա : Եկեղեցին Հայոց շինեալ յանուն որբոյն
Ստեփանոսի Նախավլային, անշուք է . որպէս և առաջնորդարանն . գերեղմա-
նոցն զեկեղեցեաւն է, ուր կան և սասպանք նահասակաց ումանց նորոց, և երկու
ևս գերեզմանք՝ յորոց վերայ երեխն բարձրաքանդակ պատկերք մնացորդք հին շի-
նուածոց քաղաքին ՚ի ժամանակս հեթանոսութեան : Ե և այլ եկեղեցի յանուն
Ս . Լուսաշորիլիս ՚ի հիւանդանոցի Հայոց, փոքր այլ վայելուչ : Մեսրոպեան վար-
ժարանն Հայոց որմակից եկեղեցւոյ Նախավլային, կրինայարիկ. վերին յարկն զատ
՚ի մեծի սրահէն, ՚ի զանազան սենեակս բաժանեալ է երկուստեք, վասն վարժա-
պետաց այլ և այլ լեզուաց . և գրաստուն՝ ՚ի նման փոքրիկ, յորում և հաւաքմունք ու-
սումնական գործեաց . ՚ի թիկանց գպրոցին պարտէզ փոքր և առ գրամին աղ-
րիւր : Գալրոցս թէպէտ ըստ արտապնոյն պարզ և փոքր, այլ ներքին բարեկար-
դութեամբ զարդացեալ ՚ի ձեռն ջանասէր գաստիարակաց, որոց փոյթ մեծ է
կանոնաւոր ընթացիւք դիւրին և սիրելի ընծայել համբակաց զուսումն : Առ այս
մեծարքս սաստար լինի Անինեաց ընկերութիւնն որ ՚ի սակաւ ամանց հետէ հաս-
տասեալ՝ գուն գործէ յառաջադէմ զարդացման ազգին . միարանեալ նախ
սակաւոց ոմանց՝ յարեցին յինքեանս հետզետէ զայնոսովիկ որպ աղասամիտ
խորհրդով զերծք էին ՚ի կանխակալ սոլորութեանց հնոց, և զաղէտս տառա-
պելոյ ազգին ոչ անկարեկիր աչք տեսեալ, փառաւորութեան նորա և պատկա-
ռելի առաջի այլոց ազգաց լինելոյ՝ սրտի մորք ցանկային, յորդորեաք ՚ի գոյն
արդարե յոգւոյ ազգամիրութեան : Առ որ կարեռագոյն գիտելով զհրահանգս
վարժարանաց, ՚ի զարդացումն նոցին արնին հանապազ . յանձն առեալ զամենայն
փաստակ և զծախս, ոչ խարելով ընդ ազգ և ընդ ազգ . յորոց եթէ և պէտս ունի-
ցին փասն ուսմանց գպրոցացն՝ ընտանինան ընդ նոսա . և զան Եւրոպացւոց կա-

շեալկանոն՝ առաջնորդեն. և թէղէտ յաջովք նոցաըստ եռանդեանն, այլ և քաջ զգուշանան զի մի անխորհրդաբար չմարթնոց և անշափիցն ձեռն մխերալ՝ մշտակայ տեղութեան գործոյն վտանգ ինչ հասանիցէ: Եւ զի զարդիմս ազդասէր մխարանութեան նոցա ոչ ՚ի քաջարին իւրեանց ևեթ, այլ և յալս ՚ի քաջարաց տարածեցին, հաստատեցին և յալս տեղեաց ընդունել մանկունս ՚ի վարժարանն. և եթէ ուրեք պէտք լինիցին վարժապետաց, առաքել յիւրեանց անտի դաստիարակս կիրթու: Ամենայն ուսմանց և լեզուազիսութեանց նախագասսէ ՚ի զպրոցին հայերէնն. իսկ ուսումն օտար լեզուաց՝ է գաղղիարէն, իտալերէն, յունարէն աշխարհաբառ, անդղիարէն և տաճկերէն: Եւ այլ դպրոց Հայոց վասն աղջկանց, յորում ուսանին հանդերձ այլով՝ հայերէն, գաղղիարէն և անդղիարէն, և ասղէնկար ձեռագործ:

Ի մզկիթ ջաճկաց անուանի է Հիւար-ձամիսի, բազմագմբէթ, որ ՚ի հնումն աթուանիստ եկեղեցի էր լատինացւոց. և զայդ անուն էտո. ՚ի հանդիպակաց դղեկէն առ ծովեղերին, որ և կրչէր դղեւակ սրբոյն Պետրոսի. որոց բանալիքն քանդակեալ են հանդերձ այլ ևս զարդուք ՚ի մարմարինի երկուստեք դրանն ՚ի բարձու. այլ արդ ՚ի սորու նոցին կայ արձանագիր տաճկերէն. պարիսպին անկրծան կան տակաւին և ՚ի ներքս բնակութիւն է հասարակ մարդկան:

Վեց հիւանդանոցք են, չորս եւրոպացւոց, մին Յունաց և միւսն Հայոց. և տպարանք այլ և այլ ՚ի ձեռս երից ազդացգ, յորս տպագրին լրագիրք և մատեակը: Եւրոպացի ինեւմանք զոր լօքանուս կոչեն, հաշուին ութ. յորոց շատից անշուք են բնակարանն և թերի ՚ի կարեւոր սպասուց, այլ և թանկագին բնակութիւն նոցին. և են սորա առ հասարակ ՚ի թաղին ֆուանկաց: Իսկ հիւապատասարանք այլոց ազդաց են Գաղղիոց, Անդղիոց, Ռուսիոց, Աւստրիոց, Հունանդիոց, Պելճիոց, Շուեւտոց, Տանիմալբայի, Նէապօլուց, Սառանեայ, Գրուկանայի, Միայցեալ նահանգաց, Յունաց և Պարիսից:

ԱՅՆԱՐ ՀԱՄԱՐ. ԲԱՐՔ ՖՈՂՈՎՐԴՆԵԱՆ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒԽԻՆ ՔԱՂԱՔԻՆ ՆԻ ԱՅՑՈՒ: — ԹԻՒՐՐ նակաց Զմիւռնիոց ըստ հասարակ հաշուի է 430 հազար. յորս 55 հազար են Յոյնք, 45 հազար Տաճիկը, 13 հազար Հրեայք, 12 հազար Լատինածէպ հանդերձ ամենայն Եւրոպացւոք, և 5 հազար Հայք. որոց ծագումն է ՚ի Հայաստանէ և ՚ի Պարսկահայոց, առ Դահմազաւ վախտոցեալք այսր: Օսմաննեանք կարի հեղաբարոյք են, մանաւանդ ՚ի թազս այլոց ազդաց: Իսկ առ Յոյնս առաւել տեսանի խրոխսումն և արիւնաւուշտ բարք առ ռամիկն, յորոց և սովորութիւնք պատահեն յաճախ: Կատավարիչ քաղաքին է Միհաւլիլմ ընդ իշխանութեամբ վաշոյին Այստրնոյ. այլ ոչ կարի ընդարձակ զօրութեամբ ՚ի պատճառս բազմութեան հիւպատից և խուռն ժողովրդեան որ ՚ի նոցանէ կախեալ են յամենայն ազգէ, թող զրուն Եւրոպացին. նմին իրի ամենայն պաշտպանելոցն աներկիւլ համարձակեալ և յարդելեալն, և բուն հալատակացն ևս սովորեալ ՚ի նոսին, ազատութիւն իմն տարածեալ է յամենեախին, որոց նման ոչ ուրեք տեսանի ՚ի Տաճկաստան:

Հասարակաց բարբառ. ՚ի Զմիւռնիա յունարէնն, սակայն և ազգիւրաքան շիւր գիտակ է խրումն. և ՚ի պատճառս վաճառականաց Եւրոպացւոց Երկրորդ-

Համարին գաղղիարէնն և խտալերէն , և յետ այնոցիկ տաճկերէն . իսկ անդղիարէն սակաւոց է ծանօթ : Ի պատճառս բազմալեզու զբուցարութեանց հարիւա ընտանեցեալ ժողովրդեանն ընդ միմեանս , ծանօթացեալ հմտանան միանդամայն բարոց և ընթացից այլ և այլ ազգաց . նմին իրի և 'ի մանկութենէ կրթեաքք 'ի համարձակութիւն՝ աշալուրջք լինին և հանճարեզք :

Օդ , բնրբ եւ պատճառանանութիւն : — Օդ Զմիւռնիոյ 'ի ձմերան բարեխառն է յոյժ , մինչև մարթի որոց 'ի ձմերային գաւոտու կեցեալ են , առանց կրակարանի անցուցանել . և ձիւն իսկ հայլու երբէք տեղայ փոքր մի , և այն ոչ յամենայն ամս , թէպէտ և 'ի գագաթունս բարձրադայն լերանց երեխ զձմեռն ողջոյն . բայց 'ի սակա յաճախ անձրևաց դիմին է օդն և անառողջ : իսկ յամարան 'ի յուլիս ամս այ մինչև ցսեպատեմբեր լինի տօթ անհնարին . և երբեմն ևս յերկար երաշտութեանէ պատառուսի գետախնն . բազումք 'ի բնակչայն չհանգուրժեալ տօթոյն խոյս տան 'ի գիւղորէս . իսկ որք 'ի քաղաքին մնան՝ ակն ունին զովութեան արևմտեան հողմոյն նշեցոյ զոր իմպար կոչեն : Անհամուրժեալի է յայնժամ և խուռն բազմութիւն մժեղացյն . նմին իրի յամենայն տունս սովորութիւն է սրսկապանս արկաննել անկողնոց յանօսր կտաւոյ , զի դմէ 'ի գիշերի վերծ լիցին 'ի խայթմանէ նոցին :

Արդասաւորութիւն Զմիւռնիոյ , որպէս և շրջակայ սահմանացն , համբաւեալ է առ ամեննեսին . մանաւանն թուղն և չամին . բայց ունի առաստապէս և չուշմա և ձէժ , այնպէս զի ընդ բովանդակ շրջակայ արտօրայս քաղաքին մինչև ցիւղորդքս լի են ձիթենիք , և նորօք սահմանին ցանկիք անդաստանաց իւրաքանչիւր , փոխանակ անպատուղ ծառոց , որովք վարին յլսալացւոց աշխարհին : Ամենայն աղդ պաղոց գտանի անդ . այլ նարնջենին անբաւ առաստութեամբ . յորմէ յամենայն պարտէցու տանց գտանի . զոր և 'ի մէջ ձմերան գեղեցիկ է տեսանել ակաղձուն պտղովին զարդարեալ ընդ բովանդակ տարածութիւն պարտիզացն՝ որ արտաքրոյ քաղաքին :

Ի վայրի չորբուտանեաց բազում են նապաստակք և գիւրագնի . նոյնպէս և 'ի հաւոց պէքքացի կոչեցեալն : վաճառականութիւն քաղաքին 'ի նախնի դարուց հետէ համբաւեալ է . զի 'ի պատճառս խորչին և անքոյթ և մեծի նաւահանդստին՝ երթեւեկնաւաց բազում է անդ յամենայն կողմանց , որպէս և կարաւանաց 'ի ցամաքէ . ամենայն աղդ վաճառաց փոքրոն Ասիոյ մեծաւ մասամբ աստ ամբարեալ առաքի յարեմուտս , և անտի ամենայն ձեռագործք այսր ածեաքք 'սիսին 'ի ներքին կողմանս Ասիոյ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶՄԻՒՐՆԻՈՅ : — Զմիւռնիա շինեալ յԱմսղոնաց կամ' յԵւղեանց , և նորոգ կառուցեալ հրամանաւ մեծին Աղեքսանդրի , մայր քաղաքաց կոչեցաւ փոքրոն Ասիոյ առ Անտիկոննեաւ և Լիւսիմաքեաւ , պատուեալ մեծապէս և 'ի կայսերաց . և յերկրաշարժութենէ կործանեալ յամն 178-180 , հոյակապ ևս շնեցաւ 'ի Մարկոսէ Արեղիոսէ , գեղեցկադոյն 'ի քաղաքս Յոնիոյ համարեալ . և առ հաւատացեալ կայսերօք՝ երկրորդ զինի ամոռանիստ քաղաքին , սակա պատկառելի հնութեանն . իսկ առ իսմաստաերն Լեռնիւ յաղաս քաղաքս համարեցաւ իւրով օրինաքն վարեալ : Եւ իբրև զմի յանուանի ճեմարանաց՝ խմբարան

Էր ամենայն իմաստասիրաց, և վարժարանք և դրատոնք պէսպէսք ՚ի նմա . և օրէնք քաղաքականութեան նորին գաղափար ամենայն քաղաքաց համարէր . նմին իրի ոչ վարկապարազի կոչեցաւ Փափկութիւն և Պատկ Յոնիոյ և Զարդ Ասիոյ : ի մետասաներորդ գարէ մինչեւ ցերեքտասանն յայլ և այլ պատերազմաց ընդ այլոց քաղաքաց փորտն Ասիոյ աւերեցաւ և Զմիւռնիու զոր թէպէտ նորուդեաց Յովշաննէս Անգեղոս կոմինենոս, այլ անկատ ՚ի նախակին վայելութենէն . և սահմանէլ մեծաւ մասամբ Պագոս լերամին՝ յորոյ ՚ի գագաթան է արդ գվեակն . ի մուսս չորեքտասաներորդ գարուն Այարն ոմն տեղապահ սուլդան Օսմանաց առաջնոյ՝ տիրեաց քաղաքին, և յետ նորա որդի նորին կօմէր : Սա մինչեւ ՚ի պատերազմուն գեղերէր, Հոռոտացոց ժամ պարապոյ գտեալ գիմեցին նաւատորման ՚ի վերաց քաղաքին, զբաղումն ՚ի նաւացն այրեալ ՚ի նաւահանգստին, տիրեցին մօտ առ նմա դղեկին Ա. Քետրոսի՝ զորյիշեցաքն ՚ի վերտնդր . այլ միւս կողմանք էին ՚ի ձեռու կօմէրայ : Յերկրորդում ամին մինչեւ Լատինացիք տօն կատարէին ՚ի մայր Եկեղեցուն (որ արգ Հիւար ձաւի), կօմէր ՚ի վերաց յարձակեալ սովան զբաղումն, և զեպիսկոպուն Եպիսկոպոսական զգեստուքն և զայր՝ փախըստական արկ ՚ի զեղեակն, առ որով անկատ և ինքն Յետ ոչ բազմաց լուեալ Լէնկիթիւրի եթէ Լատինք և Տաճիկք յար ՚ի կուտի կան, յարձակեցաւ ՚ի վերաց քաղաքին յամին 1402 ընդ ծով և ընդ ցամսք, զոր վայրապար զամն եօմն պաշարեալ էին սուլդան Մուրաստ և Պայէվիտ որդի նորա . հրամայեաց զօրաց իւրոց մի մի քար արկանել ՚ի նաւահանգիստն որ արգ կոչի Ալի փաշա վերանեսի . և յետ չորեքտասան աւուր տիրեալ քաղաքին ՚ի հուր և ՚ի սուր մաշէաց : Զինայէթ քաղաքապետ կարգեալ Զմիւռնիոյ ՚ի Լէնկիթիմուրայ, մինչ խորհէր տիրել և այլոց քաղաքաց, սուլդան Մէհմէմէտ Ա. յարեաւ ՚ի վերաց նորա յամի 1449 և հալածեաց, կործանեալ և զամրութիւն քաղաքին . բայց յետոյ կոչեալ զջինայէթ ետնմա վերաստին զառաջին պատիւն : Ապա սուլդան Մուրաստ նուածեաց զբաղաքն յամին 1424 . և յանուն նորա Զմիւռնացիք դրամ հատին, որպէս Եղիպատու Ագրիանուպօլիս, որոց միայն շնորհեալ էր այն պատիւ : Առ Բ Սուլդան Ահմէտին վենետիկեցիք ահեղ նաւատորմաւ Երին ՚ի վերաց Զմիւռնիոյ . այլ միջնորդելով հիւպատոսացն Գաղղիս, Անգղիոյ և Հոլանդիոյ գարձան յետու : Անտի և այսր Զմիւռնիս ոչ ինչ կրեաց յարտաքին թշնամեաց . այլ մահ տարաժամ և Երկրաշարժ հրդեհ բաղում անդամ յաւեր ապականութեան գարձուցին զնա :

Մասսուրդ Ահերասաւ Նաւառու ԶՏԻՒԽՆԻՅՅ . — Յաւերակաց հին շինուածոց Երևելլիք են ՚ի Զմիւռնիա, Դիեւակն մեծ ՚ի գագաթ լիրինն Պագոսի, որ է ՚ի թիվանց քաղաքին ակներեւ ամենայն ուստեք, և ՚ի Տաճկաց կոչեցեալ Խայտէիք գալէսի . որոց ՚ի հիւպատու յարեամուց և ՚ի հարաւոյ անմթերի կան պարիսապքն, և միւսոյ կողմանն կիսով չափ բարձրութեանն եւուրէ մինչեւ յյատակն կործանեալ : Ի հասարակ քարամց է բալմանգակ պարիսապն ստուար թանձրութեամք . և ուրեք ուրեք ՚ի հիմանց փոքր մի ՚ի վերնշմարի տարրերութիւն նախնի շինուածոցն քան գլուխնենուին, զի սա նորոգեաց միայն, այլ ոչ վայելուչ որպէս զառաջինն : Արձանագիր կայր Երրեմն ՚ի վերաց հիւպատային գրանն, և Երկուատէք արծիսք քան գակագործ . այլ այժմ քակեալ զուղին ՚ի բաց բարձեալ են զարձանն . և ասի

թէ գրաւածն էր՝ ի գովեստ նորին կոմիսենեայ : Ալսապոյ արևմտեան գրանն ի ձախմէ կայ սպիտակ մարմարինեայ ստուար գլուխ Զմիւռնէ Սիրիլլայի կամ՝ Ամազոնի, ագուցեալ յորմն անկիւնաւոր ի բարձու աղղակի հայելով որոց ընդ դուռնն անցանեն . և ի ներքոյ արձանին աւաղան աղբեր ցամափելոյ ի նոյն քար թէ միակտուր, նոյնպէս ագուցեալ յորմն : Խոկ յաջակողմն նոյն գրան իրեւ քարը ընկէց մի հեռի ի հիւսուած պարապին ի հիմանց մինչև ցվերին ծայր նորա սիւնաձև յօրինեալ է որմն, և է ջրհոր խոր և լսյն . զարոյ ի ներքին կողմանէ դղեկին ոչ միայն ի ծայրէ պարապին՝ մարթ է նշմարել զահաւոր խորութիւնն մերձ կալով բերանոյն, այլ և ի կէս բարձրաթենէ որմոյն ընդ քարեղէն աստիճանն ելեալ ի վեր . այլ առ ի չգոյէ յենարանի բերանոյն, և ոչ անքոյթ ոռը ընկելեաց իրիք յերկրորդում՝ տեղւոյն վասնդաւոր է յոյժ կանգուն կալով նըշմարել ի խորմն, զի առ փոքր մի գթել ոտին կամ խախտել քարին՝ վճարեալ է մարդոյ: Յարեւմտեան դրանէ աստի իրեւ քարլնէցիւ ի ներքս ի դղեկին է ջրամբարն՝ աւերակ ի միոյ կողմանէ, ընդ որ իջանեն խոկ, և է յարկն հաւասար գեանոյ աղիւսակերտ՝ կառուցեալ ի վերայ աղիւսեայ քառակուսի սեանց քառասնից հանդերձ որմակից կիսասկզնօք . նմին իրի և ի ջաճկաց կոչի Գլորիտիւրէկ . ըստ շինուածոյն և ասրածութեան չէ ինչ զարմանալի: Առընթեր ջրամբարին ի հանդիպոյ է փոքրիկ եկեղեցի գմբէթաւոր գծուծ շինուածով, զոր ջաճիքը ի մղկիթ փոխեալ են եղեալ ի վերայ դրանն արձանագիր տաճկերէն և սանդուխս դղեծեալ ի ներքս ի հանդիպակաց որմն, որ է տեղի միջրապին, թէ պէտ և չէ այն ուղիղ ընդ հարաւ կցոյ: Այժմ աւերակ է եկեղեցիս, և միջոց տարածութեան նորա 56 քառակուսի մեղք: Որմակից է եկեղեցւոյս յաջմէ նորա և այլ շինուած աղիւսակերտ երկայնաձև ցած և միակամար կամ սագաշէն, և տարածութիւն նորա 25 մեդր քառակուսի: Յաւերակմն անդ ի պեղելն գտաւ նին ուրիք ուրիք մանր անօթք և արձանք խեցեղէնք հեթանոսական ժամանակաց: Այլ ինչ նշանաւոր ոչ երեի, զի ամենայն հիմնայտակ կործանեալ է: Առ արևմտեան դրանն եեթ ի ձախմէ ի ներքս անդ պարսպին է աշտարակ քարձը հանդերձ երկաթի աղիւեալ դրամիք, յորում պահին թնդանօթք և ամշարանոց վառուի:

ԱՐՓԻՔԱՏՐՈՒՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆ ՊՈՂԱԿԱՐՈՍԻ. — Ալսապոյ արևմտեան գրանն և երբեւ որմբաձիգ մի ի հանդիպոյ նորա ի բայց առ ստորոտով Պագոս լերինն է աւելիիրէատրուն մեծ, ուր սուրբն Պօղիկարապոս նահատակեցաւ . պարխապ ձաւնոյ կողմանն ամիմիթէատրոնին է ինքն լեռանն, և անյն որ է ի կողմն քաղաքին՝ կամազք. այլ այժմեան մնացրդք են հիմունք կամարացդ. յորոց ի ստորին ծայրի որ մերձ է ի թաղն ջաճկաց՝ է գերեզման սրբոյն Պօղիկարապոսի, ըստ բընակացն աւանդութեան, պատուեալ ոչ միայն ի քրիստոնէից, այլ և ի ջաճկաց զոր և կուն Եռշատուք տեսէ. և է տեղին փոքրիկ գերեզմանոց նոցա, յուրոց միջի մեծագոյն Պօղիկարապոսի համարեալն, ամենենին ըստ ձեւյ տաճկական գերեզմանի, և հնութեան ի նոնա չկը ցոյց և ոչ վայելուչ նորութիւն . այլ գերեզմանօքն փոքր տարածութեամբ երեի շուրջանակի հիմն շինուածոյ, որ գոյց ի հնութին մատուռն երալ իցէ նուիրեալ յանուն սրբոյն . խոկ ի գլուխ գերեզմանին է ծառ նոճւոյ :

ի հանդիպակաց լեռառնն 'ի փոքրիկ տափարակի միայն է ջրհոր նեղարերան և լի ջրով մինչեւ 'ի վեր : ի գագաթանէ լերինն երեխ բովանդակ հարթ տարածութիւն նորին ընդ կողմն հարաւոյ, անբեր և քարուտ : Փոքր մի ևս անդրագոյն կան երկու անջուր գուգը անդնդախոլք իրը քարընկէցիւ հեռիք 'ի միմեանց, հաւասար գետնոց առանց շրջանակի բերանոցն . քար 'ի ներքս արկեալ՝ այլ և այլ հնցին շառաշանք մինչեւ ցյատակն . և ասեն ոմանք եթէ ոչ միակտուր է փորուածն որպէս զայլոց ջրհորոց, այլ 'ի զանազան ստորերկերեայ ուղիս բաժանեալ, և անսի ազգ ազգ ձայնիցն հնչեցելոց :

Ի կողմանէ հարաւոյ գղեկին ինեւալ ընդ զառիվայր լերինն ընդ ահագին ապառաժս մինչեւ 'ի ձորամէջն , 'ի ձախոյ կողմանէ տեսանի ջրանցքն մեծ կուցեցեալ 'ի բնակչաց մեծ քէմեր, ահագին երկայնութեամբ լեռնէ 'ի լեռան կառուցեալ 'ի վերայ երկկարգեան կամարաց երկբատասանից . գետն անցանէ ընդ միավ 'ի ստորին կամարացն . և ջրանցքն են 'ի վերին ծայր կամրջին՝ որ հազորդի 'ի հանդիպակաց լեռնէն ընդ լերինն Պագոսի . և անտի անցեալ ջրոյն ընդ ստորտովի Պագոսի և պատեալ զամենայն կողմն հարաւոյ և արեւելից նորին ստորերկերեայ հասարակ ագուգայիւք մատանէ 'ի քաղաքն յայլեայլ առաջն աղբերաց բաժանեալ : Շինուած կամրջին փառահեղ է և ամուր . այլ 'ի վերոց ուր ջրանցքն են կամ առուն, յանհոգութենէ խարխարեալ են կափարիչ քարինքն . յուրա վերայ մարթէ համարձակ շրջել լեռնէ 'ի լեռան անցանելով . զայս ջուր Քեօփիրիշիւ-օլլոց սույոց կուցն : — Ի հիւսիսային կողմն Պագոսի 'ի ստորոտ նորատեսանի մնացուած նախնի պարսպին հարուստ տարածութեամբ, յորոյ 'ի միջոցին է կամար մեծ գարւա-քէմեր կուցեցեալ, և է արդ հասարակաց ուզի երանելոց 'ի լեռան : Խակ յարեւմուտ հարաւոյ նորա 'ի դաշտավայրի՝ ոչ շատ հեռի 'ի գղեկէն, երեխն ցրիւ կոստրակը հին շինուածոց 'ի կճեայ քարանց՝ յարմարեալ 'ի ձեւ դերեզմանի Ցաճկաց :

ՔԵՄԵՐ ԵՒ ԱՐՅԱՆ ԱՌԻՒԽՈՒՆ ԱՌ ՀԱՎԱՆ . — Արսաքոյ քաղաքին ուր բնակարանքն աւարտին անընդմէջ կայ կամուրջ քարաշէն միակամար, ընդ որ հարկ է անցանել ամենայն կարստանաց . և գետն Մերէս անցանէ ընդ նովաւ, և մտեալ 'ի քաղաքն գնալով ընդ թաղն ֆուանկաց թափի 'ի ծով : Ցեղերս գետոցն աւընթեր կամրջին իրը երկու ամքը յառաջ 'ի պեղելն դտաւ անդրի կճեայ առիւծու մեծի եղեալ 'ի վերայ մեծատարած սալյաստակի . զայն պատկեր տեսալ Եւրոպացւոց կամեցան առնուլ, և ոչ յաջողեալ զրեցին 'ի Բիւզանդիա հրաման առնուլ 'ի Դրանէն . և եկն պատուէր թաղել վերատին 'ի աեղով իւրում, և թաղեցին . բայց երեխն ցայսօր թիկունք նորա վերուստ 'ի վայր, խակ դլուխն խորտակեալ է :

ՏԻՐԱՅ ԹԱՅ . — Ի թաղին Հրէից և Ցաճկաց ուր Նեմագիեանն է, առընթեր նորին կայ շրջափակ տեղի մեծ և անապատ . 'ի նմին կողման յայլում փողոցի կան կանգուն մինչեւ վեց քառակուսիք միակտուր 'ի ծիրանեգոյն սօմաք քարէ չափաւոր խտրօցաւ հեռիք 'ի միմեանց, որք բացօթեայ գոլով սեացեաքը և խորտակեալք են . և ընդ ամենայն մեծատարած տեղին, որ արդ գերեզմանոց է Ցաճկաց, կոստրակը կճեայ քարանց և սեանց ցրուեալ կան . զայս աւերակ մնացորդ ստեն տաճարին նուիրելոց Յովհաննու Աւետարանչի :

ՍՏՈՐԵՐԵԲԵԱՅ ՀԱԿԱՊԱՐՀՔ. — Ի ԹԱՊՀԻՆ ՊՈՐ ԿՊԸԵՆ ԱՐԱՎ ՄԱՆԱՀԱԼԻՆԻ, և յանել փողոցին կոչեցելոյ Մադարալի սօգագ, 'ի տան միտւմ՝ 'ի ներքոյ անկեան որմայն որ 'ի մեծահատոր քարանց շինեալ է, երեկ ստորերկրեայ ուղի, որ տանի առն մինչեւ 'ի զղեակն Պագոս լերին: — Դարձեալ 'ի բարձր փողացին Պոր կոչեն Ավանու մանալէ, 'ի տան միտւմ գոյ ստորերկրեայ ուղի անշուք շինուածով. աղիսակերտ կամարակապ և ցած քան զմարդաչափ բարձրութիւն. նախ 13 աստիճան էջը են 'ի վայր, ուստի խոսորեալ 'ի ձախ կցս 15 քայլ, և այլ ևս 15, յաջ, յանկեան ուրեմն եղեալ կայ թղաչափ պատկեր Ասոտածածածնի նկարեալ 'ի վերսոյ տախտակի հին և խանգարեալ. և ասեն անդ գտեալ զպատկերն զայն, և կոչեն քրիժի բանայիս (ծածկեալ Ասոտածածնի). յանկենէ անստի ջուր ծորեալ մտանէ 'ի փոքրիկ ջրամբարն որ կայ առաջի, և զեղեալ ընդ բերանն զնայ ընդ փոքր առուակն ընդ յաստակաւ հանդիպակաց ուղոյն, որ և երթարպ երթայ և անձկանայ մինչեւ անմտանելի լինել. և զամանէ աւանդեն եթէ տանի հանէ 'ի զղեակ անդր:

ԴԻԽԳՈՐԱՔ ԶՄԻՒՌԵՐԵԱՅ. — Ի ԳԻՎԳՈՐԷՍ Զմիւռնիոյ նախապատիւ է ՊՈՂՈՇՆՈՎՈՅ սակա հյայկապ շինուածոց տանց, որոց նմանիք հազիւ ուրեք գտանին 'ի քաղաքին և յաղագոյ բաղմամարդութեանն և յաճախ երթեւեկութեանց. եկեղեցին Լատինացոց բարոցի և փոքրիկ է, և է 'ի ձեռս Ֆրանչիսկեան կրօնաւորաց. իսկ Յունացն մեծ և փառաւոր և արտաքրոստ սինազարդ և կճապատ. 'ի կողմանէ աւագ գրանն երկուստեք քարաչէն սանդղօք ելանեն 'ի վերնատուն եկեղեցոյն: Գեղեցիկը են և պարտէ դք տանց մեծամեծաց: — Երկրորդ համարի գիւղն Պուռաւ, և Գորգուրան երրորդ, որ է 'ի վերայ բրոց և պահնչելի է տեսարան նորին, դաշտավայրք պարտիզաց զառաջեաւ նորա, և լերինք 'ի հանդիպոյ: Ի կողմն Պուռնովայի են Նառը քեօյ և Հաձիլեր. իսկ Սկլուխի-քեօյ յարեւնուակողմն քաղաքին անկանի, և զայդ անուն թերեւ 'ի դրից տեղեցն առեալ, 'ի թիկանց և 'ի հանդիպոյ ուներով լերինս և զուարձափի վայրո: Գիւզս սյո թէպէտ և բաղմամարդ, սյլ անշուք շինուածով. 'ի շրջակայ վայրոն բազում ուրեք գտանի կաւ կանաչապոյն:

ՃԱՆԱԳԱՐՀ Ի ԶՄԻՒՌԵՆԻՈՅ ՑԱՅԱՍՈՒԼՈՒԹ ԵՒ ՑԵՓԵՍՈՍ

Ի Զմիւռնիոյ մինչեւ ցեփեսոս երկբատասան ժամք են. և 'ի կէս ճանապարհին համարի գիւղն թռիանտա, առ որով անցանէ գետակ մի. հիւզք 'ի նմա քանի մի ցրիւ, կրպակը և իջեան մի: Յաջմէ ճանապարհին են ապառած լերինք բարձրաբերձը և անմտանչելիք. յորոց 'ի միտւմն գագաթան՝ ամրոցն քէյլ գալեսի. և 'ի ձախմէ դարձեալ 'ի հեռուստ լերինք բարձունք: Այս ճանապարհ արահետ ընդ գաշտս տանի մինչեւ ցղետ մի որ հեռի է յԱյասուլուքայ իրը կէս ժաման. կամուրջ նորա բաղմականար, յորոց ոմանիք խցեալ են երկուստեք հողով զետեղերն: Անցեալ ընդ կամարին և անցեալ առ ստորոտով հանդիպակաց լերին պալառամի, ընդ անհարթ ուղին և շրջակալ ընդ ձախմէ, բանին 'ի հանդիպոյ և

ի հանդիպակաց լեռանն 'ի փոքրիկ տափարակի միոջ է ջրհոր նեղարերան և լի ջրով մինչեւ 'ի վեր : ի գագաթանէ լերինն երկու բովանդակ հարթ տարածութիւն նորին ընդ կողմն հարաւոյ, անբեր և քարտուս : Փոքր մի ևս անդրագոյն կան երկու անձուր գուրքը անդնդախորք իրը քարընկեցիւ հեռիք 'ի միմեանց, հաւասար գետնոյ տռանց շրջանակի բերանոցն . քար 'ի ներքո արկեալ՝ այլ և այլ հնչին շառաւանք մինչև ցյաստակն . և ասեն ոմանք եթէ ոչ միակտուր է փոքրուածն որպէս զայլոց ջրհորոց, այլ 'ի զանազան ստորերկեայ ուղիս բաժանեալ, և անտի ազգ ազգ ձայնիցն հնչեցելոց :

Ի կողմանէ հարաւոյ զգեկին իջեալ ընդ զառիվայր լերինն ընդ ահապին ապառաժս մինչեւ 'ի ձորամէջն , 'ի ձախոյ կողմանէ տեսանի ջրանցքն մեծ կոչեցեալ 'ի բնակչաց մեծ քէմէր, ահապին երկայնութեամբ լեռնէ 'ի լեռան կառուցեալ 'ի վերայ երկկարգեան կամարաց երկրտասանից . գետն անցանէ ընդ միոյ 'ի ստորին կամարացն . և ջրանցքն են 'ի վերին ծայր կամրջին՝ որ հալըրդի 'ի հանդիպակաց լեռնէն ընդ լերինն փաղոսի . և անտի անցեալ ջրոյն ընդ ստորոտովն Պաղոսի և պատեալ զամենայն կողմն հարաւոյ և արևելից նորին ստորերկեայ հասարակ ագուգայինք մտանէ 'ի քաղսպն յայլեալ առաջն աղբերաց բաժանեալ : Շինուած կամրջին փառահեղ է և ամուր . այլ 'ի վերոյ ուր ջրանցքն են կամ առուն, յանհոդութենէ խարխարեալ են կափարիչ քարինքն . յորոց վերայ մարթէ համարձակ շրջել լեռնէ 'ի լեռան անցանելով . զայս ջուր քէօյի րիշիւր-օղլու սոյցու կոչեն : — ի հիւսիսային կողմն Պաղոսի 'ի ստորոտ նորատեսանի մնացուած նախնի պարապին հարուստ տարածութեամբ, յորոյ 'ի միջոցին է կամար մեծ գարա-քէմէր կոչեցեալ, և է արդ հասարակաց ուղի երանելոյ 'ի լեռան : իսկ յարեմուտս հարաւոյ նորա 'ի զաշտավայրի՝ ոչ շատ հեռի 'ի գղեկէն, երեկին ցրիւ կոտորակը հին շինուածոց 'ի կճեայ քարանց՝ յարմարեալ 'ի ձև գերեզմանի Ցաճկաց :

Քերէն են ԱՐՁԱՆ ԱՌԻԽՈՒՈՒՆ ԱՐ ՆՈՎԱՅ . — Արտաքրոյ քաղսպին ուր ընակարանքն աւարտին անընդմէջ կայ կամուրջ քարաշէն միակամար, ընդ որ հարկ է անցանել ամենայն կարաւանաց . և գետն Մելքս անցանէ ընդ նովաւ, և մտեալ 'ի քաղսպն գնալով ընդ թաղն ֆուանկաց թափի 'ի ծով : Յեղերս գետոյն առընթեր կամրջին իրը երկու ամօք յառաջ 'ի պեղելն զտաւ անդրի կճեայ առիւծու մեծի եղեալ 'ի վերայ մեծատարած սաղյառակի : զայն պատկեր տեսեալ Եւրոպացւոց կամեցան առնուլ, և ոչ յաջողեալ գրեցին 'ի Բիւզանդիա հրաման առնուլ 'ի Դրանէն . և եկին պատուէր թաղել վերատին 'ի տեղովով իւրում, և թաղեցին . բայց երեկն ցայսօր թիկունք նորա վերուստ ՚ի վայր, իսկ դլուխն խորստակեալ է :

ՏԵՐԻՆԻ ԹԱՅ . — ի թաղին Հրէից և Ցաճկաց ուր նէմագիեանն է, առընթեր նորին կայ շրջափակ տեղի մեծ և անսապատ . 'ի նմին կողման յայլում փողոցի կան կանգուն սիւնք վեց քառակուսիք միակտուր 'ի ծիրանեգոյն սօմաք քարէ չափաւոր խորոցաւ հեռիք 'ի միմեանց, որք բացօթեայ գոլով սևացեալք և խորստակեալք են . և ընդ ամենայն մեծատարած տեղին, որ արդ գերեզմանոց է Ցաճկաց, կոտորակը կճեայ քարանց և սեանց ցրուեալ կան . զայս աւերակ մնացորդ ասեն տաճարին նուիրելոյ Յովհաննու Աւետարանչի :

ԱՏՈՐԵՐԻԵԱՅ ՀԱԿԱՊԱՐՀՔ. — Ի թաղին զոր կոչեն Ալիսպ մահալլիսի, և յանել փողոցին կոչեցելը Մարտարալը սօգագ, ՚ի տան միում 'ի ներքոյ անկեան որմոցին որ 'ի մեծահատոր քարանց շինեալ է, երեխ ստորերկրեայ ուղի, որ տանի ասեն մինչեւ ՚ի դղեակն Փագոս լերին: — Դարձեալ ՚ի բարձր փողոցին զոր կոչեն Ալիսեօ մահալլ, ՚ի տան միում գոյ ստորերկրեայ ուղի անշուք շինուածով. աղիւսակերտ կամարակապ և ցած քան վմարդաչափ բարձրութիւն. նախ 43 աստիճան էջը են ՚ի վայր, ուստի խոտորեալ ՚ի ձախ կոյս 15 քայլ, և այլ ևս 15 յաջ, յանկեան ուրեմն եղեալ կոյ թշաշափ սպատկեր Աստուածածնին նկարեալ ՚ի վերայ տախտակի հին և խանդարեալ. և ասեն անդ գտեալ զպատկերն զայն, և կոչեն քրիփի բանայիս (ծածկեալ Աստուածածնին). յանկենէ անտի ջուր ծորեալ մտանէ ՚ի փոքրիկ ջրամբարն որ կոյ առաջի, և զեղեալ ընդ բերանն զնոյ ընդ փոքր առուակն ընդ յաստակա. հանդիպակաց ուղոյն, որ և երթարով երթայ և անձկանոյ մինչեւ անմտանելի լինել. և զմանէ աւանդեն եթէ տանի հանէ ՚ի դղեակ անդք:

ԳԻՒԴՐԵՔ ԶՄԻՒՈԽԵՈՅ. — Ի գիւղօրէս Զմիւոնիոյ նախապատիւ է ՊՈՒՌՆՌՈՎԱ սակս հոյակապ շինուածոց տանց, որոց նմանիք հազիւ ուրեք գտանին ՚ի քաղաքին և յաղագու բազմամարդութեանն և յաճախ երթեւելութեանց. եկեղեցին Լսոնինացւոց բարորջի և փոքրիկ է, և է ՚ի ձեռու ֆրանչիսկեան կրօնաւորաց. իսկ Յունացն մեծ և փառաւոր և արտաքրուտ սինազարդ և կճապատ. ՚ի կողմանէ առագ դրանն երկուստեք բարաշն սանդոզք ելանեն ՚ի վերնաստուն եկեղեցւոյն: Գեղեցիկը են և պարտէք տանց մեծամեծաց: — Երկրորդ համարի գիւղն Պուռաւ, և գուզլուցաւ երրորդ, որ է ՚ի վերայ բլոյ և սքանչելի է տեսարան նորին, դաշտավայրք պարտիզաց զառաշեաւ նորա, և լերինք ՚ի հանդիպոյ: Ի կողմն Պուռնուպայի են Նառլ քէօյ և Հաճիլէր. իսկ Սլկտիքնոյ յարեւմուղմն քաղաքին անկանի, և զայդ անուն թերեւս ՚ի դրից տեղոյն տեսեալ, ՚ի թիվանց և ՚ի հանդիպոյ ուներով լերինս և զուարձալի վայրու: Գիւղս այս թէպէտ և բազմամարդ, այլ անշուք շինուածով. ՚ի շրջակայ վայրոն բազում ուրեք գտանի կատալազոյն:

ՃԱՆ ԱՊԱՐՀ Ի ԶՄԻՒՈՆԻՈՅ ՑԱՅԱՍՍԻԼՈՒԹ ԵՒ ՑԵՓԵՍՈՍ

Ի Զմիւոնիոյ մինչեւ ցիւփեսոս երեքտասան ժամք են. և ՚ի կէս ճանապարհին համարի գիւղն թուխանտա, առ որով անցանէ զետակ մի. հիւզք ՚ի նմա քանի մի ցրիւ, կրպակը և իշնեան մի: Յաշմէ ճանապարհին են ապառաժ լերինք բարձրերձը և անմատչելիք. յորոց ՚ի միումն գագաթան՝ ամբոցն վէլի գալիսի. և ՚ի ձախոմէ գարձեալ ՚ի հեռուստ լերինք բարձունք: Այս ճանապարհ արահետ ընդ գաշտս տանի մինչեւ ցգես մի որ հեռի է յիշաստլուքայ իրը կէս ժաման. կամուրջ նորա բազմակամար, յորոց ոմանք խցեալ են երկուստեք հողով գետեղին: Անցեալ ընդ կամուրջն և անցեալ առ ստորոտով հանդիպակաց լերին պատամաժի, ընդ անհարժ ուղին և շրջեալ ընդ ձախոմէ, բանին ՚ի հանդիպոյ և

յաշմէ կուսէ լսյնածաւալ գաշտավայրը գեղջն Այասուշուքայ . և 'ի հեռուստ , երեխ 'ի ձախմէ ճանապարհին , մեծադիր զվեակ նորին , որոյ պարիսալք սկսեալ 'ի գաղաթանէ բլոյն , ուրանօր միայն անկործան կան տակաւին , հասանեն մինչև ցատորտան մեծաւ . մասամբ քայլայեալք . և 'ի բացեայ նորս է 'ի հանդիպոյ ջրանցըն մեծ՝ որոյ կամարացն սիւնք կանգուն կան տակաւին կիսով չափ բարձրութեան : Յաշմէ զվելին առընթեր պարսպին և առ ճանապարհան որ մուծանէ 'ի դիւղն , է մզկիթ հոյակապ , թէպէտ և աւերակ , մեծաւ մասամբ կճապատ ներըոյ և արտաքոյ . մեծամեծ կունիստ սիւնքն , յորոց վերայ հաստատեալ էր յարին , նշխարը են աւերակաց Եփեսոսի : Բայց 'ի մզկիթէս կան և այլ մզկիթք փառունք և անշուք . ևս և կամարակապ աղիսակերս բնակարանք , անծանօթք . աղրիւր մի և 'ի հանդիպոյ նորին աւաղան միւս ևս աղրեր մեծատարած և միա կտոր , անկեալ 'ի բացի : Ընդ բովանդակ տարածութիւն գեղն , որ արդ սակաւթիւ հիւղիւք գեղջկաց սահմանի , և գոյզն կրապակք և երկու փուտիք , տեսանին ցիր և ցան 'ի գետնի և 'ի հիւսուածս տնակաց և յոյլ և այլ որմանէ կոյտաքարանց՝ յանարէն արձանագիլք , կոտորակք կճեսոց սեանց և պէսպէս զարդոց շինուածոց :

Ե Փ Ե Ս Ո Ո

Եօթն ՄԱԿԿԱՅՑ ԱՅՐՆ . — Հանդիպակաց է Այասուշուքայ Եփեսոս՝ իբր քառորդաւ ժամու հեռու 'ի նմանէ առ կոյիսուդրս գետով , յայնկոյս Պրիմն և կորիսա լերանց՝ որ պատեն զնա 'ի թիկանց և 'ի ձախմէ նորս , նմին իրի անտես են յԱյասուշուքայ աւերակք Եփեսոսի : Զե անցեալ ընդ լերինուք , և հասեալ նախ 'ի հանդիպակաց բլուր մի ապառաժ , իբր 'ի կէս բարձրութեան նորին ընդպառաջ լինի քարայրն փոքրիկ ուր բնակեցան ասեն եօթն մանկունք Եփեսոսի . բերան սյրին ծեփեալ աղիսաք առ գեկոսիւ , յետ ժամանակաց բայերալ եղեւ . երեխն ցայսօր մեացորդք աղիսակայն ամրապէս մածուցեաք . և անցեալ 'ի ներքս որ միջաւափ ևեթ խոր է , 'ի բերանոյն սկսեալ յաջակողմն այրին գէպուզիլ 'ի ներքս է կոռուան ոտից իբր երեք մեղքաչափ երկայնութեամբ , ուր մարթ է սակաւաթիւ անձանց նստել , որ և ունի մարդաչափ բարձրութիւն . իսկ յառաջ նորս որ է ձախսակողմն այրին՝ պատառուած կայ գէպ 'ի ներքս նոյնագէս 'ի բերանոյն սկսեալ , այլ անձուկ և ոչ խորին : Առընթեր սյրին յաջակողմն նորին է եղեղեցի յանուն սրբոյն . մուտք նորին քայլայեալ , այլ կամարըն կան տակաւին և է աղիսակերտ . բայց աւերակք և հողով ծածկեալ է յասակն մինչև ցվերնախարիսի կամարացն : Յոյնք շըլակայ վայրաց յամին միանգամ գան անդ պաշտօն կատարել : Մերձաւ եկեղեցեաւն երեխն յապառամի անդ լերին փորուածոյ գերեզմանք :

ՅՈՂՀ . ԱԱԵՏՎՐԱՆՉԻ ԱՅՐՆ . — Ի ձախմէ սյրի մանկանցն առ ստորոտով բլոյն է քարանձաւ փոքր ուր աւանդեն զրեալ Ա . Յավհաննու զաւետարան իւր : Սակաւ ամեք յառաջ գտեալ ասեն , չպիտեմ որպէս , յայրի անդ աւետարան մի հին ,

զոր իրեւ նշխար ցանկալի փոխադրեն ՚ի գիւղն Զիրքինձէ, որ հեռի է անտի երկու ժաման, և պահի յեկեղեցւով Յանաց ընդ փականք:

ԱՐԺԻԹԵԱՏՐՈՒ ԿԱՐ ՄՐՅԱՐԱՆ. — Անցեալ ընդ գաղաճն ըլլոյ մանկանցն և ի շեալ յայնկոյս ուղղակի, ընդ առաջ լինի ՚ի հանդիպոյ և յաշմէ մեծասարած դաշտավայրն Եփեսոսի, և ՚ի ձախմէ ընրինքն՝ յորոց ՚ի սասորոս են մեծաւ մասամբ նախնի շինուածքն Եփեսոսի: Եւ նախ ամփիթատրուն (stadium) մեծ, որոց աշակողմեան ստուար պարիսապք կանգուն կան տակաւին հարուստ տարածութեամբ, թէպէտ և վերին մասնն կործանեալ. իսկ ձախակողմեան պարիսապ է ընառնն յոր յեցեան է. նստարաննքն ամենայն փլատակը աւերակին ծածկեալ են, և փոքր ինչ երկի արտաքոյ գետնոյն: իսկ ճակատ շինուածքն բովանդակ կործանեալ: Երկայնութիւն ամբիթէատրոնին է 240 և կէս մեզը:

ԹԵԱՏՐՈՒ. — Թէատրոնն, յորում աղաղակէր ժողովուրդն ՚ի ժամու քարոզութեան Պօղոսի առաքելոց, «Մէծ է Արտեմիս Եփեսացւոց», է ՚ի կողմանէ ըրինդ յիշելոյ. և որա կամար մի և եթ մնացեալ է ամբողջ, և արձանագիրք ՚ի նմասց և այլ, բայց մեծաւ մնասամբ խանդաքեալ, և են որ այլ շինուածոց արձանագիրք են և ՚ի սորա որմունս յարմարեալ՝ որպէս թուի՝ առ նորոգութեան, զի ոմանք խոտորագիրք են, և այլք յանցարմաք տեղեղով ադուցեալ. և յարձանագրացդ ոմանք յունարէն են ոմանք լատիններէն: — ի նոյն կարգի թէատրոնին են քարաշն կամարակապ խորանածե որմունք որիշ ՚ի միմեանց և աշաղին բարձրութեամբք, անընդմիջաբար յեցք ՚ի լեռանն որ ՚ի թիկանց նոցին. վերջինն ՚ի նոցանէ, որ կայ յաջակողմն Արտեմեայ տաճարին, և որոց հիմունք որմոցն ևեթերեւին, կրթարան էր և կամ ճեմելիք. յորոց միջոց վայրն ՚ի սասորուէ ըրինն մինչեւ ցտաճարն Արտեմեայ, ՚ի մեծի տաճածութեան անդ՝ ցիր և ցան սփուեալ կան յերեսս գետնոյն սիւնք կուանիաք խորտակեալք, որոց բազումք ընդ հողով թաղեալ՝ ծայրըն միայն երևին:

ԱՐՏԵՄԵԱՅ ՏԱՃԱՐՆ. — Արտեմեայ տաճարն խոպառ փլատակ է, և չէ մեացեալ քար ՚ի քարի վերայ. այլ բովանդակ շինուածն, որ է ՚ի սպիտակ կճոյ, իրեւ յամպոտաց կարկտահար եղեալ բրակ մի ձևացեալ է խառն հողով և խճով: Տաճածութիւն նորա որչափ ինչ աւանդեն նախնիք խոպառ աներեւոյթ է, զի վլատակ նորա արդ փորու սահմանի. անշուշո որպէս բազմաց աւերակայ և սմա հանդիպեալ հողով ծածկիլ ՚ի գարուց հետէ: ի ստուար քարանցն և ՚ի թանձր սեանց չերտաձեւ գործելոց, յորոց միոյն Երկայնութիւն (որ և միջակուոր վեալ է) 39 ուր, և արամագիծ 4 ուր և կէս, և յահեղ վերնախարըսաւացն՝ յայտնի երկի թէ քանի վսեմ և հոյակապ էր շինուածն: իսկ զարդածե մանր քանդակիք ՚ի քարինան անդ չերեխն ընաւ, բաց ՚ի տերեւաձեւ զարդոց ՚ի ծայլ մեծի սեանն: Թիկունք տաճարիս հանդիպակաց է կորիսոս վերին՝ որ տաճածեալ է ՚ի ծովակողմն կոյս. և ծովն որ երկի յԵփեսոսէ՝ հեռի է կէս ժամու միջոցաւ:

ՅՈՒԱՐԵ ԱԽԵԶԱՆ ՄԵՆ. — Հանդէալ տաճարին Արտեմեայ հարուստ մի հեռաւութեամբ անկեալ կայ ՚ի գետնի աւաղան բոլորչի աշեղ մեծութեամբ ՚ի սպիտակ կճոյ. արամագիծ նորա 15 ուր:

ի ձախակողմն կըս Արտեմեայ տաճարին բացատ 'ի միմեանց կան և այլ որմունք, մնացուածք հոյակապ շինուածոց 'ի մեծամեծ հասարակ քարանց . ու մանկ յորմոցդ մնացելոց ուզգարերձք են, այլք կամարաձեք, որոց յեց կան 'ի կողմանէ այլք դիմարդելք առ անկործան ունելոյ վկամարան . և 'ի մին 'ի շինուածոցդ սանդուզք կան 'ի վեր ելանելի, և այլ սանդուզք յիշանել 'ի սոսորերկրելուայ վայր ընդարձակ : ⁴ Բաց 'ի քարաշէն աւերակացգ, են և այլ քանի մի աղիւաս-կերտ կամարաձև շինուածք, որք և մեծաւ մասամբ անկործան կան :

ՃԱՆԱՊԱՐՀ ՅԵՐՑԻԿԻ Ի ՊԱՆՏԵՐՄԱՆ, Ի ՄՈՒՀԱՄԵԴ ԵՒ Ի ՊՐՈՒՄԱՆ

Եթէն . — Ծավելվերեայ գիւղ անշուք այլ գինուղն անուանի , կայ յարեւմուս հարաւոյ քափուտաղի ցամաքակզբույն , յորմէ ընդ ցամաք մինչև ցՊանարքմա չորից ժամուց ճանապարհ է : ² Մի և կէս ժաման հեռի յլբառէկէ , և իր քառորդաւ ժամու խոսորեալ 'ի ճանապարհէն ընդ ձախ 'ի վերաց ըլլոյ հանդիպի գիւղն Համամելը . և առ նոյնաւ աւերակ զգեստին Պալզրիզ կոչեցեալ , որոյ մնացրդք վլատակացն հասանեն մինչև ցծովեղըն : Պարանոց ցամաքակզբույն ունի լցունութիւն գնացից քառորդի ժամու . և դաշտավայր է բովանդակ տարածածութիւնն . ընդ որ անցեալ սկսանին արահետ ճանապարհքն 'ի լեռնավայրի , և ստորաս նոյցա ապառաժուտ , որ և ծովեղը է մինչև ցՊանարքմա , առ որով կայ յաջմէ ճանապարհին երեք քառորդաւ հեռի 'ի Պանտըրմայէ փոքրիկ գիւղն Մահմետութէօյ :

ՊԱՏՏԱՐՄԱՆ.— Աւան մեծ ծովեղերեայ, յորում չիք ինչ երևելի ի շնուռածոց, այլ ամենայն անշուք, և տունքն և փողոցքն և կրպակքն. ձեռադործ վաճառ. ի նման է փսխաթ հասարակ, որ ոչ սակաւ. նպաստ է ուսմիկ գործառացն: Եկեղեցին Հայոց մեծաստարած և կճապատ, և առաջնորդարան առ. նմա: Ի Պահանջը մայէ սկսեալ մինչւ ցՊրուսա ամենայն գիւղօրէք մշակեալ են, յորում բաց յորթոց տեսանին անզաստանիքն խիստ առ. խիստ զարդարեալ թթենեօք վասն շերամոյ:

ՄՈՒՀԱԾՅՅ. — Աւան հեռուի ՚ի Քանարըրմայէ եօլժն ժամաւ, մերձ ՚ի Գարսատց գետ, զորոց ընակիչքն ըմպեն զջուր: Անշուք են և սորա ամենայն շինուածք. և շուկայն մեծ քան զՊանարըրմային, ընդ որոց ընդ բովանդակ Երկայնութիւն երակուառեք շարերալ են արկղաձև քարեւայ աւապանկը, ՚ի ջրամբար ժողովրդ եւանն:

ի Մոհալլճէ կէս ժամառ հեռի է գեան մեծակամուրջը, բնդ որ անցեալ՝

1. Ա ան ստորերկիւնայ տեղւոյս, յորում ցյանցիւնաց ինձ մասնել զ զնաւէ զամենայն վայրքն, տանգելն զիւղակիւնք տեղւոյն խառն ընդ առարկել, թէ բարանգակի վայրն ընալ իցն երբեմն առ վեճին, և զջեւառ կցնեն անգամօր տակաւոնն, որոց ձեռն հսկեցաւոյ անդէն ՚ի փոշուածնինն. և թէ ի վերս մից ՚ի կամարացարանն, զի յայլ ի յայլ սինեաց բաժանեալ է, որոց ոսկեքար մի զօր ոչ ոք համարձակի ՚ի բաց բառնալ:

2. Ըստ բարձրագույն ուղղված Աշխատեկի ցՊրուսս տեսանկանին արտադրվել անհաւա - ըքք, զի սպանանենքն զնուասի ին մեզա համարեալ է՝ ի Տանեկաց, բազմանան, ոյցք, և այդքան ընտանին են ին յարօրագորեւ մասկին ըլլէն երթան նորա որոնեած ՏՃՇա առարկան - զբացնեալուն գենեն ի վերաց ծիստանց և տանեաց յօթենաց ի թանձն թուուաց:

ակսանի ահագին դաշտավայր անմշակելի և ճախճախուտ, որ տեէ ժամ և կէս մինչեւ ցլլուռշպար . և է դա բերդ մեծատարած, որոյ հարստային պարիսպն ան կործան կան տակաւին և նեղնաստունք ՚ի նմա կամարայէնք և առ դրամին նըշան խաչի . իսկ ՚ի միջոց վայրի բերդին փոքրիկ բաղանիք մի նեթ աւերակ, իայ և եկեղեցի Յունաց նորաշէն շինեալ ՚ի քարանց բերդին, և գուզնաքեայ տունք : իսկ ՚ի հիւսիսայ կովմանէ անցանէ գետն (Հորինտակ) մեծ և նաև արկելի . որոյ կամուրջն կործանեալ, խարիսք միայն կան հանդերձ մասամբք կամարաց . նմին իրի մեծ նաւակաւ անցանեն յայնկցս ճանապարհորդք և դրասաք : Յայն կոյս դետոյդ դարձեալ դաշտավայր է ճախճախուտ, թէպէտ և ուրեք ուրեք մշակեալ, մանաւանդ ուր բլրածե է երկիրն : Յաջմէ երեխ Ուլուռշպար լիճ, առ որոյ եղերքը քերեալ և անցեալ յաջմէ, ընդ առաջ լինի ինպիզ-խան ասացեալն, երբեմն գողոց բնակարան ՚ի մեծի դաշտավայրին . և է շինուած քարաշէն և ամուր, անկործան մնացեալ ցայսօր, բաղմագմէթ, և յերփս կարգս տրոնեալ՝ քառակուսի կամարասեամբք . և ՚ի միջին կարգին կրկին լուսամուտք, զորովք պատեալ է քառակուսի որմն, ՚ի դետոյդ չորիք սեամբք ՚ի վեր ուներով զորմն, և ըստ ՚ի միջոցէ չորիք սեամնցն հաղորդի տեղուոյն : Կրղի կայ ՚ի մէջ լճին հանդերձ աւանան Ապիլոնե (Abullionte) կուցեալ, այն է Ապոլոնիա, մերձ ցամաքին՝ որում հաղորդեալ է փայտեայ կամրջաւ ահագին երկայնութեամբ . և ՚ի հանդիսայ կղզոյն ՚ի վերայ ցամաքին է գիւղն Գարա-աղաձ :

Զարալ աղը, դիւղ մեծ որ հեռոիէ ՚ի Մոհալլընէ ութ ժամաւ . և իջևան կարաւանաց ՚ի նմա մեծ : Հեռոի ՚ի նմանէ իրը 40 վայրկեան, է այլ դիւղ Գարաձաօպաւա, և նոյնքան ևս հեռոի դիւղն Պաշյուոյ : իսկ ՚ի Զաթալ աղը դեղին մինչեւ ցՊրուսա են ժամի վեց :

Պ Ր Ո Ւ Խ Ա Ա

Պրուսացը քաղաքն անուանի լեռ հնութեամբն անդատին ՚ի ժամանակաց անտի Աննիբալաց և Պրուսիասայ Բիւթանացւոց թագաւորի, հզօր և մեծ հանդիսացաւ յաւուրս Միհրգասասայ, և ընդ փոփոխել զարուց և ժամանակաց ընդ իշխանութեամբ կայսերաց, մինչեւ եղեւ յետոյ նախամթու Օամանեան թագաւորաց յառաջ քան զառումն Բիւլանդիոյ, յամէ 1325 ցամն 1453 :

Դիրք Քալմարն են ԶՈՒԹԵՆ ԱՌԱՋՈՒԹԻՒՆ . — Քաղաքս այս գեղեցիկ և վսեմ զրիւքն և բաղմապատիկ փոփոխ տեսարանք բնութեան ցանկալի երենցուցանէ զինքն . և է կառուցեալ ՚ի ստորաս գոտեացն Ողիսնպեայ լերին՝ որ ՚ի հարսուոյ նորս, անսես ՚ի քաղաքէն, և միայն պարք նորին տեսանին ՚ի թիկանց քաղաքին աղխաղինեաք ՚ի հարաւ կուսէ . և ստորոտք նոյս ուրեք զառ ՚ի վայր և ուրեք հրուան դանաձէ, և այլուր դաշտաձէ և ձորամէջ զրիւքն՝ նոյնպիսի երենցուցանեն զայլ և այլ թաղս քաղաքին . որք և բաժանին յերփս զիսաւոր մասունա . բուն քաղաքն յաջմէ, և ՚ի ձախմէ թազն սուրդան Մուրաւու մահալէսի . և ՚ի միջին տեղուոյ :

Դպեակին : Երես ողջոյն քաղաքին հայի ընդ հիւսիս և արևելք . և առաջի նորա ընդ-արձակ զաշտավայր մխկեալ և զարդարեալ ծառակք և գիւղօրեք 'ի նմա սփիւռ , և 'ի թիւկանց նոցա յարեկից կուսէ շետանն հաբրրլը տաղը կոչեցեալ : Ծնդ վր-սեմ տեսարանաց քաղաքին և ընութեան հրաշալիս համարելիք է ամբաւ տուստու-թիւն ջուրցն՝ որոց անսպաս շտեմարանք են լերինկն . Ծով զայլ և այլ գետակու և առուս որք ընդ զանազան ձորամեջս քաղաքին հոսին 'ի լերանց անտի վայրապար՝ սպիտոց տեսանց աղօրէից և խաղախորդաց 'ի պէտս . ամենայն թագք լի են աղ-րերգ , և յամենայն տան գտանին անհաստարար հոսելով զայր և զերենիկ : Բայց յաստառթենէ ջուրցն օդ քաղաքին գիյնին և թանձրէ , և ջարբն ևս 'ի հասարա-կի անվիտանք են և ծանր , թէպէս և ընտկիցն խափր զննն ընդ այս և ընդ այն 'ի ջրոցն , զի բաղմապատիկ աղբերակոնք եննոցա , որպէս ոմն Ելնիսուր , ոմն տէվ-րէնկէ , ոմն կիւմիւշ , և աքձալար և գաւաք , միշտի և կօյտէրէ , ապոշնայաք և փունար պաշի , և այլն . սակայն և առ 'ի նոցանէ խոստովանեալ է թէ առհա-սպառակ ծանր և անախորժ են ջուրք քաղաքին . և պատճառ զհանքային մասունս տանն որպէք լի են լերինկն յորոց ջուրքն ըխեն . 'ի նոցանէ են և հանքային ջերմ ջրոց բաղանիքն անտառնիք : Սակայն առ զուրծալի և վաեմ զրիք քաղաքին և առ սրանչի տեսարանօքն՝ թեթե թետի վեսադ , գննեաց այնոցիկ՝ որոց պայծառ տե-սութեամբ եեթ քաղաքին զբանուցուն :

Դվան . — Ի նախնի շնուտածոց քաղաքին զգեակն եեթ նշանաւոր է , թէպէտ և մեծաւ մասամբ աւերակ : Եւ է կառուցեալ 'ի վերայ սեպացեալ ապառաժի , որ և ահեղ է բարձրութեամբն 'ի հիւսիսոյ և յարեմոնից . այլ 'ի հարաւոյ հասասար դաշտավայրին՝ որ ընդ մէջ է այնը կողման և լերանցն : Արդ պարիստք կրկին կող-մանցդ չերկին սոյժմ բայ 'ի մասնէն որ առ արեմոնեան դրամբն կայ . գուցէ 'ի բը-նիկ բարձրութիւն կողմանցն վատահացեալ՝ անօգուտ համարեալ են պարապար ամբացուցանել . Արեմոնեան զուռն նորա կոչի Քարըլձա գարուսուր , սյնու զի յարեմուտս կոյս քաղաքին են հանքային բաղանիքն միտու ժամաւ հեռի 'ի նմա-նէ . հարաւոյին զուռն կոչի Զընտան գարուսուր , և արեմոնեանն Եկր գարուսուր որ և կրկին է : Հանդէպ արեմոնեան դրանն է արահետ ուղին , որ 'ի թաղէն սուլ-դան Մուրասայ հաննէ 'ի դղեակն կոյս առ 'ի կողմն հարաւոյ , և յերկուս բաժանի մի զմուլ իբր սանզզաձե յապառաժի անդ . սոորինն տանի մինչև ցփայտեաց կա-մուրին փոքրիկ ընդ որով անցանէ գետակ մի ընդ ձորամեջն յաջմէ , իսկ 'ի ձախ-մէ է պարապաձե ապառաժ դղեկին , ընդ որ առ կամիչնան ծակ գործեալ է լայն 'ի ընութենէ , բայց անտի և անզր անդնալիք է ուղին , և սեպացեալ ապառաժին հետզետէ բարձրանան . յորոց վերայ է վերին ուղին , որոյ նոյնպէս 'ի ձախմէ պարապաձե ապառաժ և ուրեք ուրեք անձաւք 'ի նմա , և յաջմէ վախից ահուու-քութիւն , տարեալ հանէ 'ի հարաւոյին զուռնն : Ի զրանէ աստի ընդ բովանդակ երկայնութիւն հարաւոյ կողմանն կրկնապարիսազ է զգեակն որ և անկարծան կայ տուկայն , մնմաւանդ ներքինն , և բազում ուրեք աշտարակք , բայց մեծաւ մասամբ քայլայեաք : Ի վերայ պարապացդ՝ մանաւանդ ներքինոյն՝ բազում յօյն արձանա-գիրք կան որ անարաստ և որ խանզգարեալ , և ուրեք ևս բարձրաբանդակ ձագիւնք 'ի ձև զրասանկաց , ևս և նշանք խաչի . և այդ ամենայն ոչ 'ի պատշաճ տեղուո՞ւ ագու-

ցեալ յորմն, այլ խառնիխուուն, և ունակք ևս կողմնակի և այլք զլսիվայր. նմին իրի թուին այլոց աւերակաց հնագունից մասունք ՚ի նորոգութեան դղեկիդ յար-մարեաբք ՚ի նմին :

ԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԽԵ ԹԱԳԴԱՌՈՒԾ, ՆԵ ՓՈՂԵՐԱԽՈՅՆ. — Արքունական ապարանք նախնի թագուրացն Օսմաննեանց զրը կոչեն լակի սէրայ, են ՚ի ներքս ՚ի դղեկին մօտ առ Քարշլաս գարուոց յեղեր ահազդին ապաստամին. այլ չմնան ՚ի նման կերպա-րանք արքունեաց, կործանեալ խաղաղ յանփութութենէ և ՚ի հրզեհաց: Եւ զու-ղին այժմ ծայր ՚ի ծայր անդասասան թթենեաց արարեալ զուղնաքեայ որմովք պատեալ են ՚ի հարաւոյ կուտե. խակ ՚ի հիւմիսոյ բաց է ամենեալն, որպէս և բո-վանդակ երկայնութիւն դղեկին այզր կողման: Եւ տեղին այն բարձրութեամբն և յասակոյս հրուանգանաձն երկայնութեամբն և ահաւոր վախիսիքն առաջի նորա, և զի ընդուրձակ գաշտավայր քաղաքին է ՚ի հանգիսոյ և լերինքն արեելց ՚ի թի-կանց նորա, պատնեշի է տեսարանաւ, արժանի արքայավոյել ապարանից: Խակ մնացորդք հնութեանց մասանց ապարանիցդ զոյզն որմովք զատուցեալ կան յա-ջակոզմն նորա. և են այլ և այլ սենեամբք զմիւթեալովք, զորս փողերանոց կոչեն, ամսից մնացեալք և քայրայեալք, և են նոյնպէս ՚ի ծայր ապաստամին, համար-ձակ մտանելի ամենայն ումեկ:

ԹՈՓԻԵԽԵ, ՆԻ ՆԵՐ ԳԱԲՐՈՒՍՈՒ. — Մ'օտ Եէրգարուու զրանն կայ թօփիսանէ, յանմէ կոկի-ուէրային. և երկուստեք զրանն կիսենդ բարձրագանդակ կճեայ պատկերք, հեծելոց ասիւծու և ընձու ոգորեց, և երկուստեք արծուեաց զիսխիլիր ուղղահայ-եաց և թեատարած, որք այխւակովմամիք ձևացուցեալ յեսեալ են յորմն: Բարձրագանդակ պատկերք զատանին և ՚ի վերայ այլց զրան որմովք խցեց: Արդ զամենայն տարածութիւն թօփիսանէին յանդասասան վիսեալ են որպէս զլակի-ուէրային, բայց որկեք որկեք երեխն աւերակք քարագործ շինուածոց: Ի դադաման աեղոյն ուր թնդանութիւն կան, հրաշավի է տեսարան վայրաց և քաղաքին ողջոյն բազմութեամբ գմբէթեաւոր շինուածոց, իջևանից, մղկթաց և մնիրայից, և պար-տիզաց և բարձր բարձր ծառոց: Հանգէպ թօփիսանէի զրանն է մղկիթ մի, և ՚ի վերայ քառակուսի բնոյ մնիրային փորեալ է քարն բորբջի թղաչափ արամադիւ. զորմէ աւանդեն եթէ, ՚ի շինութեան մղկթին զրտակ հացի նոյնաշափ մեծութեամբ գանիկի միոյ վաճառեր:

Ե՞ր գարուոց զօր յիշեցաք յառաջագոյն՝ կրկին գուռն է, յորոց մին բուն դղեկին ընդ որ իջանեն ՚ի քաղաքն. խակ միջոց երկուց զրանցդ պարսպօք բարձրա-ցուցեալ. և յաջակոզմն առ երկուստեք զրամիկն աշտարակ բարձր: Ի վերայ միոյ ՚ի զրանդեաց երկորոզի զրանն կայ խաչ բարձրագանդակ, և առնմիւր փորա-դրեալ քանիք մի բարձր յունաբէն: ¹

Դղեակին բնակութեամբն և այլ և այլ թաղիսիքն թուի քաղաք մի փոքր. թէ-


1. ՚ Կողմնակի պնկեւնաւոր որմն զբանդ ՚ի ձախու յելուն առաջանաւ և բարձր առաջ իջու ՚ի վեր հանդուցանէ զնա: Յասնու ապա նմա Տէփիշն թէ ընդուն արար զամենայն կամսն նորա. և նասաէ զի պարա և բարի ասնել այլը: Յայնեամ Տէփի-շն կամսալ զնեռանէ առն առնի առ վլմն այն, և բումբն ձնշնաւ և փասոցուցեալ առ ցնաւ զօր առնեաց եկեալ զայես ՚ի փանալք քարիզ ուկի մի. և նաս առներ այնպէս: ՚ բազմանալ սկացն՝ զոյզն ՚ի գու-

պէտ և հասարակաց շինուածքն մղկիթք և բազանիք անշոք են որպէտ և սունկն. շուկայ կամ վաճառանոց և իջեվան չիք 'ի նմին. խկ պարտէզք և անդասասանք բաղսում և մեծամեծ. Մահմէտականք միայն բնակեն 'ի նմա: ի նախնի շինուածոյ անարատ մնացեալ է անդ Տաշուլլուր մանասդըր ասացեալ եկեղեցին, զորմէ սոսորե լիցին բանք:

Պրուսացոց քաղաքն թէպէտ և անկանոն ձևով փաղցաց և տանցն է անշոք, ոյլ գեղեցկութեամիր և պէսպիսութեամիր զրիցն 'ի ներքոյ և արտաքոյ, զուարձալի է յոյժ, և տեղիք զրօսանաց 'ի նմա ոչ սակաւ. յորս անուանիք է փունարպաշի հանդէպ հարաւային պարսպաց զղեկին, և թէքերուած յարեկլս հարաւոյ, որում մօտ են անուանի ծառք շագանակի, զանազան քէօյք, և գարանժիլի, և որ այլն ես:

ՄԶԿԻԹՔ ԵՒ ՄԱՀՄՐՄԱԿՆՔ ԹԱՌԱՌԵՎԱՅ. — ի հասարակաց շինուածոց քաղաքին հոյակապ է պէտէրէնն չորեկստասան գմբէթիւ. մղկիթք ըստ աւորց տարւոյն ասեն 365 եղեալ 'ի հնումն, նոյնչափ և բազանիք. այժմ՝ հաղիւ մի 'ի չորից է մնացեալ: Անուանիք 'ի մղկիթաց որք և թագաւորաշէնք' են, առաջն և մեծագոյն Ուլուձամիր, զոյ շինեալ են երկք թագաւորք Մուրատ, Պայէջիս և լրէ հէմինէտ Առաջնիք. թէպէտ և իւրաքանչիւր 'ի դոցանէ մի մի ոյլ ևս մղկիթոյ շինեալ են որք յանուն նոցա կոչին, սակայն հոյակապ մեծութեամին սա զանցանէ զամեններումք. լայնութիւն նորս 'ի հիւստաց 'ի հարաւ. է 48 մեդր, խալ երկայնութիւնն 53: Որ միանգամ 'ի զնին կայ 'ի ներքուստ քառակուսի թանձր կամարասահանցն և գմբէթիցն բազմութեան և պայծառ մեծատարած վայրին և անթիւ բազմութեան կանթեղացն և մեծատառ զրուածոյն յորմանն 'ի զարմանս ըմբոնի. 49 են զրբէթքն, և 'ի միջին տեղունչ նոցա զմբէթաձե պատուհան 'ի հիւստածոյ մետաղեաց թէպէտ առանց ապակւոյ. խալ 'ի ներքս մղկիթին ուղղահայեաց պատուհանիդ է շատրուան մեծատարած և մշտարուի հանգերձ կճայտատի գտութիւն զնովու:


Տաշուլլուր մանասդըր, զոր 'ի վերդ յիշեցագ 'ի զղեկին, եկեղեցի էր Յունաց, և արդ փոխեալ 'ի մահարձան շիրմի սուլզան Օրզանայ որդուոյ Օսմանայ: Կարի բարձրութեամին անհամեմատ երեխ տարածութեան լորում. այլ անարատ մնացեալ են ցայսօր ներքոյ և արտաքոյ որմանքն ամենայն. 'ի ներքոյ պատեալ է զունազոյն կճօք, թէպէտ և առ հնութեանն ուրեք ուրեք անկեալ կճիցն, կրու նորոգեալ է: Ցեղի խորանին կիսարուոր, և նոյնաձե աստիճան զործեալ է 'ի նմա չուրեքիարգեան. քառակուսի են սիւնքն. և 'ի վերայ միոյ 'ի ձախակողմեան կամարասահանցն որ մօտ է առ խորանն՝ կայ 'ի մընագրյն քարէ խաչ երկայնաձե ագուցեալ յորմեն: Արկղ մի փոքր եղեալ կայ 'ի վերայ արևմտուան որմանը մարզաշափ բարձրութեամիր 'ի վեր, յորում ամեն պահի մաղ մի 'ի մօրուացն Մահմէտի: ի հին յիշատակացն Օրզանայ աստ պահէր թմրուկ մի ահեղ մեծութեամիր, որ 'ի ժամանակս հրունչի սյրեցաւ: խակ գերեզմանքն որ զրաւեալ անին զմիջոց եկեղեցոյն՝ 23 են թուով, յորոց եղեալն 'ի միջին տեղունչ մեծագոյն զագալաւ և ծածկոցովն և մեծ զիստրկաւ է սուլդան Օրզանին. և 24 աստի և անտի թագաշաման գողք, և 'ի բողոքելն առ գտաւուորն՝ գտեալ զատօրէ ականն 'ի քարէ անափ, ոչ ևս գտանէ վասն և տան. և հարցեալ թէ ուսուի էր նմա սոկին, 'ի վեր հանելց զգաղանիսն:



Ա. Մզկիլի գաղին հիմքեար Մուշտառ.



Բ. Մզկիլի և Շիրիմի գաղին հիմքեար (Մուշտառ Ա.)



Գ. Օրենստան Հիմքեար կիզկե բազմենոց.

ւորագուն սերունդք նորա անծանօթք յանուանէ . իսկ վերջինն որ 'ի ձախմէ խորանին կայ ստորև քան զայլսն՝ Հնդկաց թագաւորին է ասեն որ եղեալ էր յօդնութիւն Օրովանայ : Առ արտաքին դրամին կան երկու սիւնք 'ի սպիտակ կճոյ մնացորդք հին շինուածոյ , հանդերձ զարդարուն վերնախարսիսք , որ արդ փոխանակ ներքնախարսիս եղեալ են : Յարեւմուեան կողմն արտաքոյ եղեղեցւոյն 'ի վերաց աւերեալ որմնցն կան նկարէն պատկերը անեղծք :

Սուշրան Օսման հայր Օրդանայ . — Եկրմա՞ սորա առանձիւր է Տաշուշլոյ մանասողը յայ . յաստակ նորա փոքր մի խոր , և է ուժանկիւնի . առ խրաբանչիւր անկեամբն կանգնեալ զոյդ նուրբ սեանց , յորոց չորս զցյ են 'ի սուշմաք կարմիր քարանց , և չորք յալուս սպիտակ կճոյ . նոյնավես և որմունքն պատեալ են կապոյտ և սպիտակ կճոլ : Գերեզմանն Օսմանայ 'ի միջին տեղւոյ կայ բարձր քան զերկուատեք եղեալն . զիսարկ նորա բոլորչի սպիտակ վամթութիւ . և լայնամեջ : ի ձախմէ նորին զնի Ալայէտափին երեց որդի նորա և վէզիր , մեռեալ 'ի հիճ . 732 . և յաջմէ սուշրան խպրահիմ 'որզի Օրովանայ , մեռեալ 'ի հիճ . 720 . և առ նովաւ կին Օսմանայ՝ Ասպրճա սուշրան . և այլ ևս 43 'ի սերնդոց նորին անծանօթք յանուանէ : ի հանդիպակաց անշուք շիրմի որ որմակից է միւսցն և միջնազրամի զատուցեալ՝ կան նոյնավէս 17 գերեզմանկ թագաւորազանց , ամենկրին անծանօթք յանուանէ :

Դազի սուշրան Մուշրատ Ա . — Մշկիթ սորա է 'ի գիւղն Զէքիրկէ արտաքոյ քաղաքին 'ի բարձրահայեաց վայրի . ճակաս մզկիթիս անսովոր ձևով՝ այսինքն է կրկնայարկ զամթիւ և կամարածե պատուհանօք սարբերի յայլոց . և յերկուախն կողմանն՝ յարեւելս և յարեւմուտա՛ անտի ուր գմբէթն սկասնի , կարգաւ խցկունս արարեալ են հանդերձ որահիւք , բովանդակ քարաշէն և կամարակապ , ելանելի 'ի վեր սանդղօք որք կան առընթեր զրան մզկիթին անտես արտաքոյ . և արտաքին սրմունք խցկանցդ են նոյն որմունք մզկիթին . արարեալ են դրա վասն կարգացողաց՝ 'ի Մուշրատայ . բայց յես ժամանակաց յանկարգանալ նոցին զեղսութեամբ՝ նզովս կարգայեալ 'ի վերաց նոցա և բնակարանացն , անտի և այսր անբնակ մնան : Նոյն ինքն Մուշրատ հասոյթս կարգեալ էր նոցա և ամենայն բնակչաց գեղջն Զէքիրկէ , ուր ոչ ոք հուր վառեր 'ի տան խրուտ , ամենեցան յիւմարեք մզկիթին կերակերեալ զըրհանապաղ . և հասոյթն էր 'ի հնձոց գիւղօրեկց բազմաց . որոց 'ի շինեն բաւական՝ զգերին իւր զոր 'ի միում գեղջ բնակեցոյց՝ վաճառել պատուիրեայ , որպէս զի մի խափանեսցի հանապազօրեայ կերակուրն . և սովորութիւնդ այդ ամէ մինչեւ ցայսօր 'ի Զէքիրկէ , այլ նուալեալ յայժ 'ի նախիկին սուշրանին , ամենայն սուն արդ զօր ամենայն զրտակ մի հացի թոշակ ունի , և յամենայն հինգշաբաթի աւուր փիլակ . իսկ 'ի բամազանի այլ ևս աւելի : Սերունդք գերեւացն բնակին արդ 'ի գիւղն Բաղդահանու , և ամ ըստ ամէ հատուցանեն իմարէթին զահմանեալ սուրս 'ի հնձոց իւրեանց :

Հանդէպ մզկիթին Մուշրատայ է մահարձանն նորա , և գերեզմանն 'ի միջին տեղւոյ վայրուեայ վանդակաւ շրջապատեալ . արտաքոյ վանդակին 'ի ձախտկորմն կատայ լի ցորենով եղեալ 'ի վերաց սեան , յորմէ Մերմեսուանդն երկրադործք սունուն բարձր շափ և խառնեն 'ի սերմանիս իւրեանց զի առատապէս պտղաքերեացն անդքն . և է կատայ լուսրջի լայնարերան , և առ փորով քանդակագործ զրու-

թիւն տաճիկ խոշորաստառ արծաթով յեռեալ, այլ առ հնութեամն խանդարեալ: Առ մնարօքն արտափոյ վանդակին կայ քարեայ կոմող երկթզաշափ, յոր եկեալ նստին ամուլ կանայք և ամենայն բախտակինդիր, և պահապան շիրմին (թիւրպէտար) ունելով 'ի ձեռին գերկաթի փականս սուլզան Մուրաստայ զոր Մուրաստ քիլիտի կոչեն, երկթիզ երկայնութեամբ և անստվոր ձեռով, (պահեալ յառանձին արկեղ) և մերձեալ առ բաղզախնդիրն երիցս շուրջ ածէ զզլստմն և բանայ յերբորդում նուագին: և այնու որպէս թէ յանողին բաղզը խնդրովին: — Ի զբոխ զագաղին եգեալ է զիսարկ նորաշէն և նորաձե: զի բուն զիսարկ նորա պահի յարկեղ փականացն: և է բաղրչի ցած, սպիտակ փաթութիւն ուռուցեալ, և զաղաթն նորա կորնթարդ: 'ի նմին արկեղ պահի և վերարկու նորա կանաչագոյն, թէ պէտ և նորոգեալ յետ ժամանակաց, որպէս և փաթոյթ զիսարկին, որպէս վկայեաց և պահապանն ինքնին: Հանդիպակաց զիսոյն առ որմակը զետեղեալ է գահն նորին Մուրաստայ հասարակ փայտաշէն քառակուսի, յորմէ և արծաթի դարդըն բարձեալ են: Մորթ ընձենի եղեալ կայ 'ի վերայ զահուն հնապոյն յոյժ: յորոյ վերայ ասեն վճարէր Մուրաստ զսովորական ազօթմն: Եւ 'ի հանդիպակակաց որմն կախեալ կայ մասն զրահի շղթայագործ, որ թուի անշոշան նորին թագուուրի, այլ Տաճիկը առասպելեն Դաւթի մարգարէի մինել: Յանակողմն Մուրաստայ եգեալ է Մէհէմմէտ չէլէպի որդի սուլդան Պայէզիսի Բ: Խոկ 'ի ձախակողմն առընթեր միմեանց որդիկը երլարըմ Պայէզիստայ՝ Մուսա և խա չէլէպիթ, և առընթեր նոցա խաքուպ չէլէպի կրսեր որդի Մուրաստայ: և յոտս նոցա կին նորին Մուրաստայ և զսուելըն նորա առ նովաւ: — Անուանի է յոյժ արտաքին զուռնն գաւթի մահարձանին որ է 'ի վերայ փողոցի, 'ի պողպատէ, վանդակաձե քանդակագործ փորուածոյ զարգուք և յեռեալ արծաթի թելիսք. զսմանէ ասեն եթէ փոխարէն իցէ միոյ յեւրոպական թագուուրաց առ Մուրաստ. որոյ յզեալ էր նման ընծայ սուսերմի: Ոմանց յեւրոպացի ճանապարհորդաց կամեցեալ է գնել զվանդակակադուանն զայն 80 հաղար զահեկանաց, այլ չնն հաւանեալ պահապանին օտարացացանել զերենի յիշատակն:

Մուրդան Պայէզիստ Ա. Երլտրըլմ որդի Մուրաստայ Ա. — Որոյ մզկիթն յարեւակողմն կայ քաղաքին արտափոյ 'ի մեծ և 'ի գեղեցիկ և 'ի բարձրացիր գաշտավայրի: Ի հնութին շրջապատ մզկիթին պատեալ էր պարապաւ, կամ ըստ ասելը ումանց ապարանէր մեծաստարած կային առ աւեղեան, և աւերակըն երկին ցարդ, և ուրեք ևս կամարաշէն շինուածք քայքայեալք: Ի հարսաւյին կոզմն մզկիթին մնայ աւերակ մեծի և բազմակամար ջրանցից: Հանդէպ մզկիթին 'ի հիւսիսային կոզմն նորա 'ի սոսորն է մահարձան Պայէզիստայ, որոյ գերեզմանն է 'ի միջին տեղունչ: 'ի ձախմէ նորա որդւոյ նորին սուլզան Միւլէյմանի, և յանմէ 'ի սոսորն կնոջն, և երկուց որդւոյ: Երևելի ինչ չի նմա բաց յերկուց սուրմաք կարմիր սեմանց որ կան երկուստեղ զրան զսութի մահարձանին: Քառորդ ժամանու հեռի 'ի մզկիթէ աստի յարեւելս կոյս 'ի վերայ արահետ ճանապարհին է շինուած մեծ զոր յիմարանոց կոչեն, ամայի և աւերակ. կամարաշէն խցկանք երկուստեղ, և միջին վայրն անձեղուն, 'ի ծայր շինուածոյն սենեակ մի մեծ: և բարձրագմբէթ: Ի վերայ արտաքին մեծի զրանն կան երկուստեղ արծուիք աղիւսակողմամբ ձեւացուցեալ ըստ

օրինակի զբանն թօվիսանէի զոր յիշեցաք 'ի վերոյ : Յաց յարծուէնչանացդ այլ ինչ հնան հնութեան չերևի յորմաննան :

Չելեպի սուլդան Մէհէմմէտայ Ա. որդւոյ Եըլարըմայ մղկիթն կառուցեալ է 'ի ծայր քաղաքին յարենելս կյոս 'ի բարձրահայեաց վայրի . տաճիկ ճարտարպետութիւն փայլէ 'ի տման ներքոյ և արտաքոյ , որոյ նման չգտանի 'ի Պրուսա . Հիանալի է շրջապատ արտաքին զբանն , բարձրագանգակ զրութեամբ 'ի կծի , կարգ մի քիշի տառիք և կարգ մի սովորականաւն , և առ նորգ 'ի վերոյ և 'ի ներքոյ պէս պէս քանդակք զարդուց , որպէս և խորչիցն որ երկուատեք զբանն հանդէտ մի մեանց : Ա'յլ վսեմութիւն է ներքին տեսլեանն , թող զճոխութիւն զարդուց և նըկարոց տեղոյ մինրապին , որոյ շրջապատն ողջոյն (որ և երկուատեք թևս արձակեալ է անտես արտաքուստ , որպէս զի արտաքին որմոնկը միահետ ուղղագիծ են) իրը մարդաշափ և կէս բարձրութեամբ բազմնակիւնի կանաչ յախճապակք պատեալ է , և յամենեսին 'ի նոսա ոսկեգոյն մանր ծաղկանկարք : Հանդէպ մինրապին 'ի բարձու 'ի վերայ ներքին զբան է տեղի աղօթից թաղաւորին , պատեալ բովանդակ քառակուսի յախճապակք և 'ի վերայ նոյսապէսպէս զարդք գունագոյն նկարուք , և բարձրագանդակ զրութիւնը մեծատառք : Սովին զարդուք ևն յօրինեալ և երկգիբն սենենկաշափ խորչըն հանդէպ մինրապին երկուատեք ներքին զբանն , միահետ հաւասար գեանոյն , որք և աղօթատեղիք էին վէզիրին և գենպետին : Զմղկիթս զայս եկիլ ձամի կոչեն . իրը զի նախ մինարէ նորա կանաչ յախճապակք պատեալ էր . այլ յետ ժամանակաց կայծակնահար եղեալ վերըստին շինեցաւ , և արդ բռով սպիտակացուցեալ է :

Մահարձան նորին սուլդան Մէհէմմէտի մօտ է 'ի հարաւոյ մղկիթին , բարձրահայեաց քանա զնա , ովթանկիւնի և բարձրագմբէթ . պատեալ կանաչ յախճապակք արտաքոյ , իսկ 'ի ներքոյ ըստ չափոյ բարձրութեան մղկիթին : Ի տման ամենայն զարդք որմոցն համարուեաս է որմոց մղկիթին . և մինրապին զարդք և բարձրագանդակ զեննագոյն զրութիւնքն 'ի նոսա 'ի վերայ կանաչ նկարէն յախճապակքի 'ի նման են զարդուց երից սենենկաց մղկիթին : Արդ գերեզմանն սուլդանին է 'ի միջն տեղոյն , և շրջապատ պատուանդանի նորին նոյնօրինակ բարձրագանդակ տառիք զրոշմեալ . 'ի ստորև նորա առաջին գերեզմանն որ բովանդակ նոյնպիսի զրոշմանդովք է զարդարեալ , է երեց զատեր նորին անուանելոյ Սէլճի զատըն . և վերջինն տախտակամած՝ գայեկին , և 'ի միջի նոյսա հարճիցն և այլոց զատերաց :


Սուլդան Մուրասայ Բ. մղկիթն է 'ի համանուն թագի 'ի համեմէ քաղաքին , և մահարձանք առ նմին բաղւումք՝ յընդարձակ շրջապատի , յորում և զպրոց և իսմարէր , բովանդակին քարաշէն : Մղկիթն չըրեգմբէթեայ երեեալ արտագրուստ , երկգմբէթեայ երևի 'ի ներքուստ , ուր և ողջոյն որմոնկքն մարդաշափ և կէս բարձրութեամբ 'ի գեանոյն պատեալ են կանաչ յախճապակք : Հանդէպ մինրապին է վերնատուն վանդակապատ՝ յորում թաղաւորաց միայն օրէն է կալ 'ի ժամ աղօթից : Ի ձախակորին մղկիթին են մահարձանիքն , փորու խորոցաւ անշատեաք 'ի միմեանց . մահարձանն Մուրասայ՝ զբանն զարդարուն առաստաղաւ՝ թէպէտ և փայտեայ՝ որոշի յայլոց . առաջի նորա շատրուան և առ նովաւ անուանի սօսին Հալքալը շինար , իբրու . զի երկուք յոսաց մեծի ծառոյդ յիթեար եկեալ աղեղնաձեւ

միացեալ՝ մանեաակ մի մեծ գործեալ են, և յետ միանալցին վերստին արձակեաքը՝ 'ի վեր: գերեզման Մուրատայ կամ տապանն կծեայ բաց է՝ 'ի վերոյ և լի հողով, յուրամ ցանեն ցորեան, և ուռոգի 'ի գմբեթէն որոյ բաց է և կեզրոնն: Զգլասարի նորա բարորշի մեծատարած և ապիտակ փաթութիւ որպէս պյլոց թագաւորաց և 'ի միջն տեղով կոնաձե և ուկէպատ՝ սուլդան Մահմետ կամեցաւ յաւորս մեր փոխագրել՝ 'ի թագաւորեալ քաղաքն, և եկեալ որ տանելցին էր, ասեն տեղացիք, տանելցալ, յաներևոյթ զօրութենէ, ձեռնթափ դարձաւ յետո: Առ մինրապան և զեալ է արկղ՝ 'ի բարձու, յորում պահի մազ մի 'ի մօրուացն օրէնտրի նոցա Մահմէտի, որպէս և 'ի Տավուլու մանասղը: Միջնորմով զատուցեալ է 'ի սմանէ մահարձան Ալայէտոտինայ որգւոյն Մուրատայ սպանեց 'ի հօրէն խրմէ. և առ նմա կան 'ի նմին սենեկի այլ ևս երկք գերեզմանկը: Երկրորդ մահարձանն է Քանունի սուլդան Մուստաֆայի և երից զաւակաց նորա առ նմա. և չընապատ նորին 'ի ներքուստ պատեալ յախճապակօք: — Յերրորդումն երկու գերեզմանիք են հարձից սուլդան Մուստաֆայի, որը ըստ ասելց Տաճկաց գամերք են միոյ յեւլապացի թագաւորաց: Իցեն թերեւս իշխանի ուրուք նուաճելց 'ի Մուրատայ: — Ի չորրորդումն են տապանկը երից զամերաց Ֆէրիինի, որոց մին կոչի Քօրքուտ սուլդան: — Ի հինգերորդումն կան չորր թագաւորացունկը անձանօթք. և մահարձանն պատեալ 'ի ներքուստ յախճապակօք: — Վեցերորդն կոչի Էտէ գաւուն, գայեկի որդուոց Մուրատայ: — Եօթներորդուն կիշլ ռուն, գատեր սուլդան Պայէղխասայ թ. և առ ընթեր երկք ևս այլ անձանօթք: — Ութերորդն Այնէլշան, դասոր նորին Պայէղխասայ. առ որով կան երկու ևս այլ: — Իններորդ Ճէմ սուլդան, եղբայր նորին Պայէղխասայ. առ ընթեր կան նորա և երկք ևս այլ. և մահարձանն պատեալ է յախճապակօք: — Տանեներորդ մահարձանն է առընթեր մզկիթին յառաջնում տեղ ւո՞յ, և է սուլդան Ահմէտի և սուլդան Մուստաֆայի որգւոց նորին Պայէղխասայ. և առ ընթեր նոցա երկու ևս, և առ նոցա ոտուքն այլ ևս երկուք, քերց Ահմէտի. մահարձանն այս պատեալ է կանաչ յախճապակօք: — Մետասաներորդ համարի մահարձանն՝ որ արտաքրյ կայ պարսպին. և է գերեզման խոհարաբին նորին սուլդան Մուրատայ թ, և անուն նորա գառըշտրան. զի որպէս պատմեն Տաճիկը 'ի խոհարաբութեան իւրում փոխանակ շերեգոյ հոլանի բաղկան խասնէր զկատայ կերակրոյն. և առ անհեղեղ քաջութեանն կամ թէ ասել անզգայութեանն՝ արժանի եղեւ առանձին մահարձանաւ անմուաց մնալ:

Հմիր աւշրան. առ ոչ է 'ի թագաւորաց, այլ 'ի ցեղէն Մահմէտի եօթնեստաներորդ ուխտատեզի համարեալ առ Տաճիկս և մեծապէս պատուեալ. նմին իրի և չէ մարթ օտարազգեաց մասնել 'ի մահարձանն նորա եթէ չգոտից ընկերակից յարանց եպարքուն: Արդ մահարձանն նորա և մզկիթին շինեալ են հանդէպ միմեանց 'ի բարձրատանգակ տեղով 'ի հարաւ. կուտէ երբորբմայ: Մզկիթին չունի ինչ արժանի յիշատակաց. իսկ որմն մահարձանն նորա հանդէպ մզկիթին պատեալ է արտաքուստ յախճապակօք: Բազում հարստութեանց ասեն լինել 'ի սմա յառաջազգոյն, այլ արդ ոչ ևս:

Ծնդ մէջ Եկշիլ-ձամի և Էմիր-սուլդանայ 'ի փոքր գերեզմանոցի Տաճկաց է և այլ մահարձան մի սրածայր զմբեթիւ. բաց են կողմանկը նորա քառակուսի

תְּהִימָּה תְּהִימָּה תְּהִימָּה תְּהִימָּה תְּהִימָּה



սեամբը և կամարօք յիրեար կցեալք . այլ անզարդ պարզութիւն կծեռյ քարանց երից կողմանցն և վայելաչ զարդաձև փորտածք միոյ կողմանն որ իրրե ճակաս ձեռնաց , և գուռնն փոքրիկ՝ հաճոյ է աչաց ՚ի տեսանել . յատակն ՚ի միջավայրին գետնափոր է գմբէթայարկ ցած , և այժմ քայլայեալ , տեղի զետեղելոյ դիականն : Զամանէ տան շինեալ ՚ի Պայէզիտ փաշայէ ումեմնէ վասն իւր , այլ յաքարս մեռեալ նորա՝ մեայ ամսոյ :

Ի նորաշն մահարձանն երեւելի է այն որ կայ ՚ի ներքս ՚ի գլեկին մօտ առ Եէր դարուսի , և կոչի Հաղրեքի ի իրաւուէ , ՚ի բարձրահայեաց վայրի առ եզր սեպացեալ քառամենի . ձև շինուածոյն է ըստ նոր ախորժակաց ճարտարպետութեան , և ոչ դմբէթաւոր : Բազում գերեզմանկ են ՚ի նման . ՚ի միջին տեղով ամիտիեալ է նա ինքն կֆթատէ որ լեալ է երբեմն մի յերեւելի էվլայից առ Տաճիկս . յաջմէ նուրին Մաշրաւ խարուն , և ՚ի ձախմէ որդիկ նորա Մէհէմիշտ և Մուստափատ , և ինն այլ որ կան անդ՝ թուունկ են նորա :

Ծնդ մահարձանն համարելի են և քանի մի տապանք չկյալից , և Մէկլանանէ տէվրիչաց , մեծագործ շինուածով և բոլոշի սենեկօք , ուր հանդէս պարերգութեան կատարի ՚ի նոցանէ յաւուր ուրբաթու երգօք նուագարանաց :

Սէթ զաւու , նու ԿԱՐՈՒՐՁՔ ՆՈՐԱ . — Յայլեալլ գետակացն որ ընդ ձորամմէն քաղաքին հասին ՚ի լերանց , հզօրագոյն է հոսեալն ընդ Սէթ պաշի ձոր սրբնիմաց վաշիւք . և է ձորս այս մի ՚ի գեղեցկազիր թաղից քաղաքին երկուստեկ ոնկեռով բարձրահայեաց տունն հանդէպ միմեանց բնակեալ ՚ի Հայոց , այլ և այլ կամրջօք , յորոց երեւելի են երկորին . ոչ աղեղնաձև այլ հարթայատակ անցիւք իրրե զմի ՚ի փողոցաց է առաջինն յանուանէ ձորոյն կոչեցեալ Սէթ պաշի , և երկորոցն ըշանելը քեօիրիշաւից միակամար . յիշատակաց արժանի է անսալոր շինուած կամրջին . զի բովանդակ թանձրութիւննորա երկուստեկ կամարին՝ ընդ որով անցանէ զեսն , զատարի է , և մարդէ մասնել ՚ի նեղքս . իսկ ՚ի վերայ կամրջին գարձեալ կամարաձև է ծայր ՚ի ծայր , և երկուստեկ կարգսու կրպակք են մետարսացործ սասացնանկաց . ՚ի կրպակացդ այտի իջանեն ՚ի ներքսակողմն անզոր կամրջին :

Նախնի շինուածոց մնացորդ է և աւերակն մօտ առ Ալսապ ճամփար ՚ի վերայ ճանապարհին , որոյ երեքին կողմնանք ստուար և հաստահիմն որմոցն կանգուն կան տակաւին , և երեխն ՚ի նոսին բազմաթիւ ծակտի նշան ջրանցից . միջոց առածութեան տեղույն մնացատան զործեալ է թթենեաց :

ԵԱՐԱԳ ՄԱՐԱՍԱԸ . — Աբուաքոյ ամրոցին մօտ առ Քարլիճա գտիւուու քարանձաւ զործեալ է ՚ի բնութեանէ չափաւոր մեծութեամբ . առ որով եւրոպացւոյ ուրումն տուն շինեալ , և զինութեան շինուածն այլ ևս ընդարձակեալ բազմուզի ճանապարհաւ . ՚ի ձեռն միջահարսութեան , զի դիւրափշրելի է քարաժայու անձաւին , մասուն զինւոյ արարեալ է :

ՆԵՐԱԿԱՐ ԳԵՏ . — Գետն նշանութիւր զոր ռասմիկք իշլիւթէր սուշոյ կոչեն , իջանէ ՚ի լերանցն որ յարեւմնից հարաւոյ , և խաղացեալ ընդ բավմնդակ երկայնութիւն զաշտավայրին Պրուսայ գնայ յարեւելս կրյս : Երկու կամուրջք կան ՚ի մերայ նորս մեծաշէնք . Ալպաւ քեօիրիշաւից անարսատ մնացեալ , և Միհրապլը քեօիրիշ կիսակործան , զոր և փայտիւ նորոգեալ են :

բազմաւոր ձևեստն ջուրը . — Ժամանակ միտով հետի ՚ի քաղաքէն յարեւմնաւ կոյս են անուանի բազմանիքն ինքնարար զիս ջերմ ջրոց . և են մեծաւ մասամբ ՚ի գիւղն Զերիդէ մօտ առ միմեանս . կոչն այլ և այլ անուամբ , Պօյոց կիւզէլ , Հիւսնիշ կիւզէլ , Սէվլինազ , Էսկի-գարըլձա , Զէրիդէլ , յանուանէ գեղջն , որ և օպտակաւ բազոյն համարեալ է : Խոկ Քիւրիւրիլիւ և Եւնի-գարըլձա են՝ ՚ի վերայ ճանապարհն յաջ յաջակապէն յաջակապէն մօտ ՚ի գիւղն : Արապին տեսիլ Եւնի-գարըլձային հոյսակապէ յոյժ և բազմագմբէթ կապարապատ : Խոկ Էսկի գարըլձայի յաղագս զատիփայր զրից տեղոյն յատակն հարթեալ է հորիզոնական և ՚ի ներքոյ կամսպը բաց թողեալք իրրի ներքնատունք . և ջուրն աւելրոդ ՚ի բազանեացն անցեալ ընդ այն թափի արտաքս , առ առուական ընդ որ նախ հոսի , և հանկային մասունկն զատուցեաք քարացեալ զիշանան երկուատկը : Ներքին շնուռած բազանեացդ նման է այլոց սովորական բազանեաց , զմբէթաշէն և կծեայ , այսու ևեթ զանազանեալ զի ՚ի սոսա աւագան մեծ գործեալ ՚ի միշին տեղունչ մարդաշափ խորութեամբ , անզը թողուն հոսել զջուրն , յորում և մուեալ լոգանան . Խրագանչիր ՚ի բազանեացդ ունի մի մի աւագան մեծ կամ թէ ասել լոգարան կճապատ . մշտահոս են ջուրք նոցա զցայդ և զցերեկ : Բազումք ՚ի բազանեացդ ունին շուրջանակի բարձր և գեղեցիկահայեաց սենեակիս , ունակը կրինայրիկ՝ պյու եռայրի . և ամենայն որ ՚ի լուանալ զայ ՚ի քաղաքէն և կամ ՚ի հետաւոր տեղեաց , մանաւանդ յերիս ամրաս տարւոյն՝ ՚ի մայիսի , յունիսի և յուլիսի , ՚ի նոսին ընակէ : Զօգտակարութենէ ջուրց բազանեացս և զայլ և այլ հանգամանաց նոցին բազում ինչ զրեաց գաղղիարէն Պեռնարատոն , և տպագրեաց ՚ի Բիւզանդիոն յամին 1843 :

ԳՏԱՄԵՐՈՒԹԻՒՆ , ՎԱՅԱՎԱՔ , ԵՒ ԱՐԱԽԵՍՏ . — Հոլ երկրին Պրուսացւոց բազում ուրիք կարմիրագոյն է , մանաւանդ արտաքրոց քաղաքին : Պաղպերութիւն առաստ , և երկիրն մշակեալ ժբաջան աշխատութեամբ . այդեստանք և զինի պատուական . այլ որոց անգաստանք իցեն և պարտէքք՝ փոյթ մեծ է թթենեաց մշակութեան վասն մետաքսի . համօրէն քաղաքն ՚ի ներքոյ և արտաքրոց տեսանի թթենեօք զարդարեալ : Եւ զի այլ երեկի շահավաճառ չիք ՚ի քաղպիս բաց ՚ի մետաքսէ , նմին իրի իրրի սկիզբն լինի կենդանանալցո օրդանց շերամոյ՝ ամենայն ժողովուրին՝ ՚ի տունս և ՚ի հրապարակս ճառ . արկեալ խօսին զառաստութենէ կամ զնուազութենէ , զայնուութենէ և կամ զխոշորութենէ մետաքսին . առաստագոյն տարւոց թերք հաշուին մինչև ց' 78,000 օգգաս , հանդերձ շրջակայ զիւզորէիսիք՝ որ սահմանկը են քաղաքին . Խոկ ընտրելազոյն համարեալ են թերք Տէմիրթաշ գեղջ , նրառթեամին և փայլունութեամիք , լինուարս Պրուսացւոց ոչ միայն առաքի յոյլ և այլ քաղաքս Ասոյց և Եւրապայ , այլ և ՚ի նմին գործի . զի են անդ բազում մետաքսագործք ազգ ազգ կերպասուց , է որ գծանիշ և է որ ծաղկէնկար . թէպէտ և սյժմ՝ ՚ի նախնի յաճախտութենէն նուռազեալ յոյժ՝ ՚ի պատճառս յաճախելց ձեռագործաց Եւրապայ ընդ ամենայն Ասիս : Տէր մետաքսին չկարէ առանձինն կամ ՚ի ծածուկ վաճառել . այլ նախ պարտի տանել առ արքունի կշռորդապանն զօր կոչն Միզան , և կոչել . և առ խրագանչիւր օգգա և կէս հասուցանել տէրութեան տասն զուռուշ , և ապա վաճառել որպէս ինչ արժէ մետաքս իւր : Խոկ որ զնէն՝ պարտի վճարել մաքս քասն զուռուշ :

ԱՇԽԱՌՀԱՀԱՄԱՐ, ԵԿԵՊԵՏՈՒԹ ԵՒ ԴՊՐՈՅՔ. — ԶՑԱՋԿԱԿ ԲՆԱԿՀԱԿ ՔԱՂԱՔԻՆ ԱՍԵՆ ՈՒՄԱՆՔ ՄԱՆԵԼ 400,000, ՈՐ ԱՆՀԱՍԱՍԱՋԻ ԲՄԱՒ. ՊՀԱՄ 6,000, և ՊՅՈՒՆ 3,500: ԵՐԿՈՒ ԵՎ ԿԵՂԵԳԻՔ ԵՆ ՀԱյոց. ԱՊԱՋԻՆ ԱՍՏՈՐՉԱԾԱՃԻՆ, ՈՐՈՅ ԱՐՄԱՆՔԻՆ 'Ի ՆԵՐՊՈՒՄ ԿԻՍՈՎ ԽՄՓ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ յախճապակզք պատեալ են. և ոս է առաջնորդաբանն եպիսկոպոսանիստ, գեղեցկաղիք և բարձրահայեաց, շննեալ իրը տասն ամօք յառաջ (իբր ՚ի 1833) յեպիսկոպութեան ՅԱՐՈՒԺԻՄ վարդապետի Եղեսացոյս: Անդ է և զպրոցն մեծ, յորում կան մանկունկը իբր վեց հարիւր. այլ ոչ քաջ յասանարէմ որպէս վայել իսկ էր հնութեան հայազգի ժողովրդոց տեղայն քան զայլոց բազմաց, և առ բազմութեան նոցին, և համբաւոց քաղաքիդ, իբրև նախազաս օտար քաղաքաց՝ յորս գաղթեալ է ազգ մեր: Դաստիարակիք թէպէտ և այխատասէք իցեն և փոյթք, սակայն և ոչ ժողովուրդն առ հասարակ, զի չև հասեալ մանկան յերեքտասան կամ 'ի չորեքտասան ամ հասակի՝ յորում եռանդն հմտութեանց աճել սկսանի, հանեալ յուսումնարանէն տան յարհեստ ծառայական: Թող զի և հասարակաց լերդու քաղաքին 'ի առւնս և 'ի հասպարակս տաճէկը էր յերթեեկ շողենաւոց: Լեռնապատ է խորչն 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ. և աւանն շինեալ է 'ի ստորոտ հիւսիսային լերանց: Շինուածք նորա տունք և կրպակի հասարակ յոյժ, և բնակչքն յոյն, որոց են եկեղեցիք ինն: Տօնավաճառ լինի 'ի նման յաւուրս կիւրակէից: Երկիրն բերէ առաս ձիթենի մինչև վաճառել 'ի պազցին ամի ամի 30,000 օգգա, և ձեթ 500,000 օգգա: Օդ անվլոյն անբարեխասան և ծանր, և ջուրն անբարի բաց 'ի միոյ աղբերէ: Անի զրօնարան գեղեցկավայր 'ի թիվանց աւանին 'ի բըրի, զառաջնեան ամբացուցեալ պարապաւ և 'ի վերայ հարթայտասակ, հովանացեալ 'ի բարձրաբերձ կաղամախեաց. և է անդ այազմա որ կոչի Այի Քոսդանիդին:

ԱԽԵՐԱԿ ՀՆՈՒԹԵԱՅ. — Ոչ սակաւ էին Երեկոյի շնուածք 'ի սման 'ի հնութմ 'որ պէս յայսանի երեխն յաւերակացն: Յարեւմտակողմն աւանին ժաման և կիսով հեռ 'ի վերայ արահետ ճանապարհին, յորոյ յաջմէ լերինքն են հանգերձ արտուելիք և 'ի ձախմէ գարահոս և ավունք ծովուն, 'ի մէջ արտորէից կայ գմբէթաւոր սենեակ մի գետնափոր, զի հողոյ ծածկեալ զնա մինչև 'ի վեր, 'ի միոյ կողմանէ և եթ մոտանելի է. և 'ի միջի ստորերկրեայ ուղի խցեալ վլածովք. վերնաւարիսի մի անկեալ կայ ընդ մէջ սենեկին. զայս տեղի կոչեն թոյնք քարազիսիւ-


սիդա (ողովեալ) : Անզրագոյն կայ բարորչի շինուած մի աշտարակածն յարկածածուկ, և հողն շորջ զնովաւ բարձրացեալ մինչեւ 'ի վեր . շատ ջանացեալ է գեղեցից միճաք անց գործել առ 'ի ներքս և չեն յաջովեալ . այս վայր կոչի Այի գևանիս : Ի հանգիպոյ նորա 'ի կողմն ծովեցերին երկի մասն ամրոցի իրեք 'ի ներքուստ մինչեւ 'ի վեր հաւասար ճանապարհն . և այլուր 'ի միջի արտօրէց մեծատարած աւերակ մի զոր բաղանիս կրչեն, որոյ և գմբէթ կործանեալ՝ որմանք մասն ևեթ երկուց կողմանցն, յորս են խորչը 26 մարդաշափ բարձրութեամբ . զայս տեղի լեռքա կոչեն :

Կայ և յարենշակողմն առանին 'ի վերայ արահետ ճանապարհի կիսով ժաման չեռի յաւանէն սարուերկրեայ սենեակ մի 'ի տեղուն Այասօֆիա կոչեցելոյ . և հուզ Նմին սալպայաստակ քարլինկեցիւ յերկայնութիւն . մոտ առ տեղեաւն գտան երբեմն մեծամեծ խեցեղէն բզուկք դաստարկք և արգ ծածկեալ են ընդ հողալ, և երկու այլ 'ի նոցանէ գտեալ փոքր մի 'ի վեր անզր լի ջրովք, և ջուրն հեղեալ 'ի վերայ քարանց 'Հալեալ ասեն զբարինոն : Մօտ առ տեղեաւն 'ի մէջ պարտիպին անկեալ կայ քար մի և 'ի վերայ նորա բարձրապանզակ պատկեր արծուոյ : Անզրադոյն ևս քարանձառ մի փոքր 'ի ձախմէ ճանապարհն և առ նմա քարահանք կրծոյ : Քառորդաւ ժաման հեռագոյն է տեղին Այի Պարասպեակ ասացեալ . ուր են նոտարանաձն միակառուր քարինք փորուածոյ, և 'ի վերայ քանի մի լստին տառք խանգարեալք . և 'ի վերայ քարաժեռփ ըլլոյն նոյնալէս սասոիճանք երկայնաձնիք : Յանդասասանն ուրեք աւանիս զտան երկու գերեցմանաշափ քարինք, և 'ի վերայ նոցա բարձրապանզակ պատկերք . 'ի միտմն կան կին և աղջիկ պրօղեալք վերուստ 'ի վայր, և 'ի միւսումն նաւամարտ :

Ճ Ա Ն Ա Գ Ա Բ Հ Ի Կ Ե Մ Ե Շ Ի Կ Ե Ի Ն Ի Կ Ի Ա .

Ոչ սակաւ զուարճալի է փափոխութիւն տեսարանաց վայրացն որ ընդ մէջ կէմիշիկի և նիկիոյ . զի փոքր մի հեռացեալ 'ի կէմիշիկէ ընդ արևելս կոյն սկասնին երկուստեք գոտիք լերանց, ձորամէջ խորին կալով 'ի միջի հանգերձ գետակաւ . որ հոսի 'ի նիկիական լծէն 'ի խորչն կէմիշիկի : Խոկ լըրինքդ այդպիի երկուստեք գետակին մինչև ցգագաթունս թէպէտ և անմշակելի, այլ ինքնարդոց խիտ առ խիտ և գեղնագոյն ծաղկաք զարգարեալ են : Յետ երից ժամանց ճանապարհի՝ բանի անձուկ կիրճ լերանցն, և երկի 'ի հեռաստանէ մեծատարած դաշտավայրն Պագարքէօյ 'ի ձախմէ, և յաջմէ լշառն Պարըլը տաղը, և ընդ մէջ երկուստ կողմանցն լիձն նիկիոյ ծածանեալ հեղիկ հողմովք : Շուրջ զիճաւդ բաղում են գիւղորէք, և ոչ սակաւք բնակեալ 'ի Հայոց, յորոց եւ ըիելի են, յաջմէ Ակուօզ, յորում տունք 300, ամենայն հայազգի, հանգերձ կարեւոր արտեստաւորք և նորաշն վայերլու եկեղեցեաւ յանուն պրոց Հրեշտակապետաց կարուցից Հայոց և Տաճկաց խիլ : Ի ձախմէ լծին են Պագարքէօյ, նոր գեղ

תִּלְבָדֵג, תַּמְבָּדֵג



◀AP|◀T | Tψ|T!
λVκV|οοΑθεοδοροVΤοV
+ △N ∈ K△|

և որ այլն ես : Յաջակողմն ընին անթիւ ձիթաստանք են ցմեծ տարածութիւն : Լիճն Նիկիոյ երկայնեալ ձգի յարևմտից յարեւելս ինն ժամու գնացից . իսկ 'ի Կէմլէյլիկէ մինչև յեզր Ծինդ ժամը են : Քաղցը է ջուր նորա և ըմպելի, զոր և վարեն յամենայն պէտո շրջակայ գիւղօքէրն . բերէ աւելի քան գրան աղգս ձը-կանց՝ ոչ միայն մանունց, այլ և մեծամեծաց : ի հարաւային եղերս ընին աճեցեալ է ջուրն որպէս պատմեն, և ծածկեալ զինուածս տանց, որոց որմնակը մակ հաւասար երեսաց Ծայաստակին երկին ընդ ջրով յորժամ խալաղ իցէ լիճն և անալէկոծ : ի նմին կողման ընին երկու ժամաս հեռի 'ի Նիկիոյ, 'ի վերայ ճանա-պարհին յաջմէ՝ 'ի մեծի ապառաժին երկի արձանադիր լատին այլ խանգարեալ : Թէպէտ և խոր է լիճն՝ որպէս ասեն, սակայն դուզնաքեւոյ և եթ նաւակը ձկնորսաց գնան 'ի նմա :

Ն Ի Կ Ի Ա.

ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻՆ ՆԻԿԻՈՅ ՀՈՀԱԿԱՏՈՐԻՆ 'ի հնումն և առ կայսերօք Հռով-մոց և Բիւզանդացուոց, գիւղաքաղաք մի փորբիկ է արդ գուղնաքեայ տամիք իբր հարիւր և յիմնիք : Շինուածոց ապարանիցն ողջոյն կործանեալ և աներեւութա-ցեալ պարիսպին և եթ անկործան կան տակաւին ահագին տարածութեամբ, տո-կացեալ ընդդէմ բոնութեան ոխերիմ թշնամեաց և սաստիկ պատերազմաց . և պանչացուցանեն զանովս ընդ նախնեացն մեծագործութիւն : Բովանդակ բերդն կառուցեալէ 'ի դաշտավայրի, կրկնապարիսպ՝ բաց 'ի ծովակողմանէն, ներքինն բարձր և ստուար, և կից նմին են աշտարակին ահագին թանձրութեամբ ընդ բովանդակ շրջապատ բերդին, յորոց սակաւք քառակուսի ձեռվ, այլն առ հասա-րակ բորբջի : Շինուած պարսպացն և աշտարակացն աղիւսակերտ է, բաց 'ի միոյ կողմանէ՝ որ առ Ստամպօլ գարուսուց դրամի և ձգի 'ի ծովակողմն կոյս . և այդ մասն պարսպիդ 'ի քառակուսի քարանց շինեալ հանդերձ աշտարակարն, երկի նախնի հիմնարկութեանն մնացորդ . զի և յայլեայլութենէ ճարտարաբնտութեանն՝ յայտնի երեխ ոչ սակառ նորոգութիւնն կրեալ 'ի դարս դարս, մանաւանդ առ քրիստոնեայ կայսերօք . զի և 'ի մի յաշտարակացն երկի ցարդ նկարէն պատկեր սրբոյն Գէորգոյ յորմն : Հոյակապ են և դրուզն ամենայն որ կային Լէլքէ գարու-սուց, Ստամպօլ գարուսուց և Եկենի շենիր գարուսուց . Երկուստեք առաջնոյ զրանն կան բարձրաքանդակ պատկերը խորտակեաբք, և առ երկրորդին ես, ուր և պատ-կեր փրկին և առափելոցն . կրկնադրունք են յետին երկուքն : Շրջապատ բերդին ողջոյն տեէ ժամն չորս հանդարտագրայլ ընթացիւք : ի կողմն Ստամպօլ գարուսուց դրանն հարուստ մի հեռի 'ի նմանէ յաջմէ՝ 'ի ծայր միոյ յաշտարակացն երկի մնացուած հնաձե յոյն արձանագրութեան աղիւսակողմանք յարմարեալ յորմն անդ :¹

Ծնդ ամենայն շրջապատ բերդին, բաց 'ի ծովակողմանէն, և ընդ միջավայր կըր-

¹ Տես զարձանդ 'ի ստորև պատկերի պարսպաց 'Անկիոյ :

կին պարսպացն և ընդ միջին տարածութեամբ բերդին բաց 'ի սակաւաթիւ թաղ պահանձան գործեալ են թթենեաց, պարասու ծառոց և այլ ևս ընդեղինաց : ՍՏՈՐԵԿՐԵԱՑ ԳԵՏԱԱՓՈՐ ՏԵՂԱՔՆ : — Ի բերդին մնացորդ նախնի շինուածուց արժանի տեսութեան և անմատչ յիշատակի, օրում և ձեռն թշնամի եկաց պատկառ, առ 'ի հանդէս նախնեացն մեծագործութեան և բազմահնար զգուշութեան նոցին՝ յօրինակ որոց յետ այնորի գալոց են ազգք, են գետնափոր տեղին կամ սարերդին այլոց որոց արագին ամրութիւնքն թէպէտ և քայլայեալ իցին, այլք բուն ներքինն անկործան կայ : Եւ են դոքա ոչ շատ հեռի 'ի ծավակողման պարագէն 'ի միում վայրի առընթեր միմեանց, որման յիշերաց վասուցեալ . կամարաձև ունելով մուսս նոցին իրեւ երկը կամ չորք մեղք լայնութեամբ . ներքին վայրն լայնարձակի և կամարակապ 'ի մեծահասուոր և 'ի սսուար քարանց . 'ի միջոց վայրի կամարին քառակուսի անցք գործեալ են, ընդ որ մի ոք հազիւ կարէ մուսնել, և 'ի ներքս անդ է ստորեկրեայ ուղին նոյնպէս կամարապատ . այլ չէ ուրուք փորձեալ ցոր վայր ձգիցի երկայնութիւն նորա և ուր հասանիցէ : Ի հայակապ շինուածոցդ որ հինգ են թուով, երկոցան ևեթ կան գետնափոր ուղիք . այլքն հանդիպակաց որմանքն ևեթ սահմանին : Զարսապին տարածութիւն տեղոյն որ 'ի փորտ սահմանի, և քան զսովլրական յատակ գետնայն փոքր մի բարձր է, ապարանա արքունեաց լինել ասեն բնակիչքն, թէպէտ և հետք մնացորդաց չերեխն անդ : Ի փողցս, 'ի հրապարակմ և 'ի կիցս ճանապարհաց գիւղաքալքիս ցիր և ցան երեխն սինք և վերնախարիսկը արմանելի յօրինուածովք, և հատողք պէսպէս բարձրագանդակ ծաղկանց և զարդուց, և որ ամբողջ և է որ մասնաւորք, ագուցեալ 'ի կաւակերտ որմանն տանց և փողցաց . ոչ ինչ խորեալ ընդ կան և ընդ պահնելի պատեստակերտ յօրինուածն :

ԵԿԵՂԵՑԻ ՅՈՒԽԱՑ . — Պատկառելի է հնութեամբ և եկեղեցին Յունաց շինեալ յամին 332 յանուն պրացն դեմերակեաց . յոր բաց 'ի տախտակամած զարդոց խորանին և 'ի գմբէթէն՝ յայլն ամենայն վայցէ հնութեամբ . փոքր է ըստ տարածութեան, և 'ի մէջ նորա և արտաքոյ գերեզմանք հինք : Ի ձախակողմեան աւանդատանն կան երկու սինակք առընթեր միմեանց 'ի սեւ մաքուք քարէ . երկայնութիւն միոյ 'ի նոցանէ մեղքաչափ և կէս համեմատ նրանութեամբ : Ի նմին կողման առընթեր որմանց գաւթին կայ գերեզման վիմափոր 'ի թափանցիկ սպիտակ քարէ, և ճրագ թէ մուծցի 'ի ներքս, երեփ թափանցանց արտաքս ըցմն, թէպէտ և աստար է քարն : Պատկերն որ կայ 'ի ճակատ ներքին դրան եկեղեցւոյն յօրինեալ է 'ի միւսին քարանց ըստ այնր ժամանակի արուեստին :

Երկրորդ եկեղեցին Յունաց Այա սօթիա ասացեան աւերակ է . որոց արտաքին որմանքն ևեթ կան . և յորմանս աւանդատանն նշմարին տամկան նկարէն պատկեր :

ՃՈՂՈՎՑԵՂԵՆ ՅԺՐ . — Յանկալի յիշատակ և մնացորդ ժողովատեղոյն նիկական չարցն՝ է անընթմիջաբար արտաքոյ պարագին 'ի ծավակողմն կոյս, անդ ուր բարձրաբերձ կազմամախ ծառքն կան . ոչ այլ ինչ նշմարի 'ի տեղւո՞ն, բայց միայն քառակուսի շրջապատ որմանց քայլայելոց, մեղքաչափ և կէս բարձրութեամբ 'ի գետնայն 'ի վեր . և միջոց տարածութեան տեղւոյն՝ որ և չէ զուգնա-

քեսոյ ինչ՝ յանդաստան վտութեալ է . միայն երկուստեր ՚ի կողմանցն կան մնացորդք քարեզմն սանդղոց . ձախակողմեան հիմն շինուածոյն երկայնեալ ձգի մինչև ցմեջ ընկն , յորոյ եղեր շինեալ է քաղաքն :

Ի նոր շինուածոց անուանի է Եկեղի մինարէ կճանմանն ձուլածոյ սեսամբքն որ կան ՚ի գաւթի մզկթին , մեացորդք ՚ի հնոց . իսկ շուկայն և բաղանիք և որ այլն ևս ամենայն հասարակ և ոչ արժանի յիշատակի : Ցունք Յունաց ՚ի Նիկիա են քառասնիւ չափ , այլքն առ հասարակ Ցածկայ են :

Վեց ժամաւ հեռի ՚ի Նիկիոյ է Թիրոկ լեաւն , ուր գտանի քար ինչ կանաչադղոյն՝ յարգի առ ոսմիկն Ցածկաց , որը ասեն աէվրիչի ուրումն խստակրօնի ճոնել ՚ի մըրինն , և թքոյն ՚ի քար փոխարկել . ՚ի քարէ պյափ ուրուն և պէսպէս Պարզո յօրինեն :

ՃԱՆԱԳՈՐԾ Ի ՆԻԿԻԱՑ Ի ԳԱՐԱՄՈՒՍԱԼ ԵՒ Ի ՆԻԿԱՄԻԴԻԱԱ :

Հեռի ՚ի Նիկիոյ կէս ժամաւ է Նոր գիշոյ յեզր լճին , նորոգ բնակեալու ՚ի Հայոց երր ՚ի յիսուն տանց . որոց է և նորաշչն եկեղեցի վայերուչ յանուն որբոց Լուսաւորչի : Բնակութիւն գեղջն եղեւ ճարտարութեամբ մոյ յորգոց Խաչյեանին Սէօլչօղեցոյ զոր ՚ի վեր անդր յիշեցար :

Ֆուրշաձրգ գիւղ բնակեալ ՚ի Յունաց , երկը ժամաւ . հեռի ՚ի նմանէ : Է և այլ նոր գիշոյ զոր հասարակարար եալախ տէրէ կոչեն , բնակեալ ՚ի Հայոց . ունի տունն հարիւր և նոր եկեղեցի Հրեշտակապետ կոչեցեալ :

Կեօմերտան կէս ժամաւ . հեռի ՚ի նմանէ :

Ուզին Նիկիոյ մինչև յԳարսամուսալ լեռնացին է , վախուս և գժուարագնալի :

Գարամուսալ հեռի է ՚ի Նիկիոյ 40 ժամ , թէպէտ և այլ կրիին ուղիք կան նորին , միոյն տեսալ ժամն 42 և միւսոյն 8 : Եւ է աւան փոքր առ ծովեղեր խորչին Նիկոմիդիայ , յոր աստի ստէպ երթեեկութիւն լինի , մանաւանդ որոց ոչն կամիշին զողոյն ուղին ցամաքաւ առնել մինչև ցնիկոմիզիսա : Բնակիչք սորա են Ցանիկը և Յոյնք . ունի շուկայ փոքր . մզկիթքն և եկեղեցին ոչ ինչ նշանաւոր :

Ն Ի Ա Մ Ի Դ Ի Ա

Համբաւաւորն ՚ի քաղաքս Բիւթանացւոց Նիկոմիզիսա , ուր բազում անցք անցին առ Հոռվմաց ցւալք և առ Յունօք , անկեալ է յոյժ ՚ի նախնի փառացն , և ՚ի շահուց վաճառականութեան , յետ բարգաւաճանաց Զմիւռնիոյ , և յաճախելց շողենաւաց ՚ի Մետե ծով . զի վաճառականութիւն նորա մեծաւ մասամբ յերթեեկութիւնէ կարաւանացն էր , ոչ ինչ սպողաբերեալ յինքենէ և ոչ արհեստակերտեալ ձեռագործս ինչ : Ազդ քաղաքն Նիկոմիզացւոց կառուցեալ կայ ՚ի ծայր հիւսիսական խորչին Մարմառայի , որ երկայնեալ ձգի յարեւելք զուգահեռա-

կան խորշին կէմլէջիկի և ընին նիկիոյ : Դիբը քաղաքին 'ի գագաթանէ լերին սկզբանաւ յանդի մինչև ցծովեզրն . և երեսը նորա հային 'ի հարաւ . ոչ ինչ օգնեալ 'ի հիւսիսային հողմոց՝ որ զովացուցիչ է յամարան և առողջարար . նմին իրի տօժասատիկ լինի և հիւսանդութիւնք ախտից :

Ի նախնի շինուածոց յաւուրց անտի հեթանոսութեան՝ որ ինչ կան ցրիւ , աւերակ են իսպառ . և հեռի 'ի քաղաքէն . այլ 'ի մէջ քաղաքին յաւուրց քրիստոնէութեան նշխար ցանկալի մնացեալ է աւերակ եկեղեցատեղոյն երկուց թիւրուց , որ արդ մասսամբ գերեզմանատուն է Հայոց և մասսամբ անդաստան դործեալ : Երեխն տակաւին 'ի նմա աւերակը խորանաձեւ տեղեաց , և մօտ առ նոսա այլ շինուած մի փոքր գմբէթաւոր , 'ի չորից կողմանց բաց և կամարաձեւ մտիւք . այլ այժմ գագաթն նորա հաւասար է գետնոյն : Մասն որմոյ եկեղեցոյն թուի լինել որ մնացեալ է 'ի կողմանէ շրջապատի գերեզմանատան . և անտի և 'ի տեղուց խորանացն՝ մարթի իմաստասիրել զմեծ տարածութիւն նախնի եկեղեցոյն որ տանէր զրիւրս :

Փոքր մի հեռի 'ի նմանէ է վկայարանն սրբոյն Պանդալէոնի 'ի ձեռս Յունաց : Խոկ վկայարանն երմոգինեայ քահանայի մօտ է 'ի թաղն Հայոց , որպէս և աշակերտի նորա յիշատակելոյ 'ի Յայսմաւուրս . և են արդ 'ի ձեռս Տաճկաց . գերեզմանք նոցա և շինուածք տեղոյն անզարդք են և տաճկաձեւ :

Ի նիկոմիդիա տունք Տաճկաց հաշուին աւելի քան զերիս հազարս . Հայոց 350 , Յունաց 480 , խոկ Հրէից սակաւք : Եկեղեցին Հայոց Աստուածածին կոչեցեալ նորաշէն և գեղեցիկ է յոյժ քան զամենայն նորաշէն եկեղեցիս կողմանց թիւթանիոյ . և է գմբէթաւոր , այլ արտաքուստ չերսի գմբէթն : Գեղեցիկ է նոյնապէս և մկրտարանն որ կայ յաջակողմեան աւանդատանն , բուխնդակ կճապատ և բարձրաքանդակ պատկերք և զարդք ըստ տանելոյ ճարտարութեան արևելեան գեղարուեստից : Առ եկեղեցեաւն հիւրանոյ կամ թէ ասել եկեղեցատուն . և 'ի հիւսիսոյ եկեղեցոյն դպրոց մեծ և բարձր . որպէս և եկեղեցին է 'ի բարձրահայեաց վայրի : Մաքսատուն քաղաքին առ ծովեղերբն է . ունի և նաւակառոյց փոքր : Մղկիթք , և մանաւանդ իջելանք յոյժ հասարակ են , որպէս և շուկայն բովանդակ , թէպէտ և մեծաստարած :

Հանդէպ քաղաքին առ ծովեղերբն միով ժամաւ հեռի է ֆէսիանէ շինեալ յաւուրս սուլզան Մահմուտաց , և գործարան չուխայի առ որդուով նորա :


Անուսնի է 'ի վաճառս նիկոմիդիոյ բանին հեղիսակ կոչեցեալ քաղցուենի :

Յարեկից հիւսիսոյ կայ նիկոմիդիոյ և հեռի անտի վեց ժամաւ գիւղ փոքր , ընակեալ 'ի 50 տանց Հայոց . և ծանօթ է ամենեցուն 'ի պատճառս հոչակառը մենաստանին , որ և ախտատեղի է , և անպակաս է երթեւեկն , մանաւանդ 'ի տօնի վերացման խաչին : Մենաստանն ողջոյն կառուցեալ է 'ի վերայ բըրի . և ար-

սրճոցք մանկանց . և հեղինակ այդք ամենայնի է Փօլռու եպիսկոպոս թագ-
քեան պլոտսացի , փոխանորդ նորին Ատեփան վարդապետի : Զառաջնոյ շինու-



Արմավան վանք



37 23 50 մետր

սարքյ նորա և 'ի ներքս պարտէգը զուարճալիք : Բովանդակ շինուածն որ և կըրկ-
նայարկ է, յարեւելից յարեւմուս ունի բնդ երկայնն 185 մեղք և ընդ լայն 92 :
Ուխասաւորաց բնակարանին միջնորմն և միջնազրասիրք զատուցեալ են 'ի բնա-
կարանէ միաբանից : Եկեղեցին հիմնեալ յանուն Զարիսափան Աստուածածնի
տհեղ է մեծութեամբ, պայծառ և հոյակապ, թէ և ձեղուն նորա և սիւնքն և վեր-
նասունն ուխասաւոր կանանց փայտակերտք : Երկը են խորանքն, և խաչալառ
զարքը նոյս թէ և նոյնպէս փայտակերտք, այլ գեղադրուազք և ոսկէզօծք, որովք
տհեղ մեծութիւն եկեղեցւոյն առաւել ևս փայլէ : Ի գաւթին 'ի ձախակողմն ե-
ղեալ կայ պատկեր Աստուածածնի հրաշագործ, որ յասաջազոյն յաւագ խորա-
նին եղեալ էր, և ապա աստ փոխազրեցին սակս դիւրութեան ուխտաւորաց որ
անմենելիք են հանապազ 'ի տեղունչն, ուր և ածեն զախտաւոր հիւանդո . և
հաւատութք մերձեցողացն լինի բժշկութիւն . ձեւ և յօրինուած պատկերին հասա-
րակ է և անարուեստ և ոչ իսկ հին . և փոխանակ նորա եղեալ են յաւագ խորանն
այլ պատկեր Աստուածածնի ճարտարարուեստ գործ խտացի նկարչի : Առ հրա-
շագործ պատկերասն մօտ յորմն թաղեալ կայ Պօղոս եպիսկոպոս կեսարացի մե-
ծակութենէն և 'ի վեհանձն և պատկառելի զիմաց նորա չանկանէր բան մի 'ի գե-
տին առաջի կուսակալաց . որ և վարուցն ևս խստակրօնութեամբ ակնածելի ա-
րար զանձն առաջի ազգին իւրոց : Սորա առաջնորդ կացեալ Պրուսայի, միացոյց
'ի նոյն և զառաջնորդութիւն նիկոմիզիոյ որ է թեմ Արմառու . եղ 'ի մտի փերրո-
սին շինել զմենսաստանն հին և փոքր, ոչ 'ի գիւղն Արմառ, այլ 'ի նիկոմիզիա
յաւերակի անդ Երկուց բիւրոց . սակայն զմտաւ ածեալ ապա զպէսպէս գծուա-
րութիւնսն որոց մարթ էր ծագել 'ի քաղաքին յերեսաց քաղաքավետաց ըստ
պյուր գառնութեան ժամանակին, բայ համարեցաւ զառաջին տեղին ընտրել . թէ-
պէտ և նեղութիւն բազում կրեաց յայլազգեաց, սակայն յալթեալ ամենայնի
հիմն արկ եկեղեցւոյն և աւարտեաց ամենայն մասամբն որպէս ինչ ցարդ երեխ .
այլ չե ձեռն արկեալ 'ի շինութիւն մենսաստանին վախճանեցաւ . և ելից զթերին
յաջորդ նորա Ստեփան արքեպիսկոպոս Աղանի յորջորջեալ, որ կառուց զբովան-
դակ մենսաստանն բաց յեկեղեցւոյն :

Վիճակ մենսաստանիս մեծ էր յառաջազոյն, այլ արդ 'ի փոքրու սահմանի .
35 զիւքը են թեմ նորա հանգերձ նիկոմիզեաւ . և են զիւքք այդոքիկ մեծաւ
մասսամբ 'ի շրջակաց լճին նիկիոյ : Յամին 1843 դպրոց 'ի մենսաստանին հաստա-
տեցին, յարում ժողովեալ զմանկափ թեմի իւրեանց կրթեն յուսումն և 'ի զաս-
տիարակութիւն եկեղեցական վիճակի : Միաբանքն ամենայն տասնիւ չափ, բա-
րեկոսէր և բարեհամբնյոյք, հիւրամեծապք և սիրելիք, փոյժ մեծ ունին զարգա-
նալոց ուսմանց և բարեկրթութեան, հրահանգեալ այնու և զմանկտին, յորոց ա-
ռափին յայլ և այլ զիւզս 'ի զաստիարակ զպրոցաց նոցին . զի և յամենեսին 'ի նոսա-
են վարժոցք մանկանց, և հեղինակ այզք ամենայնի է Պօղոս եպիսկոպոս Թափ-
թափեամ պրուսացի, փոխանորդ նորին Ստեփան վարդապետի : Զառաջնոյ շինու-

թենէ մենաստանին յիշատակ լինի 'ի ձեռագիր մաշտոցի իրիք անդ այսպէս... « Ազգս մերային որ եկեղել բնակեալ 'ի գտաւուս Նիկոլիգացւոց 'ի սահմանն Ար... » մաշ կոչեցեալ վանիցն սուրբ Աստուածածնի 'ի գիւղս որ Ղըշյայ յօրթօրջի, չև ևս » Եին շինեալ յարկս ազօթից և ժամատունն : իսկ 'ի յետին ժամանակիս յետ բա... » զում' տարոյ' որ էր թուականն Ո՛Շթ (1660) 'ի հայրապետութեան տետոն Յա... » կորայ որ 'ի սուրբ Էջմիածին, և յառաջնորդութեան սուրբ Երուսաղեմի տետոնն » Աստուածատրոյ վարդապետի, և 'ի պատրիարքութեան տետոնն Մարտիրոսի « նորին աշակերտի... մինն 'ի նոցանէ խասկալցի Ղումբին... ևս... Երեմիաս... » եկաք 'ի նաւակատիս եկեղեցւոյս և 'ի պատճառս ուխտի սուրբ վանից տիրա... » մօրն Աստուածածնի, և զժերին լցաք... » :

Խասկակ, զիւղ Հայոց իրր 'ի 50 տանց, միով ժաման հեռի յԱրմաշայ. զա... նուն գեղջմ յիշատակէ և այլ ձեռագիր մաշտոց որ 'ի նմին նորաշէն եկեղեցւոյ գեղջն. « Ո՞չը (1609) 'ի մայրաքաղաքն Ստամիզոլ 'ի գուռն կոմրուկու սուրբ » Նիկոլպայսին. սուաջնորդութեանն կեսարացի Գրիգոր քայլ բարունապետին. » Թագաւորութեանն սուլդան Ահմատին. Աստուած զիւր սուրբն կորուկ անէ: Զե... » ուսմի անարժան թոփաթցի Միքայէլին 'ի վայելումն խասկալցի տէր Միքայէ... » լին... Արդ զրեցաւ սա 'ի գառն և 'ի դիմար ժամանակիս, զի խեղճ քրիստո... » նեպքն Ճալարոց համար փախեան և եկին 'ի Ստամիզոլ. և դոքա այլ կու հալա... » ձին 'ի Ստամիզոլու » :

Ա. Տ. Ա. Փ. Ա. Զ. Ա. Բ.

Հեռի է յԱրմաշայ վեց ժաման աւանս այս մեծ և ընդարձակ 'ի դաշտավայրի. զի տունք որիչը են 'ի միմեանց մեծամեծ պարտիզզք վարդարեալ. լայնարձակը են և փողոցքն, և շուկայն նորագ շինեալ. իսկ տունք հին և հասարակ, մեծաւ մասամբ փայտաշէնք: թէպէտ այս ամենայն աղքատութեանն արդինքը թոփին, սակայն ամենայն ոք կարեւոր պիտոցիւքն շատացեալ է, փոյթ կայեալ մըշակութեան թթենեաց վասն շերամց. զի և ծառայ ոք չգտանի անդանօր ըսպասարկու այլոց, լաւ համարեալ յաշխատութենէ ձեռին կեալ քան անարուեստ այլում՝ հպատակել:

Հայոց տունք 1300 հաշտին յԱստափազար, և Կ եկեղեցիք հանդերձ չորիւք դպրոցօք. առաջին և աւագ հնաշէն, չրեշտակապետ յորջործեալ, առ որով և եկեղեցատուն վայելուչ. երկրորդ Մուրք կարապետ. երրորդ Լուսաւորիչ. չորրորդ Մուրք Մուլեխաննու. երեքեան ևս նորաշէն, բաց սուրբ կարապետ փառաւոր քան զայլն է և մեծ: կիսով ժաման արտաքոյ աւանին անցանէ ջուրն Սապանճայի, որ սպա երթեալ խառնի 'ի Սագառիա. 'ի վերայ Ջրոյն այնորիկ փայտեայ անիւ հաստատեալ է ահեղ մեծութեամբ, և դոյլս աղուցեալ 'ի նմա. և 'ի պըտոցբել անույն 'ի բանութենէ զետյոյն դոյլն առեալ 'ի ջրոյն թափեն 'ի բարձուէ 'ի խողովակ մի, ընդ որ երթեալ ժողովի ջուրն 'ի մերձակայ ջրամբարն. և

թել-
աղս-
ւը է
եալ
միւս
լեռ.

դիւ-
բոօ-
լար-
սապ-
ցիէ-

ծաղկ-
րկայ-
սրեե-
ւ. և 'ի
և խո-
ւ ծայ-
նալա-
ի կա-
է կա-
և եթ-
Անայն
ահա-
հոյա-
ոցաւո-
կ գոր-
միւսմ-
ջավոր
եսանի
որց որ
ւ գետ
ոկը թէ
անեալ

ԴՅ ուլուսս ասցասս զասս շամալ շամալ շամալ ա ս ւ ւ

8 b '1, u. q. b u

• 0 1 0 1 0 1 0 1

卷之三

四百三

0 L₁ [33 13]

100

Où va la question

۱۰۰

անսոի այլ ստորերկրեայ խողովակաւ անցանէ յերկրորդ ջրամբար և ապա յեր-
րորդն ։ և այնպէս հետզհետէ մինչև ցքաղաքն և 'ի մէջ նորա յայլ և այլ թաղս.
քանզի ՚ի գետոյն մինչև ցծայր քաղաքին կարգաւ ջրակշոք կան ։ և այս ջոր է
միայն զոր վարէ աւանն ողջոյն ։ Առա ասացաւ աւանն՝ զի երկուստեկը պատեալ
է 'ի ջորց, մի ՚ի նմին գետոյ, և միւս ևս 'ի Սագառիայէ որ անցանէ ընդ միւս
ծայր աւանին մօտ առ Սահեփաննոս եկեղեցւոյն, և երթեալ անկանի ՚ի Սեաւ
ծով ինն ժամո. հեռաւորութեամի յԱստվաղարէ :

Աստափաղար հանէ յամին իրը 28 հաղար օգդա մեռաքս, հանդերձ 29 դիւ-
զորէիքն, որը են Անահատարճըլար, Գարաւտիկէր, Քիրէղնէ, Էրէնէր, Արտո-
վան, Զըպըրըլ, Տէրէքեայ վերին և սորորն, Գաշըր, Քէլէճիկէր, Տօղանճըլար,
Գիճըլար, Գուրստիկէր, Զէրչիկէր, Հասանպէր, Զայդըլար, Գամըլըր, Գուտար-
ւար, Հաճըլար, Թօրլար, Մարճաւալար, Ագճագամիշ, Մէզիւտիւ, Թամըլըր, Ֆէ-
րիպի, Եէնիքեայ, Ֆընտըլըլ, Պէլիք գըլար, Սապանճա, Գուրստիւ:

Ն Ա Մ Է Ր Տ Տ Ք Է Օ Փ Բ Ի Ի Ռ Ի Կ

Մ՚ի յանուանի կամրջայն է առ Ասիոյ մեծութեամի և հոյակաա շինուածովն .
կոչէ յոմանց և Մուհանենէնէր ք էօփրիւսիշ . չորեքտասան կամորք եննորս . երկոց-
նութիւնն 400 քայլ և աւելի ևս . բալանդակ շինուածն քարակերտ, Ճգեալ յարեւ-
լից յարեւմուս բլոյ ՚ի բլոր : Յառաջին ծայր ՚ի գլուխ կամրջին կամար կայ . և 'ի
հանդիպակաց կողմն ՚ի միւսն ծայր՝ այլ կամարակերտ շինուած բարձր ՚ի ձե խո-
րանի որմեալ ՚ի թիկանց, և թե մի աստի և թե մի անտի կցեալ ընդնմա: Ի ծայ-
րէ աստի առ երրորդ կամարաւ . կամրջին կան երկուստեկ կցեալ այլ բաղմակա-
մար շինուածք, առ ամբութիւն կամրջին թէ առ այլ ինչ չէ գուշակել . զի կա-
մարք շինուածոյդ թէպէտ և կցեալ են յիրեար, այլ ոմն ուղղահայեաց է կա-
մրջին, ոմն խոտորնակի և միւս ևս այլադիր . և է շինուածդ յայդմ վայրի եեթ:
ևակ ՚ի չորրորդ կամարէն սկսեալ մինչև ցառաջին ծայր կամրջին առ ամենայն
միջոցորմ կամարաց երկուստեկ սինաձե դիմարգելս երեալ են բոլորչ ահա-
զին թանձրութեամի և հաւասար բարձրութեան կամրջին . որք հանդերձ հոյա-
կապ շինուածով կամրջին տեսիլ իմն ահեղ երկեցուցանեն տեսնայն անցաւո-
ւաց : Առ նոյն չորրորդ կամարաւն երկուստեկ ՚ի վերուստ կամրջին ծակ դոր-
ծեալ է դէպուղիլ ընդ թանձրութիւն կամրջին, ընդ որ հազիւ մարմիւ միտում
ումեկը իջանել ՚ի ներքս . և չէ մարթ գուշակել թէ առ ինչ իցեն կամրջափոր
խորչք . այս ինչ յայսնի է, զի նովին ուղղութեամի յոտս կամարին տեսանի
այլ խորչ փոքր և անձուկ . և մարթ է ասել զայնոսուկ անցս արտաքին ջուրց որ
՚ի վերսց կամրջին . և կամորըն ողջոյն չունի խելս երկուստեկ : Սագառիա գետ
ընդ կամրջաւ անցանել ՚ի հնումն, այլ արդ ոչ ևս . և առասպեկեն Ցաճիկը թէ
ուերպիչ ուրումն անցանել կամեցեալ ընդ կամուրջն՝ զլանայ տալ զայնանեալ

սուրս պահապանին, զանդնչութիւն իւր պատճառեալ. և բոհադատեալ 'ի պահապանէն խստիւ, արկանէ զանձն 'ի գետն ասելով'.

Միններ իլեն քօքմա կիշիւ, աղ սուսամը ելինէ.

Եարմա թիջի քեօրկէսինտէ, զօ ասլան եկսին սէնի.

Կէմի Նամերս քեօփրիցսինտէն, զօ ափարսըն սու սէնի:

Եւ գետոյն վրէժինսկիր եղեալ մահուան առնն՝ փոխէ զընթացս իւր, իբր 'ի նզովս համարեալ զկամուրջն ընթացից իւրոց, Զէ մարթ գիտել զժամանակ փոխելցյ Սագառիսիայ գետոյն աստի. այժմ ընդ մի 'ի կամարաց նորա անցանէ այլ գետակ:

Կլ.Յվլ. եօթն ժամ հեռի յլտափաղարէ, աւան տաճկաբնակ 'ի դաշտավայրի. 'ի բերոց նորա գլխաւորքն են մետափս և բամբակ:

Արքի. աւան տաճկաբնակ. առաջի նորա անցանէ Սագառիս գետ. են 'ի նմա տունք աւելի քան զիկցհարիւր:

Պ Ի Լ է Ճ Ի Ք

Աւան մեծ բնակեալ 'ի Տաճկաց և 'ի Հայոց. 'ի դաշտավայրէ սկսեալ և հետպհետէ խոնարհեալ ընդ այլ և այլ ձորակս յանդի յանդնդախոր լերանցամէն. այնպէս զի թէ 'ի դագամթանց լերանցն՝ որ շրջապատեն զթաղս այնը կողմանց 'ի վայր որ հայիցի, ահիւ ըմբոնի. նմին իրի և օդն չէ առողջարար. թող զի և երթևեկացն անհնարին նեղութիւն է շրջել ընդ փողոցն: Կրիկն շուկայր են, վերին և ստորին. տունքն և կրպակն ամենայն դժուծ: Ի հասարակաց շինուածոց երեկի է միայն խիւք խանն նորոգ շինեալ մեծ և բազմասենեակ, սակս վաճառականաց մետափսի, որ գլխաւոր բերքն է աւանիս, և բնակիչքն սովու կեան մեծաւ մասամբ. մինչ զի և մուրացիկ որ ոչ գատանի անդ: Զինութենէ աւանիս յայսպիսի գժուարամուտ վայրի աւանդեն բնակիչքն ոչ միարան հաւանութեամբ եղեալ նախնի բնակչացն. նմին իրի և յառակս է ասել. « Տիշնեատէ ագրը պիր օլսա, Պիշէհիքտէ փազար օրինազրուր »:

Պիշէհիք տունք հաշուին ընդ ամենայն 760, յորոց 532 տաճիկը, և 228 են հայազգիք. երկու նորաշն եկեղեցիք են սոցա: Մի 'ի գլխաւոր տեղեաց համարի աւանն վասն մետափսի:

Վասն բերոց մետափսի նշանաւոր են և գիւղօրէքն բնակեալ մեծաւ մասամբ 'ի Տաճկաց, և են սոքա. Աէլալիսք յորում են տունք 76. Տէրէքեց 96. Բլրիտնար 32. Զաքըր վանար 32. Տէրէ շշմէտտին 68. Քէփիլէք 24. Կեզ վանար 52. Խըրթըլար 40. Պէյճէ 60. Էլլէսճէ 36. Ճիւմալի 48. Թէպէրիք 12. Սարմաշը 46. Պայըր 132. Կիւնիսք իօրէն 56. Վէղիր խան 176, որոց 442 են յոյնք. Չուքուր վիրան 100. Կիւլիւմպէ 144. Փէլուէող 120, որոց 84 յոյնք. Ապալազլը

72. Քիւփլու 688, յորոց 440 թղնք. ԵՀԿՎԻԵՅ 84. Գաւրս քեզ 100. Ախոնեառ թրք 12. Էօրէնքեզ 24. Պերտէմիր 108. Աշաղըքեզ 268, որոց 184 յոյնք. Պաշքեզ 340, որոց 146 յոյնք. Սալէօլ 68:

Եօնձալլի, Սերմոկ հեռի ՚ի կուտինայէ երկու և կէս ժաման. և է բաժանեալ յերկուս լոգարանս որիշ ՚ի միմեանց արանց և կանանց քարընկէց մի հեռաւութեամբ: Վասն ջրոց բաղանեաց ծծմբային ասեն, և է սաստիկ Արմ քան ըղմիոց Արմկին որ կոչի Ըլըձա կամ Գլըլձա-համամ, և չըս ժաման հեռի է ՚ի կուտինայէ:

ԿՈՒՑԻՆԱ

Աերպն, եհ ԳԵՏԱԱՌՈՐ ՏԵՂԱՔ. — ՔԵՅԹԱՀԵԱԼ ըստ Տաճկաց, քաղաք մեծ փորոն Ասիոյ, ՚ի հարաւոյ Պիլէնքիքի. նախ ՚ի բաւիու-ների տեղովն ասեն շինեալ քաղաք, որ հեռի է յայժմեան կուտինայէ, և կործանեալ նորա յերկրաշարժութենէ շինեն որ այժմո է. և ՚ի պեղելն զինն քաղաքն գտանեն քարինս և հեմունս շինուածոց. այլ արտաքոյ յերեսս գետնոյն չերեկի ինչ մնացորդ: Արդկուտինացոց քաղաքն շինեալ է ՚ի սառուսս սպառուածի լերինն՝ զոր կոչեն Ամեն տալլի, ՚ի հարթ վայրի. և առաջի նորա ՚ի հիւսիսց և յարեւելից գաշտավայր ընդարձակ որպէս Պրուսացոց քաղաքին. և առաջի լերինդ այլ լեռան ապառաժ փոքու խարոցաւ որիշ ՚ի նմանէ և կոչի ձեպէլ հիւնտի, յորոց ՚ի գաղթամն է ԲԵՐԻ, բազմաթիւ խիստախիստ և բարոցի աշտարակօք կառուցեալ: Առաջին աշտարակն ՚ի գաղթամն լերինն հիմնեալ, այլք առ հասարակ զինտ գան երկուստեք մինչև ցվայր յեղը քաղաքին. զի բան քաղաքն մեծաստրած արտաքոց բերդին է. խակ երես բերդին դէպուղիզ հայր ՚ի վերայ քաղաքին: Յառաջին աշտարակէ անտի 420 քայլ ՚ի խոնարհ պարիսապ ածեալ է, կամ թէ ասել միջն որմն, ծայր ՚ի ծայր երկուց կողմանց բերդին և գուսն ՚ի նմա, որով միջոցդ եռանիկինի է ձեւացեալ. և է ներքնարերդին կամ իչ գալէ: ի նմին վայրի երկուստեք գրան ներքնարերդին կան երկու. և երեք գետնափոր տեղիք փոքրաստրած և վարկապարազի ճարտարպետութեամբ. ՚ի միում յայդոցիկ գտան ամառ յառաջ բաղուց ներք մերդաշատի երկայնութեամբ և ոլոք փոքրիկ երկամի ՚ի ծայր նոշա: Առանձին որմոց միջնարերդին արտաքոյ յաջմէ նորա է դուռնն կոչեցեալ Առշդրան պալլ գուրուտու ընդ հարաւ արեւմտից, զի Առշդրան պալլ ասացեալ պարտէզն, յայնմ կողմանէ կայ կէս ժաման հեռաւորութեամբ: ի գրանէ այտի և ՚ի հանդիպոյ նորա պարիսապք բերդին շարունակեալ երկուստեք խիստ առ. խիստ աշտարակօք ըստ օրինակի միջնարերդին, ոչ ուղիղ գծիւ, այլ որպէս ինչ հեմունք քարաժայու լերինն ձեւացեալ են, հասանեն ՚ի ստորին սպառուած նորա որ տակաւին բարձր է յայժ քան քաղաքին. և ահա ՚ի դմին տեղովն է առաջին դուռն բերդին Զարչը քափուտու կոչեցեալ և հայր լնդ հարաւ: Առանձին դրանդ կոպը երրեմն արձան առիւծու, այլ արդ ոչ ես. և առանդ են բնակիցքն՝ առքն-

թեր առիւծուն լինել ուումք մի մեծ միջավոր և փականս գաղտնի ածեալ զնու-
վաւ. գիտացեալ ու ըստմն թէ զինչ ՚ի միջին կայցէ կամ թէ գուշակելով, խոս-
տանայ գերւոյ խրում ազատել զնա ՚ի գերութենէ եթէ զուումբն զայն ածցէ
առ ինկն, և նորա ածեալ, բանայ այրն զուումբն և գտանէ ՚ի նմա ոռկի լիով.
յայտնի լինին իրքն առ ամենենեսեան, և այլոց ևս կարծեցեալ թէ և արձան ա-
ռիւծուն պահարան իցէ սովույ, խորակեն զայն, այլ վրիպին ՚ի յուայ: Ի նմին
բերդի հարիւրիւ չափ տունք են բնակեալ ՚ի Տաճկայ:

ԲԵՐՔԻ ՓՈՔՔԻԿ. — Եւ եւ այլ բերդ փոքքիկ՝ ՚ի ճախսակողմն միւտցին ՚ի նմին կար-
զի պարսպաց նորա, խոնարհագոյն քան զնա և մերձ ՚ի քաղաքն ։ Ճիք անցք այսին
՚ի վերին բերդն. և մի դուռն է նորա որ հայի յարեւելու ։ Յաջ կոյս խաղացեալ ՚ի
վայր՝ ՚ի փողոցին կայ կամարաշէն տեղի մի ուստի եղանէ ջուր կոչեցեալ Աշաղին
հիսար վիունարը ։ Խակ արձանագիր ՚ի դրունս կամ ՚ի վերայ պարսպաց կրկին
բերդիցդ չիք և ոչ մի :

ՍԵՐՈՎԾՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ՆԵՐԱՐԺ ԲԱԿԱՆԱՅՆ. — Քանի զյուլվս՝ ՚ի քաղաքաց Տաճ-
կաստանի նուաստագոյն է կուտինա շինուածովք տանցն. ընդ բովանդակ քա-
ղաքն հաջիս գտանին տունք երկու կամ երեք նորաշենք, այլքն առ հասարակ
հնաշենք են և հնաձեռք, անհաստատք և խարիստովք, և որմնանք փողղացն կան-
դնաչափ ՚ի վեր վարկվարագի քարամիք հիմնեալ, միւս մասն մինչեւ ՚ի վեր կա-
ւակերտ: Անցքութիւն տանցդ արգիւնք է աղքատութեան քաղաքին, վիպյեալ և
՚ի բնակչացն. զի երեսեի ինչ բերք գեանց և արհեստակերտ ձեռագործ չեւա-
նէ ՚ի կուտինայէ, բայ ՚ի կաւեղէն անօթոց. և ոչ իսկ յաճախ երթեւեկք են կա-
րաւանաց. նմին իրի և այլոց քաղաքաց բնակիչն անգ. սակաւ եւ եւրոպացի ոք
գուն ուրեք. յաղագս այնորիկ և բարք բնակչացն ոչ են կրեալ այլափախութիւն,
զոր օրինակ ինի, յաճախ լինուանութենէ ընդ այլոց օտար աղդաց:

սազբը ըստ միանք՝ պատճեաց յաւուրս զատկի և ծննդեան հոր լուցանել ՚ի գաղաքմն Ըրբինն զոր խորրջը կոչեն, որ կէս ժաման հեռի է ՚ի քաղաքէն, իրաւ զի յաղաղաթեանէ քրիստոնէից մաքրեալք և զաեալք ան շաղախ մնացեն. և ՚ի նոյն աւուրս մանկու նոցա եղիծ առեալ ՚ի ձեռին հար կանեն ում և հանգիստին ՚ի քրիստոնէից խատիւ պահանջեալ ՚ի նոցանէ ՚ի գուրս հանել զինչ և ունիցին ՚ի ծոցի: Ա.Հ. զայս անդիմութիւն խափանեաց Հափրզ փաշա: Ե և այլ սովորութիւն տաճիկ մանկաւոյն. ՚ի միջոցի անդ զոր իւչ-այլար կոչեն, յայլ և այլ խումբս կազմեալ և թմբուկ ՚ի ձեռին խւրաբանչուր պարա. զիսի՞ շրջին ընդ փողոց. իրեն անցաւոր զոր տեսանեն, թէ տաճիկ իցէ՝ աղա զակեն քեապէ, քեապէ, քեապէ, պահանջերով դրամն ՚ի նոցանէ, որպէս թէ մաղթեալ վասն նոցա զի արժանի լինիցին յուխս գնալ ՚ի քեապէ. իսկ եթէ ՚ի քրիստոնէից իցէ անցաւորն ընակ եւ կամ օտար, աղաղակեն աձապ, աձապ աձապ. և է Ալասպն ասացեալ յեան մի ոչ շատ հեռի ՚ի քաղաքէն, յոր երա նեն Յոյնք յաւուր տօնի Եղիսայ մարգարէին պաշտօն կատարել, և քրիստոնեայն եթէ ասայի ինչ մանկաւոյն, քարինս զինի նորս ձգեն հայհցութեամբ հանդերձ:

Մշկաբեր, Եսեղիքներ են ԳՈՐԾՎԱՐԱԿ ԱՆԹՈՅԱ. — Ութեատան մղկիթք են 'ի քաղաքներ, յորոց մինն եղել երեկի է մեծոթեամբ Ուղու ձամի կոչեցեալ կապարա-

պատ յարկաք : Եկեղեցիք Հայոց երեք են, Աստուածածին, սուրբ թէոդորոս, և Լուսառորիչ . և առնկը ամենայն Հայոց 450: — Տանիի չափ գործարանք կան կաւեղին բռեալ անօթոց, որ ծանօթ են ամենայն արեւելեսց . նիւթ նոցա քար է նման գայլախազի զոր ածեն 'ի մերձակայ լերանց, և յաղօրիս լուսեալ մանր և շաղեալ յօրինեն անօթս այլ և այլ ներկուածոյ . 'ի նոյն նիւթոյ են և յինի ասացեաբքն 'ի ձև քառակուսի կղմատրաչափ , կանաչագոյն զարդու, որովք պատեն զորմնէնս եկեղեցեաց և մղիթաց գաւառացն այնցիկ : Այս ձեռակերտ է միայն քաղաքին, սակաւոց ունանց վաճառականաց տու . 'ի շահ, զոր և առաքեն յայլ և այլ կողմանս Աստից յորս չիցէ յաճախեալ տակաւին նոյնասեռ գործած եւրոպիոյ :

ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ . — Յօրեան առաստ է 'ի կուտինա, որ մշակի յայլ եւ այլ գալախալյրս հեռի 'ի քաղաքին, յորոց մի է և Ալրլնիքաշ օվաւսի : Ի պաղոց անուանի է բան զոր և չորացուցեալ առաքեն արտաքոյ : Խակ գինի սակաւագիւստ է, զի խաղաղն նախ քան դհասունանալ հարկանի 'ի ցրտոյ : Խակ լերինքն առ հասարակ որ մօտ են քաղաքին և որ առողջք հեռի աստի և անտի' տակաւած են ամենեին անրեր, մանաւանդ արեւմուեան կողմանցն . յորոց ոմանկը խաւ 'ի խաւ քարինք են, ոմանկը դիւրափիսրելիք և սպիտակը, եւ այլք երկաթագոյնք անպէտ 'ի շինուած տանց : Ի լերանց անտի երանէ և կաւ մոխրագոյն զոր վարեն փոխանակ մոխրոյ 'ի լուսանալ հանդ երձեղէնս :

ՕԴ ԿԱՐԱ, ԵՒ ԱԽՏՔ . — Օդ քաղաքին ցրտագին է յոյժ 'ի ձմերան, և ցրտութեանդ պատճառ զրարձրութիւն գաւառին ասեն, զոր թէպէտ և բնակն ու զգայ, այլ սուարն որ 'ի Բիւթանացւոց գաւառին այսր եկաւորի, միշտ ընդ զառիվերս լերանց երթեալ հասանէ : Ի հիւանդութեանց աշացաւ բազում է 'ի քաղաքին մաշնաւանդ 'ի կանայս և յօրիբորդս, և պատճառ ամսոիդ ասեն զցողացումն արեւոն յամարան յապառած լերինս, որ սպիտակը են և դիւրափշուրք, և 'ի հողմոյ և 'ի մրրկէ 'ի փայտ լուծանին . և յերաշտութեան՝ ամենայն ճանապարհը որ ընդ լերանցամշչն թղաւափ 'ի վեր փոչի են ինեալ 'ի լերանց անտի :

ԶՈՒՐԾԵ ՊԱՏՈՒԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ . — Կուտինայի ջուրցն առաստութիւն և պատուականութիւն համբաւեալ է և չկարէ զր գովել որպէս արժանն է . թեթե, ախորժահամ, մաքուր, առողջարար և ցուրտ 'ևս և յամանային ժամանակի . մինչ զի կարօտեալն և տանջեալն յանպիտանութենէ ջուրց Բիւթանացւոց գաւառին աստանոր գողցես ոդի առեալ կենդանանայ : Գիւաւորը յաղերականց են Աղիւն համ 'և կէս հեռի 'ի քաղաքին, քաջ մարտուական, և մնաքութիւնն այնպիսի 'մինչև թուել զամենայն խիճս յաստակին . բխէ 'ի ներքոյ քարանց 50 տրամաչափ 'թանձրութեամբ : — Ազուր յայլ և այլ ականց բզիւեալ 'և օգդա թանձրութեամբ, կիսով ժաման հեռի 'ի քաղաքին : — Եօնձա փունարը 50 տրամաչափ, և է անդինդ մինաբար արտաքոյ քաղաքին : — Չուքուր չէլմէ 'ի թիկանց բերդին 'ի վերայ ճանապարհի Սուլդան պաղը պարտիզին, առողջարար հիւանդաց : — Քնօ-

Relationships are indicated by arrows pointing from one concept to another, showing how they interact or depend on each other. For example, 'Big Data' points to 'Cloud Computing', 'Machine Learning', and 'Blockchain'. 'Cloud Computing' points to 'Blockchain' and 'AI'. 'Blockchain' points to 'Machine Learning', 'Privacy', and 'Security'. 'AI' points to 'Machine Learning'. 'Machine Learning' points to 'Blockchain', 'Privacy', and 'Security'. 'Blockchain' also points to 'Ethical Issues'. 'Privacy' and 'Security' both point to 'Ethical Issues'. Finally, 'Ethical Issues' points back to 'IoT'.

www.ijerpi.org

之亂

Biology

卷之三

դանք, (զի վերաբրան նահատակաց հանգիսացաւ ընդ դարս դարս), աւերեալ և դրեթէ անյայսացեալ, դոյջն աւերակօքն ծանօթանան:

Եւրդիքն պէրին եւ ՍՏՈՐԻՆ. — Ի վերին գաղաթման լեռնակի միոջ բերգն աւերակ. չիք ինչ նշանաւոր ՚ի նմա ՚ի նախնի շինուածոց. առ երկրորդ դրամին ևեթ՝ ՚ի վերայ պարապին կան տաճիկ արձանագիրը. և առընթեր նոյն դրան ՚ի ձախուն, խեղդան քար, սանդաձե փորեալ ՚ի մէջն եւ ՚ի կովմանէ ծակեալ. ընդոր չուան անցուցեալ եւ եղեալ զզլսէս յանցաւորին ՚ի սանդի անդ խեղդէին: իսկ ստորին բերգն մեծասարած կրկնապարիսպ է, խրոմ լայն ընդ մէջ կրկին պարապայն ունելով ընդ ողջոյն շրջապատն. բայց արտափին պարիսպ նորս կործանեալ է: Ի բերգի աստ է շինուած ինչ հին անյարկ, որոյ որմոնք կանգուն կան տակաւին. ճակաս նորս ողջոյն քանդակապարդ փառահեղ ըստ ձեւոյ զարդոց թիմարիսանէին Եւղոկիսոյ, այլ լսւ քան զայն եւ անեղծ. զօր և գերեզման ասեն Աննեքերիմայ վասպուրական արքայի. և են իսկ ՚ի նմա գերեզմանք: — Նոյնպիսի է զարդոք և նովին ճարտարպետութեամբ միւս շինուածն արտաքոյ բերգին, զոր արքունիս նորին Սենեքերիմայ ասեն: Թէպէտ և երկոցան նոյս կրկնակի մինարէք կան ՚ի վերայ պարապաց ճակասուցն, սակայն յայտ է թէ յետ ժամանակաց շինեալ են այնորիկ: Զերկրորդս զայս տաճիկը կեօր մէտրէսէ ասեն:

ԵԿԵՂԵՑԻՔ, ԵԿ ՊԱՍՏԱՐԱՆՔ. — Ի շուր և ՚ի պարծանս համարեսոյի ոչ Սերաստիոյ միայն, այլ և ամենայն Ասիոյ նորաշէն եկեղեցին Աստուածածնի ահեղ մեծութեամբն, հոյակապ բաղմագմէթէթ և բովանդակ քարաշէն: — Սուրբ Սարգիս, նոյնպէս քարաշէն, այլ փոքր, յորում է գերեզման Եկեղեցի կաթողիկոսին Ալոյ, վախճանելոյ ՚ի Ո.Պ. (1641): — Սուրբ Վլաս քարաշէն և փոքրիկ: — Են և այլ ևս երեք մատրոնէք անշուք. Սուրբ Մինաս, Ամենափրկիչ, և Սուրբ Վլաս, յորում է և գերեզման նորս յաճախեալ յուխտաւորաց յամենայն ազգէ վասն փողացաւի, յորմէ պօդազ էլլիխասը կոչեն զնա տաճիկը: — Եւստափիսեանց գերեզմանք երեցունց ևեթ՝ առընթեր միմեւանց կան ՚ի մեծ գերեզմանոցին Տաճկաց, անշուք շիրմօք. իսկ միւս երկոցուն՝ փոքր մի ՚ի բացեայ ՚ի նոցանէ: — Սև հոդեր. պյապէս կոչեն զգերեզմանաստոնն Հայոց որ է ՚ի մէջ քաղաքին, սակա անդ կոփան առնելոյ Լէնկիթմինուրայ զմանկտին Սերաստիոյ: — Լիճն Սերաստիոյ յորում նահատակեցան քառասուն վկայքն, կոչի բառուն մանուշէ. սակայն լիճն ցամաքացեալ է այժմ, և յաւանդութենէ միսյն գիտեն վասրածութիւնն նորին. այլ ակն բխեալ աղբերն կայ տակաւին. զրով որմ ածեալ պատեցին ատկաւ ամօք յաւաջ, գուռոն բաց ՚ի միոյ կողմանէն առնելով վասն ուխտաւորաց: — Մօտ ՚ի նա է գերեզմանաստոնն այլ, զըր և բառուն մանուշէ կոչչեն. յորում ցուցանեն ՚ի միում վայրի զգերեզման վկայիցն քառասոնից, խորտակեալ շիրմէս առընթեր միմեւանց եղեալ անշուք ամենելին և անսպասապար: — Թաղն Հոդրար որ արդ որիշ է ՚ի բուն քաղաքէն, խանձարուք է Միկիթարաց Արքայի, ծնելոյ անդ յամի 1676:

ՕՐ ԵԿ ՊԱՏԱՐԱՆՔԻՒԽԻԽԻ. — Թէպէտ և ցրտագին է օդ Սերաստիոյ, այլ առողջար յոյժ. և ՚ի ցրտութենէ անսի թերեւս անպատճք են պարտէք նորս. այլ միանայ պտղովք այլուստ. իսկ նորս բերք են ցորեան և գարի առաս:

ԱլՏԵՐ ՊԱՀԱԳ. — Արտակը քաղաքին 'ի սպառուածի լերին է մկնիթ մի զոր Ալտըր վահապ դազի ասեն, և ամանք 'ի քրիստոնէից Սուրբ Ցուաննեւ: Երեք մահարձանք են 'ի նմա: 'ի միումն է գերեզմանն որին Ոլորը վահապի: Երեկորդումն չորից տէրլիխաց նորին, իսկ երրորդումն է վճարանք: Առաջնոյն գուռն արձամի էր, զոր գոլոց 'ի բաց ասրեալ, վերստին շինեցաւ:

ՍՊԻՐԻ ՆԵԱՆ. — Կիսով ժամաւ հեռի 'ի Սերաստիոյ ընդ հիւսիսակողմն է հրաշակաւոր մենաստանն Սուրբ Նշան կուղեցեալ 'ի բարձրահայեաց դաշտավայրի, և աթոռանիստ է առաջնորդի քաղաքին: Երեք եկեղեցիք են նորա փորունք, Սուրբ Նշան, Սուրբ կարապետ և Աստուածածին: Երեկորդումն է գերեզմանն Փետրասի գետաղարձ հայրապետի, որ 'ի գերեզմաննաստանէն փոխադրեցաւ այսր¹, և հանգեպ նորա թէոդորի արեզայի: և առ գրանն հասասաւեալ են դիմանն քարն որ 'ի լճէն քառասնից բերաւ այսր: — Քառորդում հեռի 'ի սուրբ Նշանէ գոյ և այլ մենաստան Անտապատ ասացեալ, որոյ եկեղեցին եեթ կանգուն կայ և արտաքին որմունք մենաստանին: իսկ բնակարանքն իսպառ աւերակք:

ԲՈՂԻՆԵՐ. — Ի Սերաստիոյ ժամաւ և կիսով հեռի յարեւելսկողմն նորա է գիւղն Հայոց ԲՌՈՒՆԵԼԻՔ, յորում են տունք 165, և ոգէիք իրը 1300. Եկեղեցին նորա յանուն սրբայն Սարգսի մեծ և նորաշէն և համայն քարակերտ: Երկայնութիւն նորին 20 մեղք և լայնութիւն 14: Հետաքնին ոմն ուսումնասուեր 'ի ինդիր եղեալ ճշդրիս սպասութեան նախնի բնակութեան Հայոց 'ի գիւղս յայս, և թէ ուսուի սերեալ և գաղթեալ իցեն, եղիստ 'ի յիշատակարանի գրսց զբելց յամին 1634 այսպէս: « Բագրատւենիք, այն է Բագնիք, 'ի սմանէ ասի յամանց թէ էին 'ի ցեղէն բագ» բառանեաց, և եկեղեալ ասս արարին հիմնարկութիւն, և էին տունք իրը եօմն: « և յետոյ 'ի գուեհիաց գարձուցեալ զբագրաստնիքն բազնիք: և է իրը ժամաւ » և կիսով հեռի 'ի քաղաքէ Սերաստիոյ: և այժմ են 'ի սմա տունք իրը հնակ: « տասան: 'ի թուին Հայոց Ո.Չ. »: Եւ է գաղթել նոցա 'ի ժամանակս վրդովեց տչիսարհիս: յորմէ ունանք 'ի բագրաստնեաց հասուած եղեալ սսո բնակեցան, որպէս և եկեալին 'ի խոսխոռունեաց ցեղը 'ի խուշիւն 'ի զուարծալի գաշտին և 'ի ջրարրի, ինն ժամաւ հեռի 'ի Սերաստիոյ յարեւելս կըս: և խոռխոնն մականունք լիի տակաւին 'ի բուդնիք: Գարձեալ եկեալին 'ի Պինկէօլ լերանց կարնոյ բնակութիւն կալան երեք ժամաւ հեռի 'ի Սերաստիոյ յարեւելս հարաւոյ նորա, առ աղահանս, և կուեցաւ տեղին Պինկէօլ մինչև ցայսօր: Հնութեան գեղջն բազնիքոյ վը կոյէ և խաչքարն ԶԺ (1267) թուականաւ՝ որ կայր 'ի հին եկեղեցւով, և այժմ աղուցեալ են յորմն նորաշէն եկեղեցւոյն յարեւմուց կողմանէ 'ի բարձու: Առաջի բեմին 'ի կճեայ վիմափոր շիրմի ամիսինեալ պահին սոկերը տեառն Միքայէլի քահանայի նահատակելց յամին 1708 'ի 6 մայիսի, որ նախ 'ի հասարակաց գերեզմաննաստան թաղեալ, և 'ի նորուց շինութեան եկեղեցւոյն փոխադրեցաւ անդ:

1 Բայց մորմին հայրապետին՝ որպէս և արքային Աւնելքերիմայ՝ փոխադրեալ Երեք 'ի Վարագոյ վանս, 'ի Ասն, ուր են երկոցուն ևս գերեզմանք:

սուսներ . — Յարկելից կողմանէ Անդասատիոյ իր երեք ժամու հեռափ 'ի նմանէ Կոյ քարաժայու մի մեծ սենեկաձեւ փորեւալ 'ի մեջն , զբը կոչեն Սոխեկը կամ Սոխեկը ի . քանզի աւանդեն բնակեալ 'ի նմու ի հնումն երկուց ճգնաւորաց և կերալլեալ սոխավ և հայիս . որոց 'ի քարեկենդանի միս եղեալ առաջի սկսանին վիճաբանել յաղագս պէսովէս խնդրոց մինչեւ ցմեծ հինդշարսթի , մասայեալ վկերակարն . և լուր եզեալ իրացն 'ի քաղաքին , գան առ նոսա վարդապետը և աեսեալ զմինն առաջի նոցա և գայթակղեալ ընդ լուծումն պահոց , յանդիման նեն . և նոցա պնդեալ թէ ոչ ապաքէն տակաւին օր բարեկենդանի է , շինեալ մեկնին անտի , զաւուրն ճշգտմիւն իմացուցեալ նոցա : Եւ է քարսցին բաժանեալ յերկուս մենեախս առ երի միմեանց , միոյն կործանեալ առ կակութեան քարին , միւսն կանգուն կայ տակաւին . որոց յանձմէ մուիցն է արձանադիրս .

ՆՈՎԵԼԱՅ ԵՍ ՀԱՅՐ ՍԹԵՓԱՆՈՍ ՅԱՆԳԱ.
ՆԿԱՑԱ. ԵՒ ՅԱԼԻԲՆԵՑԻ ՍՊՐԲ ԶԵԿԵՂԵՑԻ
Ի ԹՌ-ԱԿԱՆԻՆ ՀԱՅՐ : ԽԵ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՃ

Դիւղորէք Աերասամիոյ տախն լինել 300. յորոց են իրր երիր մասամբն ողբ 'ի տախն տակիդ, որ և աստէն նշանակեալք: Դավիւա, Զելէպիլէլ, Աերփինծուք, Շնկու- ռակ, Մէճիտ, Ղարոխն, Խմալէլթ, Շէճրփատան, Խշանի, Եաշճապէլ, Շէճսպէկ, Մէճմիմէճուք, Աճը փունար, Սէյփիկ, Թախտութ, Աւաշ, Հաճի միրզէ, Ղարա- ճալար, Դդմաճ, Դուլոմ քեզ, Դուլ խուսութ, Թէօննիւք, Արմատլու, Մամա- շա, Պօղաղքէսէ, Մօլօչ, Ջամնախար, Գլխանել, Բժդա, Պինկեօլ, Խոչալիչնք, Է- միրխան, Գլրլճադշլա, Թախտուքէման, Տուլասար, Եավու, Բաղարջ, Քէսիւ- թնիք, Ճելալու, Ղարաեռանի, Ֆլընտուք, Թորոսպու, Խորանա, Ղավազլ, Կէռնէ, Կովսուն, Կալխա, Պետրոսի կամ Խօնճասար, Կամիս, Եարասար, Ճիրին, Թավ- չանլը, Քոթնի, Ցէվրէնտ, Տուլյա կէօղիւ, Բազնիք, Խանճար, Զալբուրդ, Լոզէն, Պախճաճուկ, Ալնալուտ, Բարերդ, Եէնիմէ, Ճէնճին, Թոսոսակ, Ցէվլէրսէ, Զաւա, Բահրաս, Եարախ, Գեղիկի, Պաշը պէջինք, Որոգուտ, Ղարաճալար, Ալ- տողնուշ, Սարը հասան, Վէլլէպին, Ղարաճաճօրէն, Եյնէպէկ, Զախանիս, Ղա- լին, Ցիրէքի, Պէտէլ, Ցէրէ քեզի, Նաւրուդ, Պայաթ, Մէնմէլէշ, Զալլաղան, Եէնիխան, Ղավախ, Սէրէնի, Զալլու, Տաթլուճաք, Խապսասախալ, Քիւրովէք քեզի: Խոյինճիկ. Կէշիղի, Ղայատփափի, Մէնշիւրիւ, Խանլը, կէօղմէն, Ցէփրի թաշ, Պէճիւրազ, Տիւկէր, Գարապաքըդ, Օվաճըկ, Ալահաճի, Գուլաղափան, Ախիս, Գուղէօրէն, Ղաղփեզ, Զէնկիւ, Աղճախան, Սալամիթ, Պալազիքի:

Շ Ե Պ Ի Ն Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ա Ր

Տեսիլ գիւղագաղպիս 'ի հեռաստանէ նման է Անկիւրիոյ , լեռոն քարաժայու 'ի միջի և 'ի գագաթան բերդ փոքրիկ , զատորսովն տունք և շոկայք , յորս ոչ ի՞նչ նշանաւոր : Յաշալը ուժենէ ժողովրդեան տեսէ տակաւին վաճառականութիւն նորա առաւել քան յայլ մերձակայ քաղաքս , զի և երթեւեկ բազում է անդ : Բնակիչը նորա Տաճիկը , չայք և օդյնք . տունք չայոց հաշուին 400 : Անուանի է 'ի բերսն գառըն գայմակը , որ է սեր չորացուցեալ իբրև զպանիր :

Ե Ի Խ Մ Ի Ի Շ Խ Ա Ն Ե

Գիւղագաղպիս այս շինեալ է 'ի լեռանցամեջս . տունք , փողոցք և ամենայն շինուածք սկսեալ 'ի բարձանց աստիճանաբար խոնարհին մինչև 'ի ձորամեջս լեռանցն որք շուրջ պատեալ են : Զարմանայ նորեկն ընդ տիսուր տեսվիլ կիւմիւշան նէի , զի և աեղի զրօնանց և անդորր շրջադաշելց 'ի նմա չիք և ոչ ուրեք . յոր կողմի և գարձուցանէ զհայեցուածսն , յանդիման լինին լերինք և քարաժայուք ահեղ բարձրութեամբ : Այլ պատճառք շինուածեան գիւղագաղպիս զրովն ասեն , որք ոչ միայն արասպոյ նորին են և 'ի մերձակայ սահմանան , այլ և 'ի մեջն , 'ի խորչ քարանձաւացն և լեռանց : Գործավարք հանքացն են Յոյնք , որ և բազմաթիւ քան զՃաճիկս . և են հանք կազարի , որ առ օդքա՝ տան մի կամ երկու և գուն ուրեք հինգ տրամ արծաթոյ : Հայազգիք քաղաքիս են 200 տունք և եկեղեցի նոցա Աստուածածին փոքր և անշոք . այլ վայելուշ է մենաստանն նորաշէն ժամաւ հեռի 'ի քաղաքէն . և են ճանապարհի նորա է հանք վլածոյ . զրովնէ աւանդեն յաշխատել գործավարացն վլուգեալ յանկարծ , և 'ի մեռանոցացն , զի բազմաթիւք էին , քառասուն գտեալ ողիս որք Պօղոս անուանէին , յորմէ և տեղին կոչեցաւ թըրք փաւլի : Ի պաղոց կիւմիւշանէի անուանի են երեք տեսակք առանձի , չերմայի , շալկամ արմեռուոք և համարամզա :

Ի կիւմիւշանէէ փոքր մի ընդ հիւսիս խոտորեալ սկսանին գիւղօրէք Մաշքայ վիճակի մինչև ցահման Ցրապիզոնի , յորոց են առաջիկայքգ , Աէսէրա , Ամապէլա , Վէրէնէ , Խամապէլ , Խամապէլա , Խամապէլա , Մաւրա , Սօլոյ , Մէրքսիլա , Խամա , Սիմէլա , Մուլապրա . Փօփառա , Փօօչ , Փօփարզա , Քուսէռա , Տանիսա , Խամուրեա , Լալայանսոս , Սախնոյ , Թէրցա , Քունաքրալ , Ոթամա , Խամսի քէօյի , Եէր քէօփրիւ . Քիլատ , Զիկանոյ , Զանոյ , Քօղմա , Քափի քէօյի , Խորսոնկոփ տուաջին և երկրորդ , Եանանսոս , Փօնտլայա , Քունասա , Զալէրա , Արօփիա , Աւուրսա , Քութուլա , Քօսիփիս , Ավուրզէն , Աքալիդա , Մէրէմանա , Կալիանա , Վայէնա , Ավլէնա :

Մամատրանոյ, Մէսօլոօր: — Ի գիւղն Եկր քեօվիլիւ որ մի է 'ի գոցանէ, գետոյն
մտեալ ընդ Երկրու՝ դարձեալ 'ի դուրս Ելանէ քառորդ մի ժամո. հեռաւորու-
թեամբ. և 'ի վերայ բլրոյն՝ որ սկիզբն է մտից գետոյն, յերկուս տեղիս առըն-
թել միմեանց ծակ գործեալ բոլորակ, ջուր գաղթ բղխէ խոխոչայով, միօրինակ
յամենայն Եղանակս տարւոյն. և վիմեղէն շրջապատք ծակուցն 'ի զօրութենէ ջրոյն
նարհագոյն ներկանին, որպէս և տաշտ առուակին ընդ որ հոսի բխեալ ջուրն:




ՄԵԾ ՀԱՅՔ



ԲԱԲԵՐԻ

Եռօրեայ ճանապարհու հեռի է 'ի Տրասկիզնէ քաղաքաւանս այս , երբեմն համարեալ մայր քաղաքաց խաղսեաց , 'ի ըլլաձև դաշտավայրի . յարենից և յարեմոնից պարսպեալ ցածագոյն լեռամբք , իսկ 'ի հիւսիսայ , որ և ծայր է տանին , քարալեառն բարձր ձգի յարեմոնից յարեւելու . սրով 'ի հարսույ ևեթ մնայ ճանապարհ արահետ՝ որ տանի 'ի կարին և յայլ գտառու հարսուային կողմանց . թէպէտ 'ի հիւսիսայ ևս միօրեայ միջոցաւ դաշտավայր է երկիրն :

Եւրբն . — Արդ 'ի գագաթան քարալերինն՝ որ անմասայց է յերից կողմանց արեւմոտակողմանին ևեթ կցեալ 'ի ստորոտս բարձանց , է թերդն կըկնապարիստ երկայնաձիւ ընդ ամենայն տարածութիւն քարալերինն , ոչ ուղղագիծ որմովք ինչ շինեալ , այլ ըստ անհարթութեան քարալերինն որպիսի ինչ բնութեանն ներգործեալ է՝ արկեալ հիմունս , ուրեք 'ի ցած և առ 'ի ներբս , և այլուր 'ի բարձր և չկցեալ առ արսագր : Բազում՝ ուրեք անկեալ պարսպացն , մանաւանդ արտաքնյան , անսապատայեալ է արդ . ամենայն տոնն որ 'ի ներքնապարսպին էին կործանեալ և քանդեալ առ հասարակ 'ի յարձակմանն Ռուսաց , անդնակ են 'ի մարդկանէ և 'ի պահապահաց իսկ : Ոչ սակաւ էին 'ի նման ամբափակեալ պա-



հարանք, որոց ցարդ կան մնան որմունքն կիսակործան։ Այլ մի 'ի նոցանէ որ 'ի ծայր բերդին է յարևմտից կողմանէ և բարձր քան զնելը նապարիսապն՝ անկործան կայ տակաւին. չիք նորա գուռն, այլ 'ի հարաւոյ ևեթ պատուհան մի անձուկ. ընդ որ մուեալ Ռուսաց բազում ինչ համին 'ի զինուրական անօթոց, ընդուրան մի արձաթի, որպէս պատմեն։

ՃՐԱՄՔՆԵՐԻ Կ ԲԵՐԴԻՆ. — Ջրամբարք կրկին կան 'ի բերդին մօտ առ միմեանս, և մուռք նոցին զէմ ընդէմ իրերաց. և են գորա ձևով և արհեստի նման ջրամբարացն Ամասիոյ և Եւգովիոյ, առ. 'ի շեղ փորեալ 'ի քարավերին վերուստ մինչեւ 'ի ստորաստ նորա, որ հասանէ յեզր գետոյն, և ջուրն ժողովի 'ի ներըս ընդ բացուածն։ Յոյժ աւերեալ են ջրամբարդ, զի և աստիճանք սամող զոցն խաթարեալ են խապառ, թէպէտ և 'ի նմին ապաւածէ կոփեալ և միապաղադք՝ որ հասանեն մինչեւ յաստակս նոցա։ Երկուստեր առաջնոյ դրան բերդիդ բարձրաքանդակ անարուեստ պատկեր են առիւծու. և ընձու։ Խոկ արձանադիր բազում է ոչ 'ի վերայ դրանց միայն, այլ և 'ի վերայ ներքնապարապին 'ի լեզու արաբացի, յորս վեր 'ի վայր յիշաստիկ Պլճասպանն, և թիւ. հիճրէթի 'ի միումն 610։ Սակայն հնութեան բերդիդ յաւուց անտի քրիստոնէութեան՝ վկայ հաւասարիմ կոյ ցայսօր կիսաւեր եկեղեցին 'ի միջավայրի նորա, որոյ չարկքին որմունքն խորանաւն հանդերձ կանդուն կան տակաւին, կամնարին ևեթ կործանեալ. և մօտ առ խորանն արձանադիր յոյն՝ թէպէտ և խանդարեալ։ Եր նորա և այլ արձանադիր անեղծ զոր յետ գալստեան Ռուսաց եւրոպացիք բարձեալ տարան անտի և տեղին գաստարկ կայ ցայսօր։

ՃՌՈՒՄԻ ԳԵԿՈՒՅՆ ընդ մէջ անցանելով 'ի հարաւոյ 'ի հիւսիս՝ յերկուս բաժանի աւանն, չորիւք կամրջօք կցեալ կողմանցն երկոցունց. և ընթացեալ առ ստորատով քարավերին բերդին յարելեան ծայրէ նորա մեծաւ շառաչմանք՝ և պատեալ զհիւսիս. անցեալ գնայ. յորմէ մասն մի աւանին յարելելս մնայ և մեծմասն շուկայիւն հանդերձ բերդին՝ յարեմուտա։

Շինուածք տանցն անշոք և ողորմելի են և առ. հասարակ հողայարկ. և զի բազում տրեք բլրաձեւ է վայրն և յեղերաց գետոյն տակաւ. 'ի ստորաստ լերանց և մինչեւ ցիէս բարձրաւթեան նոցին ժամանեն տունքն, նմին իրի բազումք 'ի նոցանէ 'ի միոյ և կամ յերկուց կողմանց խրեալ են 'ի գետնի, և տանիք նոցա հաւասար բլրայն. որպէս զի ելթէ ոք 'ի բերդէն 'ի վայր հայլիցէ, զաւանն առ հասարակ ամենայն շինուածովն միապաղադ ընդ գետոնց տեսանէ և միսազոյն։ Զայդ ձեւ տանց կիսամթազ 'ի գետնի ճարտարեալ են բնակիչք առ մեծի ցրտութեան ձերան. զի և կրկնայարկ տան չիք անդ բաց 'ի սակաւոյ ունաց, և ոչ վայելուչ պատուհանք. այլ մեծաւ մասամբ խրաբանչիւր սերնեկայ է մի մի լուսամուտ 'ի միջավայրի յարկին; ի պատերազմին Ռուսաց բազումք 'ի տանցն քանդեալ, և կան այնպէս մինչեւ ցայսօր. այլ յականատես ծերանեացն վկայի մեծատարած լեալ բարերգոյ յաւաջագոյն, մինչեւ տարածիլ շինին և կրապակց անդք քան զերդն ընդ հիւսիս. արդ անդասան է ամենայն վայրն։

ՆԿԵՊԵՑԵՔ. ՏՀԱԿԻՔ. ԳԵՐԵԶՄԱՆՔ. — Զորից եկեղեցեացն, որք կոչին Հրեշտակակետ, Աստուածածին, Աստուածամայր և սուրբ Յոհանն, արտաքին տեսիվ և

որատուհանք նոցա ոչ ինչ խտրին՝ ի տանցին, և ներբինն խրթին և մթին: Ի մզկրթաց Ուղու ձաւմին հնաշէն՝ եկեղեցի էր՝ ի նախնումն որպէս պատմեն: Պէտքուրէնն հոյակապ քառագմբէթ և մթին յոյժ՝ անխախտ կայ, այլ յախոս փոխեալ: Ի դաշտավայր ծայրի արևմտեան բարձանց, ուր և քարահանք են, կան կրկին բիշրապէք ուխտատեղիք ջաճկայ՝ միմեւանց առընթեր, և ըստ շինուածոյն ոչ անշուք. մին բոլորչի և անդուռն միով բարձրագիր պատուհանաւ. և գմբէթ նորակործանեալ. և միւնն անկիւնաւոր, դագաղաձև գերեզման մի ունելով՝ ի ներբուիրը 40 ոտից երկայնութեամբ: Ե, և երրորդ մի ՚ի գերեզմանոցի նոցա: Մեծատարած է գերեզմանատուն Հայոց առ ՚ի կողաց արեւելակողման բարձանցն և հին թուականք՝ ՚ի շիրփինն ՊԶԸ, ՊԶԾ. սակայն երկոց յայնցանէ որ առ երի կան իրերաց և ՚ի բնակչացն խակ ոչ անծանօթք, թուականքն են լոկ ԺԲ: որք թէ շիցեն խարդախեալ յումեքէ քերելով զառաջին տառն, հարկ է ասել իրը հաղար երկրհարփւր ամօք յառաջ բնակեալ աստին Հայոց: Եւ կասկած խարդախութեանդ անտի է զի չափ հնութեան շիրմացն այնոցիկ չվկայէ թուականիդ. հընութեան:

ԱՐԱՎԱԿԱՆԴԱՒԹԻՒՆ. ՎԱՃԱՌՔ. — Բարերդ հանդերձ ամենայն գիւղօրէիւրն առաստէ ցորենով և գարւով, և շտեմարան կողմանց լազիստանու. այլ ՚ի պաղստու ծառոց սալորենի միայն գտանի: Տօնավաճառ նորա է՝ ՚ի մէջն մայիս և յունիս ամսոց՝ եօթնեակս հինգ կամ վեց, յորս յաւուրս շաբաթու և կիւրակէի ոչ ՚ի գիւղօրէից նորա միայն, այլ և յայլոց սահմանաց գան խանին ՚ի նմա ամբոխ մեծ հանդերձ վաճառօքն իւրեանց որք են ցորեան և գարփ, երիվար, արջառ և ոչխար բաղում յոյժ: Խակ ձեւագործ բարերդոյ, է այլ և այլ տեսակ զորդոյ:

Վ. Ա. Բ. Զ. Ո Ւ Հ. Ա. Ն

Երկու ժամաւ հեռի ՚ի բարերդոյ յարեմոից հիւսիսոյ նորա է գիւղս հայարնակ: Ի նախնումն զիւղաքաղաք էր սա, և թիւ տանցն հասանէր ցհաղար և ութհարփւր որպէս գրեալ է յարբունի գիւտանին. այլ յանդադար պատերազմաց յերեսաց լազից ասպասակողաց քանդեալ, հազիւ արդ քանիք սահմանի: և հիմունք աւերակայն երկին ցարդ: Եկեղեցիք յայնժամ՝ 24 հաշուէին ՚ի նմա ըստ բնակչացն աւանդելոյ. և նոցին մնացորդը են երեքին կիսաւեր եկեղեցիկն փոքունք այլ գեղեցկաչէնք, առ հասարակ քարակերաք և ճարտարարուեազ, այլ գմբէթին կործանեազք. ձեռվ զանազանեալ յիրերաց, զի ոմն խաչաձև է և անփուն, և այլ ոմն բոլորչի և սիւնաւոր, յորում ՚ի վերայ միոյ ՚ի սեանցն խաչ քանդակեալ և ընդ նովաւ թուական հանդերձ յիշատակարանաւ այսպէս:

Զ Զ Թ — ՍՈՒՐԲ ԽԱՋԱ ԲԱՐԵՒԽԱՅ ։ ՖՈՒՄԵԿԻՆ

Ի սկիզբն դարուս տակաւին անարաստ կոյին եկեղեցիքդ երեքեան, և աւերեցան ՚ի յարձակմանէ լազից: Միւնք նոցա և քարինքն առ հասարակ գեղնադոյն են և կակուզ:

ԱՐՄԵՆԻԱ ԳՈՅԻՆԻ

1846

ՊՈՂՈՎՈՒՆԻ

ՏԵՐԵՎԱՐ

ՏԵՐԵՎԱՐ

ՍԵՐ

ՏԵՐԵՎԱՐ

ԱՐՄԵՆԻԱ ԳՈՅԻՆԻ

Համարակալի

ՏԵՐԵՎԱՐ
ՏԵՐԵՎԱՐ

ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ

Ի լայնածաւալ գաշտավայրի գաւառին Բարձր Հայոց, զոր չորս և հինգ ժամոց բացակայութեամբ շրջապատճեն լերինք մեծամեծք և մանունք, 'ի հարաւ կուսէ՝ 'ի կողմն մի լերին կիսածամաւ 'ի նմանէ տարակայեալ, ունի զնիսաւ իւր քաղաքի սյու Եւ է գաշտավայրդ հարթածաւալ և ամենայն գիւղօրէք գաւառին կարնոյ մեծաւ մասամբ երեւեալք 'ի քաղաքէն, ծով իմն արդարեւ ցամաքային երեխն քաղաքան հանդերձ, անարդել յամենայն ըլլոց և բնաւ մերկ 'ի ծառոց :

Եւրոյն եւ Արօնաշանն . — Կրկնապարփառ է բերդն մեծաստարած և բազմաշտարակ, և պարփառն ամենայն առ հասարակ ժայռաւորը : Միջոց կրկին պարըսպացդ, չիսար պիչէն կոչեցեալ, ուրեք լայն և ուրեք անձուկ, գտուարկ է 'ի բընակչայ, առ գրամբն և եթ կրպակս ունելով վաճառուց : Զարտարին պարըսպաւն շուրջանակի իրրու քարընկէց մի և աւելի հեռագայն՝ փոս փորեալ է մարդաչափ և իւս խորութեամբ՝ երկուառեք ամբացուցեալ որմովք մինչեւ ցրարձրութիւն գետնոյն արսապնոյ, և քարաշէն կամուրջս ածեալ 'ի վերայ՝ անցանել 'ի բերդն, զորով պատեալ է ընդարձակ ճեմելեաց : Յանձրապետէ փոսին և այսր շուրջ զիւրդաւն ողջոյն շուկայ է երեւելի վաճառատեղեօք և արուարձան մեծ . և յաւարս արտարձանին՝ և ուստի գաշտավայրն սկսանի, այլ փոս փորեալ է դարձեալ շուրջ զբաղաքան ողջոյն անորմ, զոր 'ի ժամանակս արշաւանայն Դահմաղայ տաեն փորեալ . Ճեպիւ գափու ասացեալքն երկուառան թուով 'ի վերայ շրջապատճեան այդք փոսի են, ոմանց խիլիեալ և այլոց խսպառ անհետացեալ : Չափ շրջապատճեան փոսիդ, որ և շրջանակ քաղաքին ողջոյն, ժամու և կիսայ հանդարսակայլ ընթացիւք :

Ներքուանուրոյն եւ թէփսի Մաման . — Ի հարաւային ծայր բերդին որ ըլլաձև բարձրացեալ է քան զամենայն վայրն՝ ներքնարերդն է, անեղ և բարձր պաստուարաւ անձրսետեալ 'ի հիւսիսայ և յարեւմոփի, որ անարդել գիտէ ընդ քաղաքն ողջոյն՝ վամն բարձրութեամն ներքին գետնոյն : Ներքնարերդգ. որոշեալ է 'ի զիւնարան պահպանութեան քաղաքին, գուցէ արդեք նոյն և 'ի հնումն իրրեւ պատշաճապոյն վայր վասն բարձրութեան դրիցն : Թէկիսի մինարէ ասացեալն, առ հարաւային որմով կանդնեալ, տեղոյն բարձրութեամբն համարձակ գիտէ մինչ չեւ ցմեծ հեռաստան, զի 'ի հնդից ժամոց հեռաւորութենէ նախ քան զնիսաւ ապածութեան քաղաքին առ երեխ : Չունիմ որոշագոյնս ինչ ասել զամանէ . և չեմ համանեալ թէ մինարէ լիցէ մղղմի, որպէս ասէ ասմիկն, և քէկիսի կոչէ զի սախտակամած է յարկին, ընդ որով ժամացոյց կայր մեծ և լսելի ընդ ամենայն քաղաքն, զոր թուոք 'ի բաց տարին : Խոկ զանդակատուն ասել ամենելին վայրա-

ուղար , զի արտաքայի տառիցն կիսուածքը քիւթի գլուփի աներկրայ վկայ կան հա-
զարացի շինութեանն : Գուցէ հաւանական ևս իցէ դիտարան ասել զնա , զի զայդ-
խակ այս կարծել բարձրութիւն տեղոյն , ուստի դիւրագոյն էր համարձակ զննել
զպէսպէս հանգամանս թշնամոյն 'ի ժամանեակս մարտից մինչեւ ցմեծ հեռաս-
տան : Շինուած նորա աղիւսակերտ է և դանաձեւ , և մօտ 'ի ծայրն է զրութիւնն
աղիւսակողմանը բարձրաքանդակ դրուագեալ 'ի մի սուլ շուրջանակի , որ է մազ-
թանկ բարեբաստութեան Մուզաֆէր պէկի թոռին Ապէլ Գուսինոյ՝ Եշտպի քա-
զաքին յ' մբ գալու :

ԶԱՅԱԿ ՄԻՆԱՐԵ . — Արտաքոյ ներքնաբերդին 'ի կողմն Երզնկայ դրանն ' յահեկի
նորին կայ այլ շինուած աշտարակածն գեղեցկասես , յօրինեալ բազմագունի
փայլուն յախճապակօք պատուածն բարձրաքանդակ վերուստ 'ի վայր : Անյայս
մնայ թէ զի՞նչ էր և սա 'ի հնումն . զի կործանեալ գագաթանն կամ թէ ցայն
վայր հասուցեալ զշնուածն ոչ մինարէի նմանի և ոչ զանդակասմն :

ԶԱՅԱԿ ՄԻՆԱՐԵ . — Իսկ յարեկալուզմն բերդին առ Գաւրէզի գրանն շինուած
հոյակատ ընդ առաջ մինի Զիփսէ մինարէ կարդացեալ : Երկուսակը գրան շի-
նուածոյն , որ բազմագոււագ յօրինեալն է շուրջանակի , հանդերձ պէսպէս զար-
դուր վիմափոր և բարձրաքանդակ 'ի կան և մնարուեստ պատկերը ձկանց 'ի վեր
բերանաբայցք , և առ նորօք ոստ ծառոց : Մտեալ ընդ գուռն 'ի ներքս յերկուս
առաջս անջասի շինուածն կամարակաց և կրինայարկ , իւրափանիւր կողմանն ու-
նելով կարդաւ սենեակս քսան , տասն 'ի վերնայարկին և նոյնչափ 'ի սոսորէ , և
անձուկ գաւիթ զառաջնեաւ իւրաքանչիւր զատիկինի կամարասխն յօրինուածով
ի ծայր սենեկայցդ որ հանդիպակաց է դրանն առ 'ի ներքս սենեակ մի կայ տա-
ճարածն բազմանկիւն բոլորաչն չսպասոր տարածութեամբ , և գմբէթ նորս
սրածայր աւարտեալ : Ներքին կողմն դորին առ հասարակ կճապատ գրուագեալ
պէսպէս քանդակադործ զարդոք , գեղեցիկ և հոյակապ յոյժ . զդուռն նորս
հանդերձ շրջմանակօքն և ճակատաւն , որոց նոյնատեսակ քարամըք քանդակա-
գործեալ էր յոյժ ճարտարարուեստ օրգէս պատմեն ակմանատեսք , քակեալ
թուանշանաւ . Բասքեկիչ զօրապետ առաքեաց 'ի Բերդ-բազուրկի : Յատակ փառա-
հեղ սենեկիդ գերտնափոր է ամբակամար , որ արդ թափուր է յամենայնէ և
մուտ նորա աւերեալ : Շինուածս այս ողջոյն կոչչ և ձեպիսանէ , զի սենեակին
լցեալ են վասօդովք և այլ ևս կարեորօք պատերազմի . նախ քան զդուռ Ռուսաց
կային անդ . և վաղեմի զէնկը վահանկ և սաղսաւարտք : Բնակինք քաղաքին սովորե-
ցին զսա Զիփսէ մինարէ ասել 'ի պատճառու կրկին մինարէից որ անընդմիջարար
երկուստեք գրանն 'ի ներքին կողմանէ 'ի վեր բարձրանան : Ծառ արհեստի ճար-
տարապետութեան շերտածն յօրինեալ են զրքա վերուստ 'ի վայր 'ի կարմրա-
գոյն և 'ի կանաչ աղիւսոյ . և շիք նոցա շերիփէ , այլ ըստ օրինակի առաջնոցն
մինչեւ անդք հասեալ գաղաքեալ է շինածն : Բարձրութեամբն հատասար են մի-
մեռաց , այլ փայլուն տեսլեամբն մին տուաւելու քան զմիւն : Եւ աւանդեն ճար-
տարապետին նախ շինեալ զմինն , և լաւագոյն այլոց գատեալ զմիւնն զոր աշա-
կերտն արար , արկանէ ճարտարապետն զանձն 'ի վայր 'ի գագաթանէ աշտա-
րակին առ նախանձու և մեռանի . վշտացեալ աշակերտին ընդ մահ նորա , զնոյն

օրինակ մեռանի և ինքն։ Ի բազմաց և այլովք ինքնահնար բանիւք մեկնաբանեալ Զիփ-տէ մինարէ, իւրով պարսիկ արձանագրաւն ծանօթանայ թէ երբ և որոյ հրամանաւ շենցաւ և յինչ պէտս։ Եւ այս թարգմանութիւնն է արձանին.

Մասսյը Աստուծոյ, ունին դիք մը-
տադրութեամբ բանից իմոց։ իսինե-
զիրակարութան Մէկիք խանի իշեալ
ի խորացւոյ և ենիւայ յերկիրս Յու-
նաց, ընարևից զուեխս ինձ՝ ի թեա-
կորին։ և ածեայ զիտաւ շինել տե-
ղի օժանեակի յիշասակ ինձ առ յա-
պայ, կաեզնեցի զմզիրս զայս և
զունեակիր ՚ի թեակարին զիտեց
և ուսումնափրաց։ և հաստատեցի
՚ի ծախս նորոգորեան շինուածոյն
յաւերման՝ զնաւա հօրե կողդպա-
կաց և զամենայն վայրացց որ շորէ
զինուածովն։ զի առցեն անխային
ամ բան ամեն զնասան յանուն կո-
տածոց ասլուան Մէկիք խանի։ Եւ
կացոցի ուսուցիչ վարժարանին բզ-
ուրան և զիմաստուն և զիւնիր այր
ցիխամենատին, կարգեալ ճամա սո-
միկ երիս զեօպս, տայ նեմա սմի ս-
մի երիք հազար և հինգնարիր փող,
զի աղօրս արասց է վասն սիկնոս։
Արդ որ յայսմ նետ յանամ տանի
շինուրեան և պահպանուրեան տե-
ղոյս, օրնենազ կոյիցի յԱստոծոյ։
և որ զաւարենցն՝ անիծնայ կոյ-
ցի ՚ի նման։ Եղին շինուրին սորս
յերեքնարիր յիտոն և միուն բաւ-
կանի հիմքերիս ։

Արդ-յայս է յարձանագրէդ զի
ուստանարան էր շինուածն
վասն կարդացողաց մսլիմա-
նաց, և քառասններին սենեակ-
քըն բնակարանն նոցին, և փա-
ռազարդ սենեակն տաճարա-
ձե անշուշտ յարկ շիրմի կոսմ
տեղի աղօթից։ իսկ ժամանակ
շինութեանն 962 թիւ Քրիս-
տոսի (Հիմքը թիւ 351)։

Մի ՚ի մեծադոյն հնութեանց քաղաքիս համարելի է Ուլու Ճամփին մօտ ՚ի Զիփ-

աէ մինարէ . ոչ այնքան յարուեստէ վսեմ ճարտարպետութեան երևելի եղեալ , որբան մեծութեամբն . զի երկայնութիւն է նորա 50 մէզք յարեւելից յարեւմուս , և 38 լայնութիւն . չիք 'ի նմա այլեայլութիւն ձեւց կողման և կողման , այլ առ հասարակ կարգ ըստ կարգէ կամորք են ձգեալ , և հաշուին կամարասինքն 28 , և եօմն կարգ կամարաց : ի միջնավայր յարկին եր դմբէթն , որ կործանեալ և արդ փայտակերտ է . շնորածն ըստ բոլորին ցածաղոյն է ամենեւին անհամեմատ տարածութեանն : ի ռամկաց կարծի սա եկեղեցի լեռալ 'ի հնութեն , այլ ձեւ եկեղեցւց բնաւ չերեխ 'ի շնորածի անդ , և ոչ տեղի խորանի . զի և յարտաքին կողման փոփոխութիւն ինչ ոչ երեխ նորոգութեան : Թերեւս մատենադարան եղեալ իցէ կամ դիւանաստուն առ Յունաց կայսերութեամբ , զոր Տաճկաց 'ի մզկիթ փախեալ զնշան միհրապին յաւելեալ են 'ի հարաւոյ , և թողեալ նմին դրունս երկու՝ այլքն որմեալ կան և տաճիկ արձանաղիք 'ի վերաց մլոց 'ի դրանցն :

ԴՐՈՒՆԱ ԲԵՐԴԻՆ . — Զորս զրունք են բերդին երկրացիկք , և ոչ հանդիպակաց միմեանց 'ի կրկին պարիսապն , և կոչին Դէվրիզու դուռն , Երզնկաց դուռն , Նոր դուռն և կիւրճի դուռն , յորոց ոմանց վերաց են տաճիկ արձանադիրք . իսկ հին արձանադիր յունարէն կայ 'ի վերաց կիւրճի դրանն ներքնապարտութին մանր և մեծատառ՝ յորմէ մասն անեղծ մնաց .

| | | | |
|----------|-------|---------|--------|
| Ω Θεὲ | Κύριε | ԱԾ | Տի |
| Βοηθεὶ | τῷ | Օդնեա | . |
| Δօնէք | τῷ | Եղասպի | . |
| Ենէլε | . | Եւկլե | . |
| Τὸ βουρ | . | Վոր | . |
| Μηνս | . | (Ամիս?) | . |
| Ἐτει ζφ. | . | Ի թուին | 6500 . |

Թուականդ արարչութեան 6500 որ ըստ Յունաց հաշուի է 992 ամ Քրիստոսի թերեւս պատշաճիցի ներքոյ գրելում արձանի , որ է այս .

Կորιε Յօηնի տոν ծօւլօն օսու

Ցէր օդնեա ծառայի քո

Պամանու տոն ծալաւուն ?

Ուոմաննուի (Գալասամոն կամ Շշուասուի ?)

և հաւեռանու տու ηթէ(ρ)օւս . . .

Եւ կատեալանի (Վրաց ?)

Ցերի արձանիս կայ բարձրպանդակ պատկեր նիդակաւոր հեծելոյ , և հրեշտակի և կուսի . և 'ի հանդիպայ՝ ընձու :

Սակաւոք անդք քան
զգուռնդ յահեկէ նորին 'ի
նմին պարապի իբր տասն
ոտնաչափ բարձրութեամբ
'ի գետնոյն կայ և հայ արձա
նադիրդ աղարսեալ 'ի փո-
քու . քառակուսի վիմիք . և

| | |
|-------------|---|
| ՅԱ ԱԾ ՈՂՈՐ | Այդ տապանագիր թուե- ցաւ . ինձ ածեալ 'ի գերեզ: |
| ՄԷ ՍՏԵՓԱ | մանատանց և մուծեալ այզէ |
| ՆՈՍԻ ԵՒ ՅՈՒ | 'ի ժամանակս նորոգու- թեանց . զի անշըռութիւն վի |
| ՍԵՓ ԿՐԻՅՈ | մին և գրտածոյն և տեղլոյն անպատկանութիւնն չներէ |

ասել եթէ յիշատակարան իցէ շնորին կամ ճարտարապետի պարսպացն : Զնոյն

ասեմ և դքանովակագործ խաչիցն սպազը առաւել քան յայլ տեղիս լի է մասն պարսպիդ՝ որ ընդ մէջ կիւրճի դքանն և հայ արձանագրիդ. զի ոչ կարգ ՚ի շարո նացին երեկի, և ոչ տեղուցն յարմարաթիւն. այլ խառն' ՚ի խուռն և անշոք: Յայտ իսկ է զի 'ի վեցերորդ գարի մինչեւ ցերեկբասամներորդն բարձրմ անցք անցին ընդ քաղաքու այս ՚ի Պարսից ՚ի Ցունաց, ՚ի Թուրքաց, ՚ի Վլաց, ՚ի Թամարաց. յորոց հարկ էր խարխալել պարսպաց նորին՝ և նորոգել: Այս միայն յերկիրացս արկանէ զհետագնին միսս, զի 'ի հարաւակորդն արուարձաննին արտաքրոյ կանունն կայ տակաւին մասն ինչ հին պարսպի համովերձ դքամիք, թէ արգեօք նախ քան զիէու դու ընակութիւն կալեալ է անդէն մարդկան, եթէ մասն իցէ դա որ 'ի նմանէն հիմն արկաւ, կամ թէ հարաւային կողմն բերդին մինչեւ ցանդք հասանէր նախ և ապա զատուցեալ ՚ի միջնաբերդէն և անդը՝ յանութեան մնաց մասն պարսպիդ, կայի զայս որպէս ոք ախորմէ. մեք այլոց ևս տեղեաց քաղաքին եցուք ՚ի տես:

Թիւրքիկ ՄԵՐԱՑԱՅՔ. Մզկիթիք եւ առ ձաւարակած ՇԱԽՈՒԱԹԻ¹. — Ի մէջ բերդին և մասնաւանդ յարուարձանին ՚ի գերեզմանաւասանս Տաճկաց և ՚ի մէջ թաղիցն ևս տասնիւ չափ կան շիրիմք Տաճկաց. յորոց երկուք կոչին Կիւմիւշշի զիւմպիք արտաքրոյ արուարձանին: Առ հասարակ քարաշէն են շիրիմքդ և սրածայր գմբէթիւ. ունակը բոլորչի և այլք բազմանկիւնի և միովլ դքամիք, մի կամ երկու պատուհան ունելով շորջանակի, կամ ոչ բնաւ. մեծութեամբ իբրու ՚ի չափ միջակ սենեկի, և միհրապ ՚ի հարաւոյ, և յատակք նոցա գետնափորք. Հոյակապ է որ կայն ՚ի գերեզմանաւասան Ելէնի մահալիքին, և դադաղաձև գերեզմանք ՚ի նմակու: Ի միունն ՚ի նոցանէ որ 'ի մէջ թաղին է յարուարձանին՝ կայ հին արձանադիր քիւմիք գրուք: — Ի բազմաթիւ մզկիթս նշանաւորքն են Լալէ վաշա՝ ՚ի բերդին, հանդէպ պալատան վաշային, Գուրշունուոց ճամփ, յորում տեղուջ եւ կեղեցի էր յառաջն յանուն սրբոյն Սուեփանոսի, Ճաֆարիէ, Մորգաստ վաշա, Այազ վաշա, Կիւզ Անմէնու: — Ի կարգի հոյակապ հնութեանց համարելի է և Դաշխատեն բազմազմբէթ. որ արգ ամբարանոց է վայտի: Սպահի պազար հանդէպ պալատան վաշային ՚ի բերդին, ողջոյն վորոց մի կամարայարկ, և կրպակին երկուստեկը քարակերպ:

ԱՆԴԵՅՑԻԹ. — Առաջինն յեկեղեցիս կարնոյ Հայոցն է Աստուածածին կոչեցեալ, նորաշէն և լայնանիստ որ և մեծութեամբն զանցանէ զբաղում եկեղեցեօք արևելից. կառուցեալ ՚ի նմին ունելով յորում յաւածագոյն էին երկու եւ կեղեցիք առընթեր միմեանց: Երեք դրոնք են նորին, առաջին յարևմտից քառակումի պատուցամբ ուներլով զառամեաւ. յարկածածուկ, և այլք ՚ի հիւմանոյ և ՚ի հարաւոյ: Որմոնքն առ հասարակ ՚ի կարմրագոյն սրբատառ վիմաց, քան սեամիք. յարկն հինդկարգեան աղխասակերս կամարգը: թէպէտ և ահեղ է մեծութեամբ եկեղեցիս, այլ մերկ յարհեստէ վամբ ճարուարպետութեան. մասնաւանդ զի և ձեղունն ցած է, և երեքին խորանքն ևս ցածագոյնք անհամեմատք մեծութեան եկեղեցւոյն, անձուկ է և բերմն: էնորա և ամպին յորմն հարաւոյ, վայտաշէն և ոսկեղծ: Գեղեցիկ է յոյժ վերնատունն կանանց, յոր ծախեալ

¹ Յորոց շատր կարծանիալք և կիսաւերք կամ այլափոխալք են յետ մեծի ասանութեան քաղաքին Եղեցից յամին 1839:

թուի ճարտարապետին դասմենայն ճարտարաթիմն իւր : Երտաքոյ Եկեղեցւոյն՝ ի հարաւոյ որմնակից է հնաշէն մասուռն քարակերտ և կամարակապ, մեայորդ հնոյ Եկեղեցւոյն, զոր և տաճար կոչէն . և սա այն է յորում լեալ է միաբանութիւն ապդիս ընդ Յունաց առ Եզրի կաթողիկոսիւ . գոնափակ է տեղին իրեն նուիրական, և բանի յուխտ Եկեղեցն : Ի հիւսիսակողմն Եկեղեցւոյն է գերեզմանասուն ընդարձակ յոյժ, այլ մերկ իսպառ ՚ի շիրմաց . զի զամենայն քարինսն ՚ի շինուած Եկեղեցւոյն ծախսեցին : — Երկրորդ Եկեղեցին նոյնանուն կաթողիկոսյն է՝ կիսով չափ փոքր քան զմիւմն և անսփին և փայտայարկ . որմնակն նոյնօրինակ ՚ի կարմրագոյն քարանց, և գրունքն երեք . իսկ կանանց վերնաստունն արտաքոյ է բուն որմնյ Եկեղեցւոյն ՚ի վերայ որմնագործ կամարասեանց . որով գաւիթ է ձեւցեալ աւադդ դրանն ընդ ամենայն Երկայնութիւնն արեմուսակողման որմնյն : Երեք խորանք են նորա, և բոլորաչէն աւանդաստոնք կրկին ընդ հիւսիս և ընդ հարաւ : Եկեղեցին այս շինեցաւ արդեամբք Աբրահամ ամիրայի Ալլահի վերտեան, որոյ արձանագիր յիշաւակին է ՚ի ճակատ աւագ խորանին : — Երրորդ Եկեղեցին է Յունաց՝ փոքր՝ սուրբ Գևորգ կոչեցեալ :

ՈՒԽՏԱՏՔՆ. — Բառ քրիստոսական կրօնից պարծի կարնոյ քաղաք հանդստարան լինելով սուրբ մարտիրոսացն Սահակայ և Յովսեփայ . տեղի նահատակութիւնան նոյցա արտաքոյ է բերդին մօս ՚ի Դէկրիցու գուռն ՚ի տուն Տաճկի ու բուք . յորում՝ առ որմնով խցկան բխէ ջուր ցուրտ ՚ի քարանց . խրամասեալ է որմն ըստ բաւականի մոտանելոյ, և գնայեալ քայլու երիս ՚ի ներքը կոյս՝ յաջ կոյս խոսորի խրամն, ուր երկի բխումն ջուրցն ՚ի քարանց Տորեալ կաթիլ առ կաթիլ, և ժողովի յաւաղանն փոքրիկ որ զառաշետ որմնյն, յորմն ըմպեն ու խտաւորին : Զուրդ ոյզ հաւաքի յաղըիւրն որ առ սոխոք կամրջին է և հանէ ՚ի Դէկրիցու գուռն : Սակայն հանդստարան մարմնոց սրբոց է ՚ի բերդին մերձ յ՛՛լւլու ճամին, ՚ի ծայր փոքր և անել փողոցի ՚ի քարակերտ և կամարաշէն խցկան ուրեք . յորում ՚ի քարեղէն բարձրաստանդակի կան երկու գագաղաձեւ քնարանք առընթեր միմեանց, այլ մարմինքն մաղեալ ՚ի խորս գեանոյն . տեղին ՚ի ձեռու Տաճկաց է և ախեալ սակայն համարձակ մոտանելի է ամենայն ուխտաւորաց : Ի ներքու և արտաքոյ կան և այլ շիրիմք Տաճկաց : — Ա՛յլ մասուռն է ՚ի շուկայն սուրբ Թուրոս ասացեալ, և սուրբ Միհնաւ շիրիս ևեթ որորաձեւ և խաչաքար ՚ի սնարից առ տաճարաւ Եկեղեցւոյն Հայոց . զորոց չոնիմ՝ ասել վասն հաւատոյ սպանեալ արդեօք ՚ի Հաղարացւոց . զի ոչ դրաւոր աւանդութիւնք են ուրեք և ոչ հաւատութիւնք :

ԹԻՒ ՀԱՅԱԶԿԵԱՅ. — Մինչ չե մտեալ Ռուսաց ՚ի քաղաքս յայս, տունք ամենայն հայուղեաց հաշուեին իրը չորս հաղար . այլ գաղմեալ նոյցա առ հասարակէն կողմանս վրաստանի, և դարձ արարեալ ոմն վախսատեամբ և ոմն հրամանաւ, արդ լինին տունք իրբու հաղար մի :

ՓՈՂԱՑ ԵՎ ԱՅՆ ՏԱՐԵՆ. ԵՎ ՅՈՒԱՐՁՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՅՆ. — Ամենայն վոլոցք թաղիցն և շուկայիցն լայնարձակք են ՚ի պատճառս երթեւնեկելոյ սայլից . և սալոյատակէնի վողք բաց ՚ի սակաւոց և ՚ի շուկայէն, որ և այնորիկ անհարթ և անշորհ, լայլ առ հասարակ հողայատակք են աղտեղիք և գարշահոտ : Նմին իրի յերթեւնեկու-

թենէ սայլիցն՝ վիշտոյն բարձրացեալ յօդ՝ և ՚ի հողմոց անարգել մասնէ ընդպատռհանս տանցն. թող զնեղութիւնն զոր կրին անոփ անցաւորք: Ծնդ ամենայն քաղաքն չիք տեսանել տուն մի հոյակապ կամ գեղեցիկ ըստ արտաքին տեսքեանն բայց ՚ի պալատանց հիւպատոսացն. որմունք նոցա թէպէտ և քարակերք, այլ մեծաւ մասամբ աղմածելիք. գաւիթք առ հասարակ խաւարչոփին, հողայատակ և անհարթ, սենեկակը մժին և պատուհանք նոցա մանք. չիք տեղի քան զիրկնայարկ տուն բարձր. յորոց որ ՚ի գետնի են և առաւել մժին, ընակին ՚ի ձմերան առ անհնարին ցրութեան օդոյն, իսկ վերնայարկին ամարտնոցք են. պատուհանք փոքր և անհեկը ողբրմելի տեսանելով, և չիք ապակի առ կակածի բեկանելց ՚ի ցրոց. բայց արդ սովորին դնել և զայն: Հողայարկ են սունքն առ հասարակ, զի չէ սովորութիւն աղիւսայարկս առնել. հողայատակը են նոյնպէս տանիքն. և յայն սակս սովորեցին հնարել զայդ ամենայն զի սոկալ կարացեն ձմերային սասակութեան. նմին իրի և որմունքն թանձր են, մանաւանդ որք անընդմիջարար զենենեկարն կան. և գերանք յարկացն խիսք և առուարք, զի սոկալ կարացեն ընդ. ծանրութեամբ հողայարկին: ՚ի ցրութենէ անտի բըռնապատեալ բնակչացն չածեն ընդ. միտ զվայելցութիւն շինուածոյն և գերակերտ աստիճանս սանդզոց, այլ միայն խնուլ խցանել զամենայն ծակ ընդ որ մարթի հողմոյն ՚ի ներբռ անցանել. սյնը աղագաւ. և դրունք տանցն ցածունկը և շըջապատեալ թաղեօք, և ՚ի թիկանց քար ծանք ճախարակօք կախեալ որպէս զրիսանց բազանեայն, զի ընդ փակին բանութեամք՝ մի մնացէ ծերպ: Համառօտ ասել, քաղաք մի մեծ է հողածեփ, չկայ նորա վրօսարան ծառատունի ոչ ՚ի ներբռ և ոչ արտաքրոյ: Զուարճութիւն բնակչացն է նուագարանօք զրօնուլ. ՚ի կրտակս դափեփ և ՚ի սունս նուագածոք բազում են ՚ի չայց և ՚ի ջաճկաց, և նուագարանքն սագ և քեմենչէ և սաներուու: Նորասեամի իմն է օտարականի ՚ի զիին կալ հանդիսի նոցա ՚ի խմբարանի ուրեք, որպէս շարժումն տան կնզնառցայ ՚ի նախագրունս երգոցն՝ զոր փեշյութ կոչեն, որ և այլ և այլ եղանակարն ունէ կէս ժամ առանց երգոց. ընդ որ ակումբն ամենայն հիացմանբ ակնկառոյց կայ լուս ևեթ, զգածեալ կրաշարժ տիսուր եղանակարն, որ ախորժելին է ամենայն արևելեաց. և ապա սկիզբն եղեալ կարգի երգոցն, այլ աեսարան յանդիման լինի ՚ի նուագածուայն, որոց ոգեսորեւալ իրբու ՚ի վերին զօրութենէ ձայնս արձակեն եղերական հառաւչմամբ. և տակաւ յառաջ մասուցեալ աղաղակաւ. և կանչիք վառեալ բարբարին. կատարեաց իմն նմանեալ պյնուհեաւ դարձուածովք աչայն, և երակար փողիցն և հակասուց սիւնաձեւ ուռուցելովք, և բերանք բացեալ թղաչոփ, գյոնք դիմացն ասրաշէկ իրբու արբեցելոց, և զուվիք իրբու ՚ի մըրիկէ տարութերեալ հողմավար ծոպինք փամթութեասատ գիսարկացն: իսկ լսնէք երգոցն ամենայն՝ հասարակ ասացուածք են և ոչ ինչ նորալուր. սակայն որ յարիսական ոգւոյ անակնիւալ լսին բանք, թէպէտ և ոչ զարմանալիք, մեծապէս ախորժելի են բազմականին, մինչև քրիփ մեծ բառնալ և ազնիւ. և անմահ կարգալ զնուագածուն կամ զդիւցաղնն որոյ գիմառնութեամբն յերգ անկանի բանն:

՚ի բերն ցորենոյ և գալրոյ, թէպէտ և յետ գաղթեց Հայոց ՚ի Ռուսա բազումք յարտորէից գաշտավայրին անխնամ թողեալ մնան: Առաստութիւն բերոցդ անը բաւական էր նմա յաղագս բաղմանարդութեանն, եթէ և արգաւանդագոյնն և հայաւէտն բառեն ոչ շտեմարանէր նմա զարդիւնս իւր: Եինի ՚ի կարին ՚ի բան ջարեղինաց բազուկ և թարխոն և կաղամբ և այլ սյապիսիք. այլ առաւելապէս շողգամ որ ոչ թեթե միփիթարութիւնն է բնակչացն, որոց ըստ ժամանակին խումբ խումբ մեկնեալ ՚ի քաղաքէն դնան յարտօրայս բանջարոյդ իրեւ: ՚ի պարտէղ սեխնեաց կամ ինձորոց և նստեալ ուտեն. թէպէտ և զարդարն ասել, քան զավորականն այլոց աեղեաց քաղցր է բանջարդ կարնոյ, յորոց լինին երբեցն և մեծամեծք մինչեւ կոռել միոյն օգգա մի: Այլ ՚ի պազոց ամենեին զուրկ է. զի պատղառու ծառ. տոկալ չզօրէ ցրացն բռնութեան որ վաղաժաման սկսեալ խամրեալ ապականէ զամենայն: Ե զի յամենեանն յունիսի իրրե զաւորս ձմերայնոյ ձիւնապատ սպիտականոց երկիրն, որպէս եղեւ և յաւոր արևադարձին ամսարայնոյ յամին 4845, և աեւեաց ՚ի նմին սաստկութեան աւուրս հինգ: Անարդասաւորութեամբ ստերջացեալ քաղաքիդ՝ ոչ թերանոյ ՚ի վայելիցն. զի բայց ՚ի սակաւոց ազգաց պտղոց՝ այլովն տմենայնիւ առատ է, մատակարարեալ լիութի յեղնկաց և ՚ի թորթումայ: Բայց առաստութիւն ջուրց պարձակիք են կարնոյ. յորոց է որ ՚ի լերանց իշեալ ՚ի հարաւոյ կուոէ քաղաքին և անցեալ ընդառուակս արուարձանին խառնի ՚ի Շամին, զորմէ զինի. և են որ առ աեղեաւան բղիւն թեթեագոյնք և բարեհամբ քան զառաջինն: Նշանաւորը յաղբերայն են Նահատակի աղբիւրն՝ զոր վերագրն յիշեցաք, կարնաղբիւր, ձենենէր փոշեարի և աղբիւրն որ առ գրան պալասան վաշային:

Վահառաւեւութեան. — Կարնոյ քաղաքին թէպէտ և արտաքին տեսին և շինուածքն անշուք, և ցրտութեամբ օգոյն անսիրելի, և քաղաքականութեանն մասսմբ ոչ քաջ բարգաւաճեալ, սակայն խոկզբանէ և այսոր մի ՚ի շահավաճառ քաղաքաց արևելից համարեալ է. ամենայն շահավաճառութիւնն որա է՝ ՚ի բաղնութենէ երթեւեկի վաճառականաց ՚ի շրջաբնակ քաղաքաց ևս և ՚ի հետաւոր տեղեաց, և մանաւանդ յանբաւութենէ կարաւանաց Պարսկաստանի, որոց անցեալ ընդ նա իջանեն ՚ի Ցրապիլոն, և գարձեալ անտի ընդ սա անցանեն ՚ի Դավթէծ կեդրոն համարեալ նորա շուրջ գաւառացն՝ Վրաստանի յարելից, ՚ի հարաւոյ՝ Միջազետաց, յարեւոլից՝ Եւգոլիոյ, Սերաստիոյ և կեսարիոյ, և ՚ի հիւսիսայ աշխարհին Պոնտացւոց: Ի շահավաճառութենէ անտի բաղումք թողեալ գհայրենի երկիրն ասս կալան զբնակութիւն, և շատը ևս որը առ Ռուսա գաղթեալ էին դարձան վերասին: Առ այսոքինք և այս ևս գիտելի լիցի զի յորմէ հետէ պակասեցին այլք ՚ի քաղաքաց արևելից ՚ի նախնի վարժամանութենէն ՚ի պատճառս յաճախելոյց ձեռագործացն Երոսպայ, զնոյն վնաս կրեաց և կարնոյ քաղաք. զի թէպէտ և արդ քառասնիւ չափ իջելանք նորա լի իջեն վաճառականգր, և ընդարձակ տարածութիւն շուկային և աղդ աղդ արհեստագործաց, սակայն ըստ փոփոխել պետութեանն յայլ և այլ օրէնս քաղաքականութեան՝ և նախկին այն եռանդն առևելոցն պակասեաց:

ՏԱՐԲ ԿԱՐԵՈՅ. — Գարասու գետ՝ որ յայլ և այլ գետակաց միայեալ յիշելոց

յարեելից լերանցն և 'ի ջրոյն խաչափայտի, յերկու ընդմիջեալ զգաշտավայրն կարնոյ ՚ի հիւսիս և 'ի հարաւ, և միացեալ ընդ գետայն Սարչամայ՝ առ գաղտա ութ գիւղիւ՝ անցանէ ընդ Շողանի ձորն, յարևելակովմն գաշտավայրին լճացեալ Սազրդ կոչ ՚ի բնակչայ, զոր նախնիք մեր Շամբ կարնոյ առն ։ զի ՚ի գարնանի առաստացեալ ջուրյն բուսացանէ անբաւութիւն շամբից, զոր և ամսարայնի ՚ի նուազել ջրոյն հնձեալ՝ ՚ի բազանիս քաղաքին վաճառեն։ Ազգ ազգ հաւոց են ՚ի շամբիդ անբաւ բազմութեամբ, վկացեալ և 'ի ծերանւոյն խորնոյ, յորոց անուանի վայրի բաղ և սագ։ ի վերայ գետայն երկու կամուրջք են քարաշենք՝ մեծամեծք և բազմակամարը։

Գերդորեք, Ձերբուակն եւ ԱՊԱՀԱՅ ԿԱՐՆՈՅ. — Գիւղօրէք կարնոյ գաւառին սկսեալ յարեելից սփռեալ կան ընդ երեսս մեծի գաշտավայրին ընդ հիւսիս ընդ արեմուտս և ընդ արեելեան հարաւ, սակառք ՚ի ձորամեջս լերանց կամ առ կողիք բլրոց. զորքը ՚ի ծառոց, մերկ երեւն ՚ի բազում հեռաստանէ տունք նոցին։ Հնութիւնք սակաւ են ՚ի գիւղօրէս, և եղեաքն ոչ ինչ յաւելուած առնեն վաղեմի աւանդից հայաբնակ ժողովրդոցն որ ՚ի նոսա։ ի Գարւարզ տակասւին երկեն հիմոնք նախնի շինուածոց քարակերտ և ամրաշեն. և զբրակն՝ որ ՚ի մեջ գեղջն աեղի ամրոցի ասեն լեռալ ՚ի հնումն. և հաւանօրէն սա է տեղի անուանի շահաստանին Արծն կոչեցելց, զոր քանդեցին և 'ի հուր գատեցին Սէջուկ թուրքք ՚ի մի գարու։ Փոքը մի հեռի ՚ի գարարզայ ՚ի վերայ ճանապարհի Վուշահի գեղջն խաչաքար մի կիսաթաղ անկեալ կայ ՚ի գետնի, և կիսեղծ յիշատակարան ՚ի վերայ նորա այսպէս։

ԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԽ ՅՈՎԱՆԻ. . . ՈՐԴԻ ԶՈՐՏՎԱՆԻԿԻ ԿԱՆԳՆԵՑԻ
ԶԻՉԱՅ ԶԱՅՈ Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՍԻԼԵ ԿՈՍՏԱՆԴԻՆ. . .

Ի ԹՈՒԱՆԻ ՚ի բարձրաբլուր եկեղեցւո՞ն ՚ի վերայ խաչաքարին որ առ գրամք կայ նորա ՚ի ձախմէ արտաքուստ ազուցեալ յորմն է յիշատակարան։

Իթ. ՈՉԵ. ՔՐԻՍՏՈՍՔՐԻՆ է ԽԱՅՉԱՅ

Ի գերեզմանատան Հնձառց ՚ի ստորի խաչաքարին մեծի գրեալ կայ

ՏԵՐ ԱՍՏՈՒԾՈ ՈՂԱՐՄԵՍ. ԳՈՐԴԱՅ ԱՄԷՆ.

և 'ի կողաց նորա

ՏԵՐ ԱՍՏՈՒԾՈ ՈՂԱՐՄԵՍ. ԱՇԽԱՏՈՂԱՅ ՍՈՐԱ. ԱՍՏՈՒԾՈՏԱՏՐ. . . ՊԱՏՈՅ. . .
ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ԵՒ ՄԱԿՐ ՆՈՅԱՅ ԵՒ ՔԵՐՑ Ի ՔՈՒՄ ԳԱԼԸՏԵԱՆԴ ԱՄԷՆ.

Ի Սարաձոր մօտ առ գերեզմանն խաչաքար մի կայ և արձանագիրն յածեալ ՚ի բերանա ռատմէին որպէս թէ գրեալ իցէ այսպէս. վեց գրիւ ազի ամիել աւուրն ՚ի պէտա տան իւրայ և նմին զողահաւասար իւղ և հայ և այլ այսպիսի պարէնք, որչափ ՚ի տունս թագաւորաց չծախին. և զայդ առասպել երէց ոմն գեղջն իսրին կարգացող, որպէս կտըն նորա, ընթերցեալ է ՚ի խաչաքարին, և տաճիկ բարբառ ևս ՚ի նման սակայն կանգուն կայ ցայսօր խաչաքարն և գրուածն ՚ի վերաց մեծամի անեղծ, որ է այս։

ԿԱՅՄՈՒ. ՍՈՐԱ. ԶՅՈՎԱՆԻԿԻ. . . ՈՉ ԵՄ ԱՐԺԱՆ. . . ՅԻՇԵՍԶԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ
ԶՔԵՌՈՆ ԻՄ ԶՔՈՒԵՑՑՈՒՆ ԱՌ ՔԲԻՍՈՍ։

Քարուր է քարաժայու մի ՚ի ծայր ստորափ լերանց մօտ առ գրիչք գեղջ.

և փորեալ Են 'ի նմա Երկու սենեակը Երեքը մարդաշափ բարձրութեամբ 'ի գետնոյ . տարածութիւն միոյն որ բաց է յաւանց կողմանէ՝ 30 մեդը քառակուսի . խոկ Երկրորդին որ կից է նմին յահեկիէ՝ 46 . Երկրորդս այս կատարեալ սենեկաձն է դրամի և պատուհանս : Ասի բան զսոցանէ եթէ ցէհրատայ ձեռաւ զորք իցեն շինեալ վասն սիրուհոյն Շիրինայ , որ բնակիէր 'ի զիւղն հանդիպաշ կաց , ակնունելը առնուլ զնա 'ի կնութիւն . այլ 'ի կանխսել օրհասի մահուն նոր բա՛ և ինքն ցէհրատ ձեռալ 'ի վեր զնիդն երկամի մեռանի ընդ նոյսաւ . նոյին ասին լինել գերեղմանին երկու որ 'ի վերայ ըերինն 'ի վերատա բարսուրայ :

Յարեւմտակողմն դաշտավայրին 'ի գիւղն Աշխալս է ըլուր մի բարձրահայեաց և Երկայնանիստ , զորմէ տանեն ամրոց լինել 'ի հնութն , որոյ հետք ևս չերեկն արու :

Զերմուկը Երեք Են 'ի գիւղօրէս , յիշիձաւ , յԱրճարի և յԱրդարդու . և չոր ըորդ մի ցուրտ ջրոյ 'ի Սոորգ չերմուշկ : Առ հասարակ անյարկը Են դոքա , դուզ նաքեայ սրմովք ևեթ շրջապատեալ մարդաշափ բարձրութեամբ . ընդարձակութիւն նոցա իրրիք 'ի չափ մեծի սենեկի : Եւ վորքիկ լիճ մի ցուրտ ջրոյ առ Քնուկ մեհմետ գիւղիւ . Այդուր կեօլի կոչեցեալ , որ 'ի միջավայրէն ըզիսմամի եռայ հանապաղ :

Յարեւմտից դաշտավայրին անդր քան զԱշխալս Երկու աղանանք կան Երկուստեք գետոյն . և զջրան այսպէս հանեն 'ի վեր . կարդ մի գորակաց ածեալ է զաղթայիւք զոր հոլովէ անիւ մեծ պատուտելով Երկվարի . իջանեն դորակին 'ի խորա անդ ուր շտեմարանն է ջրապին , և վերացեալ թափեն արտաքրո . որ և հոսեալ հաւաքի 'ի փոսս ոչ խորինս , և խոտացեալ յարեւոն խորտակեալ ժողովին :

ԱՅՆՈՐԱՅՔ . ՀՅԻՒՄՈՒՄԵԱՑ ՔԱՐԱՅՐՔ , ԵՒ ԽԱԶԱՓԱՅՏ . — Երեք Են վանորայք 'ի դաշտավայրին կարնոյ . առավնին ժաման . հեռի 'ի քաղաքէն առ Մուշտերիս գիւղիւ կոչի Լուսաւորիյ վանք , բարձրանիստ և բարձրապարփսպ . քարաշէն է եկեղեցին փոքր՝ միախորան և անշոք . այլ է նորա ուխտատեղի յաւանդատան դուք 'ի մարդաշափ և կէս խորութեամբ , ուր օթելանս կալեալ ասի Լուսաւորչի յերթալն յԱրաշատա : Գուրին պատեալ է շուրջանակի անսոաշ քարամիք : Այլ հին արձանագիր շիք նորա և ոչ եկեղեցւոյն , նմին իրի անձանօթ մնայ յամանակ շենութեանն : Առ Երի դրան եկեղեցւոյն արտաքրոյ յաջմէ թաղեալ կայ Սահակ վարդապետ Ահագինն կոչեցեալ , և վէմ մեծ և անզիք 'ի վերայ նորա և 'ի մնարիցն խաչաքար : Բնակարանկ ուխտաւորացն փայտակերաք և նորաշէնք Են : — Երկրորդն է կարմիր վանք յամուն Աստուածածնի առ չինձք գիւղիւ Երեք ժաման հեռի 'ի քաղաքէն . զառավին շինութիւնն մեծին Ներսեսի ընծայէն . այլ կործանեալ յերկրաշարժէ վերաստին շինեցաւ . Եկեղեցին որ քան զԱռաւառոցին կրկնաշափ մեծ է և Երեքխորանեան . 'ի չորից կողմանց կամալը են ձգեալ և 'ի վերայ ամբարձեալ գմբէժ սրածայր 'ի կարմիր քարանց : Բաց յեկեղեցւոյդ այլ ամենայն շինուածքն անշոք Են և ողորմելի : — կէս ժաման . հեռի 'ի վանայս 'ի ձորամիջի որ պատեալ է յամենայն կուտէ 'ի կարմրագոյն քարալերանց՝ է ուժատառեղի Հյիւմախմեանց քարայրքն ասացեալ . և Են նորա Երկու փափքիկ քարանձաւք մի քան զմի բարձր յերեսս լերին . մուռ նոցա նախ գիւրամաւտ էր , և յետ ժամանակաց , որպէս Երևի , հատոքք լերինն զերծեալ 'ի մտից անսի մինչեւ

՚ի վայր, որը և երեխին ցարդ՝ ՚ի գետնի, անմասաշելի դործեցին քբարայրան . զի քարալերինքն այնորիկ դժուքափշրելի են և բռնութեան տարելց անսովէ: Սակայն աւանդեն եթէ Տաճկի ուրոք ելեալ իցէ անդ երբեմն ՚ի վերին քարայրն անհնարին տառապանօք, և տեսեալ ՚ի նմա փսիաթ մի և ափսէ: Զիք այլ աւանդութիւն զայցանէ դրաւոր կամ անգիր: ՚ի գետնի տեսանին երկու աւերակը մատրանց և խաչաքարք և աղբիւր ցուրտ ջրոց բղիւեալ ՚ի լրանէ: — Երբորդ մենաստանն է խաչյաց վանք չորս ժամաւ հեռի ՚ի քաղաքէն: Փոքր քան վերկու առաջնան, և եկեղեցին բարձրանիստ: Զիք ՚ի սմա այլ ինչ նշանաւոր բաց ՚ի մեծէ խաչաքարէն՝ որպէս արձանագիրն է.

Ի ԹՈՒ ՌՃՐ ԿԱՆԳՆԵՑԱԽ ԽԱՋՈ Ի ՅԻՇԱՏԱԿ ՏԵՐ ԹՈՐՈՍՈՒ ԴԵՐՁԱՆԱ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒ:

Աւանդութիւն այսպիսի կայ առ բնակիչս եթէ չերակի կայսեր առեալ զիսաչափայտն և պահեալ ՚ի ջուրիկի լերին, յետ յաղմեց նորա թնամեաց իւրոց և դառնալց, պանչելեօք ջուր բղիւեալ դատանէր ՚ի տեղւո՞ն: և մասն մի ՚ի խաչափայտէն չնորհէր տիկնոջ ուրումն որ զաւորս երիս կերակլեաց զղօրս նորա: և զմասնն զայն աւանդեալ ասեն տիկնո՞ն յայս մենաստան: Խակ տեղի պահեստի նշանին սրբոց է ՚ի վերայ ջուրմիկ լերին բարձու, առ որոյ ստորոտով է մենաստանդ երկու կամ երիւք ժամոք հեռի ՚ի նմանէ: և է տեղին բոլըաշէն վոս, և ջուրն ՚ի նմա մշտաբուխ, այլ եռալ բղիւման չերեխ բնաւ, որ և ականակիտ է այնպիսի մինչեւ մարթ է հաշուել զիսիճս յատակին: Հռչակեալ է յոյժ բարեհամը առողջարարութիւնն նորա, և ցրտութիւնն անհնարին յոյժ: Այս վայր է ահա խաչափայտ ասացեալն, և ջուրն խաչափայտի չոր, որ հոսեալ արտաքս ՚ի փոսէն և շրջան առեալ ընդ զառիվայր լերինն եկեալ խառնի առ կիրակուսակ գիւղիւ ՚ի գարասու գետ կարնոյ:

ԽՆՔՆՈՒԻՐՈՅՆ ԲԱՆՔ ԶԲՈՇԱՑԻՑ ԿԱՄՆՈՑ

Յաղագս աղդաբանութեան և սերնդեան բոշայից, որ ոչ սակաւք են յերկիս կարնոյ, հաստատապցնս ինչ չոնիմ ասել. քանզի և ոչ նորա հաւասարեան ինչ զիստեն զհաւուց և զնախնեաց իւրեանյ՝ որոյ սերունդք իցեն, և յորմէ սշասրհէ գաղթափանք: Աւանդութիւն ուամիին որ բաղըում անդամ ՚ի նմանութենէ իրացն հաւասարանել կարծէ, նոյնասերունդս ասէ զնոսա զինկեանէ կոչեցեալ խառնաղանձին, զոր եզիստական աղդին մնացորդս ասեն, և անյիշատակ ժամանակաւ ասրաշխարհիկ եղեալ փախստեամբ յերկրէն յայնմանէ: յորոց մասսամբ զբրիստոնէտթիւն սպասուեալ, այք առ հասարակ գարձան ՚ի մահմէտականութիւն: Զրոյց աւանդիցդ թէպէտ և շտնիցի երաշխատորել զաներկաց ճշմարտութիւն իրացն, այլ այս հաւասարի է զի տարագ կենաց բոշայիցդ զինկեանէիցն տպաւորագոյնս ստուերագրէ. զի նոյն օրինակ շատաշրջիկը են ՚ի զիւղօրէս, անտուն և անհաստինս անձանց համարեալ զձայնդ բոշայ. միայն զի չեն երեւ զնոսա վայրենամիտք և անգէտ կրօնիցն զոր ունին: այլ քրիստոնական կրօ-

նիւ. մեղմեալ ե՞ն յոյժ՝ ՚ի մասինդ. ժամասէքը ե՞ն և երկիւղաճք և առ ՚ի խոր-
հուրդս մերձենալ ոչ անփոյթք. և շատոք այլովք ևս աստուածազաշտ վարուք
շնարին բնաւ.՝ ՚ի հայտպղեաց քրիստոնէից, այսու եեթ զատեալ որոշեալ զի խը-
նամութեամբ չկարեն խառնիլ ընդ նոսա. չառնու որ յանձն զդուսոր իւր բո-
շայի հարսնացուցանել, կամ զգուսոր նորա ածել՝ ՚ի տուն իւր. Զլեցու Յոշայից
լուեալ ուրուք թերես մի ՚ի հնոց լեզուայն կարծեալ՝ քննութեան ինչ արժանի
համարիցի. զի ըստ նոյին վկայելոյ յանձնէ ճարտարեալ է նոցա զայդ, զոր վա-
րեն միշտ երբ զգալսնի ինչ իրաց զրուցել կամիցին. նմին իրի և յոյժ ազքատ է
լեզուն այն և հայերենիւ խառն։ Այսորդ ինչ արագեալ համարիցիմ, եթէ փոքր
մի տաց վերծանել հետաքննին անձանց զոմանն ՚ի բառից, յորս նշանարեսցի ոչ
սուկա. հանդիսութիւն հնդկագերման լեզուաց։

| | |
|-------------------------------------|---------------------|
| Մանուս. մարդ. (սանզր.) | Ալբալ. ալիւր: |
| Ախորուլ. թագ. (գլխաւոր). | Գիհու. ցորեան: |
| Որով. իշխան, փաշա. | Չալ. գարի: |
| Սիս. զլուխ: | Կլառ. պանիր: |
| Աքի. աչք: | Քըլ. եղ: |
| Լանք. քիթ: | Խալիլ. միս: |
| Մուհ. բերան (Mouth անգլ.) | Մանչալ. ձուեկն: |
| Գոնճ. մորուք: | Լաւալիշ. վատելիր: |
| Աղ. ձեռք: | Ճահրի. մաղ: |
| Պալ. ոտք: | Չուրի. գանակ: |
| Պէրը. սիրտ: | Գար. տուն: |
| Մանճ. մէջք: | Բար. գուռն: |
| Խարի. էշ. (պրսկ.) | Կակալ. երդիք: |
| Քօրի. ձի. (քուռակ): | Բամկաշ. ոտնաման: |
| Քօրիվալսիք. ձիան: | Բարիշ. աղանձնիք: |
| Խարվալսիք. իշխան: | Սիսիու. զմիսարկ: |
| Լէվալ. Աստուած: | Խարվալ. գրամ: |
| Տրէսուլ. եկեղեցի և եկեղե- ցական: | Լէհի. զիւդ: |
| Կաշալ. կրակ: | Քէրալ. քաղաք: |
| Թէնալ. գետին: | Սուտափ. քուն: |
| Թուլի. հող: | Սոլ. լուր: |
| Վար. քար: | Լես. կեանք: |
| Կահք. փայտ: | Կամ. իր, զործ: |
| Բանի. ջուր: | Սամել. բարի: |
| Մալալ. հաց: | Աք. մի (Աէք, պրսկ.) |
| Խաթելու. ուտելիք: | Լուի. երկու (Duo). |
| Անքոր. ընկոյզ: | Լառ. Տան: |
| Անսել. խնձոր: | Պամինիշ. հարիւր: |
| Անօ. հաւկիթ: | Հէմ. այս: |
| Բանդրի. հաւ: | Հէվակ. այս կոյս: |

| |
|---|
| Բարբար. ընդգէմ: |
| Կեղոտոք. որբան: |
| Պաշտան. ընդ, ՚ի միասին: |
| Կատէլ. մուր: |
| Խաթել. տուել: |
| Պիել. ըմկել: |
| Ջիել. երթալ: |
| Սամիկարել. չինել: |
| Սօլիկարել. խօսիլ: |
| Բանել. ասել: |
| Ալնիկել. իմանալ: |
| Լէրել. տեսնել (Look, անգլ.) |
| Մանկել. կամիլ: |
| Փարել. զգենուլ: |
| Նկալել. մերկանալ (Nackt, մերկ, զերմանն.) |
| Վեսել. նստիլ: |
| Նկել. եղանել: |
| Ավել. գալ: |
| Կատուհել. փախչել: |
| Վշալել. առաքել: |
| Չուչել. կռուել: |
| Բարբարուալուիլ. ընդգիմո- նալ: |
| Կուրել. հարկանել: |
| Մարկարել. սպանանել: |
| Մուլիլ. մեռանել: |
| Մանձուհել. միալ: |
| Պանթել. կատել: |
| Ուրլել. բանալ. քակել: |

Թ. Ո. Բ. Թ. Ո. Ւ. Մ.

Բատ հիւսիսոյ արևելից գաւառին կարնոյ՝ անցեալ փոքր մի անդր քամ ըգ-
զիւղն գլըբիլիսէ, ակներև տեսանի սահմանն որ բաժանէ զկարին 'ի թորթու-
մայ՝ ուղղագիծ բարձրութեամբ գետնոյն. յորմէ և անդր ամենայն ջուրը որ 'ի
լերանց իշանեն՝ ընդ թորթում ընթանան, զի յառակ գետնոյն և ձորոցն առ-
հասարակ յօյժ զատ. 'ի վայր իշանէ, այնպէս զի և գագաթունք լերանց թորթու-
մայ չհաւասարեն գետնոյ սահմանաղիսոյն. յորմէ զիւրաւ գուշակի բարձրու-
թիւն կարնոյ գաւառին, և հիացոցանէ զուեսանելիսն անընդմիջական այլա-
սարազութիւն բնութեան կրկին գաւառացդ, առաջնոյն ցորենոյ և դարոյ ա-
ռաւելութեամբ միայն պարձեցեալ, այլով ամենայնիւ յօյժ ստորին գոզալ: Խակ
երկրորդս տեսարան յանդիման առնէ այնպիսի. յորում 'ի բազմակերպ զանա-
զանութենէն չզգայ ոք սապոտուկ բնաւ. զի եթէ գաշտորիեց ոք ցանկանայցէ՝ ոչ
սակաւ գտանէ անդէն, ոչ ամենևին տափարակս այլ մմար և վարկարարփ բլու-
կօք զուարճացեալս. և եթէ ձորոյ և խոխումից, առուակաց և կարկաջասահ գե-
տոյ ուրուք իզձ մինիցի՝ աներաւ տեսանիցէ: Զե 'ի սահման հասեալ բլրազարդ-
կաշոփ ընդ. առաջ մինին ձորը փորմնք, զուարճալիս տու կողմուք ունելով խիս
տու խիս գարեւանդս, ճանապարհ հորդեալ հեղասահ ջրոց օձապառյա ընթա-
ցիւք, որպէս ինչ բնութեանն դիմաներութեալ է 'ի նոտա: Մինչեւ անցեալ ընդ-
սակաս 'ի բազմութենէ մանունց այտի ջոցդ, բացեալ լինի ընդ մուտու մանրա-
ձորոցն մեծն այն և լայն ձորամէջ, ընդ որ համանուն գետն թորթում մանուածա-
ւալ խոխումամբ պայուպեալ անցանէ, պատեալ երկրուսակը 'ի լերանց, ուրեք
բարձր և այլուր խոնարհ դրսքն, ուրեք 'ի թիոց և 'ի մոյրեաց անստառացեալ, և
ուրեք խոտաւէտ արդաւանդութեամբ յարօտ պաճարաց: Հասեալ 'ի միջոց գա-
ւառին ոյլ տեսարան ահեղ ակներև լինի. լերինք ապառագք ամենևին լերի 'ի
դաշտուոյ և 'ի դոյցն փուշոյ՝ ուղղագերձք մինչեւ ցգագաթունան. այլ ախորդէի
թէ ոչ տժդոյն դեղնութեամբ երկեին. ումանց 'ի դոցանէ մասն մի վերտոտ 'ի
վայր պատառեալ, քանդի գիւրահերձ է և ոչ կունելի բնութիւն քարանցն այ-
նոցիկ, թեքեալ կայ առ 'ի կողաց լերինն. և ումանց գարձեալ մասն 'ի գագաթա-
նէն զերծեալ ցցեալ է արտաքս քան զերեսա լերինն. և այլում բովանդակ զան-
կուածն հերձուտեալ 'ի շերտս շերտս կամարասաւանց շինուածոց նմանեալ: Ցե-
սանին և այլք կիսով չափ բարձրութեանն կամարածեւ խորտակեալ անկեալ 'ի
վայր, վերնոյ մասինն անդերծ արձանացեալ 'ի տեղւոյն: Եւ գլուխ ահաւոր տե-
սարանացդ, զի յանհնարին բարձրութենէն բազումք 'ի քարալերանցդ վերեւսօք
եւրեանց վերուստ 'ի վայր 'ի մասունս մասունս խորտակեալ անկեալ են 'ի վերայ
ճանապարհն անհնելենքք մեծութեամբ և զիւշեալք զմիմեամբք, իբրու թէ ակն-
երեւ կարգեսցեն զառասպելեալ ջիտանայն քարակուիւ: Աըհափք պատեն-
զանցաւորս յահեղ տեսարանացդ, մանաւանդ առ ոտիւք երկնարերձ քարալե-
րանցդ, զի և չիք այլ արտահետ ճանապարհ. սակայն 'ի միւս կողմն գարձուցեալ

դհայեցուածնն՝ նոր ՚ի նորոյ ոգևորի ցանկալի տեսարանք ծառոց և պարտիզաց: Որպիսի հեշտական տեսվիլ արդարեւ վայրացն փափկութիւն՝ որով ճոխացեալ են ամենայն ձորամէջք զաւառիդ, մանաւանդ լայնարձակն այն հովիտ մեծի գետոյն. քանզի ՚ի ստորոտէ լերանցն մինչեւ ցգետեղըն երկուստեք զարդարեալ են սրբատու ծառաստնկովք, և երեւք գետնոյն կարճաբռն սիզովք կանաչացեալ: Արդասաւորութիւն պաղաստու ծառոյն ՚ի վեր թուի քան զոլորսականն. հիանքանչ իմն է ծիրաննեացն բազմութիւն, ակաղձան պատղովքն ուկեզունիք ծանրացեալ ՚ի գետին խոնարհեալ: Նմանօրինակ և բալ և հուն, բազմատեսակ շլքենիք, և թթենիքն անբռաւ առատութեամբ. իսկ ընկուղենեայն չիք թիւ և համար, այլ խաղող սակաւ, յոյժ: Թորթում պատղաւէստութեամբն շոեւմարան եղեալ կտրնոյ, ինքն զուրկ է յարդասաւորութենէ ցորենոյ. զի վկան նորա ընդարձակածաւալ գաշտորայք, և ՚ի սահմանակցութեան անդ կարնոյ՝ ուր չգոն խիստ առիտ լերինք որպէս ՚ի ստորին կողմն դաւառին՝ մեծաւ մասամբ արօտք են անառնոց. և բազմում ուրեք ճահճիք ՚ի բազմութենէ գետակաց որ ՚ի լերանց իջանեն և որ առ տեղեաւն բղիւեն ՚ի բլոց. նմին իրի բազումք ՚ի գիւղօրէիցն գարեհայիւշատանան:

ՁՈՒԹՅ. — Ընդ առատութիւն ջուրց և ընդ պատուականութիւն՝ ոչ ումեք ՚ի դաւառացն նախանձի թորթում: զի գետն մեծ և որբ ՚ի ձորոց իջանեն գետակք՝ ուռողանեն առ հասարակ զերկիրն. իսկ ՚ի ժամանակի երաշտութեան ճարտարեն սցապէս. յանդաստան կամ ՚ի պարսէղ՝ զոր ոռոգանել կամլցին, զլնթաց միոյ ՚ի գետակացն խոտորեցուցեալ և առուակս բաժանեալ ՚ի զանազան առաջն՝ լիով ուռողանեն: Բաց ՚ի ջոր գետոյն բազմում ուրեք կան ինքնարուս աղբերք, ևս և ՚ի գետեղերմն որիշ ՚ի գետոյն. որք ականնակիստ ցրտութեամբն և պատուականութեամբ գերազանցեն յոյժ յոյժ քան զայլս ՚ի ջորց:

ցաւ բուրջս + տը ած ողորմեա լուսորին ամէն
Անտի ՚ի վեր յայլում աշտարակի .**

**❖ ՚ի ՈԾԵ Թւ շնորհիւն քի ես մանդատոր թախուցէս ա-
միր սպասալար շահնշահ զաքարիա շինեցի զարձանս եւ զպո-
րիսպով վասն յիշատակի մեղ եւ ծնողաց մերոց**

ի նոյն կողմն կային և այլ ևս երկու արձանագիրք առընթեր միմեանց, այլ առ յոյժ բարձրութեանն մնացին անվերծանելի:


ՔԱՂ. ԱՐԱՐԱԿ. — Ընդ հիւսիսային դրունան, զի այն է արահետ ճանապարհ, մտեալ ի ներքս, պատկերանայ յանդիման քաղաքադաշտն անապատացեալ չափաւոր մեծութեամբ. զի ընդ ամենայն երկայնութիւն նորա յարեելից յարեալուս հաղիւ տեւէ քառորդ մի ժամու. ամենայն ուրեք լի է քարակոյտ աւերակօք. առ հասարակ կործանեալ են տունքն մինչև չմնալոյ ի նոցանէ և ոչ մի. պատակուսի ձեւ նոցին երևի զերեազք գետնոյն՝ ուր ՚ի կործանելոյ քարանցն անարդել եցէ. զի շատը են որոց հաղիւ միոյ յանկեանցն երևելի եղեալ միւս կողմանքն քարակուտիւ ծածկեալ են: Թանձրութիւն որմոց նոցա աւելի քան վկէս մերգաւասի է, առ հասարակ քարակերտք, աղիւսակերտ և ոչ մի. և աղդ քարանցն սևագոյն և հասարակ, մանր և անստաշ: Զայդ ասեմ որպէս ինչ մնացեալ են յաւուր յայսմիկ. զի ըստ վկայելոյ ժամանակակից յիշառակարանաց հայակապք էին շինուածք տանցն. և ոսկեզօծ պալատից մեծամեծացն ՚ի հարկէ վայելէր մանր և անտաշ քարանց ՚ի հիւստած որմոցն. սակայն յետ կործանելոյ դոցին օր ըստ օրէ բարձին անտի զմեծամեծս և զպաստուականս ՚ի քարանց շրջակայ ընակիցն. զոր օրինակ առնեն մինչև ցայսօր: Այլ զաւերակացդ և այլուր խօսեսցուք. առ տեղեաւս լիցի մեզ ստորագրել զանկործան շինուածն քալարքին:

Ա. ԵԿԵՂ. ԿԱԲՈՂԻՒՅՆ. — Ի շինուածս քաղաքին առաջին և զլիսաւորն և արշանին անմահ յիշառակաց է կաթողիկէն, հիմնարկեալ ՚ի Ամբատոյ տիեզերակալէ և կատարեալ ՚ի կատարանիտէ թագուհաւոյն, որ էր կին գագկայ առաջնոյ: Յունական և խտալայի ճարտարպետութեանն ախորժակաւ վարժեալ աչք ՚ի չարս սեանց առ ճակատովն և ՚ի զարդ պահնչելի անգրեաց և ՚ի քանդակս պէս պէս. ձեւոյ և ծաղկանց, յորս արհեստ և բնութիւնն մրցել երեկին արդեզք, թե՛ մեռ վրէպ ելցին ՚ի կաթողիկէն լինույ. սակայն որ միանդամ առ տեղեաւսն ՚ի նիին կայ նորա, չցաւէ նմա զի անմահն է նա յայդմ ամենայնէ, զի ՚ի հայակապ մեծութենէն հանգերձ անզարդ պարզութեամբն հիացեալ յափշտակի: Ուժ հարիւր և աւելի ամք են յորմէ հետէ շինեալ է դորա, և բիւրագատիկ ձիւնաւոր կուտեալ ՚ի զլուխ խոր՝ որ յոխերիմ թշնամեաց մարդկան անկրօնից, և ՚ի բանութենէտ տարերաց, և տակաւին քարինք որմոցն անխախտ կան ՚ի տեղովէն, մեծամեծք և սրբատագք ՚ի հիւնանց մինչև ցգագաթն, առ հասարակ ՚ի միապայն գեղին քարանց. այնպէս իմն ամբապինդ. կցեալք ընդ միմեանս՝ մինչև չըրեկլ բնաւ. կրովէ իմէ այլ իմն մածուցիկ նիւթով հիւսեալք լիցէն. ո դիտէ թե՛ մեռ և երկամի գոտեզք սկնդեալք ՚ի շինութեան անդ: Հիմունք նորա չորս կում հինդ սաստիճանօք լսյնանիստ տարածին, ոտնաշտիք մի լայնութիւն ունելով իւրաքանչիւր, ապա ամբառնայ ՚ի վեր բուն որմն: Երեք են գրանքն. աւագ դուռն ասրեմացք, և այլքն ՚ի հիւսիսայ և ՚ի հարաւոյ: Յարոտագին երեսս որմոցն յիր միջոցս ՚ի հարաւոյ կուսէ որպէս և ՚ի հիւսիսայ, յորս ներքին կողմն որման պահին են, որպէս տեսանի ՚ի պատկերիստ, հարուստ մի երկայնութեամբ բարձրութեանն խորշ գործեալ է սրանկիւն առ ՚ի ներքս ընդ թանձրութիւն որմա-




Կոբոռդիկեն Անշոյ .

սեանցն , և կամարաձև աւարտեալ 'ի վերոյ իրրե ձեզուն իմն գեղեցկապանդակ
ըստ արևելեան ախորժակաց : Նոյն օրինակ է և կողմն արևելից 'ի միջոցս կրկին
մատրանցն երկուառեք խորանին : Ներքին տեսիլ եկեղեցւոյն մոռացացանէ զար-
տաքինն . սեանցն ահեղ բարձրութիւն և ձգուածք կամարացն , խորանին վահ-
մութիւն , և գեղեցիկ չափակցութիւն ամենայն վայրացն հանդերձ անզարդ պար-
զութեամբն հիացուցանէ զտեսողն : Կիսաբոլոր խորշ խորանին մինչև ցառաս-
տաղն բարձրացեալ կամարաձև աւարտեալ միանայ բնդ կամարագօտուոյն , որ
ուզգահսյեաց կայ 'ի վերոյ բեմին . և 'ի ստորևս որմոյն 'ի գետնոյ մինչև ցմար-



Դաշտափ մի բարձրութիւն՝ ՚ի տասն խորչս բաժանեալ է. յորոց յետինքն որ իրեւաց հանդէպ կան՝ գըտնկը են ՚ի վերին մատրունսն եղանելց քարեղէն աստիճանափ ընդ. մէջ որմոցն. և են մատրունկդ. անընդմիջաբար ՚ի վերայ սոռորին մատրանցն, կամ թէ ասել աւանդատանց, համակ քարակերտը և կամարակասքը ։ Չորեքին սիւնիքն որ ՚ի մէջ եկեղեցւոյն՝ չեն միակտուլք, այլ ՚ի պէսպէս դեղնաշոյն և սեւա երկայնաձև մեծամեծ քարանց առ իրեարս կցեալ, որ նորասոնսիլ իմն գեղեցկութիւն տան նոցա, շերտաձև զործեալ են վերտուստ ՚ի վայր. և մասունք շերտիցն ոմն կորընթարդ. և ոմն անկիւնաւոր, բաց ՚ի խարսխացն, որք անկիւնուոր են առ հասարակ. ՚ի խարսխաց անտի միահետ ամբարձեալ շերտիցն վինչե. ՚ի ձգուած կամարացն՝ ապա յայլ և այլ կամարան հաղորդին. օրինակ իմն երեք ՚ի շերտից միոյ սեանն յարեւմուից հիւսիսց՝ հաղորդին շերտից հանդիպա-

կաց սեանն , և երկուքն որ յարեւմտից են . պյապէս խմա և զայլս այլոց կողմանցն : Բաց ՚ի չորից սեանցն են այլ ևս վեց կիսայեցքը , յորմաննս , զորս որմասիւնս կոշեցաք , երկու երկու՝ յարեւմուսս , ՚ի հիւսիս և ՚ի հարաւ : Պարզուած չորեցան կամարացն որ ՚ի միջյ չորից սեանցն ձգեալ են ընդ հիւսիս և ընդ հարաւ ընդ խորանն կոյս և հանդէպ նորա ընդ արեւմուսս դրանն՝ բարձր են և զուգահաւատ սար . և առ կամարագոտեզք դոցա այլ գօտի ածեալ մանեկաձև , և ՚ի վերայ նորա ամբարձեալ դմբէթն . այլ աւազ զի այն միսյն անկեալ և կործանեալ է :



Կողմանական երես կարուղիկէին Անշոյ .

պյ հինդ և վեց ամք են . իսկ կամարքն որ ՚ի վերջն սեանցն կցին ընդ որմին ու բևմտից ցած են քան զայլն : Զգուածք կամարացն որ ՚ի վերայ կողմանական դիրանցն երկոցուն՝ յարեւելից յարեւմուսս չեղեալ են . իսկ այլք առ հասարակ

հիւսիաց ընդ հարաւ։ Պատուհանկը հիւսիակողման երեք են 'ի վերայ գրանն առընթեր միմեանց երկայնաձեզ. և երկու ևս 'ի միջոցին որ անստի 'ի վայր ընդ մէջ որմասեանն և արեմտեան որմոյն, և 'ի դասին այլ ևս երեք, յորոց մին նեղ երկայնաձեւ նման այլըց, և երկուքն որ վերց են նորա՝ բողոքչ. այդպէս է և կողմն հարաւայնոյն. և մի ևս յարևմտւտս 'ի վերայ գրանն, և միւս այլ 'ի խորանն։ Այդ ամենայն նիւժական ձևոյն և ճարտարպետութեան արհեստին նկարագրութիւն զշնախոյզ աշխարհագիր յոդի հարկանէ. այլ առաւել ևս զհայրենասէրն, յորժամ յուշ լինին նմա անցեալ փառք հոյակապ պետութեանն բագրատունեաց և կարգ և կանոնք եկեղեցական հանդիսից, յորս փայլէր մեծապէս կաթողիկէս։ Փօխանակ հայրապետական շրջ և կարգ ըստ կարգէ պաշտօնէիցն Աստուծոյ և անբաւ մեծապին զարդուցն որովք ճոխացոյց զնա թագուհին կատրանիդէ, յաւերակս նստեալ կայ արդ մենացեալ 'ի մշտնշենաւոր լուութեան։ յատուկ նորա առ հասարակ ի քարակուտիւ աւերակաց և ազրիւսովք անբանից ճարակաւորաց, արածեալք 'ի վայրենաբարոյ Քրդաց։ Արտաքը եկեղեցւոյն յարելից կուսէ առընթեր որմանկեանն հարաւոյ՝ երեխն մնացորդք մատրան գեղեցկակերտ համակ քարաշէն, որոյ տեղի խորանայն անկարծան կայ։ Նոյնպէս և 'ի կողմն հիւսիաց առընթեր արեմտեան որմանկեանն այլ մատուռն խաթարեալ և քայլացեալ առաւել քան զմիւն։ Այլ քարակոյոք աւերակաց բազում են շուրջ զեկեղեցեաւն, որը թերեւս բնակարանք էին եկեղեցականաց հանդերձ հայրապետանոցաւ. այլ արդ և հիմանցն ծածկեալ տերիլ աղէտալի եղեալ է պշխարհի։ Արձանագիրը կաթողիկէիս են 'ի վերայ արտաքին որմոցն հարաւայնոց, արեմտից և հիւսիսայնոյն՝ որ անեղծ են տակաւին, և կարեւոր յիշատակարանք պատմութեան 'ի նոսա ոչ սակաւէք՝ շինողացն և այլւայլ բարերարաց 'ի գամանակէ անստի շինութեանն մինչւ առ վրաց տիրապետութեամբն, որպէս կարծեմ. և են պատքիկ։ Առաջինն 'ի հարաւոյ կուսէ.

'ի ՆԾԹ հայոց ✕ ՄՃԹ Թ հոռոմոց¹ 'ի ժամանակս
ածապատիւ եւ հոդեւոր ան սարգսի հայոց կաթողիկոսի եւ
'ի մեծափառ թագաւորութեանն գագկա հայոց եւ վրաց շահանշահի ես կատրանիդէ հայոց թագուհի գուստոր վաստակա սիւնեաց թագաւորի յողորմութիւնն այ ապաւինեցա եւ հրամանաւ առն իմոյ գագկա շահանշահի շինեցի զնը կաթողիկէս զոր էր հիմնագրեալ մեծին սմնատա եւ կանդնեցաք տուն այ նորոգ եւ կենդանի ծնունդ հոյգեւոր եւ արձան վահնչենաւոր զարդարեցի եւ զարդիւք պատուականաւք նըւէք ինձ 'ի քո եւ զարմից իմ եւ որդոց սմնատա աբասսա եւ

¹ Երեք փակագիծ տառք կամ բառք զոր չկարացաք լուծանել։

աշոտո հրամայեալ եմ ես ապ սարգիս սպասաւորաց եկեղեցոյս յետ ելից բարեպաշտ թագուհոյս զվարդաւարին յիշնեական միով քառասնիւ կատարել անխափան մինչեւ 'ի գալուստն քի եթէ ոք զարձանագրեալդ անփոյթ առնէ դատապարտեալ եղիցի 'ի քէ

'ի վեց ՈՒՆԿ եւ Գ ամացն ադամա 'ի Ո եւ ԲԺ մարմնանալը ածն բանի ԶԵԺ ամի հաւատալո 'ի քո հայոց գրեցաւ յիշտակարանս 'ի ձեռն իմբենէ .

'ի թուխս 'ի : ՈՉԴ : շնորհիւն այ ես զուհալս կարըցի որդի գորդկանն միաբանեցա մեծափառ ար կաթողիկէիս եւ էտու աւետարան էսայի շրջառ եւ վառ եւ սպասաւորք սրբոց հաստատեցին մ.զ 'ի տարին աւր մին պատարագ 'ի տաւնի ար ածնին որչափ ես կենդանի եմ իմ եղբաւրն վահըրմայ եւ յետ մահուան իմոյ ինձ առնեն եւ կենակցին իմոյ տիկնոչն կատարողն աւրհնեսցի .

Առ երի արձանագրիդ փառք մի ստորև ժամացոյց արևու գծեալ էր բաժանեալ յերկոտասան գիծս, և 'ի ծայր իւրաքանչիւրոցն տառքս Ա. Բ. Գ. և այն, և ոլաքատեղին 'ի կեդրոնի : Յահեկէ հարաւային դրանն առ մոխոք .

անուամբն այ ամենակալի . . . ն զայդին որ 'ի ծագնոցին է ընծաեցի 'ի . . . արդէվարին պամն հինգշաբաթն աւրն եւ . . . որդոյն իմո գէորգա արնեն զժամն եւ յե . . . ց կամ յիմոց կամ յաւտարաց եւ զայդի . . . 'ի քէ եւ 'ի մեղացս եւ իմ . . . ի ստորև նորա ընդ խաչիւ .

ով սրբասէր քահանայք եւ սրբասնեալ ժողովուրդք ոթք երկրագէք տիկնո . . . ոդութ . . . լինդրեց . . .

Եւ 'ի ներքս 'ի վերայ նոյն հարաւային դրանն թուականս » ի թու : ՆԶԲ. Յահեկէ հարաւային դրանն .

'ի թուխս ՈԿԲ կամաւքն այ ես տիգրան ծառայ քի շինեցի հալալ ընչեւք իմով զաշտիճաներս մեծափառ սրբոյ կաթողիկէիս զօր 'ի բազում ամաց հետէ խարխալեալ էր եւ ե.

տու նուէքքը 'ի սուրբ կաթողիկէս զիմ գանձագին կուղպակն որ 'ի կատանոցին է ետու երկու տաւնական եւ սուրբ դրի գոր մին եւ երկու սկի արծաթիք տւագ խորանին եւ եղի լուծ 'ի վերայ սպասաւորաց սորա 'ի տարին պատարագել յանուն իմ մինչեւ 'ի գալուստն քի.

ի վերայ հիւսիսային դրանն .

Թու ՁԼԵ կամաւն այ ես ըռորէն ծառա այ որդի գալլթի եւ Թուն յոհնա ապաւինեցա յած եւ 'ի մեծափառ ար կաթու զիկայս զոր խորհեալ էի եւ կատարեցի ետու լնծա 'ի սա զիմ գանձագին ձիթահանքն բոլոր մին ակն իւր ամենայն յա ջողութեամբ որ է մերձ ի . . . նիցն տիգրանա զոր իմ հալալ արդեամբք շինեցի եւ գնեալ էի զինքն 'ի թոռներուն . . . եւ իշխեցող սորա սարկաւագն եւ այլ սպասաւորքն հասուցին մեզ փոխարէն . . . յն ամի հինկ աւր պատարաք յանուն հաւր իմոյ դաւթի արդ եթէ 'ի մեծաց ոք կամ 'ի փոքունց . . . իմոց կամ յաւտարաց զարդինքս մեր հանել կամ խարանեալ ջա նա մեղաց մերոց պարտական եղիցի յատենին մեծի իսկ որք հաստատուն պահեն աւրհնին յայ :

Յարևմտից յահեկէ աւագ դրանն .

❖ կամաւք ողորմութեամբ բարերարին այ ես առաւնս մա չիստոս մեծարեալ 'ի մեծափառ թագաւորութեանցն 'ի գեղ զարդու եւ 'ի տիս մանդութեան իմո եկի յարեւելս 'ի գեղեցկաշէն բերդս յանի բարձրացուցի բաւանդակ զպա նիսպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամ բութեամբ եւ 'ի յիմոյ մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր ժորդաբուխ 'ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ 'ի զովա նումն ծարաւեաց : բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան վինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախափից տանցքա նաքիս եւ թաստակին զոր տախն ամ յամէ չափ ութից լուերց պա կուց լուերց զոր տայր մութսիբն զայս ամեն .

❖ անուամբ նոն ամենակալի եւ ողորմութեամբ. ո՞ր եւ ինքնակալ թագաւորին կոստանդեա գուեկի կամ եղեւ իմ բագրատ մագիստրոսիս եւ արեւելլց կատապանիս վլսկացոյս : առնեւ ողորմութիւն մայրաքաղաքիս անւո : յորժամ առին զտանուարութիւն միսիթար իպատոսն կրտին որդին եւ գրեգոր լավաստակս որդին սպաթար կանկիտատն : եւ սարգիս արտաւազուրդին սպաթար կանկիտատն եւ ազատեցին զլեցկէ կոռ : եւ զույլի : եւ զկամին : եւ զանդարիոն : եւ կատապան ով եւ լինի տա սերմ : ո՞ւ մոդ եւ ծախը զընծելոցն : զայլն տանուտէրքն առնենեն իւրեանց տամբ որ չհամի՞ի յանի ոչ ինչ ոյժ : եւ գինեւոր անեցի եթէ սայլով եթէ գրաստով՝ բաժն ազատէ եւ անեցի որ իւրենն մորթելիք գնէ բաժն ազատէ եւ շալակաւոր անեցի յամէն ցաղ բաժին կէսն ազատէ : եւ 'ի կապճին տա ին դահեկանին : ո՞ւ դրամ այտան : ո՞ւ բազատէ : եւ մատործի եթէ պախրէի լինի գլուխ եթէ ոչխարի զկէսն տա կէսն ազատէ : եւ 'ի նստ ո ին կարլէն ո գրամն ազատէ :

Բ. ՆԿԵՂԵՅԻ, ՓՐԿՒԶ. — Երկրորդ եկեղեցին ֆրկիչ անուանակոչեալ՝ յարևելից կուսէ կայ մեծի կաթողիկէին : Զամանէ թէպէտ չիշատակի առ մատենապիր ժամանակին, սակայն յարձանագրաց նորա վկայի շինեալ յլապղարիս մարզպանէ : Տարածութեամբն յոյժ փոքր է քան զմիւսն, բայց սյլաձեւ ճարտարպետութեանն մասամբ մի 'ի հոյակապ եկեղեցեացն . ձև նորա բոլորչի և 'ի մեծահատոր քարանց, և կաթողիկէն դեռ անկործան : Վարինք համանցն նախ կանգնաչափ 'ի վեր 'ի գետնոյն ամենենին բոլորչի, յետ այնորիկ 'ի զանազան կողմանու բաժանին տափարակ երկայնաձև ստուար վինաք, և առ անկեամբ իւրաքանչիւթ սիւնակս ձևացուցեալ նուրբսյեղեաց քարանցն այնոցիկ . և արձանապիրքն ամենայն 'ի վերաց կողմանցն այնոցիկ շուրջանակի : Ներքին կողմն եկեղեցւոյս յութ կիսարողորակս բաժանեալ է, և առ անկեամբ իւրաքանչիւր սիւն միակառուր : և 'ի վերնախարսիաց մեանցն այնոցիկ և համօրէն կողմանցն տակաւ ամիկովեալ առ ՚ի ներքս 'ի մանենեկաձեւ բոլորակն՝ ապա ամբառնայ 'ի վեր գմբէթն երկայնաձեւ համանման այլոց եկեղեցեաց, երկոստասան երկայնաձեւ պատուհանօք շուրջանակի : Գեռ ևս նշանարին յորմանս նորա նկարէն սպատէելք : Երկու գրունք ե՞ն նորա, և աւանդատունք երկու անձուկ և երկայնաձեւ առ 'ի ներքս որմանց 'որչչափ 'ինչ տարեալ է ստուարութիւն նոյցին, զի չեղանեն արտափս քան զրովորակութիւն եկեղեցւոյն : և կէսն անդ բարձրութեան միոյ 'ի կիսարողորակացն՝ որ

հանդէպ է հարաւայնոյ դրանն, որմ ածեալ ամպիոնաձև տեղի յօրինեալ է, քարակերտ ելանեղիս ուներսլ ՚ի կողմանէ ընդ մէջ որմոյն մինչև անդը, և անտի մինչև ՚ի տանիս եկեղեցւոյն։ Տրամագիծ եկեղեցւոյս է 13 $\frac{6}{10}$ մեդը, և կիսարու լրակացն խրաքանչիւր $2\frac{8}{40}$, բաց ՚ի խորանատեղւոյն՝ որ փոքր մի մեծ է քան զայլս։ Եւ արձանադիրըն այսոքիկ.

❖ ՚ի ՆԶԴ թուականիս ես ապլղարիպ մարզպան եղի հրովարտակ ՚ի սմալատա շահանշահի առ կայսրն յունաց միլսէլ ՚ի կոստանդինուողիս եւ շատ ջանիւ եւ մեծածախ դանձիւ բերի մասն ՚ի սրբո խաչէն եւ եկեալ կատարեցի զտածարս զայս եւ զնշանն յուսո կանգնեցի ՚ի պստի հարսինս քի եւ եղի լուծ սպասաւորաց եկեղեցոյս զկիւրակէին աւրն գիշեալաշաւան առնել մինչեւ ՚ի դալուսան քի եւ քահանա որ մեռանի ՚ի սուրբ Փրկչիս իս մի կալցեն յեկեղեցիքդ եւ եթէ ոք ՚ի քահանայից եկեղեցոյս եւ յիմ սպասուցո եւ կամ ՚ի դրենոյս յափշտակէ կամ ծախելով կամ զինչ եւ իցէ պատճառանաւ եւ կամ զագահութեան զհետ երթա եւ զեկեղեցոյս մուաքս խորէ եւ նր Փրկչիս ՚ի պէտո ոչ անցուցանէ ՚ի յժմ հայրապետացն նզովեալ լիցի եւ որ զդրդոր երիցու որ նկրս յեկեղեցպանութենէ հանէ կրկին անիծիցդ պարտական լիցի իսկ կատարիչ գրիս աւրհնեալ լիցի։ զգէորդ նիչ յիշեսջիք ՚ի տէր։

❖ յամս անծալպատիւ եւ հոդեւոր ան պետրոսի հայոց կաթողիկոսի եւ ՚ի թագաւորութեան սմալատա որդւոյ դադիա շահանշահի ՚ի ՆԶԵ թուականիս ես ապլղարիպ մարզպան որդի գրիգոր իշխանի եւ թուն ապուղամբի եւ եղբայր վահրմա եւ վասակա շնեցի զնը Փրկիչս ՚ի մայրաքաղաքս յանի շատ ջանիւ եւ մեծամեծախ դանձիւ եւ զնեցի հալալ ընչից իմոց կուղպականի ։ հէ եւ ձի ։ ։ ։ եւ այգի եւ հոդեւոր եւ ետու ՚ի նր Փրկիչս եւ ։ ։ բեցի ոսկւով եւ արծաթւով եւ ակամբը պատուականաւք եւ ետու աւետարան եւ տառական եւ նո ։ ։ ին եւ նոր կտակարանաւք եւ կանգնեցի վկառ ։ ։ բիշիս արդ եթէ ոք ՚ի մեծաց կամ ՚ի փոքրունց ։ ։

ասուցս եւ կամ յայլ իրացս որ ետու եւ յափշտ... խափան լիցի յժը հայրապետացն նզովեալ լիցի... ց իմոց յաշխար-հէս եղի լուծ ՚ի վերայ սպասաւորաց ե... զվարդեվառին ի ունսն անխափան կատարել մին... տն քի ընդ նմին եւ զ... դւո գագկա սմալատա շահանշահի.

՚ի ՆԶԵ թուականիս հայոց եւ ՚ի մեծափառ թագաւորու-թեանս հզաւը եւ տիեզերակալ սմբատա որդւո գագկա հայ-ոց եւ վրաց շահայնշահի կամ եղեւ ինձ ան պետրոսի հայոց կաթողիկոսի տալ զայդին մշնկի (կամ աշնկի) որ ՚ի մեր կոր-դո արկած էր քնասէր մարզպանին ապղղարիպա որդւո գրի-գորո պալհաւունո վասն առաւել սիրոյն եւ երախտեացն զոք ծառաեալ էր զնը լուսաւորչի աթոռս արդ տուաք որմով եւ ծառովք պաղարերովք եւ անպտղաւոք եւ խոտագետնովք եւ ՚է աւր ջուր ազատ ՚ի խալաէ եւ ՚ի գեղջէ յամենայն հա-սուց եւ գրեցաք մեծաւ հաստատութեամբ զկտակս զայս իսկ նա ընծաեաց յիւր շինեալ եկեղեցիս ՚ի նը փրկիչս բաժակի վասն փրկական խորհրդոյն յիշատակ հոգւո իւրո արդ եթէ ոք զապարանսդ զոր շինեալ է ապղղարիպա առ նը փրկիչի աւ կամ զոր ինչ տուեալ է ՚ի պէտա եկեղեցոյդ եւ որոշէ ոք եւ կամ յապարանսդ բնակի եւ զեկեղեցոյդ հոգսդ զոր ինչ պիտո լինի եւ երկեւղիւ այ ոչ հոգա ՚ի սուրբ լուսա-ւորչէն եւ ՚ի նորին աթոռակալացն մինչեւ ցմեզ յամենեցուն նզովեալ լիցի իսկ կատարիչ գրոցս աւրհնեալ լիցի.

❖ ՚ի ՆՂԹ ՚ի հայրապետութեան տեառն պետրոսի հայոց կաթողիկոսի եւ թագաւորութեանն սմբատա որդւո գագ-կա շահանշահի ես քրիստափոր ծառա այ ապաւինել յողոր-մութիւնն այ եւ ՚ի նը փրկիչս ետու զիմ գանձադին հայրե-նիքս է տուն ՚ի նը փրկիչս վասն մեզաց իմոց թողութեան եւ հոգւո փրկութեան եւ պարտին քահանայք նը փրկիչս յամէն ամի ՚ի չորս եկեղեցեցիքա յեկեղեցին է աւր ժամ՝ ար-նել անխափան մինչեւ ՚ի գալուսան քի արդ եթէ ոք յիմոյ

կամ տւտար ոք հակառակ հոգւո իմ յայտնեսցի եւ զարձադրեալլ. անփոյթ առնէ եւ իմ տներոյս յապշտակէ դատապարտեալ եղիցի 'ի քէ եւ մեղաց իմոց պարտական լիցի 'ի դալստեանն քի եւ անէծս մշտնջենականս ժառանգեսցէ իսկ կատարիչ գրիս աւրհնեսցի .

✚ ՆՂԹ ես շահիկս եւ իմ որդիս վարդս տուաք զմեր կորդո շինած տունս եւ զբակս 'ի ոք փրկիչս եւ 'ի ոք յոհաննէսն յիշատակի .


յամն ածապատիւ եւ հոգեւոր ան բարողի հայոց կաթովկոսի եւ յամիրապետութեանն բարիանուն սուլդանի որդի ամիր մահմուտի թուն մանուչէի : յամի : Ոիիի : թու : արդ ես տրդատ քահանա որդի սոսմինիս քահանաի թուն գէորդա աւագ երէցս արձոյ եւ զուգակից իմ խուշուշ աղախին քի յուսալով յողորմութիւն այ շինեցաք վերսախն զմեր գանձագին հայրենիքս զմեր փրկիչս շատ աշխատութեամբ եւ նորդեցաք յառաջին պայծառութիւնն ոչ ունելով զոք աւգնական այլ միայն զբաւականն յամենայնի որով կարողացաք եւ կատարեցաք այդ եւ ընծայաբեր եղաք 'ի սա 'ի սորին շընորհէ շնորհս զնորս հնուն ածագիծ պատգամաւ նա եւ ըզշարդս սպասուց 'ի քառեսին խորանսն ոք կանխեցին հանին 'ի սեղան զարդարեւ ուխտեալ զհաճելին կամացն հաւրպատարագ շինեցաք սմա ժամատունս ամարանո եւ ձմերանո եւ 'ի կեանս մեր պաշտեցաք 'ի սմա զեկաւորս ճավաղս հացարդ ես տրդատ երէց եւ լծակից իմ խուշուշ 'ի մեր հայրենի ժառանգութեց 'ի սպաս պիտոյց հացի եւ գինուոյ տուաք չըրս այդի յարուճ զսաղար եւ զշլիկն եւ զկովբածն եւ ըլար խաչկայն եւ բառուն եկեղեցւոյն դիմաց մեծ արտք եխենցն չկապճով մին 'ի միքէտն 'ի ջրփողին ըեխենցն այս է 'ի պղպղի պրդ ընդ այօր աշխատութեան եւ պարգեւի պարտին ժառանգորդքն զկնի մեր կատարել ամենայն ամի : իս : մի ի արդարա ի տիկին խուշուշին եւ : բ : ոտրդոկանն որդո սողու

մենի անխափան կատարել զյիշատակս մեր մինչեւ ցծագումն
որդւոյն այ եւ մի ոք իշխեսցէ շորթել յարդեանցս հաստա-
տելոց 'ի սուրբ փրկչու ապա թէ ոք զատուսցէ և որոշեսցէ
զյիշատակս մեր եւ ինքն որոշեսցի 'ի փառաց որդւոյն այ
յժըլիցն նզովեալ եղլիցի 'ի մահ եւ 'ի կեանք կատարիչք գրոյն
աւրհնեալ եղլիցին ամէն .

'ի թու . Զիս . ես միսիթաը որդի շերասցի որդի զուսի մի-
սալուքենց որ նշանս եւ 'ի որ ամենափրկիչս եւ բերի զան-
դականիս եւ շինեցի զանկակատունս 'ի հալալ արդենց իմոց
որք զվարձանեէք 'ի ձայնից սորա ասացէք ա՞ր ած ողորմեա-
միսիթարա եւ ծնողաց իւրոց սպասաւոր սորա ո՞ւ մատուցէ
պատարագ : ա՞ : որ գըի .


ԹՎ. ԶՊԱ. շնորհիւ եւ ողորմութեամբ բարերար եւ մար-
դասիրին այ ես աթապակ վարհամ որդի իւանէի որդուն
մեծին եւ հզաւրին զաքարիսի վերատին նորոգեցի զկումբէթ
որ փրկչու վասն երկար կենդանութեան իմոյ եւ յիշատակ
մեզ եւ նախնեց մերոց () արդ ես վասիլս որդի գրիգորո
առաքեցա պատրոնին հրամանստւն աթաբատկ վարհամա եւ ե-
կել կատարեցի մեծ ջանիւ եւ աշխատութեամբ զհրամաելու
ինձ եւ սպասաւորք որ փրկչու ընձա մատուցին մեզ զվար-
դավառին կիրակէն ը պատարագ .

Գ. ՆԱԽԳԵՑԻ ԴՐԱՍԱՌՈՒԹ . — Եկեղեցին յանոն որբայն Գրիգորի Լուսաւորչի
յարևելից հարաւոյ կայ նախազրելցոյդ 'ի ծայր զատիվայրին որ տանի յիշու-
րեան գետ : Զաս շնեալ է Տիգրան ոմն Ամբատեանց 'ի թուխս ՈՒԿ որպէս յայտ
առնէ արձանադիրն ընդարձակ : Այլ է 'ի սմանէ սուրբ Գրիգոր յիշատակեալի
յիշողկայ և 'ի կիրակօնէ, զորմէ բանք լիցին վկնի : Յեկեղեցեացն Անոյ սա
միայն անարատապայն մնացեալ է ամենայն մասամբ ներքոյ և արտաքոյ համ-
դերձ կաթողիկէին : Առ խորանաւն երկուստեք մատրունիք են . լայնաթիւն ե-
կեղեցւոյն ընդ հիւսիս և ընդ հարաւ անձուկ է տարածութեամբ . որմասինիք
հանդերձ կամարագառեաք խրեանց և թեազն և խորանին մարտանան 'ի վեր
զգմբէթն . իսկ տարածութիւնն որ զինի կամարասեանցն՝ անձկագոյն ևս է քան
զթեւցն : Կիարէն պատկերը դեռ ևս անարաստ կան յորմուննն մեծաւ մասամբ :
Արտաքոյ եկեղեցւոյն գաւիթ կայր միանազարդ և կամարաշէն . այլ արդ կրոծա-
նեալ կամարին՝ միանքն միայն կան 'ի տեղունչն : իսկ յաջմէ գաւթին այլ մասաւ



Ա. Լուսաւորիչ Անշոյ .

է, որոյ կործանեալ՝ կամարին որմունքն եեթ մնացեալ են : Եկեղեցիս թէպէտ և փոքր է, սակայն 'ի պատու անուան սրբոյն մեծապին սպասուք ճնշացեալ էր 'ի մնալովն, և շուրջանակի վանականաց բնակարանոք անուանի եղեալ, հասոյթս ըստ նմին համեմատութեան հստատեալ վասն նորա 'ի նմին Տիգրանաց, որ պէս վլայէ լիով արձանագիրն : Յետ իրը հարիւր ամաց անցանելց 'ի շինութենէ անտի, չգիտեմ որպէս, անց 'ի ձեռս վլաց, զոր օրինակ պատմէ երկրորդ արձանագիրն, որ և յայտ է 'ի յոյն և 'ի վրացի գրութեանցն 'ի ճակատ դրանն : ևսկ բնակարանք վանականացն և իշխանաց զոր ասեն, ոչ ևս երեխն . զի 'ի հիւսիսայ նորա քարակոյստք աւերակաց խառն հողով և խճով դիղեալ ըլլացեալ են այնքան՝ մինչև հաւասարել բարձրութեան եկեղեցւոյն : Յարեւելից նորա կրկին մնացորդք կամարակապ ներքնատան թաղեալ 'ի գետնի հաւասար հոյ . կամ լաւ ևս ասել աւերակք հիւսիսակողմանն ինեալ ծածկեալ են զնա : Արձանագիրս 'ի հարաւոյ է արտաքուստ .



125 ✕ Ձ. Ակն. • Հնորհիւն եւ ողորմութեամբն այ յորժամ
տիրեց քաղաքիս անոյ ; հզաւը եւ տիեզերակալ ամիր լս-
պասլար եւ մանդատուր թախուցէս զաքարիայ եւ որդին նո-
րա շահնշահ ես տիգրան ծառայ այ որդի սմբատաւրենց սու-
լեմա : յազդէ հոնենց վասն յերկար կենդանութեան տանից
իմոց եւ որդոց նոցայ շինեցի զվանքս ոք գրիդորոյ որ ՚ի հինն
մատուան ածածին կոչիւր որ էր քաղաքն եւ մացաւ տեղի
աէտ զոր իմ հալալ գանձով գնեցի ՚ի հերէնէտիրաց եւ բա-

զում աշխատութեամբ եւ գանձով պարսպեցի շուրջանակի շինեցի զեկեղեցիս յանուն նըյն լուսաւորչին դրիդորի եւ շարդարեցի բազում զարդիւք փրկան նշանաւք նը խաչիւ ոսկիք եւ արծաթիք եւ պատկերագործ խատերով զարդարել ոսկով եւ արծաթով եւ ակամք եւ մարդրատ եւ կանթեղաւք ոսկի եւ արծաթի եւ նշխարաւք նըց առաքելոց մարտիւրոսաց եւ մասամբ աճընկալ եւ տէրունական խաչին եւ ամենայն ցեղ սպասք յոսկո եւ արծաթոյ եւ բազում զարդաւք շինեցի զամենայն ցեղ զբնակարան վանականաց եւ իշխանաց եւ կարդեցի 'ի սմայ քահանայք պատարագովք մարմնոյ եւ արենն քի որ անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տանց իմոց շահնշահի եւ որդոց իւրոց եւ վասն թողութեան մեղաց իմոց եւ ետու ընձայս 'ի վանքս նը դրիդորոյ հայրենիք զոր դնել էի գանձով եւ վճռամբ հայրենէտիրաց եւ զոր ես 'ի հիմնէ շինել էի զայսոսիկ գաւռոխոնեց գեղին կէսն քարհտին եւ դանկն մշակունեց կէսն կապզուցն կէսն ցամաքծովն բոլոր խուզած մահմունդի կարուց յերկիրն ու ցլնդոյ եւ դանդն խաչորկանն եւ փնդուկն 'ի քաղաքիս հայրենիք բաղնիսն ու մին 'ի մոդանի մխանապատն կուղպակնովն ու կամարակապ փնդուկն ու մարագն հետ բաղնեցն առ սարդսի ախոռն ու մարագն զոր դնեցի կան եւ եւ ակն ձիթահանք եւ ախոռնի ու մարագնի վանիցս 'ի գռանս վանիցս առջեւ պահէզն ու լանջն ինչուրվի գլիձուի դռուն ինչվի գետն ու գետեզերն պահէզն զոր դնել էի եւ շինել գվադուանն կէս ակն ջաղաց թարփ մի բոլոր ու վին այլ թարփին շար եւ աւր գլիձորին ջաղաց առ թարփն շար եւ աւր 'ի բէշքէնակապէն ինչուրվի կարմունջն գետին կէսն իմ գնած է պապենց խանաբարն դէ դանդն ու դռան կուղպակն բոլոր տներ հատէցոնց զուկակի քաղաքիս դռանս բաշում հողեր գնած այգի առ յերեւան այգի առ յոշական այգի առ կոշ էգի առ յարուճ որ սազոտն կոչի այգի առ 'ի մըեն այգի

ա 'ի ծմակին որ կաթողի հող կոչի զայս որ դնած է եւ այլ
բազում գրաւկնած էր զոր ոչ արձանագրեցի վանացս էի
տվել ու թէ տէքքն թափեն ոսկին վանացս զոր ուրիշ իմ
անդարձագրին եմ գրել եւ զվանքն բեխենց կոչեցել զոր
ես շինեցի եւ նորոգեցի ընձայաւք փարթամացուցի ամէ-
նովն սուրբ գրիդորոյ վանացս հոգացովս հոգայ զորպիսու-
թիւն արդ էթէ ոք 'ի մեծաց կամ 'ի փոքունց յիմոց կամ
աւտարաց զօր ինչ արձանագրիս է խարանել ջանա կամ թէ
իրք շորթէ յարդենցս որ 'ի սմա հաստատել է կամ զլիշա-
տակ զմեղուցել ծառայս ոյ խարանէ զինչ եւ իյէ պատճա-
ռաւք այնպիսին ուրոշել լինի փառացն որդոյն ոյ եւ զպա-
տիժս կաենի եւ զյուգայի ժառանգեսցէ 'ի գլուխ իւր եւ
երեք որ ժողոյն եւ թ գասուց հրեշտաց նզովել եղիցի եւ
մեր մեղացս համարս տացեն առաջի ոյ եւ կամարաքն եւ
հաստատուն պահողքն աւրհնին յայ ✚ ի՞լ գ՞զ

ԸՆ. ԶԾԹ. աթապագի ամիր սպասալար շահանշահի մծիկ-
նաւ բարթուխուցէս մաթէս եւ իմ կենայկիցս թէնի եւ իմ
եղբէր մարկոս յայսժամ որ պարոն ողորմեցաւ զվանքս մեզ
էրետ վաղ բարեպաշտ տիգրան ջուր էր բերել 'ի վանքս ու
'ի յանտիրութենէ խաղաել էր ու կարել մեք վասն արեւ-
շատութեան պարոն շահանշի եւ խուանդզին եւ իրենց որ-
դուն զաքարի եւ վասն մեք հոգուս յիշատակ բերաք զջուրն
եւ հաստատեցաք յիշեցէք 'ի քո.

Վերոյ դրանն աղեղնաձև երկտող յոյն և վրացի ներկագիր .

..... Κύριε ἡγάπησα εὐπρέπειαν ὅικου σου καὶ τόπου σκηνώματος δόξης σου·
ηρ ἐ Σωτῆριν. Σέρ, αἱρετοῦ με πλημμυρίν των φυν καὶ φυτεψής γαρ οὐ ποτε.

ესე არის ბტვ უფლისხა და მართალი შეგვებას აქა ჰინა.

այսինքն է. Այս դուռը Տեղառն է, և արդարք մտանեն ընդ սա:

Դ. ԵԿԵՂԵՑԻ : — Այս եկեղեցի յարևելից կայ նախընթացիդ. և հեռի ՚ի նմանէ և մօտ առ գետեղին. անծանօթ է յանուանէ, զի չունի և ոչ մի արձանազիր : Հիմնավի է հոյակապ և մեծագործ ճանապարհն որ տանի անդր. զի ՚ի վերուստ մինչև յեկեղեցին զառիխայր ճանապարհն առհասորդակ ամրափակեալ է երկուստեք որմով, վերոյ կամարակապ և ստորե աստիճանք սանդղոց, ամենայնն քարակերտ . ոչ ողջագիծ ձգեալ այլ խոտորնակի յայլ և այլ կողմանս մինչև յեկեղեցին . առ ամրութեան մեծի շնուռածոցն արդեօք զայդ օրինակ արհետաւորեալ, թէ առ փոքր մի մեղմելոյ զառիխայր դժուարութիւնն՝ չունիմ ասել : Աւրեք ուրեք լուսամուտք բացեալ են յորմունան, մանսաւանդ յանկիւնս իւրաքանչիւր խոտորմանցն . մօտ եկեղեցւոյն իրրու քարընկէցիւ և տեղի անցեալ ընդ գուռն մի լայնանց ուղին, և որմոնքն երկուստեք քաջ քան զճանապարհին մազուրք են և քարինքն որբատաչք, թէպէս և յարկ նորս կործանեալ, որպէս և բազում ուրեք կամարք ճանապարհին խաժարեամք : Ի ծայր վերջնոյ ճանապարհիդ կառուցեալ է եկեղեցին ամենափաքք ՚ի վերայ քարափանն որ հայի ՚ի դետն կցոս . գմբէթ նորս և ամենայն կողմանքն նեղրոյ և արտաքոյ անարատ կան ցայսօր : Եւ են դոքա երկու մատրունք կից առ միմեանս համակ ՚ի կարմիր քարանց աղիւսագոյն . մի մի խորանք ՚ի նեղրոս, զի անձկութիւն աեղլոյն չտանի այլ ինչ : Զիք ուրեք յիշատակութիւն ՚ի դիրս ոյր շնուռածք են և որոյ հրամանաւ . և զարմանս է ինձ թէ էր աղագաւ այնքան գանձ սպաւեալ ՚ի կերտուած ճանապարհին և կամարաց նորս, և զեկեղեցին մատրանաչափ ասհմանեալ : Աւանդութիւն ՚ի բերան ռամպին է, եթէ արժան իցէ հաւատալ ամենայն զրուցաց, թէ ՚ի պէտս դստեր թագաւորի յօրինեալ իցէ այդ ամենայն . այլ թէ ոյր ՚ի թագաւորաց ոչ ոք գիտէ : Այս եեթ յայսնի է զի յարեելից կուսէ առընթեր եկեղեցւոյն երեխն մնացորդք որմոց բնակարանի իրիք, զորմէ ասեն թէ պալատ էր նորին դատեր թագաւորի : Խոկ քարակոյտ աւերակաց վայրաց անբաւ է . զարմանք այն են զի եկեղեցին վերծ կայ տակստին յանդութ ձեռանէ, ՚ի բոնութենէ ասպէրեացն կացեալ աննկուն :

Ե. ԵԿԵՂԵՑԻ : — Դարձ արարեալ վերստին յարեւուստ կոյս անդք քան զկաթողիկէն, հինգերորդ եկեղեցին ընդ առաջ լինի Առաքեալք անուանակոչեալ : Մի ՚ի հոյակապ եկեղեցւոյն է և աս, ոչ մեծութեամք այլ ամրացն և այլաստարալ կերտուածովքն . չիք նորս գմբէթ իրրե զայլոցն, այլ կամարստ և եթ յարկեալ : Զե եկեղեցւոյն քառակուսի է . և ՚ի չըրից կողմանց կամարագոտի ածեալ, զրիթէ տափարակ և ոչ քաջ աղեղնաձե, միանան ՚ի կերպնի . և միջոց գտնեացգ մեծամեծք քարամբը յարկեալ : Այդ կամար եկեղեցւոյն անխախտ կայ ցայսօր անսփին : Ցեղի խորան ին ոչ իրրե զայլոցն է կիսարութակաւ . և բեմիւ զաստցեալ, այլ հարթ հաւասար իրրու զայլ կողմանն, քանդակս և եթ ունելով պէսովէս ձեւոց և խաչից, նոյնպէս և արտաքոյ նորին կողմանն . որք և այնչափ անարատք են մինչև կարծել թէ այն ինչ քանդակակործ արհետաւորին մեկնեալ է անտի : Սակայն այդ զարմանաչն եկեղեցի հանդերձ բաղմաքանդակ դրուագօքն առաւել քան զայլ ՚ի վերսոյդելոցդ խարեալ է, ոչ այնքան ժամանակին հնութեամբն, որպէս կարծեմք քան ՚ի բըռ-

նութենէ այխարհաւել ձեռաց . և վկայ ասացելոց՝ յարևելակողմն նորա արտաքոյ՝ ՚ի քանդակագործ քարանցն ՚ի գետնոյ և ՚ի վեր ՚ի բաց գրթուցեալ է որչափ ձեռն հասանէ . իսկ յայլ կողմանն նոյնօրինակ ՚ի մեծամեծ քարանց բարձեալ են , և շատը ևս անկետ և խորտակեալ , և եկեղեցին պատեալ շուրջանակի յաւերակաց անտի : Ըստ հիւսիսոյ կից ընդ եկեղեցւոյն կայ աւերակ մատրան հոյակապ յօյժ որպէս երեկ ՚ի մնացորդացն և ՚ի մեծամեծ քարանց անկերց մի զմիտվ : Հոյակապ է գարձեալ և միւս մասուռն մեծապյոն քան զնա երկայնեալ ՚ի կողմն արեւելից ՚ի հիւսիսոյ եկեղեցւոյն : Որմոնք այսր մատրան ՚ի տեղիս տեղիս կանդուն կան . և տեղի խորանին և հասուած մի արձանագրի ՚ի վերայ նորա , որպէս տեսցի ստորեւ : Թէպէտ և բազում են արձանագրութիւնք եկեղեցւոյն և արտաքոյ , սակայն կարեւոն ՚ի նոսա յորում յիշաստակեալ էր արդեօք և շինողն և ժամանակ շինութեանն վկայ . զի գրունք և բարաւորք նորա հանդերձ այլ ևս բազում մասամբ՝ այնքան խաթարեալ են և քանդեալ , զի կամ բարձեալ է արձանն այն և կամ ընդ աւերակացն անկեալ և խորտակեալ : իսկ մնացեալքն այստիկ են , յորոց ՚ի միտմն յիշաստակ լինի զմահուանէ անպատաւորի ուրուք անծանօթ եղելոց ՚ի մարդկանէ : Եւ նախ նեղբինքն .

ՆԶ . Ծուռ շնորհիւն ոյ ես արողամբ որդի վահրամա իշխանաց իշխանի ետու զկաւնու տիւրտն ՚ի որ առաքեալք վասն եղբաւը իմ գրիգորոյ առողջութեան եւ կենացն յեր կարութեան :

ածահաճոյ եւ ընդրեալ որ միայնակեացն գանձակեցի զծեամ յանապատի կեցեալ խոտաճարակ եւ անտես ՚ի մարդկանի տեսութենէ եկն ՚ի քաղաքս մեր ՚ի տուչութենէ ոյ առժամայն հրաման ՚ի տեսաւնէ հասեալ փոխեցաւ ՚ի մշտնջենաւոր կեանսն եւ թաղեցաւ պանդխտաւրէն ՚ի գերեզմանս աշխարհականաց եւ գիւրք որ ուկերաց նորա բժշկութիւն առնէ տմէնայն ախտաժետաց եւ ես տր գրիգոր սահմանեցի զածածնին կիւրակէն աւրն յանուն նորա պատարագել զքս ու զնմա մուտքն ՚ի յաթոռէս հանէ կամ յուղել իշխէ կայէնի եւ յուդաի չափն նզովեալ եղեցին :

յանուն ոյ ես խաչատուր ետու զիմ գանձագին սարաւոյթով տունս ՚ի որ առաքեալքս իմ ոգոյս եւ իմ ծնողաց եւ պարտին սպասաւորք սորա ՚ի աւարւոյն : Եւ աւը ժամ արնեն անխափան եւ եթէ ոք հակառ կայ գրոյս այսորիկ յաւագայ

կամ՝ ՚ի յընտանեաց կամ յաւտարաց : յԺը : նզովեալ եղիցի
հոգւով եւ մարմնով անլուծանելի .

ԹՎ. ԶԾ. շնորհիւն այ ես աղբուղէս որդի իւանէի թոռն
մեծացն զաքարիայի եկի յանի հրամանաւ շահնշահի տեսայ
զքաղաքս աղքատացեալ եւ խիստ ՚ի վէր մասցել զի շատ
հարկ էր ՚ի վերայ դրած որ իսկըքանէ չէր եղել ես : գու
հարկ ՚ի վեր կալա վասն յերկար կենդանութեան եւ արեւ
շատութեան եղբարցն իմոց շահնշահի եւ իմ եւ վասն իմ
նախնեաց գերեզմանին համար թողի զեզինն հազըն զկովինն
համբելէն զոչիրին աղջակն եթէ ոք յիմ ազգէ եւ թէ
պյլ ուստեք որ զյիշատակս մեք հաստատուն պահէ աւրհնի
յամենակալ բանէն այ .

կամաւքն այ եւ հրամանաւ պարոն աղբուղին ես միսիթար
որդի գրիգոր խուցիմին որ անոյ տաղմանի էի վասն պարոնաց ա-
րեւշատութեան թողի զաղացնոյս ամենոյ զդամղէն եւ զդա-
նեկ վասն պարոն զաղին հոգոյն եթէ ոք ՚ի մեծաց կամ ՚ի
փռու զայս արձանս խափանէ մարդն էն նզովել եղիցի յԺը
հայրապետացն մասն եւ բաժին զյուդային եւ զկայենին առ-
ցէ եւ որ հաստատուն պահէ աւրհնին յայ .

**✚ շնորհիւն այ ես գէշս որդի պայկանն որ պարոնացն
հրամանաւն անոյ գաղմաց . . . եւ վասն պարոն աղբուղին ա-
րեւշատութեն եւ եւս վասն պարոն զաղաին հոգոյն թողի ըզ-
քասանկին զդամղէն քաղաքիս եւ որ ՚ի գրուց գայ որ յա-
ռաջն չէր լել եւ ներկարարն զվաճաւիկն քասանիկ չառ-
նեն . . . ով որ զայս արձանս խարանէ դատի յայ մասն եւ
բաժին զուդային առցէ հաստատուն պահողըն աւրհնին յայ .
պյս բանի առաջնորդ մուղաէտէն եւ քնտուր եղեն .**

ԹՎ. ԶԿԹ. ողորմութեամբն այ ես խուանդղէս զուդա-
կից աթաբակ շահնշահի որ յայսմ ամի ել յաշխարհէ եւ

տրտմութիւն մեծ եղեւ մեզ եւ աշխարհիս արեւելլից ես ա-
մուսին նորա դուստր շամշագին ստհիալ գիւանին եւ պա-
րոն . . . իւսնէ աթարակին եւ իմ որդիս իմ զաքարիայ ա-
զաքս պատրոնին հոգոյն փրկութեան եւ եղբարց իմոց յեր-
կար կենդանութիւն 'ի մեր հայրենիք քաղաքս 'ի յանի թո-
ղաքս զիովերոյն եւ զիշանուն զհամբելէն եւ զդոնագիրն
մեծի եւ զփոքու որ եւ զմեր աւանդս խափանել ջանայ թէ
հայ լինի կամ վրացի կամ տաճիկ հանդատի եւ դատապար-
տի յայ մասնակից եւ գեհենակից սատանի եղիցի եւ վրացին
կրուլ եւ անիժած լիցի եւ տաճիկն 'ի յա ժառաւառել փե-
զաբարացն ամաւթով եւ սեւերես լինի իսկ որք հաստատուն
պահեն զաւանդս մեր մինչեւ 'ի կատարած տշխարհի աւրհ-
նին յամենակալէն այ որք այս բանիս հակառակ կենան նզով
որպէս զուգա եւ զկաեն այս բարիս եւ ողըրմութիւնս հա-
տաեցաւ 'ի յամիրառութեան պարոն լիպին . . . Օ պառու-
գրիչ .

Թվ. ԶՊԵ . կամաւքն այ ես շապագինս որդի յովանիսի
ետու ընծա 'ի ո՞ր առաքեալքս զ՞որ ստեփանոս իւր ժողովը-
դովն իւր կալերովն զօր յառաջն շորթել ին ես : ԷՇ : սնի :
տվի եւ յառաքեալքս դարձուցի այլ ետու զիսաչով պահեզվ
կէսն որ 'ի հովթը թվանց գնել էի եւ մէկ կուզպակ որ 'ի
յամիր համնա գնել էի 'ի գտակիրոցի խանապըրի դռանն զի-
մացէ վասն յիշատակ ինձ եւ ամուսնոյ իմոց ավաք խաթու-
նին եւ գեղեցկատեսիլ եւ բարեպաշտ որդոյ իմոց յովանիսին
եւ պարտին սպասաւորք սորա յամենայն ամի ժք աւր պա-
տարագ : դ : աւր շապագինին : դ : աւր աւաք խաթունին :
դ : աւր յովանիսին կատարովքն աւրհնին յայ հակառակիք
դատին յայ :

Արտաքոյ յարևելլից կուսէ .

Հնորհիւն այ 'ի տերութեան քաղաքիս եւ յառաջնորդու-
թեան նոր ստրդսի եւ 'ի մելիքութեան փախրադինին ես մը-

Խիթար Եպիսկոպոսի տեղերէցի 'ի ցասմանէ շարժի աւուրբս բարձաք զկիրակէի վաճառն 'ի փողոցէ ով այս գրիս հակառակ կայ թէ մեծ թէ փոքր քաղաքիս մեղացն տէր է .

յուսովն որ առ ած և սէր նորին ես պարոն աղբօւզայս որդի ամիս սպալար շահնշահի թոռն մեծին զաքարիայի եւ ես պարոն թամարս գուստար իշխանաց իշխանի պարոն բուղային տեսաք զանոյ աթուս եւ զիրեցանիս որ հարկ էր 'ի վերէնին զոր մեր նախ (յաջորդն թերի թողեալ էր)

շնորհիւն այ ես նուրայդին քոթիթս իմ ընկերաւքս եկի յանի տամզիս վերայ տեսայ զանոյ իրիցանուս զի առվելին հրամանիքն ու իսկսրանէ բաժ ու տամզա չէին տվել ես այլ հաստատեց իմ ընկերաւքս որ ոչ բաժ տան ու ոչ տամշայ զինչ 'ի առվելին հրամանիքն էր թողաք վասն յերկար կենդանութեան փաթշահին ով որ այլ բաժ ուղէ կամ տամշայ այսու ինգեթլոր լինի ու նզոված է յժը հայրապետացն մասն զյուղային եւ զիայենին առցէ հաստատուն պահաւղքն աւրհնին այ .

Զժի էլզանին . շնորհիւն այ մեք տաղմանիքս վասն յերկար կենդանութեան եւ վասն պատրոնաց մերոց սահիպ դիւնդին եւ սահմատին եւ քարիմադինին բարձաք 'ի յանո իրիշանուս զբաժն զոր իսկզբանէ ազատ էր մեք վերստին այլ հաստատեցաք չունի ոք իշխանութիւն բաժ ուղէլու ոչ ինչ ազգ ով իցէ որ կապէլ որ լինի ով այլ խաւսք ասէ կամ աղմանանէք աժի ուղէլու : յժը հայրապետացն նզոված է հաստատուն պահողքն աւրհնին յայ . իշի Գ.

Յարկելից կուսէ մեծի մասրանն .

• • • կ 'ի միւսում ամի որ էր թուականս ՈԿԶ կա . . . այ ես ու էր գրիգոր որդի ապօւղամբի արհիեպիսկոպ . . . եցաք առնալ զեղեալ հարկ 'ի մեր գաւառէս շիրակա եւ . . . աքիս եկեղեցեացս յանոյ զի սահման էր իսկզբանէ յամենայն գե-

զէ երկու գրիւ հաց յաթոռս տալ եւ 'ի քաղաքիս յամենայն եկեղեցիս մորթի մին զատկին տախն արդ ես յաղագս յերկար կենաց պատրոնացն իմոց եւ ազգականաց եւ եղբարց իմոց եւ վասն հոգւոց ննջեցելոց մերոց թողի զայս հացս ամենայն գեղի մեծի եւ փոքու եւ զատկի մորթին ամենայն եկեղեցոյ եւ չունի ոք իշխանութիւն պահանջել մինչ' ի գալուստն քի ապա եթ : . . . կատարիչք յիշատակիս . . . ցին յայ եւ յամենայն նըց . . . կեանդանութեան եւ տուղ . . . աց իւրեանց .

Զ. Նկեղեցն, Ս. Գրիգոր. — Վեցերորդ եկեղեցին յարեմոլց կայ Առաքելոց յանոն սրբոյն Գրիգորի ոչ շատ հեռի յարկունի պալատէն 'ի ծայր քարափանն որ հայի 'ի վերաց նազկոցաձորոյն, 'ի բարձրահայեաց և 'ի գեղեցկատեպէլ վայրի, առաւել քան վայրմն յեկեղեցեաց : Յայդմ վայրի վեկեղեցուոց իրիք յիշատակ մինի առ Աստվայ, և արժան համարիմ յառաջ բերել անթերի զբանս նորա, որ է այսպէս . « Զմեծաշն եկեղեցին որ 'ի բարուգատոփ անուամբ սրբոյն Գրիգորի շնեւալ, որ էր վիեալ և կործանեալ, կամեցաւ (Պագիկ) նոյնաձեւ չափով և յօրինուածով յարդարել 'ի քաղաքին Անուոց, հիմնարկեալ 'ի կուսէ նապկոցաձորոյն 'ի բարձրաւանդակ տեղուո՞ն, տարիվատենչ տեսողացն . մեծատաշ վիմարդեան կոփածոյ վիմաք մանուածոյ քանդակեալ յօրինէ, լուսանցոյց պատուհանօք, երրակի դրամբք, պահճատես տեսանամք գմբէթաւորեալ գունակ գերամբարձ և երինանման գնդին » : Զբանս Ասողիայ ընդ մերոյս տեղագրութեան համեմատեալ չէ պարտ նոյն համարել. զի թէպէտ տեղին նոյն իցէ որպէս առե « ի կուսէ նապկոցաձորոյն 'ի բարձրաւանդակ տեղուո՞ն տարիվատենչ տեսողացն », նոյն և անոն սրբոյն Գրիգորի, սակայն բազում այլ բանք են որ անպատկան են նմին . նախ զի մեծաշն չէ, այլ փոքր յօյժ . և երկրորդ ոչ 'ի Գագկայ շնեւալ, այլ յԱպլղարիպայ մարզպանէն, և եթէ զԱպլղարիպայն նորոգութիւն միայն և ոչ հիմնարկութիւն ասիցեմք, որպէս իմանամք յարձանազրէն, սակայն և այնպէս հօր նորա Գրիգորոյ սեպհականի շինութիւնն և ոչ Գագկայ . այս յայտ է և 'ի թուականացն, յորոց Ապլղարիպայն է Նջթ, և միւն որ հատոյթս սահմաննեալ է Եկեղեցւոյն Նիտ . որով յայտ լինի թէ անկեալ է թուական հիմնարկութեանն ի Գրիգորէ, և մնացեալ Ապլղարիպայն որգւոյ նորա նորոգողի . ապա շնեւալ 'ի Գագկայ սուրբ Գրիգոր՝ իսպառ կործանեալ, յետ ժամանակաց 'ի նմին տեղուո՞ն և 'ի նոյն անուն կառուցեալ է սա ոչ մեծանիստ և ալբայսավայել, այլ 'ի փոքր սահմաննեալ որչափ բաւական էր ձեռն իշխանին հիմնարկողի : Գեղեցկութեանն մասսամբ և ճարտարպետութեանն արհեստի ոչ ինչ թերութիւն նըշմարի 'ի նմա . այլ գրիցն վերմութիւն մոռացուցանէ զամենայն : ի հիւմանոց նորա կայ աւերակ մատրանց գեղեցկաշն . թերևս զսոցանէ իցէ երկու սենեակ ասացեալ յարձանագրին : Երեք յարձանագրացն են 'ի ճակատ գրանն օրինակ վայս :

կամաւքն այ ՚ի Նվի թւ ես շուշան տիկնաց տիկին զիւ-
դակից գրիգորոյ իշխանի ետու զմբուանա կուղպակս ՚ի սուրբ
Դրիգոր իսկ որ հակառ գա յիմոց կամ յաւտարաց յժը իցն
նզոված է հոգով եւ մարմնով.

✚ կամաւքն այ ես վահրամ իշխանաց իշխան ետու զիմ
որդոյն զապուխամրի ոգերաժին եւ դնեցի ՛ կուղպակ զլո-
ւագոյնին եւ զորսաւախն ՚ի ոշականց ետու ՚ի ՛ ոք գրիգորի եւ
քան եկեղեցեցս որ ունին ՚ի տարին ՛ քառասունք արդ է թէ
ոք հակառ գա յիմոց կամ յաւտարաց նզովեալ եղիցի ՚ի հաւ-
րէ եւ յորդո եւ ՚ի ՛ ոք հոգոյն յժը հա եւ ապուխամրի մե-
ջացն պարտական եղիցի առաջի այ.

✚ ես սարդիս լարաբարս ետու զիմ տունս ՚ի ՛ ոք գրիգոր
որ արնեն ինձ ժամ + + + աւր իսկ որ հակառ գա եւ զիմ յի-
շատակս խափանէ յամենա + + + նին այ + + + եւ մարմնո ամեն +
Յարևելից կուսէ .

՚ի ՆԶԹ թուականիս ես ապլղարիպ հառց մարզպան որդի
Դրիգորո եւ թուն ապուղամրի հայոց իշխանաց թէպէտ եւ
անտես էի ՚ի հաւրէ իմէ յաղագս կըսերութեան այլ հար-
կեցա ՚ի ծնողական սիրոյն և շինեցի զայս հանդստարան հաւր
իմոց գրիգորո եւ եղբաւր իմո համզէի եւ քեռ իմո սեղաի եւ
շինեցի սենակ ՛ զնը ստեփաննոս եւ զնը + + + պայման քա-
հանայիցդ այս է որ զամէն ուրբաթի ուր + + + ժամն իմ մաւրն
շուշանա արասցեն եւ զշաբաթն իմ հաւրն գրիգորո եւ ՚ի
՛ ոք քրիստափոր զամէն ուրբաթ իմ քեռն սեղաի եւ զշա-
բաթն իմ եղբաւրն արնէ համզէի եւ առաջաւորացն ուրբա-
թին եւ աղցայն ուրբաթանոյն փոխան յարձակ աւուրբն ա-
րասցեն ը աւր արդ եթէ ոք ՚ի քահանայից եկեղեցեացդ
Այդ ժամէ խափանէ եւ կամ պղերդա եւ աւր անցնէ նզո-
վեալ լիցի ՚ի հաւրէ եւ յորդուո եւ ՚ի ոք հոգուոյն եւ յժը

Հայրապետացն եւ բաժին նորա ընդ յուղակ մասնչին առց իսկ կատարիչ գրոյս աւրհնեալ լիցի .

Ի հարաւոյ կուսէ .

❖ քո անձ յորժամ դաս փառոք հաւը 'ի նորոգել զեր կիր ողորմեա գրիգորո ծառակի քո .

Ե. ԿԱԵՂՅԹԻ . — Եօթներորդ եկեղեցին 'ի միջավայրու անդ քաղաքին է մօտ առ Առաքեալմն : Սա որչափ ինչ յաւերակացն նշմարի , մի 'ի գեղեցկաշէն եկեղեցեացն էր . այլ արդ հիւսիսային կողմն միայն կայ հանդերձ մասամբ խորանին , այլոցն առ հասարակ փառակ կուտեալ չուրջանակի : Եկեղեցիս թէպէտ և փափր է տարածութեամբ , այլ այնու առաւելու քան դայլս զի ընդ յաստական ծայր 'ի ծայր ներքնատուն է գետնավոր կամարակապ և ցարդ անկործան : Արձանագիր չերեմի ուրեք 'ի մնացորդ մասունս նորին :

Ը. ԿԱԵՂՅԹԻ . — Ուժերորդ եկեղեցին ամենավորքը 'ի վերայ ճանապարհին կայ որ հանէ 'ի միջնարերզն : Եւ սորա քանդեալ երկից կողմանցն՝ տեղի խորանին հանդերձ կողմնակի գրամբն կանգուն կայ ցարդ վայելուչ յօրինուածովք :

Թ. ԿԱԵՂՅԹԻ . — Մնցեալ 'ի միջնարերդն ընդառաջ ինի 'ի հարաւոյ կուսէ նորա իններորդ եկեղեցին 'ի զառիվայր տեղուո՞ւ և մօտ 'ի պարիսապն , որ և բարձրահայեաց դիսէ յլլիսուրեանն դետ : Եւ սա միջակ մեծութեամբն հոյակապ է և այլառարազ ձևովն , վսեմ հանդամանքն ճարտարպետութեան , և գմբէթիւն և սոսուարութեամբ քարանցն առ հասարակ և առերի գեղեցկաշէն մատրամբն . այլ աւազ զի մեծաւ մասամբ քայլայեալ մնացորդ մասունքն յոդւայ հանել տան հնախոյզ հայրենասիրին որ չհանդարտէ անիժաց տչօք և անկարեկիր սրբաւիւ մեկնիլ 'ի տեղուո՞ւն :

Ժ. ԿԱԵՂՅԹԻ . — Տասներորդն է 'ի կողմն մի միջնարերդին 'ի հիւսիսոյ նախասայեալ եկեղեցւոյն 'ի վերայ բլիփ . ձեւ նորա կամարակապ , որմունքն հասարակ և ոչ նշանաւոր ինչ 'ի նմա :

Այդոքիկ տասներին եկեղեցիքդ որ կանգուն և որ կիսափուլ երեւին 'ի քաղաքին . թէպէտ և դասանիցին այլ ևս երկու կամ երեք , այլ խսպառ հիմնայատակ եղեալ մեծանօթ մնան թէ որպիսի լիցեն շինուածք :

ՏԱԿՈՒԹԻՒՆ . — Բաց 'ի տասանց անսուն եկեղեցեաց կանգուն կայ տակաւին և ՄՊկիր մի 'ի հարաւոյ կուսէ քաղաքին ոչ շատ հեռի 'ի միջնարերդէն , 'ի ծայր դառիվայրին որ տանի 'ի գետն : Զհանդամանաց սորա չունիմ որոշակի ինչ առ մել յեկեղեցւոյ արդեքը 'ի մզկիթ փոխեալ , եթէ հիմնարկեալ իրու մզկիթ . քանցի եկեղեցւոյ ձեւ չերեսի 'ի նմա , ոչ տեղի խորանի և ոչ յորմունսն նշան քրիստոնէութեան խաչի կամ հրեշտակա . սակայն և գիտաւոր վայր մզկիթի մինրաւան չիք 'ի նմա , զի որմն հարաւոյ միայար անշեղ ամբանայ ծայր 'ի ծայր . նմին իրի թուի ինձ նախ յայլ պէտս ոահմանեալ շինուածք , և ապա առ թուր թարօք կամ Պարսկաք 'ի մզկիթ փոխեալ է , յաւելեալ նմին մինարէ և արձու

նադիր զորոց գինի: Զեւ նորա է երկայն քառակուսի յարեւելից յարեւմուսու և երկու կարգ սեւանց ՚ի նման երեք երեք, որով յերիս միջոց բաժանի շինուածն: Յարկ նորա ՚ի մեջ խւրաքանչիւր սեւանցն ուրեք տափակաձև կամարօք յարկեալ և ուրեք ամեններն ՚ի ձև առաստաղի, քառակուսի մեծամեծ քարինս՝ չպիտեմ սրպէս՝ առ իրեւարս եղեալ շուրթն առ շորթն: Ի հիւսիսոյ յաստակ նորա հաւասար է արտաքին գետնոյն, յորմէ անընդմիջաբար զառիվայր շեղեալ ՚ի ձորն կցու ՚ի հարաւոյ կուսէ հիմնարկեալ է հարաւակողման որմցն ՚ի խորոց անտի ձորոյն մինչեւ ցհաւասար բարձրութիւն յատակի հիւսիսակողմանն: և ապա ՚ի վեր ամբարձեալ հարաւային որմն մղկմին հանդերձ մեծամեծ պատուհանոք որ բարձրահայեաց գիտեն ընդ Ավարքեանն դեռ: Բնդ յատակաւ մղկմիս ները նաստունք են կամարաշնկը՝ միջնադրունս ունելով խւրաքանչիւր անցանելոյ ՚ի միոյ ՚ի միւսն: Մինարէ նորա սովորական ձևով, և կայ յարեւելից կուսէ կցեալ ընդ անիւեան հիւսիսային որմցն: Յարկ մղկմիս անկործան է ։ այլ յորմոցն՝ արևմը տեանն կիսով չափ անկեալ և հիւսիսայինն առ մինարէիւր քայլայեալ փաքր մի, և խաթարեալ գետնափոր տեղիքն: Արձանագիրը ամենայն ՚ի հիւսիսոյ կան արտաքուսա: յորոց նախ արաբայի կամ՝ պարսկերին է բազմասոող ։ յետ այնորիկ պող մի քիւֆի խոչըրաստան: և ծաղկազարդ: Երկատեսակ գրութիւնկը բարձրա քանդակէիք էին, զրոց չմարթացայ տանուլ ղճաւասարն: և զի բարձր էր տեղին, և սանդիխոյն դիմարդել լինելոյ անպատկան՝ թէ կամէի թրջեալ թղթավը պղնչեալ ՚ի վերայ առնուլ զպատկեր գրոցն: Սակայն ստորեւ դոցա կան այլ եւ սատեսակ համառօտ յիշատակարանք: նախ վրայի և գարձեալ տաճիկ և ապա հայ. զհայերէնդ և զվրացերէն որպէս կարծեմ բռնի տուեալ են դրեւ քընսառ կեց ՚ի վերայ մղկմին: և են այսորիկ.

Հարանոցանես շեց () Յյ առաջա 85 յն շունչուն: Այս ամինքն . և ի թուիս ՆԾՐ (1258). և Աթատէկ Զաքարիա հաստատեցի: :

• • • ս զնա յոյ

صونکر اقلیلک زکریا بن المرجو

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀՈՂՔՆ ԱԼԻՇԵՒՆ ԱՍՏՈՒՆՈՑ:

և այլ մինարէ մի դրեթէ ՚ի միջակէտ քաղաքին բարձր՝ այլ չիր նորա մղկմիթ, և ոչ սուերակին երեխն ՚ի տեղունչն: Հայ արձանագիրն որ կոյր ՚ի վերայ նախասացեալ մղկմին, կայ և ՚ի վերայ այսր մինարէի հանդերձ քանի մի տաճկերէն սողիւր:

Արքունութ. — Ի մեծագործ շինուածոցն Անոյ մի է և ազրունի սպալստն կառուցեալ յարեւմտակողմն քաղաքին ՚ի ծայր քարափանն բարձու որ հայի ՚ի վերայ նրագիրցաձորոցն յարեւմոց և ՚ի հիւսիսոյ, որպէս ինչ առաջք ձորոյն ձեւու ան ՚ի տեղունչն: և է մօտ ՚ի սուրբ Գրիգոր փաքր եկեղեցին զոր վեցերորդ չորսակ ՚ի կարգս եկեղեցեաց: Նիստ արքունեացս և տեսարան նորա, որմունքն սուերինափոր վայրքն յցժ ահաւոր են. յարեւելից կուսէ կանդնեալ է զուան

պալատանդ. գեղեցկաքանդակ՝ ըստ արեւելքան ախորժակաց, և է այսպիսի. ՚ի շրջապատ նորա հարուստ մի տարածութեամբ երկուստեր և ՚ի վերոյ ունի քառակուսի թշաչափ ստուար քարինս ագուցեալ յորմն ՚ի գոյն գեղին և սեաւ, և քանդակեալ ՚ի նոսա պէսպէս զարդս և ձև խաչի. որ ՚ի հեռաստանէ և ՚ի մօտոյ հաճոյական տեսիլ ընծայեն աչաց : Հիմն որմոյ դրանդ հաւասար է արտաքին գետույն և անդէն շեղի ընդ զառիվայր նաղկաձորոյն. և ահա յայնմ կողմանէ մօտ ՚ի յատակ ձորոյն ՚ի վերայ քարաժայությն հիմնարկեալ արեւմտեան և հիւսիսային որմոյն ուղղաբերձ ՚ի վեր ամբառնան բարձրադոյն քան զպարիսպս բերդին : Յերկուս մասունս բաժանեալ են արբունիքդ որչափ ինչ յաւերակացն նշանի, արեւմտեան և հիւսիսային . Երկըրդի պատափին որմունիքն միայն կան և ՚ի ներքոյ խապատ խաթարեալ . խակ առաջնոյն որոյ էր և գուռն զոր սասցաք, անկործան կան տակաւին և բաժանիչ որմունիքն կամ անջրաբեռք սենեկացն թուով յոյժ սակառոց և ոչ մեծամեծաց . անյարկ և մերկ են ՚ի նըրկառուց որմունիքն, որոց լոկ քարինքն երկեն երկիթզաշափի քառակուսի առ հասարակ դեղնագոյն՝ որպէս զպարապաց բերդին : Ծնդ այն յոյժ զպարմացեալ եմ, զի յորմունս պալատանդ մի միայն պեսի լուսանցոյց պատուհան որ հայեր ՚ի կապիցաձորն . յորմէ գուշակեմ թէ սովորութիւն ժամանակին ոչ էր ՚ի կողմանէ, այլ ձեղսամույն լուսամոխք լուսաւորել զանեեակս . որպէս և ՚ի բազում ՚ի քաղաքաց ասիակողմանն պահի ցարդ սովորութիւնս այս, թէպէտ և առ նոսա անշոք եղանակաւ հեծանաս դերանաց մի զմիալ եղեալ շուրջանակի և տակառ սու իրեարս մերձեցուցեալ յամենայն կողմանց՝ դմբէթ իմն ձևացուցանեն ՚ի կեդրոնին բաց : Սակայն յարդունի պալատանս թէպէտ և պահեալ ևս էր այդ սովորութիւն, այլ ո գիտէ թէ որպիսի կամարօք յարկեալ և գմբէթ մեծաշուք կայցր ՚ի կեդրոնի սենեկացն իւրաքանչիւր՝ վեղիզք և պատուհանօք շուրջանակի ՝ Ներքնաստանկ արբունեացս ահեղզադոյնք են քան զիերնայարին : Ի հարաւայ կուսէ դրանն վերնոյ խոսորեալ ընդ զառիվայր գետույն, ուր աւերակօք և անհարթ ելեէջիւք խանդարեալ է վայրացն և արահետ ուղղոյն աներեւութացեալ է խապատ, յանդիման լինին մուտքն հարաւահայեաց . և են այսպիսի . յարեմուտս ընդ երկայնութիւն պալատանդ կարդ մի կամարօք ձգեալ որմասեամբ զատուցեալ է յիրեաց, և երեւք նոցա ուղղահայեաց ըստ որմոյ վերնայարին . և մեղքաչափս իրեւ երկու առ ՚ի ներքս նոցա որմ ածեալ ուղիու խորանաձն յօրինեալ են կամարավայրան . և յորմս անդ՝ ոչ յամենեսին մուտք բացեալ փոփու տարածութեամբ . ընդ որ անցեալ ՚ի ներքս տեսանին անձուկ փոլոցք, և ՚ի փոլոցայն առաջնորդեալ այլ և այլ խաւարչափն ներքնաստանկ, ումանց անձուկս ունելով դրունս և ցած, և ումանց արձակս : Առ հասարակ կամարավ են ներքնաստանկդ . ումանկ բարձր մինչև ցյատակ վերնայարին հասեալ, և ո մանկը ցածունք . և միւս ևս անցք որ հանէ ընդ զառիվայր նաղկաձորոյն, թէ պէտ և քանդեալ և աւերեալ, որպէս բազում ուրեկ որմունկ ներքնաստանց քայրայեալ և մեծամեծ քարանցն չեղջակուստեալ առ ետեղ : Քանդմունք այն պիսի կան ՚ի տեղունչ յայնմիկ, զի և գեղջուկ տիմար տեսեալ վիայէ թէ ու տարերաց բանութեան արդիւնք են այնպիսի և ոչ պատերազմաց, այլ վայլաւ

վասին մարդոց և սնուտիախոյզ գատարկապորտից, թէ դանձս դրամոց գտանել մարմարոցին յորմունս նեղբնատանդ, որպէս և ցայսօր ՚ի նոյն մտի կայ խուժան զեղջեցն շուրջանակի: Քանզի ոչ միայն զյատակ գետնոյն վերիխոյր արարեալ են, այլ և յորմունս որը ՚ի մեծամեծ քարանց շինեալ են և ոչ որպէս զիերնայ յարկին՝ և անխախտ կան հիւտամք նոցա, ուստեղ ուստեղ քարանցն բռնի և երկաթի գործեաք զերծուցեալ է ՚ի շարիցն, և զժանձրութիւն որմոյն փորեալ վերիխոյր. չզիսուեմ՝ քան զիմիճ և զիմոյի զինչ այլ տեսեալ իցեն: Արձանագիր չի ուրեղ յորմունս արքանեաց. այլ այս միայն նախնի յիշատակի, զի ՚ի հիւտակալողման մասին ՚ի վերայ որմոյն արտաքուստ՝ ՚ի կուսէ ծաղկոցաձորոյն՝ ՚ի բարձու. կայ բարձրաքանդակ պատկեր առն զինուորականի. դլուխ նորա խորտակեալ է, և տարազ զգեստոցն՝ ամղան զինուորի զգեցեալ որ մինչև ցծունկն թանէ, և գոտեաւ զապեալ զմէջս. մի ձեռն տարածեալ՝ գաղափար մի ունելով շնուտածոյ իրիք, թերեւս զարքունեացն: Զստ պատկեր թագաւորի կոչեն, պատկեր յայտ ոյր ՚ի թագաւորաց:

ՍՏԱՐԵԿՐՈՆ ԱՊԱՅՆ. — Յարևելակոյթն քաղաքին առ կողիւք եկեղեցւոյն լուսաւորչի ինեալ փոքր մի ընդ զառիխայրն և շրջեալ զարևելիս՝ տեսանին զիմոլիք դարսհոսին վարիկարազի անձաւք երկու առ միմեանս, և յառաջ անցեալ քայլս ինչ յանդիման լինին մուռք ստորերկրեաց ուղոյն. նախ ՚ի քաղաքն կոյս վարեալ, և ապա շեղեալ ընդ. հարաւ ՚ի գետն կոյս: Որ զեւգուկիոյ, զԱմասիոյ և վարերգոյ գետնափոր տեղիս տեսեալ իցէ, նմա գիւրին է զառաւելութիւն նուշին ճանաչել քան զորայս, որք հօյակապութեանն մասամբ ահերք են, լայնարձակք և ՚ի մոփց անտի մինչև ցյատակն առ ՚ի չեղ, կամար ՚ի վերոյ կոփեալ ՚ի բուն անդ ապաւամի և աստիճանք սանդղոց ստորե. այլ սա անհամեմատ է նուշին. մի զի գետինն ՚ի նմին վայրի խճաքար է գիւրափուլ և ոչ ապառաժ, և Դարձեալ անձուկ և ցածուն, որպէս զի չմարթի և կորաքատանակ ընթանալ ՚ի նմա, պատկեր է և զգունկն թերել: Զայս ասեմ՝ որպիտի ինչ նախ առաջին եռեին. իսկ անտի և անդք անձանօթ է ինձ. և զի չկայր առ իս փորձ ուղեցոյց, Էամարձակեցի անփորձ արամի մունել ՚ի ներքս և շրջել յամենայն կողմանս: Աւանդութիւն ՚ի բերանս ամենեցուն այսպիսի է. փոքր մի յառաջ անցեալ ՚ի ներքս կոյս՝ յայլ և այլ առաջն բաժանի ուղին յայսկոյս յայնկոյս, ՚ի քաղաքն եւ ՚ի գետն. որ ՚ի քաղաքն կոյս ուղեցեալ են՝ հարթք են զի ընդ գաշտավայրիոք են, այլ որ ՚ի գետն կոյս՝ անհնարին զառիխոյր, որպէս ինչ արտաքին ձորամեջն երկի: Մի՛ յառաջից ուղեցոյն, ասեն, տանի ՚ի ներքուստ Ախուրեան գետոյ և հանչ ՚ի հանդիպոյ ձորեզերն բարձու: Եւ այս չէ սուտ. զի մինչև ցայսօր ՚ի հանդիպակաց եղերն՝ ոք սահման է թուսաց, ՚ի գագաթն ըլլակի միոջ աշտարակ կայ, և անդք հանչ ուղին. թէպէտ և այժմ կիսակործան կայ աշտարակն և եք նորա կոյեցեալ ՚ի թուսաց, զի մի ոք գալստ աստի անդք փախիսից: Պատմեն ևս զի ցածր անդքաւան գտեալ պատմելքացն թէ ուղին այն ՚ի ներքուստ գետոցն յայնկոյս տանիցէ, կամեցեալ իցէ անձամբ զիորձ առնուլ կերացն. մտանէ ՚ի ներքս ամենայն կարեւոր կազմութեամբ, և բազում տառապանք յառաջ անշեալ սկսանին շիմք ըրց կաթիլ վերուստ ՚ի խոնարհ, և իմացեալ հաւասարեալ կիութ ընդ գետովն կայ՝ գառնուոյ յետո:

ռազմական։ — Ի հիւսիսոյ կողմանէ նորին լուսաւորչի եկեղեցւոյն կոյ բաղանքի մի աւերակի ։ Ի բազանեաց աստի դիւրին է գուշակել որչափ կուտեալ թանհանցեալ է աւերակաց ամենայն ուրեք յԱնի ։ քանզի զբազանեօքդ շուրջանակի պյանչափ թանհարացեալ է աւերակաց մինչև հաւասարել յարկաց նորա, և վերուստ ՚ի վայր ՚ի քանդեալ մասանցն լինի իջանել ՚ի ներքս որոյ այսպիսի է ձեւ։ Նախ բոլորչի սենեակի գմբէժարդ, և շուրջ զնովաւ չորս ևս այլ սենեակի գէմը ընդգէմ միմեանց քառաւթեն՝ զբունս սենելով իւրաքանչիւր ցածունս անցանեցրց ՚ի նոսա ՚ի միջին սենեկէն ։ և ձեւ նոյսա լայնանիստ ՚ի կցուածի անդ ընդ միջ նոյն, և աւարտեալ յալերնաձեւ որպանկիւն, կամ լու ևս ասել տերեւաձեւ ։ ըստ նմին ձեւոյ և կամարայարէքն են յօրինեալ ։ Տեղի ծորակաց ջրամբարիցն կան սակաւին, այլ ամենայնն խալթարեալ ։

Այդոքիկ են ահա ամենայն մնացորդք շինուածոց քաղաքին Անոյ որ երկին որիչ, թէպէտ առաւելացոյն մասամբ կիսեղծք իցեն ։ Սակայն յաւերական երկին ուրեք ուրեք և մասունք ստուար որմոց, կամարաձեւ շինուածոց կէս մի քայլքայեալ և կէս մի թաղեալ ընդ հողով ։ ուրեք մեծամեծ անտաշ քարինք մի զմիով կուտեալ նշան ձիթահան գործարանաց ՚ի տեղւոյն ։ Այլ ՚ի տանց չէ մնացեալ և ոչ մի ։ զի աւերակ նոցաւ հողոյ հաւասար հիմունքն եելի երկին քառակուսի ոմն մեծ և ոմն վորք դերեւոք գետնոյն, և քարինք նոցաւ կուտեալ ՚ի ներքս և արտաքյա ։

Խոկ այն զոր ասեն հազար և մի եկեղեցի յԱնի, սպարտ է խմանալ և արտաքյա պարապին ՚ի հիւսիսակողմն ։ զի թէ ՚ի ներքս ՚ի պարապին էին ամենեկըին, շինայր տեղի և ոչ տան մլոյ, և եթէ կիսով չափ միայն, սակայն և այնպէս անհանգիւն էր թէ տանէր անձկութիւն տեղւոյն ։ Նմին իրի զի մի զհասարակաց աւանդութեամբն արհամարհիցեմք, մանաւանդ զմիկայտթեամբ ժամանակակից մատենագրացն Մատոթէոսի և կիրակոսի, հարկ է ասել թէ բնակութիւն քաղաքին ձգեալ և արտաքր քան զպարիսան ընդ ընդպահակութիւն դաշտավայրին տարածէր ընդ հիւսիս և ընդ արևելս ։ Ի հիւսիսակողմն քառորդաւ միով ընդ տարածութիւն զաշտին երեկին ցայսօր նշանք աւերակաց, այլ ոչ որպէս ՚ի ներքս, զի մանկր են քարինքն և ծածկեալ ընդ հողով, և յասակեալ հարթեալ վայրին ամենայն ՚ի բազում երթեւեկութենէ սայլըդոյաց ։ և մեծամեծ քարանց անտեսութիւն զի օր ըստ օրէ հարկաւ բարձեալ անտի և սպառեալ է, զի ամենայն վայրին մօտեւորադոյն են շրջարնակացն քան ներքին կողմն քաղաքին ։ Այն էս հաւասատէ զասացեալս զի ՚ի նոյն կողմն քառորդաւ հեռի ՚ի քաղաքէն կառուցեալ կոյ վորք եկեղեցի մի Զօպան քիլիւնի տասցեալն բոլորաչէն և երկացն գմբէթիւ ։ և նախ քան զպյո այլ մնացորդք աւերակաց երկուց մօտ ՚ի քաղաքին խոկ ՚ի կողմն արեկից նոյնօրինակք աւերակ իւճից բազում են ։ և ասեն թէ այդ կողմն շինին հասանէր մինչև ՚ի խաչիւնորդն երեք քառորդաւ հեռի ՚ի քաղաքէն ։ և այլք թէ մինչև ՚ի չուռունիփ վանան, ոյն է խօշավանք աստցեալն ։ Հանդերէ այնու զոր ասացաք, ոչ միայն աշխարհագրի առն այլ և ամենայն մարդոց քառ կը եւեալ միանդամ դասարածութիւն պարսպապատ քաղաքիս, հաւասատէ Համբ թի նմա այնքանոյ բազմամարդութեան զոր պատմիչն ասեն, թէ բազմամբն

Էր քաղաքն և բիւրք բիւրուց ՚ի նմա յամենայն կարդէ և ՚ի դատուէ ՚ի հիացումն տեսողաց մինչև կարծել թէ մեծ մասն աշխարհիս Հայոց անդ իցէ: Քանդի եթէ տառնայարկս ասիցես լինել զոտունս, տակաւին անտար է շատութեան պատմեւ լեացն. զի բաց ՚ի տանց՝ այլ բազմապատիկ շնուածոց հարկաւ լեալ էր անդ ըստ օրինի ծաղկեալ մայրաքաղաքացն, բաղում և այլ դատարկ վայրաց, հրապարակաց, զրոսարանաց, զինարանաց, զինուորանացաց, գիւտանաց, և այլ զի գիտեմ քանիսպատիկ տեղեաց, որոց գրաւեալ ունեին զմեծ մասն քաղաքին. և եթէ այդ ընդ մեր հաշուով չափանի, զհագար և մի եկեղեցին ուր գետեղել կարասոցք: Վասն որոց ՚ի տիեզերանուշակ անտանէ քաղաքին դուշակեալ և ՚ի վկայութենէ ժամանակակից պատմչաց՝ թէ անբառ մարդկան էր խմբարան, ըղշէնս քաղաքին արտաքոյ պարսպին՝ հարկ է ասել տարածեալս յարեւմոց մինչև ցկէս ճանապարհին Ալաճա և Ղօղիճա դիւղից, զի և յայդ կողմն չպակասին աւերակը մանր քարանց ցրուելոց ընդ երեսս դաշտին, որպէս ՚ի հիւսիսայ և յարեւմոցից զօր վերոյ ասացաք: Որպէս զի թէ զարտաքին մասն տասնապատիկ աւելի քան զնեղբինն ասասայտք տարածութեամբ, հտաւնին միտք առ ՚ի մասեւնագրաց պատմելեացն. յորմէ և զայն հաւաստեաւ ասել ոչ երկրայիմ, թէ ներքինն զննուորական դասուց, նախարարագանց, իշխանաց և աղնուականաց էր ընակութիւն, ըստ վկայելոյ փոքր ՚ի շատու իշխատակարանի իրիք, և արաւաքինն հասարակ մարդկան. և շնուածք տանց և եկեղեցեաց ներքնայն հոյակապք են, և արտավիճեն ոչ այնպէս, յորմէ անձեւ եղեալ են իսպառ բաց ՚ի հովուաշչն եկեղեցւոյն:

ՆԱԴԱՅՈՅԱՌՈՐԾ, ԵՒ ԿՐՊԱՆՔ Ի ՆՄԱ. — Որպէս յիշեցաք յառաջագույն, ծաղկոցանորդ սկիզբն առեալ յարևմտեամ դրանէ բերդին, որ այն ինքն է դուռն ծագկոցի, երթալով երթայ և զատիվայր աւարտի մինչև ՚ի չափ մի, և նովին չափովն դաշտանաց՝ բաժանեալ յայլ և այլ առաջն, ՚ի հիւսիս, յարեւմուս, և ՚ի հարաւ՝ որ յիշխուրեանն հանէ գետ. և լայնութիւն նորա ուրեք քարընկեց մի և աւելի, և այլուր անձկագոյն ևս: Յատակ ձորոցդ թէպէտ հողային և մեծաւ մասամբ մշակեալ, սակայն կողմանկը նորա քար են, ոչ ապառաժ, այլ խճախառն որով և գիւրամաշ: Գեղեցկութեամբ և աշաւորութեամբ այլք ՚ի ձորոց այլոց գաւառաց առաւելուն արգեօր քան զսա յայժ. սակայն որով սա անտանի գտաւ՝ ոչ մի ոք ընդ նմա մրցել զօրեսցէ. քանդի քարեղէն կողմանկը իւրաքանչիւր առաջնոց երկուստեք գէմ՝ ընդ գէմ միմեւանց առհասարակ փորեալ են անթիւ բազմութեամբ՝ ՚ի չափ կրպակաց ոմն մեծ, ոմն փոքր, ոմն երկայնաձև առ ՚ի ներկր և այլ ոմն յայլ և այլ սենեակս բաժանեալ, և մուտք դրանց ՚ի միոյ ՚ի մրւան անցանելոյ. շատիցն ըստամուտ բացեալ ՚ի վերուստ առ ՚ի չեղ, և այլոց դրանն ըստով շատացեալ. բաղում ուրեք շարք կրտակացդ երկիրագեան են ՚ի վերայ միմեւանց: Խեկ ուղին որ ստացնորդէր ՚ի շարս իւրաքանչիւր կրպակաց ՚ի ժամանակին՝ ոչ ևս է. որ ՚ի ստորին կարգին են հաւասար՝ դետնոյ եղեալ յաւերակայն կամ փոքր մի ՚ի վեր՝ գիւրամուտք են, և որը ՚ի վերինն դժուարամատոցք: Քանդի ժամանակաց հնութեամբ ՚ի բոնութենէ տարերաց մանաւանդ քան թէ աշխարհակործան մարդոց՝ այնքան մաշեալ են երեսք կրպակացն, կամ թէ

ասել կոյք ձորոյն, զի և ձևոյ վայելըոթիւն չէ մնացեալ 'ի նոսա . օրինակ իմն որպէս յօճառի որ այլ և ձևո փորագրեալ և ատա յանձրեի դիցէ, զնոյն օրինակ անցս կրեալ կարծիցես վկրապակադ: Զի դրոնքն մաշեալ շուրջանակի կորուսեալ են խսպառ զձևս անկեանցն, և ճակապն անհարթը 'ի դերծելց մասանց քարին 'ի տեղողնէն . որպէս և դրոնք 'ի բնական ուղղահայեաց ձևոյն թիւրեալ՝ ոմն առ'ի շեղ յերկինս հայի և ոմն առ 'ի շեղ 'ի դեաին . ոմն թիւկոնս գարձուցեալ ընկերին և այլք գէմ ընդգէմ գարձեալ . և մասոնք վկածոյն որիշ երեկին որ ան կեալ դիղեալ կան ուր շատ և ուր սակաւ յեղերս ձորոյն: Սակայն ոչ միայն երեսը փորածոյ կրապակացդ անջրացեալ են 'ի կործանմանց անտի այլ և ներբին նոցա ոչ վայելցաձե ինչ է . զի դիւրին եր արտաքնոյն 'ի հեղեղաց յայդ չափս իջաննել ածեալթեան , այլ ներբինն ոչ նոյնովէս . և թէ չիցէ միսերիմ 'ծեռին միսեալ 'ի նոտ թշնամութեամբ, հարկ է ասել թէ 'ի սկզբան 'ի նոյն ձև . փորեալ իցեն որպէս ինչ տեսանի ցայսօր , ոչ կանոնաւոր կողմանք իւրաքանչիւր և ոչ անկիւնաւորք, շատ համարեալ 'ի քարեզնէն փորուածի վերիվերոյ նմանութիւն բերել ընդ փոյտակերտ շինուածոյ՝ առաստաղանման ձեղուամբն 'ի վերոյ , և կողմանցն և ան կեանցն զդայի երեւութիւք: Զացանէ թէպէտ և չունցիցմք ուստեք գրաւոր վը կայութիւն կրապակս ասելց , և զնոյն ինքն զջաղկաձորն ողջոյն վաճառանոց քաղաքին , սակայն ոչ արհամարհելի է և աւանդութիւնն որ ցարդ անմեկնելի է 'ի բերանոյ շրջաբնակացն: Եւ այն ևս հաստատոն սպացոյց է կրապակաց , զի 'ի բազում 'ի նոցանէ անեղծ կան ցայսօր պատուհանձե մանր գարանք փորեալ յորմունս , յումեմն սակաւ և յումեմն բազում և խիստ առ խիստ առ միմեանս . զոր օրինակ տեսանի 'ի կրապակս դեղագործաց՝ տեղի տիտոց խորշս խորշս գործեալ:

Ա. Ա. Ա. Վ. — Զառապելացն որ զբաղարէն Անոյ չունիմ' ասել յումիմ' ճարտարամուեալ զառաջինն հաս կալաւ զմիտոս խառնազանճ մարդկանն , ևս և աշխարհատես մարդոց ոմանց և 'ի դիր ևս միսեցաւ: Ոմանք յառապելացդ ամենակին սուստ են՝ զի և հակառակ են բնութեան . այլք կերպարանափոխ եղեալ տաննապատիկ յաւելուածով: Թէպէտ չըր արժան և յիշել իսկ զնոսին , այլ զի մի անյիշատակ առնելով 'ի նոյն կանխակալ սովորութեան թողցուք զուամիկ մարդիկն , համառօտիք յիշել արժան համարիմ: Առաջին զվաճառանոյէն առապելաբանեն թէ յաւորց անտի Անեցւոց պէսպէս ադանելիք կայցեն 'ի նմաս , և պուրակք այլ և այլ ձեռագործաց կոսաւոց գիւրակաց կերպասուոց նովին դրիս շարեալ 'ի գարանս և նովին գունովն որպէս ինչ խոկրանն էր . և յորժամ 'ձեռն ածէ որ առ նոսա զննել , զի մաշեալ և փտեալ են՝ խալոյն 'ի փոշի լուծանին : Երկրորդ թէ ընդ երկրաւ պէսպէս ինչվանք կայցեն և առնք փառահեղք , յորում առակաւին ամենայն կարափք ողջ կան 'ի նոսին մանսաւանդ անօթք կերաւ կընդինաց պղնձիք և կարգաւ շարեալ 'ի գարագս շուրջանակի . և ըստ գիտոց 'ի գտեալ ամեմն զմուտ նոցա , և չհամարձակեալ առանձինն 'ի բաց առնուլ 'ի նոցանէ , եղանէ արտապս և գտեալ զմանան իւր օդնական կամեցեալ ից վերլու տին մտանել անդք և բառնալ որ զինչ և կամիցի . այլ աւուրս երիս խնդրեալ զմուտ նոցին և ոչ գտեալ , զի յաներեւոյթ ովւոց փակեցաւ գուռն առաջի նոցա , և ունայնաձեան յետ գարձան : Երրորդ թէ չափականն 'ի քաղաքի անդ չըլքու

տանի գաղանք, և յաւերական լի իցեն օձք մեծամեծք: Եթէ ճշմարիսք էին այդ գորիկ, չէր հարկ Անուոյ միայն սեփականել զայդոսիկ զի յաւերակ և յան մարդի տեղիս երևոյթք գաղանացդ չեն պակաս: սակայն իմ աւուրս բազումն շընեալ 'ի քաղաքին յառաւոտէ մինչև ցերեկոյ ոչ 'ի ձմերան և ոչ ամարանի չտեսի և ոչ զմի 'ի նոցանէ: Չորրորդ զգուշեաւ պատուիրեն որ շրջագայելոցն է 'ի նմա, զի ընդ ամենայն քայլափոխս շուրջ հայեսցի թէ ուր դքայլս ոտիցն դնէ: զի բազում գուրք են 'ի նմա՝ ասեն՝ նորինք և ջրհորք և ջրամբարք, և բերանք նոցա գետնոյն հաւասարք և ծածկեալ 'ի մացառաց որ անտառացեալն է անդ: Եւ այս դարձեալ սուտ. զի ոչ մացառաք անտառացեալ է վայրն և ոչ խորան գունդ փոփ երեկին ուրեք կամ ջրհորք. թէպէտ չպակասեն 'ի նմա գուրք, այլ յոյժ սակասք և խորութիւն նոցա ոչ աւելի քան զմարդաչափ և կէս, յորոց ու մանք ցեալ և ծածկեալ են յաւերակաց¹: Զառասպելադ ամենայն 'ի գերե հանեալ, երկիւղ գողոցն և աւազակաց թերևս ահ արկանիցէ առ հեռառորս. այլ այդ երկիւղ ոչ միայն յԱնի, այլ և յամենայն անմարդի տեղիս տիրէ, մանաւանդ յերեսաց Քրդաց. բայց որ ծանօթ և զինեալ ուղեցուցիւ շրջագայի, նմա չի երկիւղ և ոչ մի. քանզի և խաշնարածք բազում անդամ չպակասեն անդ, և գուրց չէ համարձակելի զինելոց և անձանց աւելի քան երկուց ընդդէմ ելանէ: Այլ այսու ամենայնին ոչ անխորհրդաբար որ ինչ գործէ եթէ զգոյշ լիցի ձիոյն և կարասեացն յագանելն ուրեք, զի 'ի նոսին առաւել ագահեն աւազակարարոց Քորդգ:

Վերջ տուեալ տեղադրութեան քաղաքին Անուոյ և որ անընդմիջաբար զնուանն էին արտաքոյ պարսպին, անցանեմք յարեւելս նորա 'ի նմին դաւառին Շիւակաց:

ՀՈՌՈՄՄՈՍԻ ՎԱՆԻ, ԱՅԺՄ ԽՕՇԱՎԱՆԻ


Ցիեղերահուակ մենաստանն Հոռոմոսի ժամաւ հեռի յԱնուոյ յարեւելս նորա կաւուցեալ է 'ի վերայ երկայնաձև ըլրի, որ իբրու ցամաքակզի ձեւալ է յարեւելից յարեւուսու, 'ի հարաւոյ նորա անցանէ Ախուրեան գետ ընդ ձորամէնն խորանգունդ, որպէս առ Մնւով, և շընան առեւալ զարեւմոիւ նորա անցեալ դրանոյ 'ի կողմն Անուոյ: Իսկ 'ի հիւսիսոյ պատանի ըլուրն այլով գաշտավլոյր ձորամիջով, զորմէ զինի: Զինութենէ նորա և այլաստարաւ անուանակոչութենէն չպակասեն յիշաստակարանք առ մատենագիրս մեր Աստիկն և Վարդան և կերպակոս: Ի տասներորդ գարուն հիմնարկեալ մենաստանիս 'ի ձեռն Յոհաննու ուրումն որ պատույն աստիճանաւն անծանօթ եղեալ՝ բարեպաշտութեանն մա-

¹ Ծառամարանք են այդոքի ցորենոյ. որպէս բազի քարամբը շրջապատեալ և զամանս առանց ցայտար պահն ստիրութիւնդ յամենայն զիւ չըրէս Ծիրակաց. զի ժողովուն ի գետոնի նեղաւան և բերան և լայնափոր ի ձեւ բախաց, զունան վարկարա բազի ապահն յարդիւ. և քար 'ի բերան եղեալ ծերեն, և անեղծ պահն ցորեանն 'ի նմա:

սամբէ անուանի գոտաւ՝ ՚ի ժամանակին, ծանօթութիւնդ այդպիսի աւանդութեամբ եհաս առ մեղ՝ ՚ի ձեռն մատենադրացդ զոր յիշեցաք. սակայն յառաջնոյ արձանագրէն՝ յորում Յոհաննու թագաւորին սեփականի, թուի ինձ՝ ՚ի բանից անտի նորին արձանագրի մենաստանին՝ շինեալ յաւաղադոյն՝ ՚ի տասներորդ դարուն, յետ այնորիկ զեկեղեցին շինեաց Յոհաննէս թագաւոր որ էր՝ ՚ի սկիզբն մետաստաներորդ դարու։ Արդ որպէս և է, հիմն արկեալ մենաստանիս յանուն սրբոյն Յոհաննու, որպէս տեսցի ստորեւ ՚ի խոռոշ արձանագրացն, սեփականեցաւ նըմին և անուն այլ՝ Հոռոմասի. իբր զի ընդ տւարտիվ շինուածոյն կամ փոքր մի զեկնի կրօնաւորաց ոմանց ՚ի Հայոց յերկրէն Հոռոմոյ փախուցեալ ՚ի պատճառու հալածանացն Յունաց, եկեալ բնակեն աստ. և անտի այսր մնականուանեալ կոչ չեցաւ Հոռոմոփ վանք։ ի վաղեմի շինուածոյ մենաստանիս անկործան կան ցայսօր, առաջն՝ եկեղեցին, երկրորդ՝ տապանաստունն և առ նովաւ փոքր մատունն և կամարակապ տեղին, և երրորդ՝ նշխարաստունն ։ Արևելեան որմ եկեղեցւոյն սահման է վանացն յայնմ կողմանէ, և երկուստեք նորա չափաւոր միջոցաւ պարսպ ածեալ ամրաշէն ՚ի սրբաւաշ դեղնագոյն քարանց, յայնմ կողմանէ ՚ի հարաց և յայսմ կողմանէ ՚ի հիւսիսոյ, յորում է և արտաքին դուռն վանաց, սահմանի յարեւմտից կուսէ երկայն և հոյակապ իջելանիւ, այն է քերշանսարաց ասացեալն ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ. Յարտաքին դրանէն էն սրման դուռն վանացն, և յորմն անդ. է ներքին և բուն դուռն մենաստանին. որպէս զի արևելեան մասն յանջրպետէ այտի ներքին և բուն սահման մենաստանին է, և արևմտեանն մինչեւ յիջելանն՝ գեղջեց տունք էին, արդառ. հասարակ քայլայեալք յետ գաղթելց նոցա առ Ռուսս. Ցեղոցք արդ մի առ մի զարհեստ ճարտարապետութեան մեծագործ շինուածոյ նոցա :

ԵԿԵՂԵՑԻՆ. — Արտաքին տեսկը եկեղեցւոյն չորիսք սահմանի կաթողիկէիք. իսկ ձև նորա որպէս ճշգրիտ երևի ՚ի պատկերիդ յերկուս բաժանեալ է, նախ դաւիթ կամ որպէս առ նախնեօք կոչէն՝ ժամաստուն, և ապա տաճար, միջնադրամը հաղորդեալ միմեանց, և յիրերաց ոչ շատ տարբերեալ մեծութեամբ։ Դաւիթն սիւնազարդ է և հոյակապ յոյժ. երկուստան ՚ի սեանցն առ որմովք կամ շուրջանակի, և չորս ևս այլ՝ ՚ի միջավայրին, յորոց վերայ ամրարձեալ կաթողիկէն առաջին որ և զանգակատուն է սիւնազարդ շուրջանակի. Որմակամարդ միջն չորից սեանցն ուղղարկերձ ամբարձեալ նախ, ապա կողմանքն չորեքին առիրեարտ շեղեալ՝ Բրդաձեւ աւարտին ՚ի ծայրին՝ ուր և հիմն կաթողիկէին սկսանի. Կողմանք բրդաձեիդ ՚ի մեծամեծ միակատր քարանց են, ազգի ազգի դրամագործ քանդակեալ իւրաքանչիւր. Միակատր են ամենայն սիւնքն և բոլորչ. թէ պէտ և ոչ երկայնք, սակայն վերնախարսխօք իւրեանց և ներքնախարսխօքն՝ ու մի ինչ թերաթիւն ածեն վերմութեան շինուածոյն. Ամենայն սիւնք ՚ի վերնախարսխացն կամարաւ հաղորդեալք առ միմեանս ՚ի քառից կողմանց ևս, յարկ իւրաքանչիւր միջոցաց բաց ՚ի միջավայրէն յորոց վերայ է զանգակատունն՝ զայս օրինակ ճարտարապետեալ են. չորեքին կողմանք իւրաքանչիւր միջոցաց սեանցն փոքր մի աղեղնաձեւ մերձեցեալ են առ միմեանս, միջն վայրին կամ թէ ասել երդրուկն լայնաձիղք՝ տափարակք իրրե զառաստաղաց են՝ մեծամեծ քառա-

կուսի քարինս ունելով շուրջն առ շուրջն հպեցուցեալ, որ ամեննևին անխախտ կան ցայսօր։ Տաճարն անսփառ է և 'ի վերայ կամարագօտեաց չորեցուն կողմանցն



ոյլ գոտի ածեալ մանեկաձև՝ խարիսխ կամ հիմն եղեալ է մեծի կաթողիկէին, որոյ լուսամուտք են շուրջանակի երկայնաձեք։ Միախորան է տաճարս, մատրունս կրկին ունելով երկուստեք խորանին։ Եթէ թերութիւն մի կայցէ 'ի հոյակապ եկեղեցւոց մթութիւնն է, մանաւանդ 'ի գտաթիւն։ չորս լուսամուտք միայն են նորա բոլորչի և փոքր, յորոց երկուք ևելթ լուսաւորք 'ի հիւսիսոյ, և որք 'ի հարաւոյ, անկյոյ են, զի արտաքրոյ դաւիթն կամնարձ շինուածովին հան-

չիպոյ խափանեալ ունի զյոյս նոցա։ Ի նոյն կողմն է և դուռն փոքրիկ նոյնպէս անկյոյ։ և լուսաւորութիւնն ամենայն 'ի նախագրանէն է յարեւմոից կուսէ, և փոքր մի 'ի զանգակատանէն։ Մթութիւնդ զոր ասացաք հասարակ է ամենայն

Հնացէն եկեղեցեաց արևելից, գուցէ առ ահաւոր և պատկառելի ցուցանելոյ զսրբութեան տեղին: Ոչ սակաւք են գերեզմանք վարդապետաց ՚ի յատակ եւ կեղեցւոյ անդիր և անծանօթ: յորոց մի է գուցէ գերեզման Ա. Սարգսի կաթողիկոսի որ աստ թաղեցաւ, որպէս վկայէ լաստիսերոցի: Բազմաթիւ են յոյժ արձանագիրք եկեղեցւոյ ներքոյ և արտաքոյ: այլ բաց յառաջնոյն այլքն առ հասարակ յիշատակարանք են հաստիթից որ ՚ի բարերարաց սեփականեալ են վանաց: մեք զամենայն միախուռն ՚ի մի ժողովեալ ըստ կարգի, զառաջնոյն քննութիւն այլոց թողցոք միարանել ընդ Ասողկայ բանիցն, թէ մեր քննութիւնա զոր ՚ի վերն արարաք՝ չիցէ բաւական յանկուցանել զմիսս հետաքնին հնասիրաց: Արդ առաջին յարձանագրաց: է վերոց աւագ դրանն յարեւմտից ՚ի ճակատ եկեղեցւոյն.

❖ ՚ի ՆԶԵ Ծուականիս հայոց ետու ես յովաննէս շահան-
շահ որդի գագկա շահանշահի զիմ այգին որ ՚ի կողը յիմ ե-
կեղեցիս ՚ի սուրբ յովաննէս զոր շինեցի ՚ի վանսս հոռովմնսի
հանդերձ ժամատամբս եւ հարիւր բեռն աղ յամենայն ամի
ազատ յամենայն չարէ ՚ի հայրապետութեան ան պետրոսի եւ
յառաջնորդութեան ուխտիս հաւը յովաննիսի արդ եթէ ոք
զինի մեր հակառ կա այսմ գրոյս եւ իմ պարգեւացս պարտա-
կան լիցի մեղաց իմոց առաջի այ եւ յժը հայրապետացն որ
՚ի նիկիս նզովեալ եղիցի ՚ի կեանս եւ ՚ի մահ իսկ որ հաստա-
տուն պահեն զգիր արձանի ընծայիցս աւրհնեսցին ՚ի քէ: •
Յաշմէ ճակատուն:

❖ շնորհիւն քէ ես հեծուալ գրիգոր եւ սմբատ եւ իշ-
խանս հաստատեցաք ՚ի մեր սեփհական ուխտս որ ոչ պատրոն
եւ ոչ չորտ ՚ի վանքս աղունձ ազան եթէ ոք զգիրս զայս
պատրոն կամ հայր լուծանէ նզովի յայ և յամենայն սրբոց:

՚ի ԾՎ ՈՂՋ անուամբն այ եւ շահնշահի ողորմութե՞ն
ես • • անագովլէս որդի սմբատա ետու ՚ի գրասպարի զգիշ-
կոյն տունն իւր հողովին ոնց գիշուկն ունեցեալ է հոռոմի
վանիցս ո՞ր յովանիսի հայրենիք վ՛՛ իմ հաւը հոգոյն սմբատա
զոր յառաջ միաբան էին լեալ ազատ ՚ի կ • • Ծաէ եւ յա-
մէն չարէ ոչ իմ եղբաւը ոչ իմ որդոյն ոչ ինչ հաշիւ չկայ

իշխանութիւն ո՞ր յովանիսի սպասաւորքս ունին յառաջնորդութեան տր բարսզի որդո ամիր երկաթա փոխարէն հատուցին միաբանքս զնր գրիգորի շաբաթն աւրն յամենայն եկեղեցիս պատարագ առնել իմ հաւըն սմբատա ով զայս գիրս խափանէ նզովի յայ եւ յժը հայրապետացն որք հաստուն պահեն աւրհնին յայ եւ յամենայն որբոց ամեն +
Յահեկէ ճակատուն .

ՈՉ շնորհիւն քի ես ամլանս որդի շերանկանն եւ զիւգակից իմ ասուշիս տուաք զմեր գանձագին հայրենիքն զգոգեցն զկէս դանդն իւր հողովն եւ ջրովն 'ի ո՞ր յովաննէս յառաջնորդութեանս տր բարսզի արհիեպիսկոպոսի որդւո ամիր երկաթա եւ սպասաւորք սորա փոխարէնս հատուցի մեզ 'ի տարին : Եւ պատարագ կատարել զը ինձ ամլանիս եւ բասուշահին եթէ 'ի մերոց կամ յաւարաց զշիշատակս մեր խափանէ նզովի յայ հաստատ պահողքն աւրհնին 'ի քէ .

'ի սոյն ամի ես խոսրով որդի վարհմա լաւուցո եւ զիւգակից իմ շուշիկ տուաք զմեր դանձագին հայրենիքն զքարհասին դանենին իւր հողովն եւ ջրովն 'ի ո՞ր յովաննէս եւ հատուցին մեզ 'ի տարին : Եւ պատարագ : Եւ ինձ եւ : Եւ շուշկան եւ : Եւ վարհմա եթէ ոք զարձանս մեր խափանէ նզովի յայ կատարողքն աւրհնին 'ի քէ .

'ի սոյն ամի ես կազերս որդի սուկատին եւ մայր իմ մամիկս տուաք զմեր երկու առւնն 'ի ո՞ր յովաննէս եւ առաք պատարագ 'ի տարին բաւըն անձ եւ մին իմ մաւըն կատարիչքն աւրհնին 'ի քէ :

Ես շուշիկս զիւգակից խոսրովու ետու զիմ աներն 'ի ո՞ր յովաննէս եւ առի ինձ պատարագ 'ի տարին աւր մին կատարիչքն աւրհնին 'ի քէ .

Ես բարդողլիմէսս արեղա փարբեցի ետու զիմ գանձագին այդին որ 'ի փարբի է 'ի վանացս'ի հիւրատունս եւ նոքա հատուց ինձ պատարագ 'ի տարին աւը • • •

կամաւն այ ես քոթիթ ճոնս եւ կենակից իմ շահմամն տուաք զուի դանկն իւր հողովն եւ ջրովն ոնց բնական լեալ է 'ի նը յովաննէս եւ ե • • • շինած տներս 'ի նը յովաննէս եւ սպասաւորք սորա հատուցին մեզ 'ի տարին է պատարագ մին ինձ քոթիթին ք շահմամին մին վարդանա է սար էթէ ոք 'ի մերոց կամ յաւտարաց զդիրս մեր խափանէ ելցէ 'ի կենացն այ կատարիչքն աւըհնին 'ի քե՞.

Ես իգնատիսս որդի աքեղին եւ կենակից իմ մամեր տուաք զմեր հայրենիք կէս դանկն 'ի մարաց մարդի 'ի նը յովաննէս եւ սոքա ետուն մեզ պատարագ 'ի տարին է աւը • ա • ինձ եւ • ա • մամերոյն թէ 'ի մերոց կամ այլ ոք զդիրս մեր խափանէ նզովի յայ •

Ի հարաւոյ եկեղեցւոյն արտաքուստ 'ի բարձու .

'ի ՈՒԳ : Թուիս հայոց 'ի հայրապետութեան նահանգիս մերում ան բարտղի ես նուաստս պետրոս երէց եւ իմ եղբաւորդիքս զազատ յուսիկս եւ սիմեոն տուաք զմեր հայրենի այգին որ 'ի փարբի որ կոչի խանիկշտէ 'ի նը եկեղեցիքս հոռոմոսի վանացս 'ի յառաջնորդութեան խաչատրոյ եւ խընդրեմք 'ի սպասաւորաց նըցս : է : աւը պատարագել զքս յամնայն ամի զհոգւոյն գալստեանն զշաբաթն եւ • • • նիախ մի անուն • • • եւ մի աւը իրիցակնոջն ու • • 'ի մերոց կամ յաւտարաց • • •

շնորհիւն քե՞ ես գրիտոր որդի բախտիարին ետու ընձա 'ի նը յովաննէս : ք : տուն եւ 'ի վերեւն : է : կողպակ զոր իմ հալալ արդեամք շինել եմ յիշատակ ինձ եւ զաւակի իմու աւաք խաթունին եւ սպասաւորքս փոխարէն հատուցին յա-

մենայն ամի : Ի՞ւ աւր պատարագ : Ան : ինձ եւ : Ե՞ւ աւաք իսա-
թունին .

Ի հիւսիսոյ եկեղեցւոյն արտապրուստ .

՚ի ՈԽԾ թւիս ես հայր միմիթար սատարութեամբ սարդսի
կրաւնաւորի եւ կամակցութեամբ նը միաբանացս զականց
ջուլն զոր մեր հին թագաւորացն կարի յոյժ ջանացեալ եւ
ոչ ժամանեցին բերել այ կամաւքն մեծ ծախիւք եւ աշխա-
տութեամբ ածաք զջուրս 'ի հոռոմոսի վանքս եւ հաստատե-
ցաք յամենայն ամի պատարագել զքն յանուն աշխատաւորաց
ջրիս 'ի տաւնի տապանակին գե աւր արդ եթէ ոք 'ի մեծաց
կամ 'ի փոքունց հակառակ կա ջրիս կամ գրիս զաւձին զկայե-
նին զխաչահանուացն զանէծմն առցէ եւ հայր որ զատ 'ի վա-
նացս անդաստանացս այլ ուրեք ջուր տա ընդ կապանաւք է
եղեւ այս 'ի հայրապետութեան ան բարսղի եւ 'ի տէրութեան
վանացս քնասէր պատրոնացս գրիգոր հեծպին եւ սմագատա
եւ եղբարց իւրեանց և 'ի տէրութեան քաղաքիս եւ բոլոր
երկրիս մեծ հայոց քի մեծ զաւրականացս զաքարէի եւ իւա-
նէի որոց հովանի լիցի նը երրորդութիւն .

՚ի ՈԾԵ թւիս ես զաքարիայ շահանշահ որդի սարդսի զաւ-
րապետ հայոց եւ վրաց քակեցի զջաղացն որ յականս հակա-
ռակ ջրիս շինած էր եւ վերստին հաստատեցի զջուրս 'ի վանքս
հոռոմոսի վանս արեւշտառութեան ինձ եւ եղբար իմոյ իւա-
նէի եւ յիշատակ ծնաւղաց մերոց արդ եթէ ոք հակառակ
կայ ջրիս եւ յափշտակել ջանա ՚ի վանացս եւ կամ գարձեալ
շնէ զջաղացն զաւձին զկայենին զյուդային զխաչահանացն
զանէծմն առցէ եւ մի գտցէ մասն եւ ողորմութիւն 'ի քէ
այ հրամանակատարքն աւրհնեսցին 'ի նը երրորդութենէն .

Ես սարդիս կրաւնաւոր գնեցի հող 'ի փարպի եւ հայր մը-
խիթար միանաւքս այդի արկին եւ ՚ի խանիկաշի մեծ այդին

բոլորեցաւ պատարագի քն՝ ի տաւնի քառասնիցն է + ա սարդ-
ոի ա վարդանա կատարիչ գրիս աւրհնին յայ +
զյուշէս յիշեա 'ի ող.

Ես խէտէնեկս որդի ալուզի եւ ամուսին իմ մարջան տուաք
'ի ու ուխտս զթէզանո շամըն որ գեան ՚ի մէջն կու անցանէ
որ իշխանն մեզ էր տուել տօք բարսեղ եւ այլ եղբարքս սահ-
մանեցին զտաւն նր կարապետին բոլոր յեկեղեցիքս պատա-
րագել զքն որչափ մեք կենդանի ենք իշխանին եւ խորիշահի
կատարեն եւ յետ ելից մերոց 'ի մեր յանուն կատարեն 'ի
տաւնի նաւասարդի էթէ ոք զմեր նուէրքս 'ի նր ուխտէս
հանէ եւ կամ զժամն խափանէ դատի յայ կատարիչք գրիս
աւրհնին 'ի քէ : ամէն : ՈՂԴ

ԹՎ ԶԻԲ + կամաւն այ ես բլ հասան հեքիմ որդի զաքա-
րիափ հեքմին ապաւինեցա 'ի որ յովաննէս ետու ընծա յա-
պըրնուց ձորին սաղնդելէր իմ հայրենս շինեցի դանևին ջա-
զաց ետու նր յուխտս փոխաբէն հատուցին եւ աւր պատա-
րագ 'ի տաւնի զաքարիափ է զաքարի ա շուշկան ա ջալալին
ա իմ պապին բլ հասնա : յետ ելից ինձ առնեն .

Ի դամթին կամ 'ի ժամատանն յորմունս շուրջանակի ,
դրէս 'ի կամարան և 'ի վերնախարիխասն .

՚ի թւ ՈԽԴ յառաջին ամի կաթողիկոսութեան (կաթոլկի-
քառդ կրոլ լուալ էր) ան բարազի և 'ի տէրութեան վանացս
գրիգորոյ եւ սմալատա եւ եղբարց իւրեանց որոց աւգնական
լիցի քն ած + շնորհիւն այ ես նուաստ հայրս պետոս որ ուխ-
տիւս հաստատեցաք եթէ ոք 'ի որ միաբանացս փոխի 'ի քն
պատարագ մատուցուք հաւըն դ ին եւ ամենայն եղբայր մի
աւր պատարագ : եւ որ չկարէ ժ կանոն ազօնք արասցէ ե-
թէ ոք յայս կարգելոցս պակասեցուցէ խողձի եւ մեզայ
պարտական է առաջի այ : աշխարհական հաբեղայի ը լո .

՚ի Ո՞Շ թւիս ՚ի տէրութեան երկրիս զաքարիայի ես տիգրան
ծառա այ եւ հաւատարիմ իմ պարոնին զաքարիաի միաբանե-
ցա ար ուխտիս եւ ետու զիմ զջաղացն որ ՚ի կորդու շինեալ
էի ՚ի դլիձորին հմասկից է ներքի գեհն գունիձանց յիշատակ
ինձ եւ ծնողաց իմոց եւ յանուն իմ պատարագի քմ : Ժը : ՚ի
տաւնի ար մարգարէին երեմիաի անխափան մինչեւ ՚ի ծագումն
որդոյն այ կատարիչք գրոյս աւրհնեսցին յայ .

Ո՞Շ կամաւն այ ես խաչեղբայրս եւ իմ որդիս աւետիսս
միաբանեցաք ար ուխտիս եւ տուաք զմեր հայրենիքն զմարանց
մարգիկն ՚ի վանքս սպասաւոքք սորա կատարեն ՚ի տարին : Դ:
աւր ժամ : Ե : ինձ : Ե : աւետ : ա : սիստին : ա : եղբարց + + +

՚ի Ո՞Շ թւիս շնորհիւն այ ես գրիգոր որդի հասանայ որ
դւոյ իշխանին ետու զիմ գանձագին գեւզն զերգս ՚ի մեր
սեպհական ուխտս ՚ի տիեզերահռչակ վանքս վասն արեւշա-
տութեան որդւոյ իմոյ ամիր հասանա եւ վասն յիշատակի
հոգւոյ իմոյ եւ ամուսնոյ իմոյ խաթունին յառաջնորդու-
թեան միսիթարայ պարտական են սպասաւոքք հոռոմոսի վա-
նացս մինչ ՚ի գալուստն քի յամենայն ամի : ա : Ե : պատա-
րագ առնել ինձ գրիգորոյ եւ ՚ի ամուսնոյ իմոյ խաթունին
մարդ մահկանացու որ զմեր յիշատակս խափանէ մեղաց մե-
րոց պարտական է առաջի սոսկալի բեմին քի կատարիչք գրե-
լոցս աւրհնեսցին ՚ի քէ .

շնորհիւն այ ես տը գրիգոր որդի ապուղամրի արհեալիս
կոպոս մայրաքաղաքին անո ետու ՚ի ար յովանէս ընծա զիւր
նեղչեցն զակնաց եւ զշավթակ եւ զաղբնագեղի զժողովը-
նութիւնն յառաջնորդութեան անդրէաս վարդապետին միա-
սիր եւ սպասաւոքք սորա առնեն ՚ի տարին Ե ժամ՝ մամուզ
որ հաստատուն պահէ աւրհնեսցի ՚ի տէ իսկ հակառակն ո-
րոշեսցի յայ ամէն

թւ ՈԿԶ ես խովանդ ամիր սուլտանս վասն իմ արեւոյս
եւ իմ որդեացն ետու վանացս մարդ յաստեղանի յայնկոյս
գետոյն :: ես սուլըհաւս վասն իմ հոգւոյս ետու զջարպկանց
մարդն յարվաշ եւ ես թաղեցա 'ի տեղս յամենայն ամի պա-
տարագ տացեն ինձ դ:: ես սմբատ ետու զմարանց մարդի ըզ-
կէսն եւ ես թաղեցա 'ի վանքս ՚ի տարին պատարագ ինձ ժ::
ես յոհաննէս թաղէոսի որդի ետու զջաղացն ՚ի գլիճորին
զմլիլի ակն եւ ես թաղեցա 'ի վանքս ինդրեմ պատարագեւ
զքտ 'ի տաւնի նր գրիգորի ժե:

կամաւ մարդասիրին այ ես վարդաճիժ վարդեանց ապա-
ւինեցա 'ի նր ուխտս ետու զիմ դանձագին կուզպակն եւ ՚ի
ներքեւն տակառքի յանի 'ի վերի փողոցին քաննեկից է տիգ-
րանա յաւաշնորդութեան հաւը գրիգորիսի սրբասիրի պա-
տարագեացի քն 'ի տարին դ աւը զըն ինձ եւ Շ զիւգակցին
իմո տիկնոջն կատարիչքն աւրհնեալ եղիցին ՚ի քէ ՚ի ՈԿէ
թւ . զեղբայրոսս յիշեցէք ՚ի քն

՚ի թւ ՈՀԵ Ա կամաւ ամենակալին այ այս մեր գիր յիշա-
տակի է հեծուպ գրիգորոյ որդո հասանա եւ եղբայրորդեաց
իմոց եւ իշխանիս որդո քրդին եւ եղբայրորդեաց իմոց տե-
րանց նր ուխտիս վանացս հոռոմոսի որ հաստատեցաք ար-
ձանագրուլ պատրոն ովլ լինի այս տեղոյս 'ի յարանց կամ 'ի
կանանց ովլ կաշառաւք հայր դնէ այնպիսին նզովս առցէ ըզ-
յուղային զածավաճառին եւ զկաենին զեղբայրասպանին եւ
հայր և այլ գործաւորք որ կաշառք տան յայտնի կամ 'ի ծա-
ծուկ յերկնաւոր հաւըէն եւ յժը հայրապետացն եւ յամե-
նայն սրբոց անիծեալ եղիցի յոգի և 'ի մարմին եւ հայր որ 'ի
վանիցս հաց ծախէ կամ 'ի վանիցս 'ի բացս խորէ նզովեալ
եղիցի մահով եւ կենաւք ովլ հակառակ կայ այս բանիս ի պատ-
րոնաց կամ 'ի միաբանիցս կամ 'ի ջնջել ջանա զայս գիրս եւ
ինքն ջնջեացի 'ի դպրութենէ կենացն կատարիչքն աւրհնեալ

եղլցին յայ ամէն, արդ էթէ մէծ եւ էթէ փոքր կարծիս
առնու թէ հայր կամ այլ գործաւոր կաշառք է տվել եւ
վրէժինութիր ըլինի վերագրելոցս նզովիցս տէր է ամէն:
զիսոցադեղ գրիչ յիշեա 'ի տր.

Ո՞ՇԱ ՀՆՈՐՀԻՒՆ քի ես վասակ որդի դաւթի թուն կիւրի-
կէի արքայի տէր նորբերդի խոստովանող քի միաբանեցա որ
ուխտիս եւ ետու 'ի որ յովանէս ընծայ զիմ գանձադին ձի 678
թահանքն որ 'ի վանացս գնեցի վճռամբ եւ ամենայն ամբու-
թեամբ յառաջնորդութեան ան բարսղի որդւոյ ամիր երկա-
թայ եւ փոխարէն ինձ հատուցին զտաւն սրբոց վարդանանց
յամէն ամի բոլոր յեկեղեցիսա զպատարագն որչափ ես կեն-
դանի եմ վարհամայ եւ թամարին առնեն եւ յետ վախճանին
իմոյ ինձ արդ կատարիչք գրիս աւրհնին 'ի քի եւ հակառակն
որոշի եւ զանեծս կայենի եւ զյուդայի եւ զնեովինն ժառան-
է մարդ ո ոք եւ իցէ եւ մի լիցի թողութի յաւիտեան ամէն.

Թւ ՈՉԳ ՀՆՈՐՀԻՒՆ քի ես զմրուխտ խաթունս աղախին 688
քի յուսալով յողորմութիւնն այ ետու 'ի որ ուխտս 'ի վանքս
հոռոմոսի 'ի որ յովանէս ակն 'ի մին ջաղաց բոլոր 'ի կարմն-
ին ձորին որ արելեանց կոչի զոր այրն իմ ածասէրն սմբատ
իւր կենդանութեանն ինձ հայրենիք էր տուեալ ես յիմ
կենդանութեանս որ ուխտիս հայրենիք հաստատեցի յառաջ-
որդութեան ան բարսղի որդւոյ երկաթայ եւ սպասաւորք
ու ուխտիս փոխարէն հատուցին մեզ յամենայն ամի պատա-
ռադել զքն խե աւր ժե ։ ինձ խաթունիս ժե ։ առն իմոյ
սմբատայ ժե ։ աւր մաւրն խորիշահի եւ ժե իւր հաւրն քըր-
ին արդ եթէ ոք 'ի մեծամեծաց կամ 'ի փոքրունց զմերնուէրս
հանէ 'ի որ ուխտէս կամ ծախելով կամ գրաւական դնելով
ամ զմերս ամն պակասեցուցանեն ։ յժը հայրապետայն նզո-
ւալ եղիցի մահով եւ կենաւք իսկ ոք հաստատուն պահեն
ու հնին յայ ամէն.

ԱՂՅ կամաւ բարերարին այ ՚ի թագաւորութեանս հայոց
եւ վրաց դաւթի եւ ՚ի սպասալարութեան շահնշահի որդո-
մեծին զաքարի եւ յառաջնորդութեան ան բարսղի ազքեպիս-
կոպոսի որդո ամիր երկաթա ես աշոտ գոեղեցի որդի գեաւր-
դէ թոռն աշոտո միաբանեցա ՚նր յովանիսի ՚ի նեղ եւ ՚ի չար-
ժամանակիս յետ կործանման տաթարին մինչ էր վանքս ՚ի
նեղութեան ետու զամենագոլ աւետարան եւ : ՚ի եղն : ՚ի
կով : ՚ի էշ : ՚ի : ձի եւ այլ զինչ ած պատրաստէ ես տը բար-
սեղ եւ սարգիս վարդապետս եւ այլ եղբարքս ընդալաք զնա-
իրը եւ զմի ՚ի պատրոնաց մերոց եւ փոխարէն հատուցաք յա-
մէն ամի զինի նոր կիրակէին աւը պատարագեալ զքն յա-
նուն աշոտո որչափ կենդանի է իւր ծնողացն յետ ելից յաշ-
խարհէս աշոտո կատարենք որ հաստատուն պահնեն աւը հնին
յայ եւ որք խափանեն զյուդափ առցէ եւ զկաէնի յժը հայ-
րապետացն որոշեալ եղիցի մահովն եւ կենաւք + ես կիրա-
հետ իմ պատրոնին աշոտո միաբանեցա ՚նր ուխտիս յանուն իմ
պատարագի քն ՚ի տարին աւը մի +

՚ի թ. • ԱՂՅ կամաւն այ ես աւէտիս վարդապետ առաջ-
նորդ ՚նր ուխտին սանահնին ազգաւ ՚ի մայրաքաղաքէս անու-
միաբանեցայ ՚նր ուխտիս հոռոմոսի վանաց ՚նր յովանիսի եւ
ետու ընձա յառաջնորդութեան ան բարսղի արհէպիսկոպո-
սի որդոյ ամիր երկաթա փոխարէն հատուցին ինձ տը բար-
սեղ եւ այլ միաբանքս կատարեն ՚ի տաւնի ՚նր խաչին : ՚ի
աւը ժամ : ՚ի : աւըն աւէտիս վարդապետին : ՚ո : ոտնամու-
րին կատարիչքն աւը հնին յայ ամէն +

զաւրութեամբն այ ես շերանիկս զաւրացա ՚ի զինուորու-
թեան եւ արդ անկեալ կամ ՚ի վանքս առաջի ՚նր խաչիս քի զի
ողորմեացի ինձ քու ած ետու զիմ գանձագին այդին ՚ի ծմակին
յանուն իմ պատարագի քն ՚ի տաւնի խաչգիւտին : ես մա-
րիամ զուգակից շերանկանն ետու ՚ի սուրբ յովանէս զակ-

նաց կես գանդն իմ գանձով գնած յանուն իմ պատարագի քո՞ : Ի՞ւ

շնորհիւն այ ես առիւծս որդի անձատրո միաբանեցա ար ուխտիս եւ ետու 'ի յանո բուն փողոցին զիմ գանձագին կուղ պակն որ շինեցի : ներքի գեհն քանակից է աւետեացն : ը : կուղպակի կտերն մէկն 'ի վերա կուղպակին է եւ մէկն իւրենն դիմոց որ գաղլայն է ներքեւ վասն յիշատակի զուգակցին իմո համաւորին յանուն մեր պատարագի քո՞ : ը : անձատրո : ը : վահրմա . . . ը : համաւորին կատարիչքն աւրհնեալ եղիցին յայ :

'ի յարուծ փոքր այդիք են վանացս եկեղեցպանին : քաւ շուտին լապաստակայն հանկանն առեւծկանն աղպետեանցն թուխայրեանցն խաչեղբաւրն եւ պատարագի քո՞ յանուն սոցա ՚ի խաջին ութաւրէքն ՚ի . ես արշաւիր աշտակեցի ետու վամ հայրենի . . . զուռուտն զի յիշեսցեն զիս առաջի զենը մանն քի : ես քաւշատս ետու զիմ ծաղկոցի կէմն զիսոսրո վեանցն դ : ես խաջիկ երէց միաբանեցա եւ ետու զծաղկոցին . . .

հուռվմոսին վանացս հայրենիք որ'ի քաղաքին այս են դեռդ ծեր երէց վանացս ետ հայրենի տներն մաւտ 'ի կարուց դուռն ՚ը ստեփանոս ընդդէմ եւայի արդիւնք ետ եւ առ զիւր տաւնին պատարագն դ : գիւտիկ կրաւնաւոր ետ զիւր հայրենի տունն 'ի քարափնն եւ առ զիսազիւտին պատարագն դ : վար համ ետ կուղպակ 'ի դարբնո փողոցին մաւտ 'ի ՚ը գրիդորն եւ պատարագ մատչի յանուն նորա ը : արբահամ ետ պար ՚ը քերդին առաջի հայրենիք է անուն . . . պատարագ դ : ես սապիս ետու զիմ հայրենիք տներն . . . իդաձորին դրան վանացս ասպինջականոց . . . պատարագեն զքո՞ դ :

ես սարդիս էրէց որդի պետրոսի փարպեցի ետու զիմ գան-

ձագին այգին 'ի վանս հուռոմոսին սպասաւորք սրբոց կատարեն յամեն ամի զտաւն նր սարդոմին պատարագել զքն : Ի : Ժամ : ա : ինձ և : ա : կենակցի իմոյ քէմէի .

..... ո ծեր երէց շինեցի զնը եկե ・・・ սցի 'ի նմա քն յանուն միաբա ・・・ ենի աներն եւ զձիթահանքն ・・・ պատարագեսցեն զքն ժ ・・・ ծնողացն ・・ մ եղբաւրն շնաւորին ・・・ ես շահ ・・・ իմ հայրենիք կուղպակն եւ զսրահն ・・・ եւ մտից կուսէ պատարագեսցեն զքն ・・・ եւ ա իմ եղբարցն կարապետին պարկա ・・・ նր գեորդա 'ի հարաւո կուսէ ・・・ ընկերին ・・・

1251 Ձվիս Զ կամաւն այ ես առիւծս հոգեւորեանց եւ ամուսին իմ սեղա միաբանեցաք նր յովանիսի յառաջնորդութեան տր բարսզի բերի զջուրս զոր տաթարովս խուզանեալ էր եւ տվի ընձա զհայրենի զիմ կուղպակն որ 'ի կաւշկակարոցին քանակից է վերի գեհն տիգրանա ներքին ոլքերոյն եւ զպահեզն 'ի քեղուտի նորիցիս կանգնեցի եւ փոխարէն հատուցին մեզ սպասաւորք նր ուխտիս յամէն ամի 'ի խաչին ութաւրացն : ժ բ : աւրժամ : ի բ : աւրն ինձ : ի բ : սեղափի : ի բ : իմ հաւրն սարդոմի : ի բ : իմ մաւրն հոխիսիմի : ա : նուրսթէ : ա : դրիգորոյ էթէ ոք զմեր յիշատակս խափանէ դատի յայ եւ որք հաստատ պահեն աւրհնին 'ի քէ ամէն .

1252 Զ կամաւն այ ես յովանէս մականուն ցիսիկ միաբանեցա նր ուխտիս յետ աւիրման տաթարիս վանացս ջաղանիս աւեր եւ դրաւական էր : ի բ : դահեկան ետու եւ զջաղացն թափեցի եւ այլ ետու զիմ մարտիրողոք որ իմ հալալ արդեամբք դԵրեալ էի եւ փոխարէն հատուցին սպասաւորք նր եկեղեցոյս 'ի տարին : ի բ : աւր ժամ զաղարու տաւնին : ի բ : ինձ : ա : իմ եղբաւրն խաչատրո կատարիչք դրիս աւրհնին 'ի քէ ամէն .

թ-վ ԶԲ կամաւն այ ես յոհաննէս արքառւն որդի ապրկան
եւ ամուսին իմ մուլուքան միաբանեցաք հոռոմոսի վանաց
նր յովանիսի եւ տվաք : Է : տուն իմ գանձագին որ ակուր-
նաց կոչի եւ այլ տվի յամեն տարի որչափ կենդանի եմ : Ե :
դահեկան ծիթագին եւ առաջ տարին տվի : Խ : կապիճ ցո-
րեն սերմա եւ առաջնորդ վանաց ամբ բարսեղ եւ էլ միա-
բանքս մոխարէն հատուցին ինձ յամեն ամի : Ֆ : աւր պատա-
րագ զտաւն խաչդոյտին : Շ : աւր իմ հաւրն ապրկան : Շ + իմ
մաւրն սթերհէն : Է : յովանիսի : Է : սմբատա եւ յետ ելա-
նելց յաշխարհէս : Ե : աւր ինձ էհանիսի եւ : Ե : ամուսնոյ
իմոյ մուլուքին որ զյիշատակս մեր հաստատ պահեն աւրհ-
նին յայ եւ որ խափանեն կամ զաներն ծախեն մեր մեզացն
պարտական է ամեն .

'ի թուա • ԶԵ • ես մկրտիչ արեղա որդի ռատին եւ իմհո-
գեւոր եղբայրս գրիգոր քհ շինեցաք վերստին զընծանանին
յարուճ եւ 'ի փարպին ✚ սրկաքին որը : սպասաւորս հա-
տուցին մեղ 'ի տարին : Շ : պատարագ : Է : ռատին : Է : խո-
ցագեղին եւ յետ ելից մերոց մեղ առնեն կատարիչքն աւրհ-
նին 'ի քէ .

ԶԺԵ շնորհիւն այ ես մամուկսթի դուստր վարհմա ետու
'ի նր յովաննէս 'ի մեր տապանատունս զեղանց մարդ 'ի բո-
վաչորու կարմնջէն 'ի վաղաւերու ձամբահն յանու հողէն 'ի
վաղաւիրուն : Է : աւերկովն որ 'ի տարին զ աւր պատարա-
գել զքն : ան : ինձ : ան : կուրապաղտին : ան : ասիրոցին : ան :
պրտամշին : ան : վարհամծին : ան : գոհար խաթունին կատարիչք-
ռիս աւրհնին 'ի քէ . սիմէոն գրիչ .

ԶԺԵ կամաւըն այ ես ալէքս որդի զազարա եւ ամուսին իմ
մըքսթի միաբանեցաք նր յովաննէսի եւ գնեցի կուզպակ 'ի
ծռազուկակին եւ ետու ընծա 'ի նր ուխտո եւ սպասաւորս

փոխարէն հատուցին յամէն ամի : Ճե : աւր պատարագ : Ե : աւր ինձ ալէքսիս : Ե : աւր իմ կենակցին մըքսթէն : Դ : աւետիս իրիցս : Ա : զազարա իմ հաւր : Ա : վարդէտիկնա հետ այսու • յիշատակ իմ որդին • պարոնն յոյս ունիմ 'ի քն որ • զգրեալ • կատարիչք գրոյս աւրհնին 'ի քէ •

~~139~~ ԶՃԱ ողորմութեամբն այ ես թափիկ թագոհի գուստը շարապշահին ետու 'ի հոռոմոսի վանքս զաբէլի ակն որ 'ի գվաս դռանն զօր իմ որդին հազրպէկն 'ի գարեգոյնէն գրաւկնեց : Է : Շ : Սպիտակ ։ Շ ։ Շ : Սպ ։ 'ի վերա խարճ' արար որ եղաւ ։ Ա ։ Շ ։ Սպ ։ Եւ սպասաւորք որ ուխտիս հայր յուսէ Փ սիմէնն փակակալ եւ այլ միարանքս փոխարէն հատուցին : Բ : աւր պատարագ զհոգոյն գալուստն ։ Ա : թափկանն ։ Ա : հազրպէկն կատարիչք գրիս աւրհնին 'ի քէ եւ որ խափանեն դատին 'ի քէ •

~~140~~ ԶԻԹՅ կամաւն այ ես մասքաս գուստը ասզաւին եւ թոռն տիգրանայ ետու զիմ հայրենի բաժինք գեղն զհոխքագոն 'ի որ յովանէս 'ի յիշատակ ինձ եւ որդոյ իմոյ սարգսի եւ սպասաւորքս հատուցին տարին : Ե : պատարագ : Բ : ինձ : Դ : սարգսի եթէ ոք զնուելքս մեր հանէ 'ի վանացս յժը հայրապետացն նզոված է •

Ի մէջ տաճարին 'ի վերայ որմասեանն հիւսիսոյ .

~~141~~ ԶԶԵ շնորհիւ այ եւ ողորմութեամբ ես վարհամ աթապակ պարոնաց պատրոն որդի իւանի թոռն մեծին շահըն շայի որդի ամիր սպասալար զաքարիայի վամն արեւշատութեան իմոյ հայրազատ եղբարց կենդանեաց եւ հանգուցելոյ պարոն շայինշի աղբուղին եւ արտայշիրին զազին եւ սիրեցել եղբարցս պիմին աղբուղին ավագ սարգսի իմնայի պանուսի մեծի եւ փոքրու վամն յուսուն իմոյ առ քն տվի որ յօվանէս ոխմ յիշատակ հոգոյ իմոյ զօր յառաջն մեր նախմնիքն եւ էլ պարոնայքն տվել էին եւ գրով հաստատել ես վերստին

հաստատեցի զմերանց . . .ու զգանձայ հանքն ու զջողքայ գոմն իրենց հանդայվարաւքն հողով եւ ջրով ու : ՛ կորարովն արեւելից դեհն մեծ շահըռէն մասմաթարոյ արեւմտից դեհն ջրհորն հիւսոյ դեհն խայչով փարախն հարավոյ դեհն արեւդին ջրդիրն ոչ ոք կայ հակառակ կամաւոր գրուս ոչ ավագաց ոչ յազատաց ոչ 'ի քրիստոնէից եւ ոչ յայլազգեց ով որ զմեր հրանս խաբանել ջանայ ամենայն հաւատ նալավէ է մեր մեղացն եւ մեր ազգին առաջի այ պարտական է եւ սպասաւորը ար յօվանիսի հատուցին ամէն ամի ժ աւր պատարագ : Ե : ինձ : Ե : իմ նախնեցն 'ի տէրութեան վարհամա . . . յառաջնորդութեան հաւր ստեփանոսի +

ՏԱՊԱՆԱՏՈԽՆ, ԵՒ ԵՐԿԿԱՐԳԵԱՆ ՄԱՏՐՈԽԵՅՆ . — Ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն որմակից տաճարին կայ տապանատունն . որ թէպէտ ցած է և անսխին, այլ զարմանալի հոյակապ շինուածովն, 'ի վերուստ միակամար և 'ի կողմանց սրբատաշ մեծամեծ վիմզ, պէսպէս վսեմ քանդուածովք, և յարեւելից կուսէ ծոյր 'ի ծայր փառահեղ խաչաքարիք, և բեմիւ զատուցեալ հանդերձ խորանամն : Զիք նորա դուռն յարեւմտից, զի կողմէ այդ բաց է. այլ ունէր գուռն 'ի հիւսիսյ՝ որ բանայր 'ի մէջ տաճարի եկեղեցւոյն, այլ արդ և այն որմեալ կայ : Թուական շինութեանն թէպէտ և անյայտ, այլ յանուանցն զորոց յիշատակ լինի յարձանագրին՝ որ կայ 'ի ներքին կողմն յաջմէ 'ի յայտ գայ ժամանակն . և է օրինակ զայս .

• • • 'ի հայրապէտութեան ար սարգսի եւ 'ի տէրութեան վանացս գրիգորոյ սմբատա վահրամա . . . եղբարց իւրեանց ես խութլու խաթունս դուսար ուսւզուքանա շինեցի զիմ նախնեաց . . . տապանատունս եւ զերեսին եկեղեցիս 'ի վերա սուրա աւանդեցի 'ի ար ուխտս զիմ մաւ . . . դեաւզն զշաւթա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց յառաջնորդութեան հաւր . . . եւ փոխարէն հատուցման ընկալա յամենայն շաբաթ զշարաթն աւուրն . . . ն յիմ յերեսին եկեղեցիսս իմ մաւրն ուսւզուքանա եւ իմ քոյրոջն նուսթէ . . . թլու խաթունիս անսափան կատարեսցեն եւ յամենայն ամի ժ պա . . . ա եւ առւզտէ արդ էթէ ոք զգրեալս խափանէ կամ թերի կա . . . կարտական է առաջի քի կատարիչք գրոյս աւրհնին յայ եւ

յամենայն սրբոց . . . անդրէաս վարդապետս ամենայն եղբարբէս գրե . . . առթահանէ 'ի վանացս փոխելով կամ ծախելով չունի թող . . .

Ի վերայ տապանատանդ հաւասար լսյնութեանն և ըստ կիսոյ երկայնութեանն երեք մատրոննք կան ամենափոքր, որմակից իրերաց և կաթողիկէ 'ի վերայ միջնցն . և 'ի ներքս զեղերօք յաջակողմեան խորշն՝ համառօտ յիշատակս այս.

առ աճ ողորմեա ոռուզուքանա 'ի միւսանդամ քո գալւստեանդ ամեն .

Նոյնաձեւ և հաւասարաշափ են ամեննեին և միւս երեք մատրոննքն 'ի հիւսիսոյ կողմանէ տաճարին . բայց հիմնեալ 'ի վերայ այլը մատրան՝ որ աննման է տապառանն . զի սա թէպէտ և չէ մեծատարած իրեւ զնա, այլ եկեղեցաձեւ է համդերձ դրամի յարեւմոփց . բայց առանց, զի սակաւ ամօք յառաջ ինքնին փետակ նորա և երեք մատրոնք ընդ նմա որ 'ի վերայն էին, ոեղի խորանացն եեթ կիսով կաթողիկէին մնացեալ է : Քարակյատ աւերակաց լցեալ է զլայրն . նմին իրի այլ արձանագիր չերեւ ուրեք բայց այս միայն յորմն հիւսիսոյ .

ԶԾՂԻ առ դաւթը .

Առընթեր տապանատանն 'ի նոյն կարդ. և նովին բարձրութեամբ կայ նախ մաստուռն մի փոքր, և առ նմա այլ ևս կամարաշէն տեղիք, ուրեք միջնորմով զատուցեալ յիրերաց, և այլուր այլ կամարագօտեաւ անցս ոնելով առ ընթերակացն : Առ 'ի ներքս կամարաշէն վայրացդ յարեւից կուսէ մատրանն երկուստեք սառնատանդ են, և բերանք նոցա 'ի վերուստ . և միոյն 'ի կողմանէ ևս առ զետնով, և առընթեր մտից նորա արձանագիրս .

ՔՄ աճ 'ի քո մեծի ծագման լցյսո նորոգեա զՀոգի խաթունին դստեր հեծուազ վարհամա որ մեծ յուսով եւ բազում արդեամբք վերստին նորոգեաց զեկեղեցիքս եւ զի ոչ ունելով մարմնաւոր զաւակ ստացաւ իւր ժառանդ եւ յիշատակ զնէ յովանէսի : . . .

ՆԵՐԱՌԱՏՈՒՆՆ . — Առընթեր ներքնադրան վանաց և նոյնագիր հարաւային որ մոց եկեղեցւոյն շինեալ է նշխարատունն երբեակ սենեկօք, վասահեղք և զարմանալիք . երկրորդն 'ի հարաւայ կայ առաջնոյն և երրորդն յարեւելից երկրորդին, միջնադրամիք հաղբարեալ իրերաց : Ի մտից նախադրանն 'ի փոքր դաւթէ անցը են յառաջն սենեակն, որոց չորեկին կողմանքն յերիս յերիս մաստուռ տրոհեալ են 'իրու կամարաձեւ շրջանակօք զերեսօք որմոցն, հանդերձ նրբաձեւ սինակօք կողմանց իւրաքանչիւր շրջանակացն՝ վիմափոր ձևացուցեալ 'ի քանց անտի որմոցն . և են դոքա թուով երկուստասան : Խակ միջնավայր յարկին

թէպէտ և կործանեալ՝ այլ եղերք նորա կան՝ ի տեղովն, յորս վսեմութիւն մեծ երեխ ՚ի քանդակս քարանց։ Որմակից գաւթի նորա է փոքրիկ սենեւակ մի մըթին, զոր չգիտեմ պահարան ասել թէ այլ ինչ։ Երկրորդ սենեւակն ասկաւ մի փոքր է քան զառաջնն, և ՚ի չորից կողմանց այլ և այլ կամարագօտիք ձգեալք ՚ի գետնոյ և ՚ի վեր՝ աղեղնաձե ՚ի կերպոնն կոյս, որ քառակուսի ձեռք բաց է երբու լուսանցոյց սենեկին։ Իսկ երրորդ սենեւակն վառափայլ ևս է քան զայլն։ Երկոտասան սիւնք չորս ՚ի միջավայրին և ութ առ ՚ի կողաց ՚ի վեր ունին զյարիկն, սիւն ընդ սեան կամարօք կցեալ և միջոց նոցին քարեղէն առասապատաւ ամբացեալ ըստ օրինակի ժամատան։ Միջնավայր չորից սեանցն թէ պէտ չտնի կաթողիկէ, այլ զարդարեալ է քանդակագործ քարամիքը շուրջանակի։ Յարմելից կուսէ մերգաչափ մի ՚ի վեր ՚ի գետնոյ խորանաձե փորեալ է որմն ըցնանիստ և ցած, և այլ խորան նոյնաձե և փոքր քարակերտ աղոցեալ ՚ի աեղուցն։

Զիշապատանէս այլ և այլ զրոյցք են։ և յաճախ յածի ՚ի բերանս ռամկին թէ գատասատանարան իցէ լեալ առ Անեցւովք որպէս թէ թագաւորն երկոտասան գատասաորգն ՚ի խորհուրդ մուեալ յառաջնում սենեկին, որպէս երկոտասան արտկամոնքն զրմոնքը ցոյցանեն, և ապա զգաստն վճռեալ յերկորդովում սենեկի, երդնուին յերրորդումն։ Եւ գարձեալ թէ սեղանատուն իցէ առաջնն, և երկորդն խոհանոց, և երրորդն փառաւորագոյն չգիտեմ զինչ այլ։ Իսկ որ փոքր ՚ի գրոց կարծեն զրոյցել, զառաջն կարծին պինդ կալեալ յալազս երկոց սենեկայն, զերրորդն եկեղեցի ասեն, զի սիւնաղարդ ձեռին և խորանատեղեռուն զայդ կարծիս զարթուցանէ ՚ի տեսովմն։ և զադուցեալ խորանէն ասեն, թէ զի կրօնաւորըն եկեալ ՚ի չոռամոց երկրէն յունազդի էին և խղճէին ՚ի վերայ հայ սեղանոյ պատարագել, նմին իրի այլ քարեղէն սեղանաւ խափանեն զչայոցն, զի ինքնանք անխիղճ մատիցեն ՚ի կատարումն խորհրդոյն։ Աւկայն այդ ամենայն անգիր և անստոյդ զրոյցք են։ Ի պատմութեանց թէպէտ և չունիցիմք վկայութիւն, բայց արձանագիրն որ ՚ի վերայ գրանն կայ ցայսօր՝ շատ իսկ յայտ առնե թէ զինչ էր շինուածն հոյակապ ՚ի սկզբան։ այլ թէ յետոյ և յայլ պէտս վարեցաւ, չէր հարկ նովին անստոյդ անստումն մակայնել դնա, ՚ի մուացօնս թռչեալ խապատ զատուգագոյնն։ Արդ նշխարատամբն որպէս կոչէ զայն արձանագիրն, իմանալի է ոչ միայն զի սպասք սուրբ խորհրդոյն պատրաստեալ պահէր անդ, զոր օրինակ յիշատակի նշանար և գինի հասութիւ սահմանեալ, այլ զի և պահարան էր մասանց սրբոց և այլ ևս ցանկալի սրբազան տնօթոց և ոսպասուց մեծահոչակ եկեղեցւոյն։ անշուշտ և մի ՚ի սենեկացն կարդեալ էր ՚ի մասենագարան, զի զայդ ցոյցանէ թերակատար բառն յարձանագրին, «գրաստա»։ Եւ վայել իսկ էր մենաստանին մեծի ունել նշխարատուն այդպիսի, զի և այլք ՚ի չինուածոցն ոչ հասարակ ինչ են։ և զի ընդ արքայական հովանաւորութեամբ էր պակահովացեալ՝ և մօտ թագաւորեալ քալաքին՝ և այնքան եկամուխոք բարերաց ճոխացեալ ՚ի ժամանակին։ Այլ աւան, զի հրաշակերտ շինուածդ կարգեալ ՚ի պահմ ՚ի գոմն անսանց։ Տեսցուք արդ զարձանագրութիւնն արտաքոյ և ՚ի երբու, և նախ զոր ՚ի վերայ գրանն։

ՈՀԸ Ք շնորհիւն քի ես վաչէ որդի սարգսի եւ ամուսինի
իմ մամա խաթուն գուստը ապուսերհին շինեցաք զնշլա-
րատունս ՚ի վանքս հոռոմոսի յառաջնորդութեան ան բարս-
դի որդո ամիր երկաթայ եւ տվաք ընձա գրատա • • • զմեր
գանձադին այդին ՚ի յաւշական ժամո համար եւ նշխարի եւ
այ • • տուաք եկեղեցոյս • • ասք եւ Շքոց արծաթի եւ փո-
խարէն հատուցին մեզ միաբանքս յամէն ամի յամենայն եկե-
ղեցիքս ՚ի նոր կիւրակէին պատարագել զքտ զայդին փակա-
կան հոգա եւ գինոյն իշխանութիւն ունի որ ՚ի մեր պատա-
րագի յաւրն հասարակաց սէր առնէ արդ կատարիչք գրիս
ահնին ՚ի քէ խակ եթէ ՚ի մերոց կամ յաւտար • • • կտակս մեր
խափանէ մեղաց մերոց պարտական լիցի առաջի այ • •
թահեկէ դրանն .

ԶԻԳ Ք շնորհիւն քի ես ուքանքարիմատին • • • եւ ողապ-
քան վարխատինս որդի սարգսի թուն • • • յն եւ ամուսին իմ
դապտա խաթունս սարդ • • • ին գնեցաք հոռոմի վանացս կէմ
՚ի սահման ովլէ • • • նեն ՚ի մեր հալալ ընչից եւ տվաք նվերք
՚ի նը յովանէս • • • այդին ՚ի թալին բոլոր ազատ յամենայն
հարկէ եւ շինական մի • • աղ • • • Շ : սկի արծաթի եւ ՚ի խա-
նապարին ներքի դեհն : Շ : հուճրա եւ սպաս • • • տուցին
մեզ զհոգոյն գալստեան ժամն յամենայն եկեղեց • • • սո-
տատ պահէ ահնի յայ .
թալմէ դրանն .

ՁԼԵ Ք շնորհիւն քի նահա • • • ահ • • • եւս յիշատակիո
եղբաւրն գրիգոր Ճոր միջաւրեա ՚ի քտ փոխեցա յիմ հա • • •
աշլառ ու նասիճ շուրջառ եւ տուն կա • • • փ • • պո հողն
եւ զծմակին հողն որ ՚ի ն • • • զին զիսամլինի ես առնեմ հե-
տայն որ նը ցո • • աին ի • • սպասաւոքս փոխարէն հատու-
ցին յամէն ամի Շ պատարագ ՚ի տաւնի նը գրիգորին յանուն
գրիգորո առնել կատարիչք գրոյս աւրհնին ՚ի քէ • • շինեցի
զուլէն զանկակատու • •

ի շըմապատ պատուհանի գագաթան երկրորդ սենեկի նշարատանն .

Թ-Ղ ԶԻԶ Ք կամաւն այ ես առիւծո հոգեւ + + + սարգսի
որդիս եւ կենակից իմ սէդա շինեցաք 'ի մեր հալալ արդեանց
զնշեա + + տունս 'ի մեր ժամատան դուռս յիշատակ ծնողաց
մերոց եւ ս + + ա զոր 'ի կա + + այ կարողութեամբ վարպետ
Փրերս կարնոյ քաղաքացի + .

Յերորդում սենեկին 'ի վերայ միոյ 'ի կամարացն .

կամաւն այ ես վարդան եւ ամուսին իմ աղբացս միաբա-
նեցաք որ ուխտիս եւ տվաք : բ : կով : բ : եզն եւ եառն մեզ
գերեզմանի աեղ զա եւ 'ի տարին : ն : աւր պատարագ + բ :
ինձ : բ : աղբացին որչափ կենդանի ենք մեր ծնողացն արնեն
յետե մահու մեզ + .

Առնթեր խորանատեղույ նորին սենեկի 'ի ներքոյ երից 'ի խաչարիցն .

այս խաչերս բախտիարենց է + .

Խօնզբան . — Մ'ի 'ի հոյակապ շինուածոց մենաստանիս է և իջելանն որ արտա-
քին որմովն սահման հաստանէ պարսպի վանացն յարեմտից կուսէ , անձուկ տա-
րածութեամբ ձգեալ 'ի հիւսիսայ 'ի հարաւ իրրեւ ընդ ամենայն լայնութիւնն պա-
րսպէ 'ի պարիսպ , և երկուստեր աշատարակաձև բոլորակը յորմուն՝ տեղիք վա-
սարանաց կամ մորոց , և կամնարաւ հաղորդեալ առ միմեանս կողմանքն : Այլ
այդ ամենայն խաթարեալ կիսակործան կայ արդ : Եւ ասի թէ իջեվանդ հան-
դըստատուն էր կարաւանայ եկելոց յաշխարհէն Պարսից որ 'ի Տաճկաստան ան-
ցանէին յայսկոյս Ախուրենոյ , ընդ կամուրջն՝ որ արդ կործանեալ է յետ գալը-
տեան թուսաց :

Նորոգութան . — Հոռոմոսի մենաստանս անշքացեալ յոյժ յասպատակութենէ
հինք , և ամենայն վայրքն աղտեղեալ և տղմալից՝ մագրեալ յարդարեցաւ իրը
160 ամք յառաջ 'ի ձեռն դանիէլի վարդապետի Տիգրանակերտեցոյ , որոյ ար-
ձանագիր կայ 'ի ճակատ դրան գոմից քայլայելց՝ որ 'ի հարաւոյ կուսէ ժամա-
տանն կամ գաւթի եկեղեցւոյն .

'ի ՌՃՂԴ Շուաբերութեանս հայոց նորոգեալ պայծա-
ռացաւ թագաւորաշէն մեծասքանչ հոռոմոսի վանքս ձե-
ռամբ դանիէլ վարդապետի ախտանակերտեցո եւ իշխանու-
թեամբ աեղոյս խաթուն օղլի իշխանաց իշխան մուստաֆա
պղայի + եւ զի ունէր ժամանակս ոչ սակաւ աւերի լցեալ աղ-

պով եւ հողով զոր տեսեալ վերոգրեալ դանիէլ վարդապետին եռաց ՚ի հոգի իւր ։ եւ էարկ զանձն ՚ի չարչարանս ՚ի դառն ժամանակիս որում ասկո հայոց յոյժ էին չքաւորեալք եւ իշխանութիւն տաճկաց զօրացեալք բազում տշխատութեամբ եւ ջանիւ լուսաւորեալ մաքրեաց զվանքս նը յովանէսի ՚ի տղմուտ եւ ՚ի զազիր մմէնասդացութենէ վասն յուսոյն որ առ ած արդ որ կարդացք յիշեցէք ՚ի քա.

Երկրորդ անդամ՝ նորոգեալ է յետ հարիւր ամաց յառուրս Շամբեցի Յոհաննու վարդապետին յամի ԱՄԵԼՅ: Սակայն յետ գաղթականին Հայոց ՚ի Ռուսս և դատարկելց գիւղին ՚ի բնակչաց՝ անչքացաւ և մենաստանն:

ՄԱՏՈՒԽԱ ԱՐՏՎՈՅ ՎԱԽԱ. — Արտաքոյ մենաստանիս յարկելից կուսէ քարընկեցիւ հեռի կայ մատուռն մի, և առ երի նորա ՚ի հիւսիսոյ գերեզման փառաւոր այլ կիսափուլ. երեք շիրիմք ՚ի վերայ միմեանց, և ՚ի վերայ նորա դամբարան արկղաձեւ մարդաշափ երկայնութեամի՞ց ցեալ խճով, և շրջապատ նորա պատեալ մէն մեծամեծ կարմիր քարամբք, կամարաձեւ սինազարդ խորչս ըստ չափու բարձրութեան արկեղն քանդակեալ շուրջանակի վերեսօք քարանցն. յորոց արևմտակողման մասն ևեթ մնացեալ է, և ՚ի վերայ նորա տառք.

ԵՂԲԱԿԵՐԻԿՆ ԿԱՌՈՂ ՄԱԹՁԻԱ

յորմէ երկի թէ ՚ի վերայ արկեղն խաչ կայր կանդնեալ յառաջադոյն:

ՄԻԱՅՆԱՐԱՆ. — Միգր քան զիերոգրեալ մատուռնդ յեղերս ձորոյն Ոխուրենոյ է միայնարան ճգնաւորի՝ մէջ ընդ մէջ կրկին սենեկօք, փորեալ ՚ի կակուլ վիսի ձորակողմանն, և ՚ի նեղքոյ տղմածեփ արարեալ զորմունան. ճանապարհ նորա դժուարին և երկիւղալի. այլ յիշատակ ինչ չիք զամանէ:

ՍՈՒՐԲԻ ԳԵՂԱՐԳ, ՀԱՆԴԱՏԱՐԱՆ ԹԱՂԱԿԱԽՈՐԱՑ

Տասն վայրեկնիւ հեռի ՚ի Հոռոմոսի վանաց սրբոյն Յովհաննու, ՚ի հիւսիսոյ նորա՝ ՚ի ձորագաշտի՝ զոր ՚ի վերն յիշեցաք, կառուցեալ կան կրկին գմբէթարդ եկեղեցիք մօս առ իրեարս. գեղեցկութեամբն նման միմեանց, այլ մեծութեամբ մին առաւելու փոքր մի քան զմիւսն. անուն փոքրուն անյայտ, մեծն Ա. գելոյդ կրծի. այլ երկրորդն միանդամայն նախազրեալ մենաստանին անուամբն ևս կոչ չին չոռումոսի, որպէս տեսանի յարձանագիրսն, զի իրբու մասն նորա համարին կամ թէ անսպաս նորա. և այս սովորութիւն երկի և յայլ գաւառս չայսասանեայց, աթոռանիստ մենաստանի ունել ընդ իւրեւ մօտ այլ վանս անսպատ անուամբ: Արդ որ յաւերակն Անւոյ սրտիրերան շրջի տեսանել շիրիմ մի տի-

քայլական, անդ վրիպեալ 'ի յուսոյն՝ աստ միփթարի տեսլեամբ նորա. նմին իրի և չանգտարան բագաւորաց կոչեցաւ տեղիս: Եկեղեցին անսփան են և գըմքեթնոցա ամբարձեալ 'ի վերայ չորից կողմանց կամարացն ըստ օրինակի տաճարին սրբոյն Յովինաննու զորմէ գրեցաք. որոց թէպէտ և արտաքին տեսլեամբն և շրջակայ ձորամիջ ցամագաղաշտին զուարթանան սիրտք, սակայն տեսիլ և եթ գերեզմանին Աշոտոյ մոռացուցանէ զամենայն. ոդի հայրենասէր յայլ յայլմէ լինի 'ի կրկնատեսակ կրիցն յուղմանէ ուրախութեան և ցաւոց, յորդամ առ մարդիք փափագատենչ շիրմին ձեռն 'ի ծնօտի եղեալ զպայծառ դարուց ու ըեւարն յուշ ածցէ, և զպամու անջրութիւն ամենացանկալի յիշատակին այնու րիկ, որ մի միայն է ստոյդ վկայութեամբն նշխար արքայական 'ի բազմաթիւ մահարձանաց այլոց քաղաքաց հեթանոս և հաւատացեալ ժամանակաց, որ 'ի բաղարան, որ 'ի կամախ և որ յևս հնագոյնն: Ալրդ գիրք շիրմիդ. երկու մեդրաշափ հեռի կայ յեկեղեցւց սրբոյն Գէորգայ՝ առ անկեսամբ արեւելից հարաւոյ. տափարակ վիմաց երից եղեալ 'ի վերայ միմեանց ոչ հաւատարաշափից՝ յորմէ աստիճան գործեալ է շարջանակի, և ապա շիրմի որորոցաձև եղեալ 'ի վերայ, և ըստ հարաւոյ կողին քանդակեալ

ԱՇԽԾ ԹԱԳԱԼԻՈՒՄ

Ոչ ընդ գմբեթարդ կամարաւ. հովանաւորեալ և ոչ դարձեալ սահմանաւորեալ վարկապարազի շրջապատաւ, այլ մերի և բացօթեայ: Առ մնարիք արքայական շիրմիս է և այլ շիրմիս արկղաձև և փոքր, որ թուռի կենակցին նորին թագաւորի: Խակ առ հիւսիսային կողիւք դոցա էր յառաջադպյն մասուռն գեղեցիկ, արդ ցհմունն կործանեալ: Յարեւելից եկեղեցւոյն է և այլ մասուռն, և ըստ հիւսիսոյ նորին եկեղեցի փոքր յոյժ 'ի հնդից կիսարողորակաց սահմանաւորեալ կողմանք նորա և կաթողիկեիւ. այլ առ հասարակ կործանեալ եկեղեցւոյն՝ հիմունքն եեթ երեխն: Յարձանագիրսն սրբոյն Գէորգայ յիշատակի շնորհն Գագիկ արքայ, այն է առաջնն: Խակ երկրորդի եկեղեցւոյն՝ նոյն ինքն Գագիկ համարելի է, կամ մի 'ի բաղբատանի թագաւորաց: Առաջին արձանագիրս է յոճ մաղթաղական յարեւելից կուսէ սրբոյն Գէորգայ արտաքուստ.

ով հոչակաւոր դու եւ մեծանունդ 'ի վկայս սուրբ գէորդիս աւգնեալ բարեխաւսութեամբ գագիւ շահայնշահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ 'ի քոյդ յուսակնեալ բարեխաւսութիւն զի ընկալցի զողորմութիւն 'ի քէ այ յանվախճան արքայութեանն ընդ ամենայն արդարացեալ մնացաւում ապաշաւանաւք հասանել լուսոյ փառաց որդւոյն այ 'ի վերջնում գիշերին 'ի ծագել մեծի եւ աներեկ առաւտին այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմին եւ անաչառ դատաւորին աղաչեմբ.

ի ճակատ եկեղեցւոյն յարևմտից.

✚ 'ի ՈՈԶՃ՝ զըմպիադի լինելութեան արարածոց ՄԿ
զըպիադի այ մարմնանալց եւ ՚ի ՆԶԵ ԹԱՀ ես սմպատ շա-
հանշահ որդի գագկա շահանշահի ետու զիմ գեղս զսահա-
ռունիս ՚ի մեր հանգստաբանս թագաւորաց ՚ի տիեզերահըռ-
չակ վանսս հոռոմոսի վասն մեր մեղաց թողութեան եւ գրե-
ցի ՚ի որ գորդ յամենայն տարի ՚ի քառասունք գագկա եւ ՚ի
վախճանիլն իմ Շինձ եւ Շ գագկա մինչ ՚ի գալուստ տեառն
վկայութեամբ ան պէտրոսի հայոց կաթողիկոսի եւ յառաջ-
նորդութեան որ ուխտիս հաւը սարդոսի եւ գէորդա արդ ե-
թէ յառաջնորդաց եւ ՚ի սպասաւորաց որ եկեղեցոյս յայս
յիշատակէս խափանէ մեղաց մերոց պարտական է առաջի քի
արդ թէ ոք ՚ի մեծաց կամ ՚ի փոքունց ՚ի մերոց կամյոտաբաց
հակառակ կա եւ յապշտակէ զգեղն կամարաւն եւ փնդկաւն
զըկեալ լիցի նա ՚ի քէ որպէս զուգա անդասպան որոշիցի ՚ի որ
երրորդութենէն եւ ՚ի քի որ նշանէն կապեալ եղիցի կե-
նաւք եւ մահուամբ եւ ամենայն մեղք եւ անէծք յադամա
մինչ ՚ի գալուստն քի ՚ի նմանէ խնդրեսցի հաստատուն եթէ
ան կամի .

ի մէջ եկեղեցւոյն ՚ի վերայ դրան աշակողմեան աւանդատանն . թովմաի է գ•

ան է ՚ի սմա • շնորհիւն այ ես տր անանիա շնորհիւն այ
աշարունեաց եւ ճակատոց եւ արայրարտեան գաւառի եպիմ-
կոպոս զմտաւ ածեալ հանապազ զվանս սրբոյն յոհաննու-
թէ մեծ շահ է յանձային խորհուրդն յիշել զգնացեալսն
կարգեցի ամը ըստ ամէ անխափան զզատի մեռելոց աւուրս
ամն յամենայն եկեղեցիսս յանուն առաջնորդաց հարցն որբ-
բոց եկեղեցւոյս կատարել եւ զայլ աւուրսն մինչեւ յնոր
կիւրակէն ամենայն հանդուցելոց որ են ՚ի որ ուխտիս յա-
նուն նոցա զի մեր միշտ զվիշատակո նոցա ՚ի մտի ունելով եւ

4×1616 = 6464 ամ արարչութեան ըստ Ան-
դրէասաց ժամանակագրութեան : — Նոյն և Մկ .
ողիմազիադն , 4×260 = 1040 ամ մարդեղութեան

Փրկչն . իսկ ՚ի հայոցն ՆԶԵ 485 յաւելեալ 551 =
1036 ամ Քրիստոնի , որ է ըստ հասարակ հաշուի .
ըրբիւք պակաս քան զառաջնոր :

կատարելով առաջի զենդոյն քի նոքա 'ի մեզ հայեսցին . . .
ունելով բարեխաւսութեամբ ազաւթից իւրեանց որ զկեանս
մեր խաղաղացուցեն քաղաքավա . . . 'ի հաճոյմն այ հայե-
ցեալք յելս գնացից նոցանմանողս լինել հաւատոց նոցա արդ-
ես շնորհելովն այ 'ի ժամանակս իմոյ առաջնորդութեանս
կա . . . ցիս դուք որ զկնի մեր յաջորդէք զպաշտաւնս . . . (մա-
ցեալն երիր մասամբ եղծեալ էր)

և վերայ դրան նորին եկեղեցւոյ .

❖ շնորհիւն այ ես մարտիրոս ետու զիմ կուզպակն 'ի տիե-
զերահոչակ վանս հոռոմոսի վասն հոգոյն գէորգի որդո իմո
եւ արձանագրեցի 'ի ոք գէորգ յամենայն ամի ; գ : աւր
ժամ գէորգա զվարդեւարին հինգշաբաթ ուրբաթ եւ զշա-
բաթ եւ յետ փոխելոյն իմ առ քո ինձ առնեն արդ եթէ ոք
զընծայեալս որոշէ կամ զգրեալս ոչ առնէ որոշեսցի 'ի փա-
ռացին այ .

և վերայ երկրորդի եկեղեցւոյն 'ի հարաւոյ արտաքուստ .

յանուն այ 'ի ՆԱՅ թուականիս հայոց ետու ես չուտաս
զիմ հայրենի այգին զհոռոմդեան որ 'ի մրեան 'ի հոռոմոսի
վանս 'ի հայր սոզոմոն վասն իմ ծնողաց հոգեաց որ հակա-
ռակի նզովեալ լիցի յայ կենդանոյ եւ ես հայր սոզոմոն պար-
տական իմ յիմ ժամանակս 'ի տարոջն ա իս : ունել չուտասին
ծնողացն իսկ յետ իմո ելիցն խափանել մի ոք իշխեցէ 'ի բա-
նէն այ եւ մի ոք վայրապար համարէցի զգրեալսս զի բազում
բարութիւնս շնորհէր եկեղեցո առատաձեռն .
և մէջ նորին եկեղեցւոյ 'ի հիւսխոյ .

յանուն այ 'ի ՆԿԲ թուականիս ես տը անսանիա նուտաստ
եւ յետին 'ի վերակացուս եկեղեցոյ առաջնորդ գոլով նը-
ուխտիս ոչ ըստ արժանաւորութեան իմոց կենացս կամ վա-
րուց ինչ առաքինութեան այլ 'ի ներելն այ ապաւինելով ա-
զատեցի մեծաւ ջանիւ զհարկ եւ զթաստակ առի եւ զքեղա-
րագոմն իւր ամենայն գոյիւ 'ի սուրբ ուխտս վասն ապաւինի

տեղի լինելոյ 'ի փախստեան ժամանակի եւ այլ բազում ինչ
աւգաի փայտի եւ խոտի արդ դուք նր հարք եւ եղաբարք որք
յաջորդէք զինի մեր յիշատակի արժանիս արարէք զմեզ նր
պատարագաւն եւ այլ աղաւթից հանդիսիւ եւ որք յիշէք
յիշեալ լիցէք 'ի մեծ ատենին առաջի քի եւ որք զինի ձեր
դան զձեզ յիշեցին զոր եւ իմ անխափան եմ պահեալ զա-
ռաջնոցն յիշատակն եւ տուող այդմ պարզեւի դադիկ էր
աւրհնեալ յայ եւ որդեակը իւր սըմպատ եւ աբաս եւ աշոտ
վկայութեամբ ամենայն հայոց ազատացս արդ յամենայնի
աւրհնեալ է նր երրորդութիւնն տուիչն ամենայն բարեաց
ամեն :

ԽօՏՈԽ. — Քառորդաւ հեռի 'ի Հոռոմոսի վանաց 'ի վերայ արահետ ճանա-
պարհին են կրկին աշտարակը առընթեր միմեանց քառակուսի ձեռոքք, և 'ի գա-
գամունսն բրորածն գմբէթիւ աւարտեալ. 'ի մէջ նոցա սենեակը կան, և քա-
րերէն աստիճանք անցանելոյ 'ի ստորնոյն 'ի վերլինն, և 'ի վերնոյն՝ յաշտարակէ
յաշտարակ, կամարածն քարակերտ անցիւք՝ որ արդ քայլայեալ է: Պէսպէս
զրոյցը են և զոցանէ, ոմանց ասելով եթէ զանդակատունք էին հրաւիրելոյ զա-
ռադանին 'ի խորհուրդ. յայ կարծիս են որ գնշաւրաստուն վանացն դաստաստա-
նարան ասեն. և այլոց՝ թէ զրօսարանք իցեն թագաւորին, որ նստեալ 'ի վերին
կողմն կայր 'ի զնին զինուորական զնդիցն որք մի առ մի անցանեին ընդ կամա-
րաւն: Արձանագիր կայր յարևմտից կուսէ միոյն, այլ եղծեալ խոպառ: Խօշուն
զսա կոչեն, որ զցոց նշանակէ 'ի վրացի լեզու. և աստի խօշավանք կոչեցեալ զէո-
ռոմոսի վանսն :


ՑԱՅԼՈՐ

Գլուխ այս կիսաժամու հեռի է 'ի խօշավանից յեզր Ախտորենոյ, և է ցամաքա-
կղղի. որոյ մի եղր երկայնեալ է 'ի գետն կոյս 'ի հիւսիսոյ, և պարիսպ ածեալ է
յայդմ կողմանէ ընդ ամենայն լայնութիւն ցամաքին հանդերձ դրամբ, թէպէս
կիսափուլ կայ պարիսպն. իսկ միւս երեք կողմանքն պատեալ են 'ի գետայն: Չու-
նիմասել որպիսի ինչ աերգի էր 'ի հնումն, զի դիբք նորա՞ 'ի բնութենէն օժանդա-
կեալ անմասոչելի է թշնամոյ յերից կաղմանց, սակա անհնարին ուղղահայեաց
խորութեան գետեղերն, և պարսպին ամրութիւն շատ իսկ դիմարգել էր յար-
ձակման թշնամոյն, որով իրբու յամոցի մարթ էր արահովանալ. այլ արդ ան-
բնակ է 'ի մարդկանէ: Եկեղեցին հնաշէն միջակ մեծութեամբ ըստ սովորական
ձեռոյ. կաթողիկէիւ և կրկնայրի աւանդատասմբք առ խորանաւ երկուստեք. իսկ
'ի վերայ դրանն որ է 'ի հարաւոյ՝ կայ քանդակ երկուց առիւծուց և 'ի միջի նո-
ցա նապաստակ:

ՇիրԱկ:ԱԽԱՆ կամ ԵՐԱԶԳԱՎԻՈՐՈ (Պաշ Շօրէկէլ.)

Մինչև էր ընդարձակեալ և պայծառացեալ Անի, նախագահ էր տեղիս թագաւորացն բազրաստնեաց՝ զինի բազարանայ. այժմ 'ի գեղջկական նուաստովին իշեալ, քանձեակ տաճկաբնակ տնակզբ սահմանի: Դրիւքն 'ի թիկանց կայ բարձր և ընդարձակածաւալ բլրի, որ հասանէ մինչեւ ցթիքնիզ, իսկ զառաշեաւ մինչեւ զգեան Ալսուրեան գաշտավայր է: Ի նախնի շինուածոցն յիշտասկի առ մասենագիրս բաց յապարանիցն Սմբատայ՝ եկեղեցի մեծ և հօյակապ յանուն Ամենափրկչի: Այդ եկեղեցի է անշուշտ որ ցարդ կանգուն կայ, մի 'ի

Մայր եկեղեցին Շիրակաւանայ.



Վառահեղ եկեղեցեայն գտատոին Շիրակայ, մեծատարած և բարձր, անսիւն քառակամար, յորոց վերաց ամբատնայր կաթողիկէն որ արդ կործանեալ է, մատնունս կրկին ունելով երկուստեք խորանին ըստ ձեռյ այլոց եկեղեցեաց: Զշինութիւն եկեղեցւոյն թէպէտ և առանցոյն Սմբատայ ընդայեն, յամին 897, ստկայն չիք նորա յիշատակարան. զի յետ ժամանակաց աւերեալ՝ ընդ նմին կորուսեալ է և նախկին արձանագիրն, և առա վերստին նորողեալ 'ի գնելայ, որպէս պատմէ այլ արձանագիր: Ոմանկը յարդեաց աստ 'ի Շիրակաւան համարին վինել վերևելին 'ի մենաստանս Դապեճվանք ասացեալ, որոց եկեղեցին է, ասեն, որ կայ ցարդ. քանզի մատենագիրը 'ի գտառփին Շիրակայ ասեն զայն. և յայն-յամ երևելի տեղի սա էր 'ի նմին գտատու: Այլ ինձ ոչ թուի բառական պատ-

հառդ երաշխաւորել ստուգութեան իրացն . նախ զի՞ ՚ի բանս մատենագրացդ չէր պարտ ըսկ Շիրակաց անուամբ վարել , այլ կարեսր էր յաւելու և զմի յանուանցո Երազգաւորս կամ Շիրակաւան , որպէս յայլ ՚ի նոյնպիսի բանս տեսանեմք : Երկրորդ անդամ՝ յարձանագիրսն չկը յիշատակ Դպրեվանից , թէպէտ և խանդարմոնք բառից չպակասն ՚ի նոսին : Երրորդ որ մեծն է , Դպրեվանիդ անուն յեօթներորդ դարուն հետէ յիշատակեալ է առ պատմագիրս , իսկ նախ կին շինութիւն մեծի եկեղեցւոյ Շիրակաւանաց ոչ կանխէ քան զամ 897: Այլ դքաջ քննութիւն իրացն՝ հմտադունից թողեալ յօժանդակելոյ այլ ևս նորագիւմ պատմական մատենից , մեք աստ զարձանագիրս նորա ընթերցցուք որ արտաքոյ ՚ի հարաւոյ կուսէ կան օրինակ զայս :

Յարեելեան ծայր բերդից հանդէպ աշտարակին է առաջին եկեղեցին սուրբ Գևորգ կոչեցեալ, փոքր և կիսափուլ. զոր սակաւ ամօք յասաջ նորոգեալ են տախտակամած կարկատիք, շինեալ նմին և գաւիթ: ի մէջ եկեղեցւոյն է փոքրիկ մատուռն յաջմէ խորանին, և ՚ի նմա շիրիմ որորոցաճե, ընդ որով ամիտու փեալ ասան ՚ի նշխարաց սրբոյն գեորգայ, անյիշատակ ամենեւին թէ յորմէ և երբ, և ոչ արձանագիր ինչ մնացեալ է ՚ի քարակերտ մնացուածս որմոյ եկեղեցոյն թէ գուցէ հաւաստէր զկարեւոր յիշատակութիւնն: Սակայն ՚ի յաճախութենէ ուխտաւորաց, մանաւանդ ՚ի տօնի վարագայ խաչին, և յանվիպէպ բժոշութենէ հաւատով մերձեցողացն՝ ոչ երկրայսական ինչ է. քանդի և նորոգութիւնն եկեղեցւոյն եղեալ է ըստ այսմ օրինակի: Գիւղականի ուրումն ախտիւ անդամանցածութեան հարեալ և չգտեալ ուստեօք բժշկութիւն, ձեռնատուութեամբ պայլոց գնաց յօւստ անդր. և ապաքինեալ յախտէն ՚ի տապանէն նշխարաց սրբոյն՝ ինքնին անօդնական յումեքէ ՚ի վայր իջանէ. և յօժարակամ վաճառեալ վինչ իւր նորոգէ զեկեղեցին, յանձն առեալ ծառայութեամբ անցուցանել ըդ-

կեանս իւր ՚ի տեղւո՞յն, և մինչև յօրս յայս կենդանի կայ այրն տակաւին: Յոյժ զուարճատես են դիրք եկեղեցւոյն սակա մեծի բարձրութեան վայրացն, որպէս զի աւերակ քաղաքն առհասարակ ակներեւ կայ առաջի:

Երկրորդ եկեղեցին է ՚ի կէս ճանապարհին վերելից ՚ի բերդն ՚ի տափարակ վայրի, և մեծ քան զգեսրդայն. սակայն միայն հիւսիսային որմն կայ անկործան, և թուական մի ՚ի վերայ ԶԵ. և առընթեր եկեղեցւոյն շիրիմք վաղեմք:

Երրորդ եկեղեցին փոքր է և գմբէթարդ հանդէպ քաղաքին յարմելից կուսէ ՚ի գլուխ քարածայռի միոյ, որ ՚ի հանդիպակակաց կողմանէ քարափանց գետայն երկայնեալ է ՚ի քաղաքին կոյս իրեւ ցամաքակզզի անմերձենալի գոլով, և ՚ի նմին կողմանէ խրամ անջրպետ կացեալ ՚ի միջի. է առ նովաւ և հիմունս բնակարանաց տեսանել: Զեկեղեցւոյդ աւանդութիւն է ՚ի գտաներէ թաղաւորի շենեալ վասն իւր. իրը զի նախ քան զշինութիւն նորին, քանզի անդ բնակէր, յաւուր միոյ ՚ի մեծահանդէս տօնի անագանեալ նորա անցանել ընդ կամուրջն: որոյ աւերակն կայ մինչև ցայսօր, առ ՚ի գնալ յեկեղեցի որ յայնկյս գետոյն աւարտի ժամն: յորմէ ստիփեալ շինէ զեկեղեցիդ առ բնակարանաւ խրսով:

Չորրորդ եկեղեցին քառորդաւ հեռի է արտաքրյ աւերակաց քաղաքին ՚ի հարաւ կյոյ. և սորա հիւսիսային որմն եեթ կանգուն կայ:

Հինգերորդն առ երի կայ չորրորդին, և շուրջ զնովաւ պարտէզբն յառաջա զոյն և այդիք՝ արդ արօսք են խաշնարածաց: Եր ևս մայր եկեղեցին կամ աւխու միանձանց. արտապին ձևով քառաթե է բաղմանկիւնի. և առ իւրաքանչ չիւր թեռվի գարձեալ երկուստեք այլ ևս անկիւնք. իսկ ՚ի ներքուստ կիսարուրդ են չորմէրին ևս թեքն. երկայնութիւն և ըստութիւն հաւասար թեէ ՚ի թե 47 մեղք: Չորս սիւնք են ՚ի նմա ոչ միակտուքք. կործանեալ է գմբէթն միայն և մասուռն որ արտաքուստ կից էր ընդ եկեղեցւոյն. հին խաչքարք և շիրիմք բար զում են զսովաւ: Յեկեղեցեցեայն բաղրանու զմին եեթ յիստակէ Յոհաննիք կաթողիկոս, շինեալ յԱշոտյ որդուց Շապհոյ ՚ի սպարապետէ Հայոց յաւուր Ամբատաց առաջնոյ, աքնապայծառ եկեղեցի կուլուով. որոյ շինութեան արձանագիրն էր թերեւս որ իբրու փաթոյթ մի ածեալ էր զեկեղեցեաւ շուրջանակի: Խոշորաստառ ՚ի բարձու անընդմիջարար ընդ երդիւ, խանդարեալ ուրեք ուրեք վասն ՚ի վայր հոսելոյ քարանց տեղւոյն. իսկ յայլոց արձանագրաց վերծանելիքն են սոքա. և առաջինն ՚ի ներքս եկեղեցւոյն:

Վահան քահանա գծող ՆԶԳ թուականութեանս հայոց ՚ի հայրապետութեան ան պետրոսի հայոց կաթողիկոսի թագաւորութեանն յուլանիսի շահանշահի ես հայր մարկոս որդի շապհոյ քահանաի գնեցի զմարս . . . հողն ՚ի շահանշահէ եռւ գրամ յիմ հալալ ընչից եւ արկի այգի եւ շենցի հնծան եւ գնեցի զ և զ ափնի հող ՚ի խորձան . . . ի ստւր որդո ՚ի գառնովատի եւ հողս ՚ի դարբնին նոյն տեղն :

'ի հող մի գանձէ փողի եւ հող մի սուլտանին . . . ետի եւ
մռեղին տներն բագրնի եւ . . . ց մի բագրնի եւ ջաղաց մի մրե-
նի ետու 'ի ո՞ր կաթողիկէս վասն շահանշահի հոգոյն եթէ . .
ընդիմանա այսմ գրոյս 'ի մեծաց կամ 'ի փոքունց յապշտա-
կէ կամ . . . պարտական եղիցի . . . արեանն քի եւ իմ ամե-
նայն ազգի մեղաց տէր է , յժը : Հայրապետացն նզովեալ ե-
ղիցի .

Եռլշանակի զրմովք եկեղեցւոյն արտաքուստ .

✚ ԱՅ ԵՍ ՆԵցի զխուպանս եւ միաւորեալ շինեցի
եւ էտու 'ի կաթողիկէ ունելով բարեխաւս առ քն վասն
թաւզութեան մեղաց իմոց որ դմա հակառակ կա իմ մեղացս
եւ ծնողաց իմոց պարտական լիցի եւ բաժին նորա ընդ յու-
դաի լիցի .

Ո : Կ : 'ի թիան հայոց գրեցաւ ես հայր առաքեալս որ էկի 660
իմ ազգայկանաւք 'ի տապանայտունս վերըստին նորոգեցաք 551
Վնացեալ ո՞ր ուխտս ողորմութեամբ ամիր սպասալար զա-
քարեի որ էառ զբագլան ես դաւիթ որդի շոթոկայ որ ե-
տու զապաէ խարփին սազին հողու զկարմընջևելին ներքի 1211.
ջաղացն 'ի տավընտան ո՞ր կաթողիկէ վասն ամիր սպասալար
զաքարեի հոգոյն հաւը շահըշահի հայրս վարդան եւ տրդատ
փակիալ եւ այլ միայ բանքս հաստատեցաք զաւագ խորանն
որ պատարագ կատարեն անխափան հաստատեցաւ գիրս 'ի
պարոնութս գրիգորոյ ով այս իրացս հակառակայ նզովեալ
լիցի : յժը : Հայրապետացն .

ՈՀԳ : Ես վարդս բագարանոյ ըռայիսս որ էտու զիմ գան-
ձայդին զընդիրացին այդին 'ի ո՞ր կաթողիկէս որ կատարեն
տարին երկու աւը ինձ եւ մի աւը կենակցին իմոյ թանդին + ես
խաչի որ գանձայդին արարի զպուշին եւ էտու 'ի ո՞ր կա-
թողիկէս վասն փրկութեան հոգոյ իմոյ որ տարին երկու աւը
ժամ կատարեն անխափան :

Ես խուշուշո առընջայի որ էտու զիմ այդին որ 'ի մաւա
սստ անձածին է որ յադարկեն է 'ի նը կաթողիկէս որ տա-
րին աւր մի ժամ կատարեն . Ես սարգիս եւ ստեփաննոս որ
դնեցաք շուքէրեսին ջաղացրադն եւ շինեցաք եւ տվաք 'ի նը
կաթողիկէս որ տարին երկու աւր ժամ մին սարգիսի եւ մին
ստեփաննոսի : ո հայր վարդան 'ի տրտատա եւ այլ միաբանքս
որ հաստատեցաք էթէ ոք հակառ կա կամ յապշտակէ : յժը :
հայրապետացն նզովեալ լիցի .

❖ Ես անձատուր բագրանոյ երէցս ետու զիմ առընջայ է-
դին որ 'ի գէմս էզէրին է հայր միսիթարա ձեռաւք նը կաթո-
ղիկէիս եւ սպասաւորք սորա հաստատեցին մեզ 'ի տարին
աւր մին ժամ .

❖ յայսմ ամի որ էր թիւս հայոց 'ի : ՈՉԻ : եղեւ ուխ-
տագրութիւն նը կաթողիկէիս ձեռաւմբ հաւը միսիթարա եւ
դաւթի եւ այլ միաբանութիւնցս եղել այր որ 'ի քոյ փոխի
'ի նը ուխտէս պարտական է որ ով հայր լինի իրիցոյն : Շ :
քառասունք ժամ կատարէ մատաղով եւ արեղային մին քա-
ռասուն արդ որ զգրեալս խափանեալ ջանա զվարծս յու-
դաի առցէ եւ զանայծս զկայենի ժառանգեսցէ եւ : յժը :
իցն որոշած է 'ի մահ եւ 'ի կեանք աւաղ :


'ի ՈՉԻ կամաւն այ ես գուհարշահը կողբացի
գորկանն էտու զմեր գանձադին էդին որ կունեխանց հողէլ
ել հայր միսիթարա ձեռաւք 'ի նը կաթողիկէս որ 'ի տարին :
Շ : աւր ժամ կատարեն իմ գստերն տիկեմամին արդ որ ըշ-
գրեալս չառնէ յայ նզովեալ լիցի .

ի նոյն կարդ առաջնոցն ընդ խաչաքարիւ .

'ի թուիս ՈՉԻ շնորհիւն այ ես աւտարս կողբացի որդի
յովանիսի եւ ամուսին իմ սէդայ կանգնեցաք զնը նշանս ձե-
ռամբ հայր միսիթարա եւ տվաք զմեր աղտուցն կէսն սուրբ

կաթողիկէիս որ 'ի տարին : բայց աւը ժամ կատարեն մինն ինձ
եւ միուսն յովանիսի ակն այն է որ զոկենց կոչի որ զվերա-
դրեալս խափանէ դատի 'ի քէ այ մերոյ .

Տեկոր . (այժմ Տիկոռ .)



Գիւղս այս հեռի է յԱնույ իրը չորիւք ժամաք , 'ի հարաւոյ արևմտից նորա .
Երանապատ յերից կողմանց , յարեելից ևեթ ուներով ճանապարհ արահետ . և
գետակ մի անցանէ ընդ մեջ նորա եկեալ 'ի ձորոյն Պեշրիկիսէի յարևմտակող-
ման լերինն որ 'ի թիկանց նորա : Հոյակապ է և եկեղեցի գեղջո , խակ կաթողի-
կէն որ ամբարձեալ է 'ի վերայ չորից ստուար սեանց՝ լայնանիստ է և ոչ հա-
մեմտս բարձրութեանն : Աւանդաստոնկն առ խորանան կրինայարկ են և եր-
կայնաձե ձգեալ արտաքս քան զրոն որմն եկեղեցւոյն ընդ . հիւսիս և ընդ հա-
լու : Երկայնութիւն եկեղեցւոյս 22 մեդր , և 14 $\frac{1}{2}$ լայնութիւն : Աւագ դուռն
նորա յարևմտից խցեալ է , և բաց են միւս երկոքեանն 'ի հիւսիսոյ . շարջ զեկե-
ղեցեան կարգք աստիճանաց են իրեւ հնդից զի 'ի բլբակի հիմն արկեալ է նո-

բա . թէպէտե յանփոյթ լինելց մարդկանն ընդ հողով ծածկեալ են աստիճանքդ մեծաւ մասսամբ : Չդիսեմ ոյր յերկոց անուանցն սերփականնել զտաճարս , սրբոյն Սարդսի եթէ Երրորդութեան , զի յարձանագիրսն միօրինակ յիշատակ լինի Երկոցուն ես . և ժամանակ շինողին և շինութեանն յայտնի կան ՚ի նոսա թէպէտե կարօտք հմուտ քննութեան* . և են այսպիկ . յորսց առաջինն է ՚ի վերաց բարաւորի գրանն արևմտից .

Հիմնարկեցաւ¹ տեղիս ՚ի ձեռն յոհանու կաթողիկոսի եւ յոհանու արշարունեաց եպիսկոպոսի եւ տ . . . յրոնի տեկորոյ սանայ Երիցու եւ մանանայ հազարապետի յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգիս եւ ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց եւ սրբոյ սարդսի սահակ կամնարական շինեաց զայս վկայարան :

Վերոյ քան զնա յաղեղնաձե ճակատու նորին դրանն .

՚ի ՆԾԻ թուականութեանն հայոց ✕ յանուն այ կամ եղեւ ինձ կատանիդէ հայոց թագուհի դուստր վասակա եւ ամուսնի գաղկա թողեալ եմ զտեկորոյ շարյատն վամն գաղկա շահանշահի արեւշատութեան եւ իմ որդեացն եւ վերակացուք սորա պարտական են զերանի որում թողութիւն ասեն հանապազ արդ արդ թէ ոք իշխիցէ լուծանել ՚ի ոք երրորդութենէն եւ ես աշոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ զշարկն բնովիմբ յաւիտենից եւ զթաստակն վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց եւ եղրարց եւ զաւակաց իմոց որ աւր : թ : կ : հառոց : ն : կ : գ : էր արդ եթէ ոք հակառակ գա կամ հարկիս կամ շարիատիս թողլուս յժմ

* Ասու մերսց քննութեան կառուցեալ յելս Եւ գարու , մի է ՚ի հնագոյն հեերկեցաց համարէն քրիստոնէութեան , և չնաշխարհին գտասակերաս որբազնն և հայկական ճարտարապէտութեան , ընդ որ միրացն և հնացէս հմտուք արուեանին , թէպէտ և ոչ ծանեան այսպան հին զաս :

Հիմնարկութեանն բան յարձանին , որ ՚ի չորս տարո բովանդակեր , այլ և այլ տառիւք եր քարագրեալ խոշոր և մանր իւրաքանչիւր տաղքն , և էին յազկնաձե բարաւորի գրանն . առաջնց տարին սկսեալ այսպէս :

ուրանայ եւ հոռո . . .

. . պիսկոպոսի եւ տ . . յրոնի տեկորոյ

սանայ Երիցու եւ մանանայ հազարագետի հիմնարկեցաւ տեղիս ՚ի ձեռն յոհանու հայոց կաթողիկոսի եւ յոհանու արշարունեաց յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգիս եւ ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց եւ սորոյ սարդսի սահակ կամնարական շինեաց զայս վկայարան :

Խակ բառոց և ուրանոյ և հոռո . . . յոստորեալբ ՚ի կարգէ առաջնց տաղին որպէս է ՚ի գայումփարին , նախորհթաց արձանագրին մնացորդ Երեխի , որ ՚ի վերոյ եր քան զան ՚ի ճակատ նայն գրանն . թէպէտ և ոչ միահետ ընդ վերջնոյ տաղի նորին :

իցին նզոված է երերեալ լիցի որպէս կաեան անիծեալ որպէս քանան բաժին նորա ընդ ուղախ եւ ընդ խաչահանուացն եղիցի վասն առ սարգսի շինութեան եւ վասն մեր հոգեացս ազատեցաք զազդ և հայր եւ մայր եւ որդիքս արդ մեր մեղացս եւ մեր ազդի մեղացս տէր է որ ընդդիմանա • • • • •
ի հիւսիսց կուտէ.

Ձ + ՆԻ ✕ յանուն այ ես խաւսրեւանիւշ հայոց թագուհի հաստատեալ եմ զտէկորոյ շարյեատն յեզն կայթ մի արդ մի ոք իշխեցէ լուծանել 'ի առ երրորդութենէս •

✚ 'Ի ՆԼԲ **Ձ +** յանուն այ ես գրիդորիկս ետու (այդքանդ փորագրեալ էր, իսկ որ զինի նորա տողքն նկարէնք և ջնջեակք առ հասարակ)

'Ի ՆԿԻ **Ձկ +** յանուն այ ես թաթուլս թողեալ եմ զտեկորո հարկն վասն յէվանէս թագաւորի եւ իմ որդոյն երկար արեւշատութեան արդ եթէ ոք հակառակ կա իմ մեղացս եւ իմ ազդի մեղացս պարտական է առաջի ատենին քի +

ՆՂԱ **ՁՎ** յանուն այ ես տիկաց տիկին դուստր քրդորոյ մադիստըռոսին եւ ամուսին սարգսի արեւելից վէստիս թողեալ եմ զտեկորոյ զպաշլխոտս շահանշահի արեւշատութեան եւ իմ ծնողացս հոգոյն արդ եթէ ոք հակառակ կա իմ ծնողացն մեղացն պարտական է առաջի ահեղ ատենին քի բաժին ընդ յուղախ եղիցի կատարիչ հրամանիս աւրհնեալ եղիցի • ծառայիկս յաղաւթս յիշեցէք 'ի քս +

✚ ՆԶԵ **Ձկ** հայոց 'ի թագավորութեան յիւլանիսի շահանշահի եւ հայրապետութեան ան պետրոսի հայոց վերադիսողի եւ 'ի տէրութեան սարգսի արեւելից դուկիս ես հապ + + շահիկս եւ եկեցպանս միաբան եղբայրաւքս խծկաւնից վանսն տեկորոյ ջրոյս եւ ադարակուց ուղելո զինչ առջ թագաւորուն լել է : դ : աւրս եւ : դ : գիշեր տեկու

բոյ է : գ : աւր եւ : գ : գիշեր աղբկուց հարցի . . . երս եւ գիտողս նզովուք եւ երգնլով աւլորդն այտ է եթէ ոք հակառկայ : յ : ժ : լ : հայրապետաց նզոված է բաժին ընդ յուղափեղի եւ ընդ այլ չարագործաց որ ատելի են քի 'ի գարնմէն 'ի վեր մնչեւ յաշունն հանապաղ դայր ջուրն լերինն անխափան :

Խնկօնք , (ոչխա սրբոյն Սարգսի . այժմ Պէշիլիս.)

Կիսաժամաւ հեռի 'ի Տեկորոյ յարեմոից նորա' անդք քան զյեսունն նոյնակողման , 'ի հանդիպակաց եզերս երկայնաձիգ և խորին ձորոյն 'ի վերայ այլ և այլ բարձրաբերձ քարտիանց հիմնացեալ են հնդկին եկեղեցիքս հրաշակերպ 'ի վեստն Սարգսէ 'ի սկիզբն մետասաներորդ դարուն , զոր օրինակ վկայեն Սամուել և կիրակոս : ընդ տեսիլ դոցա յիմարի հայրենասէր ոգի թէ մրգէս յանօրէն ձեռաց արդամիր այդպիսի եւնինիցն աստուածացանութեամբ , յօժարեալ է հիմնադիր լինել սոցին : Զմարթի ճշգիւղ պատմել զգեղեցկաթիւն եկեղեցեացս , որք արդարեւ զանապատի վանորեկցն բերեն վնամնութիւն , մեխնեալ զատուցեալ 'ի զիւղարնակ շինականաց և ասպահովացեալ 'ի բազմամբով ժողովրդոց վասն դժուարութեան ճանապարհին , մանաւանդ յարեմոից կողմանէ : ընդ անեղծ տեղողութիւն նոցամինչև ցօրս այս զարմանայ տեսադն . զի արդ աւելի քան ութ հարիւր ամք են յորմէ հետէ հիմն արկեալ է դոցա , և տակաւին անխախտ կան և անարսագ ներըց և արտապց , մինչև կարծել եթէ այսօր ճարտարապետին աւարտեալ զշինուածն մեխնեալ է 'ի տեղունչէն . աւազ , զի անդնակ է արդ 'ի մարդկանէ : ընդ ամենայն գաւառն Շիրակաց չկը այլ եկեղեցի անեղծ կացեալ ամենայն մասամբն քան զսոսա հանդերձ հնդկացն ևս կաթողիկէիսքն . չկը նոցահյակապ մեծութիւն , այլ գեղեցկաթիւն եեթ , զոր կրինապատիկ առաւելու պայծառափայլ գեղնութիւն քարանցն առ հասարակ : Հանդերձ այդ որիւր և դրիցն ահաւորաթեամբ պատկառելիք են . քանդի 'ի կողմն խորանունդ ձորոյն , ընդ որ գետակն ինեալ յարեմուց ընթանայ յարեւլս , քարաժայու լեռնամանս երկայնելով 'ի գետակն կայ 'ի հիմնատեղի եղեալ է դոցա : Ցորս երեք սկսեալ յարեմուց 'ի միում քարաժայուի կան , որմոլ և կամարաս . կցեալ ընդ միմեանս արտաքուստ . և են 'ի շրջապատ պարապի , յորում և դուզնաքեայ խրցկունք վանականաց քայլայեաք առ հասարակ :

Առաջին յերից եկեղեցեացդ է յանան սրբոյն Սարգսի , արտաքուստ ըովաչէն , խակ 'ի ներբուստ խաչաձև , այլ նոյնակն ըովորչի են թիք իւրաքանչիւր . երկայնութիւն թիւէ 'ի թիւ 12 ½ մեգր և ըստնութիւն 11 : Զորս մատրուկը են 'ի նմա , երկու առ խորանան հանդերձ վերնայարկօք , և այլ ևս երկու հանդէպ

նոցա : Արձամագրութիւնք նորա ամենայն արտագուստ զերեսօք որմոցն են շուրջանակի , և են այսոքիկ .

481
551
1033

յանուն այ Նջի թուականիս հառց ան պետրոսի հառց կաթողիկոսի եւ ՚ի թագաւորութեան սմբատայ շահանշահի որդւո գագկա շահանշահի ժամանակի որ եր որդիացեալ եւ սիրեղի ճորտ սարդիս : գ : ից թագաւորաց հոռոմոց առեալ : դ : ից պատիւ անթիպատ-պատրիկ վեստ եւ գուկ արեւեղից արդ հրամանաւ սոցա կամ եղեւ եղբարց որդոցս եղդուապլ համանաւ եւ խատապատալ զմեր արկեալ եդին որ ՚ի գագկաւնա յեղերն երասխա ՚ի վաքս տեկորո արեւշատութեան շաի եւ դուկիս մեղ եւ մեր ծնողաց մեղաց թողութեան թէ ոք այս գրոյս հակառ կա եւ յես սրբոցս հանէ զաւձին կախի յուգաի խաչահանուացն զանէծսն առցէ : յժը : հայրապետացն նզոված է ՚որ երբորդութենէն մի գացի ողորմութիւն յաւուր գատաստանին : հայր որ ՚ի վանքս նստի ամեն տարի : Դ : քառասունք կատարել պարտի մեր ծնողացն եւ յետ մեր վախճանի մեղ թէ ոչ ընդ նոյն անիծիւքս անդցի եւ առաջի այ մեր մեղացն պարտական է :

602
551
1153

շնորհիւն այ ՚ի ՈՌ թու եղեւ նորոգումն վերստին ՚ի ձեռն պաւղոսի ոււտի նոր եւ հաստատեցաք որ թէ ոք յեղբարցս փոխի ՚ի քո եւ հայր որ լինի պարտի առնել գ քառասուն ժամ եւ ամենայն եղբայր աւ աւր պատարագ առնէ եւ որ չառնէ պատարագ ժ կանոն աղաւթս արտացէ արեղային ը քառասուն հայրն լաւ մատաղ առնէ որք հաստատուն պահեն զդրեալս աւրհնեսցին յայ եւ խափանիչքն նզոված են .

660
551
1211

կամաւն այ ՚ի ՈՒ թուաբերութեանս հառց ես զաքարէ ամիբ սպասալար հառց եւ վրաց որդի սարդսի աղատեցի զնը ունետս զայս իմով արեամբս ՚ի յայլազգեաց եւ ետու ՚ի ՚որ սարդիս զվասկափող մշկաղբիւվրվին եւ այգի մի ՚ի բագրան

Եւ շինական մին 'ի գիւղս յիշատակ հոգոյ իմոյ եւ յարեւշատութիւն հարազատ որդոյ իմոյ շահանշահի եւ եղբաւր իմոյ իւանէի հայր յովհաննէս եւ այլ միաբանքս հաստատեցին զնը սարդսի զաւագ բեմն անխափան սլատարագ առնել ինձ միջնորդութե՛ դաւթի որդոյ շոթըսկայ արդ էթէ ոք յիմ ազգականաց եւ կամյաւտարաց եւ կամ 'ի հարանց զիմ զլիշատակս խափանէ եւ զվասկափաւղ յայս սրբոցս հանէ զաւձին : զկաենին : զուդաին : զխաչահանուաց զանէծն առցէ : յժը : իցն 'ի նր երրորդութենէն մի գացի ողորմութիւն ամէն .

Ե՞ + ՈՀ + յայսմ ամի 'ի տէրութեան շահանշահի կամաւրաբերին այ ես խաչոս շեխեանց եւ ամուսին իմ աւագ տիկին միաբանեցաք սուրբ ուխտիս խծկաւնից եւ առւաք զմեր հայրենի աներն որ ընդդէմ գոգոնց նր սարդսի է եւ զկուղպակն որ 'ի վերա ծռազուկակին է եւ հայր յովհաննէս եւ պաւղոս վարդապետս եւ այլ նր եղբարքս հաստատեցին 'ի տարին Է աւր պատարագ + Դ + աւր խաչոտին առնեն + Դ + աւր աւագ տիկինա + Ա + աւր ապիրատին : արդ որք հաստատուն պահեն զգրեալս աւրհնեսցին յայ եւ խափանիչքն ուրոշեալ եղիցին 'ի նր երրորդութենէն ամէն : աներն 'ի մայրագագին է 'ի յանի մաւտ 'ի տիգրանանց 'ի գուռնն .

ԵՎ + ՈՀԹ + շնորհիւն այ ես քափիկ որդի ճուճային զաւրավար ամիբ սպասալար շահնշահի ան իմոյ գնեցի 'ի հալալ արդեանց իմոյ զայդին որ 'ի բագրան զոր ջնազին կոչի եւ ետու 'ի նր ուխտո խծկաւնս 'ի նր սարդիս յիշատակ մաւր իմոյ շուշկանն եւ եղբաւր իմոյ վարհամայ եւ սպասաւորք եկեղեցոյս սահմանեցաք զնաւասարդին աւուր պատարագն անխափան առնել շուշկանն եւ վարհամայ կատարիչքն աւրհնեալ եղիցին եւ խափանիչքն անիծեալ եղիցին . խաչատուր գրիչ .

՚ի : ՈՉԲ : Ծուխ շնորհիւն քի ես աբրահամ երեց որ գի սարկաւագ քահանայի Ծոռն սամուէլ երիցոյ անեցի ետու զիմ գանձագին : Շի տուն նորաշէն եւ ՚ի վերէն Շի կուղպակ ՚ի որ ուխտս ՚ի խծկաւնս յառաջնորդութեան տը աբասա եւ վարդապետ պաւզոս եւ յայլ միաբան որ եղբարցու եւ փոխարէն հատուցեն մեզ յամենայն ամի : Շի աւր պատարագ : ՚ի : աբրահամու եւ : Շի : տը պապ երիցու եւ : ՚ա : հարկեացն կատարիչք գրոյս աւրհնին յայ եւ հակառակըն որոշին : ՚ի քի եւ յիմ ժամէս ետու ՚ի սուրբ սարքսի կողման ննջեցեալսն : ՚ի : խոյագեղին : Շի : յոհաննէս երիցու : ՚ի : տիւնացին : Շի : շահմամին այլ ոչ ում աղման չկա հետ գոզին հայր ոք եթէ յանդգնի ծախել կամ գրաւկանել մի գացէ ողորմութիւն ՚ի անէ յիշեա քո զգրիդոր աշխատող եւ զոփմանու .

Ծուխ ՈՉԲ շնորհիւ եւ ողորմութեամբն այ ես բռնաւորս ծառայ քի եւ ամուսին իմ տղա տիկին ողորմութեամբ ածառեր պարոնի իմն գրիդորս միաբանեցաք որ ուխտսի խճկաւնից եւ ընծայեցաք ՚ի սմա զմեր գանձագին այդին որ ՚ի մրեն է զոր աղտոտն կոչեն եւ աւետման մեծագին ՚ի ձեռն ածապատիւ եպիսկոպոսիս տը աբաս եւ այլ որ եղբարցու եւ սոքա փոխարէն հատուցին մեզ զզազարու տաւնին պատարագն մինչեւ ՚ի գալուստ բանին այ զկէսն ինձ առնեն բռնաւորիս եւ զկէսն զուգակցի իմն տղա տիկինա արդ որ զգրեալս մեր կատարեն աւրհնեալ լիցին ՚ի քի այ եւ ոքը խափանեն որոշեալ լիցին ՚ի փառաց որդոյն այ :

Առ երի եկեղեցւոյդ ՚ի հիւսիսյ կայր խաչպար մեծ և գեղեցկաքանդակ . ՚ի նորա արձանագիր ՚ի կողաց . բայց որմն որ ընդ մեջ կայ նորա և եկեղեցւոյն խափանեալ է զարձանագիրն զայն և զմի յարձանագրաց եկեղեցւոյն , յուրում թուականն երեկը ՈՒԳ :

Ի հարաւոյ կուսէ մօտ ՚ի փոքրիկ մատուռն որ կից է եկեղեցւոյն ՚ի վերայ որմոյ և գետնոյն հաւասար է տապանագիրս .

Ըուական ՈՅՆ ես գուստ ոս աշակերտ մարդարէի քահանա + + միայնաւորի կանգնեցի զխաչս պահապան գերեզմանի սորա եւ եղբաւր իմում առաքելին աղաչեմ յիշել յաղաւթս ձեր + + զվարդապետս : զպղ : եւ զանդրէաս եւ զծընողն իմ + եւ զար առաքելն որ նահատակեցաւ 'ի կեցրոր քաղաքի զանազան տանջանաւը +

Երկրորդ եկեղեցին տասն քայլիւ բացատ յառաջնոյն և վարկպարագի որմով կցեալ ընդ նմա , բաղմանկիւն բոլորչի է արտաքուստ , 'ի ներքուստ խաչաձև , և գրոնկ նորա երկու . երկայնութիւն եկեղեցւոյն ինն մեդր նոյնչափ և լայնութիւն . և աւանդասունկն չորք բատ օրինակի առաջնոյն : Եր սորա երկայն արձանագիր 'ի հիւսիսոյ կուսէ անընդմիջաբար ընդ քուով յարկին , այլ խանգարեալ է . նոյն , պէս և 'ի հարաւոյ , կէս մի եղծեալ և կէս մի խափանեալ ընդ կամարաւն՝ որ գաւակիթ է երրորդի եկեղեցւոյն . սակայն թուական մի երեւէր անդ նծԵ . և 'ի խանգարմանց պյտի անոնն եկեղեցւոյն մնայ անձանօթ : Միայն 'ի վերայ արեմուեան գրանն կայ համառօտ բանս .

այս դուռն ան է եւ արդարք մտանեն ընդ սա .

Երրորդ եկեղեցին որմակից է նախընթացին կանդնեալ յանուն սուրբ Ա. տուշաճաճնի . և է սովորական ձեռվ քառանկիւնի արտաքուստ և ըստ ներքին կողմանն իրը խաչաձև , զի են նորա թեաք կարճագոյնք . տարածութեամբ փոքր է քան զերկրորդն : Գաւակիթ նորա զառանեան և կամարակապ , և այն միայն կիւսակործան կայ ոչ ինչ վխասեալ եկեղեցւոյն , որոյ յարկելից կուսէ 'ի բարձու արձանագիր կայ նորոգութեան նորա , օրինակ զայս .

Դուիս ՈԿԻ շնորհիւն քի ես տիգրան հաւատարիմ ծառայ մանդատոր Ծախուցէս ամիր սպասալար շահնշահ զաքարիաի տեաւոն իմու տեսսի զպանդխտութիւն սուրբ ուխտին խծկաւնից եւ Ծափուր յամենայն ընչլց ես վերստին նորոգեցի ամենայն պիտոիւք եւ սպաւինեցա 'ի ոք մայրս լուսոյ ետու զիմ զգանձագին ակն մին ձիթահանքն որ յանի է եւ այդի մին 'ի մարմետ է որ միջնայդի կոչի յառաջնորդութեան հաւը յոհանիսի եւ առ եղբարցս եւ փոխարէնս հատուցին զեկեղեցիս խսկըանէ տարոյն մինչեւ ցկատարումն տարոյն յիմ անուն կատարեն եւ 'ի տարին : Ին : ունք մին իմ պարոնին զաքարիաի յիմ եկեղեցիս եւ զայն որչափ ես կենդանի

եմ իմ ծնողացն եւ ապա ինձ յետ առ քո՞ ճանապարհորդելոյն մինչեւ 'ի գալուստ բանին այ եթէ ոք 'ի մեծաց կամ 'ի փոքունց զլիշատակս մեր խափանէ եւ հակառակէ ոսովս եւ դատիչ բարկութեան որ ածածինս եղիցի եւ ոքք հաստատուն պահեն աւրհնեալ եղիցին 'ի քէ •

Չորրորդ եկեղեցին կէս քարընկէց հեռի է 'ի նախագրելոցդ երեցուն յարկելս նոցա յայլում ապառաժի . ձևով և մեծութեամբ նման երրորդին : Որմունք եկեղեցւոյս շունին աւանդո ինչ յիշատակարանաց . նմին իրի և անուն նորա մնայ անյայտ : Շուրջանակի զեկեղեցեան են արկղաձե գերեզմանկը . յորոց 'ի միումն գրեալ է

ած ողորմի գրիգորո ամեն *

և 'ի միւսումն՝ որ մարտիրոսի է շիրիմ, յորոյ վերայ կայր երբեմն խաչոքար , և կործանեալ նորա և ընդ նմա մասն մի տապանագրին , այս հաստած մնայ .

* * * որ նահատակեցաւ եցրոր (գոյցէ կեչըոր) քաղաքի արդ որք երկրպագէք քի որ նշանիս յիշեսջիք զմեզ որ կայք (կամ կամք) առաջի սորա • թվ հառց ՈՀԱ •

Հինգերորդ եկեղեցին քարընկէց մի հեռի 'ի նախընթացէն յարեելից նորա , 'ի միւս ևս յայլ ապառաժի . մեծութեամբն և ձևով համանման երրորդին և չորրորդի . այլ սա պարսպապատ է : Անյայտ է և սորա անուն առ 'ի չգոյէ կարեոր արձանագրաց յորմանս նորա : Ի ներքս պարսպին առընթեք դրան եկեղեցւոյն որ է 'ի հիւսիսոյ կուսէ՝ կանգնեալ կայ խաչօքար մեծ և փառահեղ իրքեա զառաջնոյ եկեղեցւոյն , և է 'ի վերայ հինգկարգեան աստիճանաց պատուանդանի : Առ նմին կան երեք որորաձե գերեզմանկը , յորոց 'ի միումն է տապանագիրս այս .

'ի ԱԶԳ թուիս ես հաջաջ որդի ապլիքա + + + տղական հասակի ելի յաշխարհե եւ ոչ տեսի + + (զլ)աելըութն սորա եւ սուգ մեծ թողի ծնողաց իմոց առ քո՞ յիշեցէք զիս աղ + 83
Յարեելակողմն պարսպին այլ խաչօքար է ագուցեալ , և ընդ նովաւ տապանագիրս .

Թվ ՈՉ • այս է հանգիստ անեցի գրիգորո եւ աւթեւան ոքք կարգէք յաղաւթս յիշեցէք տր ած ողորմեայ սմա .

ի վերայ հարաւակողման պարսպին .

ես թամարս որ կամս առաջի ո՛ք զենարանիս այ եւ սպա-
սեմ գալըստն ան .

Ազարակ կամ Ազրակ (այժմ Էզրէկ .)

Հեռի է դիւզ 'ի Տեկորոյ երեք քառորդաւ ժամն՝ ի վերայ բարձր գաշտա-
վարի : Եկեղեցի նորա խաչաձեւ է միջակ մեծութեամբ , և կաթողիկէն անկոր-
ծան : Ի հիւսիսոյ նորա կայ միւս ևս եկեղեցի որմակից նմին , որոյ միայն երկուս-
տեք որմննքն մնան կանգուն . երկայնութիւն նորա 15 մեդր , լայնութիւն 5 ½ :
Անկործան եկեղեցւոյն արձանագիրք առ դրանն կան . յորոց առաջինն յոյժ
խանզարեալ , ոյսչափ ևեթ վերծանի .

ՆԾԵ ✕ յանուն այ ես առլ • • ն • • • •

Կ հերթ ետու զըրփողիս • • • •

զմարդ զամեն շաղ իմ արտէս վ• • • •

զազունդ վրտո կաթաղի

կեի խնդադին եւ տուել եմ

թաղի ոսկահանա եւ իւր զաւ

ակացն եւ ինքտ ազ • • եալ եմ

յամէն չարէ վասն սմբատա շահանշահի արեւուն եւ ատըր-
ներսեհի հոգւոյն եւ պարտի : ի : որ ժամ ատրներսեհի թէ
ոք այս հրամանիս հակառ կա նզուած է .

յանուն այ այս իմ գիր անահօկիս որ տվել եմ 'ի կիրակո-
սի կաղիս վասն յիմ ոգոս զտունս իմ արեմ փորած եւ զ-
ւակաց 'ի

յանուն այ ես գէորդ ետու զծիթահանքս 'ի ո՛ք կաթողի-
կէ եւ 'ի գէորդ երեց եւ պարտի տարին : ի : աւ • • • եւ ես
աշոտ հաստատեցի եւ ես տը անանէ վկա • • • արդ եթէ ոք
հակառակ կա 'ի մեծաց կամ 'ի փոքունց : յժը : իցն • • • նզո-
ված է բաժինն ընդ խաչահանուացն եղիցի .

• • • • այսոց եթէ ոք հակառակ կա 'ի մեծաց կամ զգիր
եղծէ յժը իցն ապեակ է հոգով եւ մարմնով .

Երպարք .

Եկեղեցի գեղջս միջակ է մեծութեամբ , խաչաձև , և կաթողիկէն կիսավուլ : Զկայ նորա արձանագիր . այլ յորմունն երեխն բարձրագանդակ պատկերը եւ զին , առիւծոյ և թռչնոյ :

Նախաւան .

Ի գիւղս յայս մեծ , որ և դաւառագլուխ համարի հարաւակողմանցն Շօրէ լիլ , կայ մեծակառոյց եկեղեցի յանուն պրոյն Ստեփաննոսի . կործանեալ է կաթողիկէն և զինի նոր յարեկեալ , և որմունքն կարկատեալ ուրեք ուրեք : Դայդն արձանագիրքս նորա չտան զկարևորն ծանօթութիւն . յորոց առաջինս առ դրանն կայ 'ի ներքուստ :

• • • 'ի ՆԶԴ Ըստականիս 'ի Ըստաւորութեանն սմբաւայ շա • • • ըգո գագկա եւ դրիդոր • • • եւ Ըստն չուտասին • • • աննոս յիմ հայրենի • • •

Արտաքրոյ 'ի հարաւայ .

• • • նայ կամաւքն սմբաւանոյ • • • անդրէաս մրենոյ • • • իսաւսութեմ առ ստեփան • • • ահանշահի գագա որ • • 'ի կատարած աշխարի • • • դոյն արեվոյն եւ • • •

Ի հիւսիսոյ խոշորաստառ , յորում որոշ վերծանին այս բառք միայն

• • • ստեփանոս յառաջառաքեալ եւ նախասար • • • զդրիդորի ծնաւղն • • • հիսկատո • • •

Ինքնուրոյն բանք զարգաւանդուքնենք Շիրակայ .

Զոր ծերոնին խորնոյ համառօտիւք յայտ առնէ գքաջ արգաւանդութիւն դաւառիս , յիշեալ առ նմին և զգեղջէցն առասպելս որ վասն որկորային Շարայի , զնոյն է տեսանել և այժմ : Համբաւեալ են յոյժ 'ի մասինս Բասեն և վանանդ և Տարօն . այլ Շիրակ առաւելու քան զնոսա . զի ուր սովորեալ է գեղջէցն զանարդասաւորութենէ երկրին գանդաստ ունել և կամ կիսով չափ խորել զճշմարտութիւն իրացն , աստ 'ի Շիրակ հակառակն լսի յամենեցունց . զի յայտնի կան իրքն և չմարթի թագուցանել : Ու այսոքիւք ողորմերի են գարձեալ կեանք նոցա իրբե զայլոց տեղեաց . քանդի զոր ինչ 'ի հարց և 'ի հաւոց թւրեանց տեսեալ և ուսեալ են , ոտնիոխ մի յառաջ անցանել քան զնոսա չգիտեն . կամ զկամին :

Օրինակ լիցի այն զի ընդ ամենայն գաւառոն այլ ինչ սերմանք չերևին բաց 'ի ցորենոյ և 'ի գարւոյ, ոչ բանջարեղջնք և ոչ ընդեղջնք . և վայրապար է նոցա պատճառառան կարկառել զօդոյն ցրտութենէ . զի Շիրակդ ոչ է ցրտադին քան զիարձր չպիք, յորում աշխատութիւն մարդկանն մրցեալ ընդ բնութեան՝ դոյաւորէ ինչ ինչ 'ի կարերայցն . այլ Շիրակացւոց ըստ ասացելումիշ չէ սովորեալ զկարեռո պարէն ուտեղեաց ճարտարել բաց 'ի ցորենոյ . և սիրելի է նոցա յաւուրս պահոց աշտուճ հացիւ անցուցանել . միսիթարութիւն մեծ համարեալ եթէ ընդ նմին սոխ կամ խսոր և կամ կոտորակ մի բողոք ՚ի բուռն արկցին ուստեք, քան ժրանալ սերմանն ընդեղինաց և բանջարս այլ և այլ բուտցանել . խակ զայդեաց և զպուղոց խօսեցեալ, դարձեալ պարսաւանք զօդոյն ցրտութենէ լսի յամենեցուն . սակայն եթէ օրինակ չկայր ՚ի միջի, արդարացի էր պարսաւն . քանզի ահա Մըրենոյ այգին վերիվայր յիշատակին յարձանագիրս, և Բագարանուն և այլոց տեղեաց տեղեաց . ոչ 'ի նոյն գաւառի կան դոքա և զնոյն օդ չնչեն . և որ յայնժամ պաղաւէտութեամբն զարմանալի էր երկիրն, այսօր չոնի և թզաշափ թուփ մի ցուցանել ընդ ամենայն գաւառոն Շիրակայ :

Ե Բ Ա Ս Խ Ա Զ Ո Բ Գ Ա Ի Ա Ռ

Կաղզուան .

Առ Արշարունիս կամ յերասխաճոր գաւառի դլխառոր տեղի համարեալ է կաղզուան, ոչ եթէ նշանաւոր ինչ ունելով, այլ զի չիք այլ ստան 'ի գաւառին : Ոչ անպատկան վարկանիմ գաւառիդ զեւէփական անունդ Երասխաճոր, 'ի բնութենէ օժանդակի լով վայրացն . քանզի և յիշատակութիւն ձորոյդ յայտ առնէ ոչ ըստ սովորականին անձուկ միջոցաւն և յատակաւ սահմանեալ, այլ լայնածաւալ ձեռովն . որպէս զի բազում ուրեք կողմանէ 'ի կողմն տևել կէս ժամ և ժամ մի ես . և կողմանքդ այդոքիկ բարձրաբերձ ավասիայք են լերանց, և գիւզորէկ ՚ի նոսա, որ ընդ կաղզուանաւ անկանին : Խակ Երասխայ ճանապարհ արարեալ ընդ ձորն լայնածաւալ ընթանայ յարևմտից հւախայ յարեել հարաւոյ անցեալ և զառաջեաւ կաղզուանայ : Արդ կաղզուան թէպէտ և աւան համարի 'ի գաւառի աստ, այլ ՚ի հնոց և ՚ի նորոց չունի ինչ արժանալուրս . սակաւաթիւ տունքն ոչ ինչ ընդհատ ՚ի գեղջկականաց, և շուկայն իբր քսան կրպակօք սահմանի . նորաշնէն եկեղեցին անշուք է և ազգայինք սակաւ, զի բազումք գալթեցան առ Ռուսս : Սակայն հանդերձ այդու ամենայնիւ անուանի եղեալ է նա այգեստանօքն և մեծամեծ պարտիզօք պտղատու ծառոց, յորոց զուրիկ են ամենենին սահմանակից գտառքն Շիրակ և վանանդ . որոց մատակարար լինի սա գինեաւ և պտղովք, մասնաւորեալ և ինքն նոցին ցորենով : Այգեստանզ և պարտէզք կաղզուանայ զոր ասացաք՝ հանդերձ աւանաւն 'ի բարձր և 'ի լայնածաւալ գաշտավայրս կան մեծաւ մասամբ և շուրջանակի զգիւղաքազարաւն, մանաւանդ . ՚ի հիւսիսոյ նորա որ փոքր մի զառ ՚ի վայր է . և հարաւակողմեանքն մօտ

՚ի ստորատս կան բարձրագերձ աղխամիեալ լերանց : Զուարճալի են առհասարակ ամենայն վայրքն, որը տեղոյն բարձրութեամբն և շրջահայեաց տեսարանաւ լերանցն և պարտիզաց լայնածաւալ տարածութեամբք, հանդերձ կանչազերգ պիզարոյս հարթ յատակօքն՝ մոռացուցանեն խսպառ զամենայն անջրութիւն աւանին, զաշխոյժ հիւրոյն վառեալ մեծապէս, որ գժուարաւ մեկնի ՚ի շանկալի վայրացն : Հիւսիսային և արեմուեան եղերք կամ ափունք որ սահման հատանեն այդեացն և պարտիզաց, զարափուար են, որոց առաջի շառավմամբ անցանէ երասիւ : Խրամ լայնաձիգ և տղիղ ՚ի հիւսիսայ աւանին յերկու մասունս բաժանէ զայդիս և զպարտէզս . մի ծայր խրամին է անդ ուր աւարտի շնչն աւանին, և միւմն մինչեւ շդեան կամ ցեղերս ափանցն զոր ասացաք, պյում գետակի անցեալ ընդ ձորդ և խառնեալ յերասիւ, շորջանակի զգետակաւոդ մինելով այլ ևս այզեաց ընդմշջ խրամին :

ՎԱՐԴԻՆԵԼԻ

Ի գաւառին գարեղենից սեփականեալ վարդիհերաց՝ ըստ նախնի աւանդից պատմութեան, և կոչեցեալ ՚ի նոյանէ վարդիկ հայր, չորից ժամուց միջոցաւ հեռու է ՚ի կազզուանայ, ճանապարհ ունելով առ ՚ի կողաց ափափայ լերանց ՚ի ձախմէ, և յաջմէ խորանդունդ գարափոսս ահագնատեսիլս . և ՚ի սպառուածի լերանցդ ուր աղեղնաձև խստորին յաջկյու անդ ՚ի լերանցամէջս խստորմանն ՚ի վերայ լեռնագաշտակի միոջ տեսանի վարդիհերն կոչեցեալ տեղի : Եկեղեցին միջակ մեծութեամբ և անշուք և վարիկպարազի որմովք և անյարկ ևս՝ յայտնի ցուցանէ թէ նշարը մի ՚ի նախնի շինուածոց չէ մնացեալ ՚ի տեղուոջն, թէ և հիմնեալ և նորոգեալ ընդ ժամանակս ժամանակս . այլ ուխտաւորաց բազմութիւն ոչ առ ձբյ ինչ շինուածոյն կամ վայրացն գեղեցկութեան խստուլնթաց գիմեն անդք, առաւելապէս յաւուր վարագայ խաչին, այլ զի թամբոյ և վարոսի գերեզմանք ՚ի նմին եկեղեցւոջ կան . առաջնոյն՝ յահեկում աւանդատանն, և երկրորդին ՚ի նոյն կողմն առ որմով եկեղեցւոյն . շիրիմք նոցա ՚ի հատակուոր անշուք քարանց առ միւեանս եղեալք, կամ ամբողջ մինելով նախ և ժամանակաց երկարութեամբ և կամ ՚ի բանութենէ խորտակեալք, և կան մնան այնպէս յանփութութենէ մարդկան : Ալընթեր եկեղեցւոյդ յարելից քարակյատ մի կայ, զոր արշու զերեկման կոչեն . իբրու զի գատանդ ՚ի կենդանութեան ծառայէր անդ մինչզեռ շնչն էր տեղին : իսկ բնակրանք ուխտաւորաց կամ թէ ասել ըստն մենաստանն յայլում ըրբակի է քարընկէցիւ միով բացատ յեկեղեցւոյն, անցարկ առ հասարակ և ՚ի նմին անջրութեան . վասն որոյ ընդ ուխտաւորաց դնան քահանացք պաշտօն կատարել և գառնան : Յառաջ քան զյարձակել Ռուսաց շնչն էր վարդիհեր . զի յանդագար երթեեկութենէ ուխտաւորաց ևս և ՚ի հեռաւոր տեղեաց չպակասէին երբէք երբէք և աշխատասէր անձինք ՚ի վարդապետաց չան գնել ՚ի շինութեան պահել զտեղին և վանական առաջնորդութեամբն հոկել անդէն, ոչ ինչ փոյթ կայեալ զանմարդի վայրենութենէ տեղեացն . սակայն ընդ գտղմականի աղջիս՝ դստորիկացեալ յամենայնէ անապատացաւ :

Հնդիւք վայրկենիւք հեռի ընդ. մէջ գժուարակոխ ապառաժից է քարանձաւ փոքր՝ տեղի ճգնաւթեան սրբոցն, որոյ անձկութիւնն տանի ոգիս երիս կամ չորս. և 'ի կողմանէ այրիդ այլ վիմափոր տեղի ՚ի նմին ապառաժի և փոքր քան զմիւն, յորում կայ անսպառ. ջուր ցուլս: ի վերայ ապառաժիդ է գերեղման՝ հարսին և տալու կոչեցեալ. զրոց զրուցեն մահ խնդրեալ յԱսուծոյ առ տեղեացն ներմեռանդութեան և աւանդեալ զոդիս իւրեանց և թաղեալ անդէն: ի վերայ բարձր և գժուարամերձ լերանց որ հանդէպ է քարանձաւացն, ոյ գերեզման Մամասայ միայնակեցի:

Զորամէջք կամ դարափոս վայրքն որ անընդմիջաբար զառաջեաւ կան վարդիհերայ, վիշապանոր կոչին մինչև ցայսօր. իբր զի օձից բազմութիւն եղեալ անդէն ՚ի հնումն, անհետ լինին ապա աղօթիւք սրբոցս ըստ վկայելոյ գրոց:

Են և այլ ևս ուստատեղիք կրկին ՚ի ճանապարհին վարդիհերայ. զի ըստ աւանդելոյ Ցայսմաւուրաց՝ Վարոսի երբեմն յուղւոյ լինելով երթալ ՚ի միայնարան իւր բառնայ ՚ի թիկոնս իւր զբրիստոս ՚ի խնդրոյ նորա ՚ի կերպարանս աղքատի և ախտացելոյ. և հանդիսատ առնու ՚ի ճանապարհին յերկուս տեղիս, ուր են երկու ապառաժ քարինք. առաջինն փոքր և իբր ՚ի կէս ճանապարհին ընդմէջ կազզուանայ և Վարդիհերայ. և երկորդին մեծ, յորոյ առ ՚ի կողաց նստարանաձեւ տեղի, և առ նմա աղբիւրն պամիշելաբուխ, քառորդաւ ժամու հեռի ՚ի վարդիհերայ:

Զտեղագրութիւն վարդիհերայ ճշգրտաբանեալ ամենայն մասամբքն, հըմատունից թողումք քննել զայլ և այլ անուանս տեղեաց զոր մատենագիրը աւանդեցին. այն է վարդիկ հայր ուխտն և վարդապետարան, և ուստն թամբոյ որիշ յուխտիցն վարոսի. և թէ զիարդ և երր ամփոփեցան նշխարք սոցա ՚ի վարդիհեր:

Ղարավանք.

Ի ստորոտս լերանց Վարդիհերայ երկու և աւելի ևս ժամուք հեռի ՚ի նմանէ և իբր կէս ժամու վերոյ քան զափունս ծրասսիսյ է գիւղս պյո. յորում կան երեք փոքր եկեղեցիք, հնագոյն և կիսափուլ կաթողիկէիւք: Աւանդեն եթէ թամբուլ և Վարոս յաւուրս կիւրակէից իշեալ ՚ի Վարդիհերայ աստ պատարագ մատուցանէին և նոյն օրին դատնային ՚ի լեստն ՚ի միայնարան իւրեանց:

Զանկիլի.

Հանդէպ Ղարավանից յայնկոյս Երասմասայ ՚ի լեռնամէջս ահեղ բարձրութեան ափափայ լերանց կայ գիւղն Չանկիլի կոչեցեալ: Հոյակապ եկեղեցի նորագմբէթարդ ՚ի մժագոյն քարանց, երկայնութիւն ունի 20 մետր և 14½ լոյնութիւն: Վրացի արձանագիրը եկեղեցեւոյս, զրոց տեսցի ստորեւ, կարծիս տանինձ թէ ըստ հին աշխարհադրութեան ՚ի սահմանին կարուց անկանէր գիւղս, և

յորժամ անց քաղաքն այն առ. վիրս՝ յայնժամ շինեցաւ և եկեղեցիս այս . ոչ
սակաւ պատճառք են և մեծին երասխայ ընդ մէջ անցանելով , որ բաժանէ յիրե-
րաց զահմանս կազզուանայ և կարուց : Այս արդեպ ըստ նախնեաց . զի ըստ
սիժմու բաժանման Չանկիլ ընդ կազզուանաւ անկանի : Յարձանագրացդ առա-
ջնն է 'ի վերայ գրանն յարեմոփց .

† յօրոնցոցնե են () և ելլուա ըտուաքաւ մը

ըլանաձման ցինցու ազուց լուսեացն .

... յնու . . լուցը նօքմոյ մու ը-

և աղուցագ գոհացեսացն ուր-

ու եշտ հյուր Սիսրացաց Սիսր-

տաւշն ացնուն ալ . . ուսա

Յահեկէ նորա .

Տարոնո ոյտն դա թոնամմացառո ուոմյլսա և եցանո մմանո

ցուցնեցն զցանեսիրուցո . Գյուանը մեսա նորուա մոյ -

ցյուցնե . ցոնց յեց նայմառո նցըցալուս ձրուց նորուա

ըտուաքաւ , ցմունուա ձրոննատա մացլուուա դա եցուուա հացրուոյ -

ու ցօնուուա , դա առարկայցուա մուցոյլուա մացլուուա .

Ցո՞ն ը -

ամ ըցո՞ -

Կո՞ն քօ՞նո

մի՞ն դա ձո՞ւուեցաւ .

Զերկոսին արձանադ այսովէս թարգմանէ երկրայութեամք հնագէտն զ .

Ի թուին ՄԾ (1030) . Անուամբն Աստուծոյ , ես նուաստո իգնատիոս ընկալայ 'ի
թէոդորէ գահեկանս (?...) և հաստատեցի առնել պաշտօն վասն նորա , և
կարգեցի տալ անխափան հայ եկաց 'ի ձեռն վանապանին . երկիցս յաւուր ,
ով որ և իցէ տէր կամ հայր ուխտիս . իսկ եղբարցն որ զպաշտօնս կատարեն՝
տնտեսն ինքնին տացէ գինի : Որ որ խափանեացէ զկարգեալս առ 'ի մէնջ՝ կա-
պեալ լիցի բանին Աստուծոյ , Հնորհօք վեցից ժողովլց , խաչիւ հնդից պատ-
րիսարքաց և շնորհիւ երկուասան տոպքելոց : Հաստատուն պահողն օրհնեալ
միցի սուրբ խաչիւս :

Ի հարաւոյ կուսէ՝ ի բարձու.

ქრისტე გეორგიელე მაღა ქო | ჰით რომელმან გაღვ....

«Գրիտառոս ողորմեա Մալակոսիայ (շինողի) եկեղեցւոյս»:

Առ աստիճանաւ բեմին չորեքումը տառիւք .

ქრისტე მეტელა....

« ՚ՅՐԻԱՍՏՈ ԱՂՋՈԲՄԵԿ » .

Քառորդաւ. հեռու ՚ի գեղջէն՝ է լճակ մի շրջապատեալ ՚ի բլոց. տարածութիւն շրջապատի նորա աւելի քան զիէս ժամ. ՚ի ձմերան քանզի ասոնու, ժակեալ զսառն և չափեալ են երբեմն վիսորութիւն լնին, և գտեալ զիրկս 60 ՚ի տեղւո՞ն յայնմիկ:

ԱԼԱՇԿԵՐՏ

Պաշտավայր է գաւառս այս , որ է հինն ԲԱԳԻՐԵՒԱՆԴ , ընդարձակ և բերբի և ջրարրի յոյժ , զի հինգ և վեց գետք ոռողաներն զերկիրն , յորոց մի է և Եփրատ . բայց նուազեալ 'ի բնակչաց և 'ի գիւղրէից . զի բազմութիւն յոյժ գաղթեցին 'ի Ռուս և 'ի վերջին պատերազմի նոցա (յամի 1829) :

Թօքրսդ գալէ . — Աւան առ կողիոք լերին որ հայի 'ի գաշտավայրն Ալաշկերտու . են 'ի նման քառամնիւ չափ տունկ Հայոց և Եկեղեցի մի . և այլքն Տաճկաց : Շու կայն փոքր , այլ բազմավաճառ , որ և լցուցանէ զամենայն պէտս գաւառին . և բերդն փոքր և անջան :

Խաջ ԳԻԼԻՍէ . — ՄԵԽՆԱՍՏԱՆ հաջակաւոր ընդ ամենայն Հայաստան 'ի սկզբանէ և այսր վասն մեծամեծ անցիցն և մանաւանդ վասն ահեղ մեծութեանն : Եի նեալ է սա 'ի սարուստ Նպատ լերին 'որ 'ի հարաւոյ նորա կայ . և շինուած մենաստանին թէպէտ և անշուք ըստ օրինի այլոց մենաստանաց , այլ Եկեղեցին ահեղ մեծութեամբն հիացուցանէ զսեսոզմն , որոյ նմանն չգտանի ընդ բովանդակ Հայաստան : Զորս քառակուսի սինքն ստուարութեամբ ահադինք՝ որք բառնան զդմբէթ նորա՝ դատարկք են , և ելանելիք 'ի նոսին և սենեակք , և 'ի սենեկացն դարձեալ այլովք սանդղօք յայլ սենեակս մինչև ցտանիսն , առ հասարակի քարչէնք : Բեմն և գասն և ատեանն առհասարակ ընդարձակք են : Խորանն է մի միայն որպէս այլոց հնաշէն Եկեղեցեաց . և երկուստեք նորա մատրունք և արտարոյ մատրանցն այլ փոքրիկ խորանք՝ զոր յետոյ շինեալ են տախտակամած : Նախ սրբոյ Լուսաւորչին շինեալ աստ մատուն , և յանցանել ժամանակա Հերակի կայսեր 'ի դառնայն 'ի Պարսկաց անցեալ ընդ այս , փոխանակ մատրանն այնորիկ շինէ զեկեղեցին՝ որ կայ այժմ , 'ի քսաննեմիում ամի կայսերութեան իւրոյ , որպէս ասէ արձանագիրն խոշորատառ որ փոքրեալ կայ զըրջապատառ որմին արտաքոյ :

Առ մենաստանաւն անցանէ Եփրատ գետ ընթացեալ յարեելից յարեմուտս , և քարաչէն կամուրջ 'ի վերայ նորա : Այս տեղի 'ի ժամանակս կուազատութեան կոչէր Բագուան կամ Դիցաւան , յորում էր գերեզման և բագին Մատժանայ քրմապետի , շինեալ 'ի փոքրուն Տիգրանայ Եղքօրէ նորա : Այլ 'ի ժամանակս Քրիստոնէութեան՝ սուրբն Գրիգոր ամփոփեաց 'ի տեղովն 'ի նշանարաց որբոյն Յովհաննու և Աթանազինեայ . նմին իրի և մինչև ցայսօր յանուն արբոյն Յովհաննու կոչի մենաստանն , թէպէտ և յանուն սրբոյն Գրիգորի ևս ասացեալ է յամանց , սակս 'ի նմանէ շինելցյն զսուաջնն : Ուխտատեղի մեծ եղն սա ոչ միայն

վասն պատճառացդ. զոր ասացաք, այլ և վասն մկրտովեանն Տրդառոյ և որոց
ընդ նման ՚ի սրբոյն Գրիգորէ ՚ի վերայ Եփրատ գետայ. և տեղիդ այդ ցանկալի՝
քառորդաւ բացական է ՚ի մենաստանէն յարեելս կոյս ՚ի վերայ ճանապարհին
անդնդմիջարար առ գետեղերն, ուր կայ և յաջմէ քարաժայու մեծ, և ՚ի վերայ
նորա գրոշմածք խաչից: Թեմ իւշ գիլիսէի վանացս են ամենայն գիլզորէք Ա-
լաշկերտու, յորոց այժմու նուռազովեենէ թերեւս պակասեաց և մենաստանին
միաբանութիւնն, որ արդ ՚ի չորից և ՚ի հնդից կարդառորաց սահմանի: Դիրք մե-
նաստանին, որպէս ասացաք, առ ստորոտով Նպաստ լերինն իոյ, և ՚ի հանդիպոյ
գօտիք Բարդող լերանց¹, և ՚ի միջոցի ձորամէջ լայն՝ զոր հաստանէ գետն Ե-
փրատ, թողով երկուատեք գաշտավայրս: Բերանք ձորավայրիդ Են յարեելս և
յարեմուսու, նմին իրի ուժին և ցրտագին չնչեն անդ հողմունք:

ՆՊԱՏ ԼԵԱԾՆ. — Թէպէտ և բազումք իցեն լերինք ՚ի Հայաստան աշխարհի՝ ա-
ռանձին իմն ձրիւք պերճք և անուանիք, այլ ցանկալի այնոքիկ՝ որք սու յիշա-
տակէ իրիք մեծէ ՚ի նախնի դարուց անուանի գտան, յորոց տեսլենէ և հայրե-
նասէր սիրու յայլ յայլմէ լինի, իրրեւ ակներեւ տեսեալ զամենայն անցսն որ ան-
ցին երբեմն ընդ նոսա: Արդ մի ՚ի ցանկալի լերանցն է և սա, յոր ել մեծն Ներ-
սէս տեսանել զպատերազմն Հայոց ընդ. Պարսից, զոր ՚ի Զիրաց դաշտին մղեցին.
և ինքն այրն Աստուծոյ մոլխասարար տարածեալ զբազուկն և ալօթեալ պար-
տէին Պարսք առաջի Հայոց, որպէս Ամանդեկ առաջի իսրայէլի: Արդ երկայնա-
նիստ լեառն ձգեալ կայ յարեելից յարեմուսու. յարեելից սահմանն հաստանե-
լով Զիրաց դաշտին՝ որ և սահմանն համարի Ձիատինոյ, և յարեմուից մեծի դաշ-
տավայրին Ալաշկերտու. ոչ մի գօտիս ունելով ՚ի լերանց, այլ ինքն միայնակ ամ-
բառնայ: ի գագաթն լերինն՝ ուստի համարձակ երեւելի լինի յարեելից Մասիս
և յարեմուից հիւսիսոյ Սուկաւ, և յարեելից հարաւոյ Մագկաց լեառն, շինեալ
կան երկու մատրունք՝ տեղի ազօթից սրբոյն Ներսէսի. մին ՚ի բացի՝ առ որում
և ճգնարան, և միւսն գետնափոր՝ յորում երբեմն երբեմն ելեալ ազօթէք, ա-
ռանք, այրն Աստուծոյ,

Բ. Ա. Դ. Ո. Ց Ե. Ի. Խ. Ա. Մ. Ո. Ւ. Ի. Բ

Կրկին գաւառքդ. սահմանակիցք իրերաց և Արճիշոյ՝ դաշտավայրք են առ-
հասարակ, սակաւս ունելով բարձունս զուարձակս, և են ընդարձակիք յոյժ և
յուռթի. այլ բազմամարդութիւն գիւղորէիցն նուռազեաց ՚ի գաղթականէն որ
՚ի Ռուսս, և խոպանացեալ է արդ, սակաւս ունելով գիւղս քրդարնակս. արօտ
եղեալ հօտից նոցա երկիրն առ հասարակ որ յոյժ խոտաէտ է, մանաւանդ Խա-
մուր:

1 Ռուսմերէն թագավորութիւն կումը՝ թագավորութիւն կոչին:

Մ Ա Ն Ա Զ Կ Ե Ր Տ

Մի ՚ի հին քաղաքաց Հայաստան աշխարհի շինեալ ՚ի Մանաւաղայ որդւոյ Հայկայ . այլ անտի և այսր ընդ բազում՝ փոփոխութեամբ անցեալ՝ յիշատակ հին չէ մնացեալ բնաւ ՚ի նմա , և որ ինչ երեկ՝ յետին դարուց իրք են : Առ հասարակ պարապատատ է քաղաքն այլ և այլ աշտարակօք , և ոչ նշանաւոր ինչ քարամըք , զի և բազում՝ ուրեք փլեալ կան պարիսպքն : Տարածութեամբ ընդարձակ , այլ ՚ի պատճառս բռնաւորաց և անդադար հարստահարութեանց Քրդաց և այլոց՝ նուազեալ յոյժ , ՚ի սակաւաթիւ տանց սահմանի Հայոց և Տաճկաց , ոչ ինչ ընդհատ ՚ի միոյ ՚ի գիւղորէից : Ի վերին ծայր նորա է ներքնաբերդն առանձին պարապատ և գրամբ . որ և այն նոյնպէս ամայի կայ : Մակայն շրջակայ սահման քաղաքիս որ և գաւառն է Մանազկերտի՝ հինն Ապահունիք , չէն է և մշակեալ և բերրի :

Պ Ո Ւ Լ Ա Ն Ո Ւ Խ

Գաւառն է դաշտավայր ընդարձակ , յերկրուս բաժանեալ ՚ի վերին և ՚ի ներքին , սահմանակից Մանազկերտի . բարեբեր արդասաւորութեամբն անուանի է ընդ ամենայն Հայաստան , նմին իրի և բնակիչք նորա ճոկք են և փարթամք : Մի յերեելի գիւղորէիցն է կոր . յորոց անուն կոչի վերին մասնն՝ կորայ Պուշտենիսի . և առ նմա է մենաստանն որրոյ ծերպյն Գանիելի , կոչեցեալ կորայ վանք , և գերեզմանն նորա ՚ի մէջ եկեղեցւոյն : Դիբք վանացն ՚ի բարձու կայ և հայի ՚ի վերայ դաշտավայրին Մանազկերտի և կորայ միանդամայն , զի չիք որոշչէ սահման ՚ի լերանց կամ ՚ի բլրոց և կամ գետոյ իրիք ընդ երկոսին գաւառուդ Մանազկերտ և կոր , այլ ըստ արդի բաժանմանն ՚ի գիւղորէից սահման հատանի , յորոց մասն մի Մանազկերտի են սեփականեալ և մասն մի կորայ : Այսպիսի բաժանմունք և յայլ գաւառս տեսանին սահմանակիցս իրերաց , որպէս վերնոյն Բասենոյ և ներքին Բասենոյ , Խութայ և Բռնաշինոյ , Շիրակայ և կարսոց . որք թուին առ նախնեզք երկոցուն մի գաւառ . համարել : Բազագս մարմնոյ Ա . Դանիելի ասի առ պատմագիրս՝ թաղեալ ՚ի Հացեաց գրախորի . և տեղիդ այդ է ՚ի դաշտին Մշյ , առ սուրբ Սահակ գիւղիւ , ըստ նոցին իսկ պատմութեամեց . սահմայն անդ չիք գերեզման և ոչ ուխտատեղի ինչ յանուն Գանիելի . թերեւս յետամանաւկաց անտի փոխազբեալ իցէ աստ ՚ի կորայ վանսն :

Եռովակը և Խայլու և Նազուկ.

Ե՞ն դրա երկու լիճք քաղցրաշուրբ, առաջինն ի Գուլանուխ գաւառի և երկրորդն ի սահմանակցութեան Խլաթայ, զրեթէ հաւասարը իրերաց տարածութեամբ. սառնուն ի ձմերան և լինի ճանապարհորդել ի վերայ սառինն. և յայգանուն կոչեցան յանուանէ գիւղիցն առ նորգք: Այլ վանի առաջնոյն զրոյցը են այսպիսի առ բնակիչս գաւառին. Պառոշ ոմն թագաւոր ասեն, որ բնակէր ի բերդի ի վերայ Պլեման լերին՝ որ հանգէպ կոյ գաւառին, ունէր սուսեր շինեալ ի կայծականց յերկնից թօփափելոց: Եւ որդիք նորա ընդ հակաւակս եւ լանէին միմեանց՝ թէ ում ի նոցանէ անկցի սուսերն. տեսեալ հօր նոցա զանդագար կուի որդւոցն՝ արկ ի ծովակն զսուսերն: Խոկ որդւոցն յարձակեալ զինի ի ծովն թէ յափշտակեցեն զսուսերն հեղձնուն. այլ ոգիք նոցա մի անգամ յեօթնեկի յուրամժու առուր ի կուի եղանեն ընդ միմեանս և չկարեն ի բուռն արկանել զղէնն. նմին իրի, ասեն, յամենայն ուրբաթու ալէկոծութիւն սաստիկ լինի ի ծովակին:



ՏԱՐՈՒՆ

Այս գաւառու Ցուրումերան աշխարհի, դաշտավայրը բարերեր, Սղկոնեաց ազգին կալուած լեռալ՝ ի հեթանոս ժամանակաց անտի, առ Տրդատառ անց առ Մամիկոնեանս, որոց ժամանգութեամբ կալեալ զայն, քաջութիւնս բազում դորձեցին ի նմա ընդդէմ Պարսից: Զիք այլ գաւառ ի պատմութեան ազգիս, որպէս կարծեմ, յորում մղեալ իցեն այնքան արհաւիլը մարտից և կոտորած՝ քան զատ. և ոչ դարձեալ յորում՝ ի յարձակման անդ թշնամեաց՝ որպէս ի սմա միշտ աննկուն կացեալ իցէ Հայոց և յաղթող: Եմին իրի և առ ի գիւրաւ դդէմ ունել օտարաց շինեցին բազում ամրոցս ի կողս և ի գագաթունս լերանց բարձանց, յորոց աւերակացն կան մինչև ցայսօր. և զի ոչ առ ի ցոյց ինչ մեծապործութեան շինեցան դոքա՝ անտի իսկ յայտ է, զի ոչ համեմատ իւրեանց մեծութեանն են շինուածքն, այլ կարի հասարակ, որչափ ինչ պէտք էին նոցա ամբանալ ի նոսին և կոռուել. քանզի և՝ ի լերինս և ի կողս բարձանց են առ հասարակ և ոչ ի գաշափ:

Մահման գաւառիս Ցարօնոյ թէ ուստի ուր տարածեալ ձգէր ըստ նախնի պատմութեանց՝ շիք հաստատութեամբ սանել, այլ ըստ այժմու բաժանման, որ սովորականն է առ ամենեւեան, համարի գաշտն Մշց շրջապատեալ՝ ի լերանց յամենայն կուտէ, յարեւելից նէմրութաւ և Գրուռուաւ, ի հիւսիսոյ Քօսուրաւ, յարեւմափց Քարքէ լերամբ և ի հարաւոյ Ցօրոսիւ. չէ յայտ եթէ և անդը քան վերինսդ. ձգէր արդեօք սահման գաւառիդ. զի այժմ ամենայն անձուկ լեռնային վիճակ տուանձին անտառի յորջորջի, նա և նոյն իսկ դաշտավայրն կիսով չափ յարեւելից կուտէ Չայխուրը վերաձայնի: Արդ գաշտն Մշց հանդերձ Չուխուրաւ երկայնեւալ ձգի յարեւելից յարեւմուս իրը երեքօրեայ ճանապարհաւ կարաւանի. իսկ լայնաւթիւնն որ չէ միօրինակ ամենայն ուրեմք՝ ոչ առաւելու քան զիեց ժամուց: Առ հասարակ ծայր՝ ի ծայր գուրան է գաշտն և քաջ մշակեալ: Մահմանակից նորին գաւառք անդը քան վերինսն են յարեւելից մասն մի գաւառին Բզնունեաց կամ թէ սանել Ռահնվայն Բաղիւց, ի հիւսիսոյ Պուլանտիս և ինուս, յարեւմափց Պոկլան և Կինձ, և ի հարաւոյ Շատափս և Բանաշէն և խութ:

Առաջ մի Եփրաստ գետայ, այն որ յականէ Ծագկաց լերինն բզիւտ, անցեալ ննդ Ալաշկերտ և ընդ Պուլանտիս և եկեալ միացեալ ընդ երկրորդ առաջնին որ բնիսէ ի Պինկեօլայ որ և Չարպուհուրայ յուր կոչի, ի հիւսիսոյ կուտէ մտեալ՝ ի Կաշտն Մշց՝ անդը քան զիէս դաշտին յարեւմուս կոյս, ուր է և կամուրջ նորա առ Սուլուի գիւղիւ, և յերկուս բաժանեալ զդաշտն՝ անցեալ զնայ ընդ ձորա-

մէջ արեմտեան լերանց : Խոկ Մեղրագեւոյ ՚ի Տաճկաց կոչեցեալ Գարսասոյ, որ է ճշդիւ Մեղտեայ գետ՝ սակս Մեղտեայ մեծի աւանին ՚ի հնումն առ երի կալց, դայ յարեելից կուսէ դաշտին . զի ակն նորա է առընթեր Քուրդ-Նորչէն ասացեալ գեղջ, բխեալ ՚ի գիւր վայրի ՚ի մեծաբաց բոլցի սպասատակ ականէ, ուր կարի քաղցր է ջուրն, ականակիտ և սպասուական յոյժ : Մշեցիք թէպէտ և աւանդութեամբ ունին զբուն ակն Մեղրագեւոյ լինել Ըմակացն որ ՚ի գաղաթն նէմրութայ, զորոց ասասցուք զինի, զի և զատորոստով նորա է Քուրդ-Նորչէն, սակայն և ՚ի փորձոյ հաստատեալ է երբեմն վկայութեամբ ամենայն բնակացն . հովուի ուրումն արկեալ զգաւազանն ՚ի Ըմական նէմրութայ և եկեալ եգիստ զայն յակն Մեղրագեւայ : Արդ Մեղրագեւ ելեալ յականէն և ընթացեալ ընդ միջոց դաշտավայրին հանդարտավայը՝ առուակս բազումն ընդունելով յինքն երկուստեք ՚ի լերանց ՚ի հարաւայ և ՚ի հիւսիսայ, դայ և խառնի յշփրատ՝ անդր քան զկամուրչն Սուլուխայ, գիւղորէս բազումն ունելով երկուստեք : Այսր գետոց կամուրջ է քարաչէն բազմակամար՝ որ կայ անկործան մինչև ցայսօր հանդէպ աւանին Մշոյ . սակայն գետոյն խոտորեալ զընթացմն՝ ՚ի ցամաքի կայ կամուրջն, ոչ գիտեմ յորոց ժամանակաց հետէ : Ամօք յառաջ հնարեցան դաշտականք գութանաւ առուակ բանալ վերստին և ուզզել զինթացս գետոյն ընդ կամրջան, այլ չեղև հնար սակս կարի պնդութեան գետնոյն, և զի ոչ վարի պարագի ինչ էր միջոց փորելի երկայնութեանն : Երկարին գետքդ Եփրատ և Մեղրագետ թէպէտ և մեծամեծք և անեցունք՝ մանաւանդ՝ ՚ի գարնայն, սակայն ամենին անօդուտ են արտորէից դաշտավայրին . զի տաշտ նոցին խոր է և չէ հնար հատանել ուստեք առաջ առ ուստանելոյ զարտորացմն . թէպէտ և եր բեմն ճախարակեայ մեքենայիւք հնարեցան յօդուտ ածել զնուրն, այլ չեղև հնար սակս հանդարտավայը ընթացից ջուրյն, մանաւանդ Մեղրագետոյն : Խոկ զարտորացմն ուսողանեն մանր առուակին որ ՚ի լերանց իջանեն և խառնին ՚ի գետսն . նմին իրի տաղնապ մեծ է գիւղականաց ՚ի պատճառս ջրոյ ուսողմանց և լիէճք անդադար : Զկունս բազմատեսակս ունին գետքդ, այլ Եփրատ և մեծամեծս, յորում գտառ երբեմն ձուկն մի ահեղ մեծութեամբ մինչև պատառարի՛ ՚ի զլիսի նորա առն միոյ : Սովորական ձկունք գետոցդ անուանին՝ դեղիկ, այլու կարապետիկ, մող : Մեղրագետ սակաւ մի ընթացեալ յականէն սկսանի մօրանալ մեծաւ երկայնութեամբ և հարուստ տարածութեամբ եղեգունս երկայնս բուսուցաննելով, յորս որջանան բազում անգամ ՚ի գաղանաց կինճ և գայլ և արք օք քաղաք . — Մի ՚ի բազմամարդ քաղաքաց ՚ի հնումն, ՚ի գաշտի աստ էր ո՞ր կործանեցաւ, և փոքր ինչ յաւերակաց նորա երկի ամրոցանման մինչև ցայսօր ՚ի մէջ նոյն շամբին անմերձենալի :

Զահնաերթ քաղաք . — Առաւել մեծանիստ քան զինթացքեալն, որ և յետոյ նորոգեալ ՚ի վախտանիայ Պարսից զօրավարէ կոչեցաւ Պորապէս . մերձ էր օձ քացարին յարմելից հարաւայ նորա, և յաւերակաց նորա են անշուշտ որ երկի դարբ ուրեք ուրեք աննշանք ՚ի Մորիւ գիւղն՝ կոչեցեալ քեափիր Մորիւ, որ առցարդ ուրեք ուրեք աննշանք ՚ի Մորիւ գիւղն՝ կոչեցեալ քեափիր Մորիւ, որ առցարդ կայ անընդմիջաբար դրսուու և նէմրութ լերանց : թէպէտ և յոյժ սակառք իշեն աւերակին, այլ բնակիչք դաշտին մեծանիստ աւանդեն զդիրս նորա

ստորոտէ լերանցդ երկարածգեալ՝ ի գաշտն կցոյ: Եւ առ կարի ընդարձակութեան նորա պատմեն աւանդութեամբ անցո այսպիսի յորժամ շեն էր նա: Աղջկան ուրումն մասազի զշետ ընթացեալ ընդ այդն առաւօսուն այծու փախուցելոյ թէ կացէ, և չկարացեալ՝ տանեաց ՚ի տանիս վազս առնելով հեռանայ ՚ի տանէն յցժ մինչև ցտարաժամել աւուրն, և ՚ի թաղս անծանօթս ինքեան մնորեալ՝ չկարէ այլ ևս գառնեալ՝ ՚ի տուն իւր ուստի ելեալն էր. և տեսեալ զնա որումն առնու ՚ի տուն իւր, և պահեալ զնա դգուանօք իրեն զմի ՚ի զաւակաց իւրոց և հաճէ զկամն նորա չելանել արտաքս, և ոչ իսկ խնդրէ գտանել զծնողս նորա. և ծնողք նորա բաղում աւուրս ՚ի խնդիր լեալ աղջկանն և չկարացեալ գտանել ուրեք՝ դադարեն: Անցանեն ամք ոչ սակաւք, և հայր աղջկանն, կամի ամուսնացուցանել զորդի իւր, և խօսի զնա նոյն աղջկանն անզէտ ամեննեին թէ կար զաւակ իցէ, և ոչ հայրագիր նորա: Յաւուր հարսանեաց ՚ի տանել զաղջիկն ՚ի տուն փեսային, իրեն ետես նա զտունն խակոյն ՚ի միտս եկն եթէ այլ առն էր յորմէ երբեմն ընթացեալ զշետ այծուն և չկարացեալ անել զնա ոչ ևս գարձայ յետս. և յայտնէ զիրսն այլոց, և խմացեալ ծնողզայ նորա զիրսն և յիշեալ զերբեմն կորուս զաւակին իւրեանց այլ յայլմէ լինին թէ այս է ուրեմն կորուսեալ զաւակն մեր զոր և յայլ ևս նշանաց ճանաչեն. և զւրանութիւն հարսանեացն փոխիւն յայլ նոր և անակնկալ խնդրութիւն:

Ծնդ մէջ Մորիսայ և Օձ քաղաքի առ ստորոտով երկայնանիստ լերին միոյ ՚ի գաշտի է ներմուկ կաշեցեալ ՚ի բնակչաց կերմաւ, և ջուր նորա ստողվարար հիւանդութեանց: Է և այլ ներմուկ զաղջ և ծծմբահոտ որ բխէ ՚ի ներքուստ լերին և կոչի ծրճակ, որ թուի լինել ծծմբակ, և լեանդ երկայնեալ ձգի ՚ի գաշտն կոյս կոչեցեալ ծրճակայքի, իրեն երեք ժաման հեռակ ՚ի Մշց յարեւելս կոյս ընդ երկայնութիւն լերանցն Տօրոսի:

ՄՊԵ. — Ի ստորոտ լերանցն Տօրոսի՝ որ են ՚ի հարաւոյ գաշտավայրին, ՚ի լայնարձակ ձորաբերանի կատուցեալ է քաղաքս փոքրիկ. բլուր մի ՚ի միջավայրին ունելով բարձր, և ՚ի գագամթան նորա ամբոց անհնան, անբնակ և աւերակ, և շուրջ զրբուխն տունք քաղաքին վերուստ ՚ի վայր: Առաջի նորա անցանէ գետ պատուական ջրոյ որ ՚ի լերանց իջեալ թափի ապա ՚ի Մեղրագետ: Շինուած քաղաքին աննշան և մեծաւ մասամբ նմանաձև զիւղորէից: Են նորա քարաշէն եկեղեցիք հինգ, մզկիթիք երկու կամ երեք, և իջեվանք երկու, և մի բաղանիք, այլ ջրաղաց բաղում ՚ի վերայ գետոյն: Ի թաղիցն որ բարձրագիր են ՚ի վերայ րլրոյն և ՚ի կողայ նորա՝ գեղատեսիք են որք առ ձորաբերանով, համեմէպ իւրեանց ունելով զգաշապայրին: Շուկայ նորա փոքր իր ՚ի չորեքհարիսր կրպակաց սահմանեալ: Յարհեասից այնք ևեթ գտանին որ կարի կարլորին են մասաւանդ զիւղականաց, գերձակութիւն, կօշկակարութիւն և զարբնութիւն: Զեռագործ և ոչ մի ոչ գտանի անդ, այլ զամննայն կարեսօր պէտս ՚ի բանից ածեն և ՚ի քաղաքին կարնոյ. և գաշտավայրն ամենայն անստի զնէ: իսկ մեծ վաճառ նորա է ծխախոտ, որոյ արտորայքին են անքնդ միջարար զաւանեաւ քաղաքին ընդ ձորաբերանն, ևս և ՚ի բաղում զիւղորէս: Ի յարգի է ծխախոտ Մշց ՚ի բաղում գտանոս, յորոց բաղում բեռինս առաքեն, մանաւանդ ՚ի կարին:

Քարեմունքն կողմի քաղաքին են պարտէդք պտղոց, և պտուգըն են դամնն հշոր և տեսակ մի քաղցրահամ տանձի: Խոկ այդիք են ՚ի կողաց նոյն լերինն Տօրոսի հարուստ տարածութեամբ յարելից յարեմուսու և բանջարոց բազում տեսակք գտանին և ՚ի քաղաքին և ՚ի գիւղորէս, այն է կաղամբ մեծաքանակ և շաղգամ, որք և տարեկան տառելիք են բնակչաց. և ՚ի լերինս սպիտակակ, սըխտորուկ, քմուկ, ողին, ժախ և այլք բազումք. Ալնդեղինաց ունի բակլայ, սիւնեռն, և լուրիս ոչ սպիտակ:

Հիւրաէդք են Մշեցիք, և այդ բնաւորութիւն տիրէ ընդ բովանդակ գաշտա-վայրն, յորում են իրը եօթանասուն դիւղք առ հասարակ հայազդիք. և կարի ազգան ՚ի նոսա չիրէ նեղութիւն վասն ապրանաց, զի և հասարակ բանջարեցինօք շատանան և երբեմն ևս աշտուճ հացիւ. ամօթ և անդթութիւն մեծ հա-մարի առ նոսա, եթէ ադքատ ոք կամ հիւր մոնեալ ՚ի տուն նոցա և անկերակուր յետս դարձցի: Են ՚ի տանց մեծամեծաց որք առ առաւելազանց հիւրընկալութեան՝ մանաւանդ՝ ՚ի ժամանակս բոնաւորութեան Քրդաց՝ անկան ՚ի մեծութենէ, այլ տակաւին որչափ ձեռն նոցա հասանէ չպակասին ՚ի մամնէ հիւրասիրութեան:

Եօթնհարիւրիւ շափ տունք են Հայոց ՚ի քաղաքիս, այլ առաւել Ցանկաց, որք ՚ի սկզբանէ հետէ սիրով վարին ընդ Հայս և պաշտպանեն զնոսա յամենայն նեղութիւնս նոցա. ընդ դրացի Հայոց իրբե եղայրը ընդ եղոր վարին, խորհուրդ հարցանեն ՚ի նոցանէ, և չէ տեսեալ ՚ի նոսա ժանատութիւն ընդ դէմք քրիստո-նէտութեան, թէպէտ և խստի օրինապահք իցեն ըստ խրեանց կրօնից, և միս հայալեն յուտել չմերձենան և ոչ յարբեցուցիչ ըմպելիս ըստ օրինի Քրդաց:

Ի հարստահարսթենէ Քրդաց արդեօք եթէ յադքատութենէ երկրին հա-մարելի է զի ընթերցասիրութիւն պակասի յոյժ ՚ի գաւառիս Տարօնաց. այն խոկ են զարմանք զի արանց հզօր իմաստնոց ասպնջական լեալ առ նախնեօք և ծաղկեալ բազում իմաստութեամբ ՚ի նոցանէ, արդ անհետ եղեալ են իսպառ արդինք նոցա. և չիք առ ումեք ախորժակ վերստին ՚ի նոյն շաւիզ հետամուս իի նելոյց վանորէից անկ էր կարեոր մշակութիւնդ. որոց երբեմն անմերզադիր իի նել հարկ էր ՚ի պատճառս անդադար հարստահարսթեան Քրդաց, այլ այժմ ոչ ևս, զի անդորրացեալ կարողք են ջան դնել և յառաջանալ:

ՎԱՆՈՐԱՅՔ ՄՇՈՒՑ

Առաջին ՚ի վանորէիցդ անուամբ և բազմութեամբ միաբանից, եկամտից առաստութեամբ և յաճախ երթեւկութեամբ ու խստաւորաց և շինութեանն ընդ մի ձակութեամբ՝ համարի սուրբ կարսպետ, այլ ըստ հնութեանն հաւասար ոյլ լոց. զի ամենենքեան հիմնեալք են ՚ի սրբոց Լուսաւորչէն՝ սակաւ ամօք յառաջ զինի միմեանց: Մենաստանս սյօն հեռի է ՚ի Մշոյ եօթն կամ ութ ժամաւ յարի մուստ հիւսիսոյ կառուցեալ ՚ի կողաց լերինն Քարքեայ ՚ի դիւր վայրի, ՚ի հիւ-

սիսոյ իւր տնելով զլեառնդ , և յարեւելից և յարեւմոից զայլ ևս բարձունս կամ դօտիս նոյն լերին , և 'ի հարաւոյ այլ և այլ ձորամիջնովք տարակացեալ 'ի դաշտէն Մշոյ : Եւառն Քարքէ բազմագոտի գոլով ընդ այն կողմն՝ կոչ ՚ի բնակչաց Բազմասար : Մենաստանս այս տեղի էր ՚ի ժամանակս հեթանոսութեան մեհեւ նից Դեմետրեայ և Գիսանեայ կուոց . զորս կործանեալ սրբոյ Լուսաւորչին և շինեալ եկեղեցի և վանս՝ ամփոփեաց 'ի նմին 'ի նշանարաց սրբոյ Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպովին , և կացոյց առաջնին վանահայր զԳլակ ասորի , յոյր սակս կոչեցաւ Գլակոյ վանք : Կոչեցաւ և իննակնեան վանք , յաղագս ինն աղբերցն բղիսերոց մօտ առ Նմա , ուր բնակեցան երբեմն Խոթն Խոտաճարակին և անդ կատարեցան 'ի Պարսից : Շինուած մենաստանին է քառակուսի և կրինայարկ , առհասարակ քարաշէն և բարձրապարիսպ , սահմանեալ 'ի բնակութիւն միաբանից կարգաւորաց և մշակաց . և չիք այլ բնակարան զատուցեալ որմով յառաջնոցն՝ վասն ուխտաւորաց , որպէս յայլ անուանին վանորայս տեսանի : Եկեղեցին է 'ի մէջն անդ քառակուսոյն զատուցեալ 'ի մենաստանէն յամենայն կուսաց , բովանդակ քարաշէն բազմասին , ցած և տափարակ տանեզք : Աւագ խորանն վոխանակ կիսաբոլոր խորանաձև տեղոյց առ 'ի ներքո ըստ սովորութեան այլոց Եկեղեցեաց՝ յառաջ կոյս կայ յորմայն . Երկուստեք նորա այլ մատրոնք վայելուցք , տաճարածեք և գմբէթաւորք , յաջմէ սուրբ Ստեփանոսս և յահեկէ սուրբ կարապետ , ուր է հանդստարան նորա 'ի սպիտակ կճոյ , յաջմէ զարդարեալ բազում՝ արծաթի սպասուք և դիպակզք , և հանդէպ նորա Աթանագինեայ եպիսկոպոսին : Ուխտաւորաց օրէնք են նախ մերձնենալ 'ի խորհուրդ խոտովանութեան և ապա մոտանել յայս մատուռն՝ յերկրպագութիւն գերեզմանայն . և այս արանց միայն , զի կանանց արգելեալ է 'ի սկզբանէ և այսր մոտանել 'ի մատուռն , այլ միայն մինչև ցդուռնն մերձեցեալ և երկրպագեալ 'ի հեռաստանէ՝ դառնան : Իինն վարդ պատրիկ անցեալ զօրինքո իշխեաց մտանել 'ի ներքս և հարուածեցաւ , ըստ Յ . Մամիկոնենի պատմութեան . և ցայսօր ոչ ոք 'ի մեծուհեաց համարձակեցաւ 'ի նոյն կամ համարձակի , զի ծանօթ են իրքդ առ ամենեւեան : Խաչվառք , կամ թէ ասել խորանք կրկին մատրանց և աւագ խորանին՝ ոսկեզօնք և փառաշեղք են , զոր շինեաց Պետրոս Եպիսկոպոս կուրավցի կոչեցեալ առաջնորդ վանացն : Առ կողիւք կրկին մատրանց են և այլ մատրունք ընդարձակագոյնք քան զվերայգերեալն . Հիւսիսայինն է զգեստասուն , ուր է և գերեզմանն մօր Վարդ պատրիկ , և հարաւայինն յանուն սուրբ Գէորգայ նորոգեալ վերստին : Յաջմակումեան որմ մատրանն է տեղի անձուկ և փոքր պատուեալ մըշտավառ կանթեղքը . 'ի ամա աղօթէր , ասեն , սուրբ Լուսաւորիչ : Զանզակատունն է սիհնազարդ 'ի վերայ գրան Եկեղեցւոյն յարեւմտից :

Արտաքոյ արեւմտեան պարսպին այլ պարիսպ ածեալ է շուրջանակի ըստ չափոյ լայնութեան մենաստանին , իրրե գտեիթ ընդարձակ , յորոյ շրջապատի են այլ և այլ յարկածածուկ վարկապարազի բնակարանք , ընդ որս և ախոռք ձիոց . 'ի հարաւոյ շրջապատիդ է բուն արտաքին և մեծ դուռն մենաստանին : Անդ 'ի դաւթին է և քարաշէն մատուռն սուրբ Յարութիւն կոչեցեալ , զորմէ աւանդի մըացրդ լինել շինուածոց Լուսաւորչին : Զուր մենաստանիս յորդառատ և մըշ-

տահոս ՚ի ներքս և արտապրց նորա, և ջրաղաց մի ՚ի մէջ վանացն : Ուխտաւորաց բազմութիւնն հաւաքին անդ ՚ի առնի վարդավառին, և ինի տօնավաճառ մեծ ամենայն կարևոր վաճառաց : Հասոյթ վանացն, թող զսեփական կալուածս սիր, գիւղըէք դաշտավայրին են մեծաւ մասամբ՝ թեմ նորա . թու և զոր նուիրակին բերեն ՚ի հեռաւոր աշխարհաց : Մենաստանս կերակրէ զօր ամենայն աղիս աւելի քան զհարիւր յիստն . թող զոր ՚ի բազմութեան ուխտաւորաց, որը ոչ միայն ՚ի վարդավառին, այլ և ՚ի վերափոխման հաւաքին, ևս և յայլ եզանակս տարսոյն չղակասեն : Խրաքանչիւր յուխտաւորաց որ չե՞ ՚ի դաշտէն Մշց, պարտի հասուցանել դարպասս վանացն՝ այն է ձեռաձիրս . զի Մշեցիք և եթ ազատ ե՞ն յայդմ պարտաց : Արտապրց պարսպի վանացն ՚ի հարաւոյ են վարկպարագի մտարտնկը և ՚ի նոսա ամիսովիեալ մարմինք սրբոցն Անտոնի և կրօնիդեայ և եօթն Խոստածարակացն : Խակ քառորդաւ հեռի ՚ի մենաստանէն յարևելու հարաւոյ ընդ զառիվայրն է փակահ նորա, շինուած ընդպարձակ և պարսպապատ . անդ պահին ամենայն կարասիք մշակութեան հանդերձ անսամնովք, և է բնակարան երկրաց որդ մշակաց :

Ամաւ յառաջ քան զպատերազմն Ռուսաց մեծամեծք ՚ի ֆրդաց միաբանեալ անօրէն նորհրդովք թէ գագարելոց է խապատ աւագակոթիւնն նոցա յետ անկաշներց երկրիս Մշց ՚ի ձեռս Ռուսաց, յարձակեցան ՚ի վերայ վանաց սրբոց կարապետի և կողոպտեցին զամենայն առհասարակ զոսկի և զարծաթի սպասս և զպինձի կարասիս . բայցն զամենայն գաղոնի դարձանս յոյժ սակաւուց ծանօթս ՚ի միաբանից, և բարձին անախ բեռխնս սպասուց անդինս և նորատեսիլս զհաւագելուն ՚ի սուրբ Լուսաւորչէն և այսր . և ոչ թողին անդ և ոչ մի ՚ի կարևոր անօթոց ոչ աստուածային պաշտամանց և ոչ հարկաւորացն կենաց մարդոց . և զմիաբանման որ անդ գտան՝ մերկացուցեալ թողին ՚ի բաց : Մաստուն սրբոցն Գեորգաց պահարան բազմաթիւ հնագիր մատենից գատարկացաւ խօսաւ . զի ՚ի մատենիցն էր զորս ՚ի բաց տարան և էր զոր ՚ի մի չեղանակ լցին ՚ի կաթսայս մեծամեծս և ջուր ածեալ ՚ի նոսա ջնջեցին զամենայն . էր զոր ՚ի ջուր ջրաղային ամացեալ ընդ մատամիք ճախսարկին հերձուուեալ կորուսին, և էր զորս ձեռօք իւրեանց մանր մանր պատառեալ ցրուեցին ընդ ճանապարհ վանացն : Այսպէս ամենայն ցանկալի հնութիւնք վանացն կողոպտեալ անհետ եղեն և մնաց մենաստանն ամոյի իրբե. ամիսս վեց . և յետ այնորիկ խաղաղացեալ փոքր մի երկրին յերեսաց նոցա, և կին գալձեալ միաբանին և կալան բնակութիւն իրբե զառաջինն, ընդ կորուսս բազմադանձ սպասուցն թէպէտ ելոց ամենայն հայ մարդ, սուկայն միփթարեցան և միփթարեցին ժամանակաւ իրբե տեսոցեն դարձեալ ըլլ մենաստանն լցեալ զարդարեալ նորօք վերստին : Սակայն կորուսս մատենիցն հնոց՝ վերս անդժշկելս գործեաց ՚ի սիրտս ամենայն ուսումնակարաց, որում չկը այլ ևս գարման տանել, ոչ ոսկի և արծաթ և ոչ ակտանք պատուականիք փոխաւնակեցին երբէք անհնարին վնասուն :

ՄԱՏՐԱՎԱՔ . — Հինգ ժաման հեռի է ՚ի սուրբ կարապետէ յարելու նորա, և ՚ի հիւսիսաց Մշց յայնկայս Եփրատայ ՚ի ձորամիջի առ փոքր գետակաւ որ խառնի ՚ի գետն մեծ : Ի վանս յայս ամիսիեաց սուրբ Լուսաւորիչ զմանրորդս ոսկերպաց

սրբայ կարապետին և Աթանազինեայ. նմին իրի և Մանուշալանք ևս կոչի, և 'ի ու ամկեն Մատևավանը: Փաքը է մենաստանս, և ոչ նշանաւոր ինչ 'ի նմա և ոչ միարանից բազմութիւն. քանզի և թեմ նորա սակառ է յոյժ 'ի գիւղորէից Մշց և հասոյթ անբաւական:

ԱՅՏԵԱՏ. — Ի հիւսիսայ Մատրավանից ժամաւ հեռափ 'ի նմանէ է գիւղս աննըշան, 'ի կողաց լերանցն հիւսիսայ 'ի սարարարձր և 'ի գիւր տեղւոջ: Այս այն է որ 'ի հնումն բաշտից տեղիքն անուանէր պատուեալ զբհիւք յաղագս մեծի մեշենին, յորում էին պատկերքն երեքեան՝ վահեվահեանն, և Անահիտ՝ ուկիածին և ուկիամօլ սասացեալ, և Աստղիկ. զորս անհետ արարեալ Լուսաւորչին՝ շինեաց 'ի տեղւոջն եկեղեցի՝ որ առաջին համարի ընդ ամենայն Հայաստան, զի յետ այնորիկ շինեաց զսուրբ կարապետն: Այս եկեղեցի կործանեալ յԱպուռահիմայ 'ի կես է դարու, 'ի Մամիկոնեանց վերսախին շինեցաւ յետ ժամանակաց մեծակառույց, յորոց ամիսովեցաւ 'ի նմա մարմին սրբայն Սահակայ: Եւ զա ևս կործանեալ յանկթիմուր՝ 'ի քարանց նորա շինեաց զիփրասայ կամուրջն առ Մոլուխաւ: Մամիկոնեանց մեծագործաթիւն երսի յաւերակաց եկեղեցւոյն՝ որ գետնոյ հաւասար տեսանի ցարդ ըստ շուրջանակի տարածութեան իւրամ: յորում մատուռն մի փոքրիկ վերսախին շինեալ գետնափոր՝ ամիփուեալ կայ 'ի նմա յաջմէ մարմին սրբայն Սահակայ, և 'ի հանդիպոյ սրբոյն Շուշանայ: Արտաստաց արժանի համարեսցի Հայաստան, եթէ հայրենասէր որ ոչ դոցի պատուել զոեղիս զայս զցանկալի գամբարան սրբոյ հօրն և երկրորդ լուսաւորչի, և վերսախին կանգնել զտաճար առն Ասուռածոյ, հետեւող Մամիկոնեանց առարինութեան գտեալ: հատ իցէ մի անգամ յուշ ածել զարդիւնս քահանայապետին մեծի 'ի լուսաւորութիւն ազգիս, և յանշուք և յանապատացեալ վկայարանէ նորա 'ի գետին մտանել առ ամօթոյ:

ԱԴԱՐԵՆԵՈՅ ՎԱՐ. — Յարեւելից կայ Մշց երկու ժամաւ տարակաց 'ի նմանէ 'ի կողաց լերանցն Տօրոսի 'ի լայնարձակ ձորին 'ի բարձր լեռնագաշտակի որ է ընդ ծիրնկասար կամ 'Տիրինկասար լերամբ, և բարձրահայեաց 'ի վերայ դաշտավայրին 'ի զտարձալի տեղւոջ, ուր քաղցրաբեր օդոց փշմունք, սիզաւէտ տեղիք ուռենեօք շրջապատեալ՝ 'ի հարաւային խորշակէ պատապարին զվայրսն: Մեծանիս է վանս քան զՄատրավանք, թէպէտ և փոքր քան զսուրբ կարապետ: Եւ կեղեցի նորա տաճարաւոր և կաթողիկէ 'ի վերայ տաճարին յորում և մատունքը չըր 'ի չորեսին անկիւննս և 'ի վերայ նոցա դարանք առ հասարակ մթինք և խրթինք. երկուստեք տաճարիս են գերեզմանք աւետարանշացն Մարկոսի և Ղուկայ, յորս ամիսովեալ են մասունք 'ի նշաբաց նոցա: Խոկ մասունք երկուստան տառքելոց, յորոց անուն կաչի մենաստանս, չոնին տանձին դիրս, այլ աւանդութեամբ ասի ամիսովեալ զնոսա սրբոյ Լուսաւորչին ընդ իտրանաւ տաճարիս: Շինութիւն տաճարին հնագոյն երսի, այլ եկեղեցւոյն կամ ժամաստանն ոչ այնպէս, որոյ թուականն տեսանի 'ի վերայ աջակողմեան միջին սեանն որ ասէ այսպէս.

'ի Բ-Վ-Հ. ՈՒՂ. շինեցաւ ժամատունս ձեռամբ որ կա-

բապետ արհեալիսկոպոսին յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց :

Եւ է կամարակապ ՚ի վեցից սեանց, այլ տափարակ տանեգք. իսկ զանգակա տունն սիւնազարդ առաւել նորաշն քան զժամատունն ՚ի վերայ դրանն յարե. մոից : Զերկրացիկ դուռն տաճարին աւանդեն լինել դուռն Չորտուանելայ մա. միկոնյ, զորմէ զինի . և է ծաղկազարդ յօրինեալ փորագրածոյ և սևաներկ, հան. գերձ շընանակաւ, և պատկերս ՚ի նմա մարդոյ և թունոց ըստ արհեստի ախոր. ժակաց ժամանակին, և ՚ի վերայ փորագրեալ այսպէս .

՚ի թհ ՇԶԳ եւ տը թորոս եւ գրիգոր եւ զուկաս գծ :

Թէպէտ և ՚ի շինուածոց Լուսաւորչին չէ մնացեալ ինչ, սակայն են հնութիւնք այլոց դարսոց զինի լուսաւորչին . ՚ի գոցանէ են խաչաթոռ ասացեաբն արտա. քոյ պարսպի վանացն յարեւելից շարեալ կարգաւ . ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ. և են դորա մեծամեծ խաչաքարք կանգուն ագուցեաբք ՚ի վերայ սառաւար վիմի իրբու. բազմեաբք ՚ի վերայ աթոռոց . բազմաքանդակ են խաչաքարք ունելով իւրա. քանչիւր արձանագիրս յանուանէ, և կոչեն զնոսա յանուն թարգմանչացն, յո. րոց ծանօթ մեզ Դաւթի անցաղթին է, որ և բազմում ամօք յետոյ կանդնեալ է ըստ ցուցանելոյ թուականին . թուի թէ այլ գերեզման էր նորա հասարակ և կամ խորտակեալ, և յետոյ գծոյակապդ. զայդ կանդնեցին, զի քան զայլն բար. ձրագոյն է և խաչաքարն և աթոռ նորա : Եւ են արձանագրութիւնք իւրաքան. չիւրոցն այսորիկ սկսեալ ՚ի հարաւոյ .

Ա. ՚ի թհ ՇՊԳ կանգնեցաւ խաչս ՚ի բարեխաւսութն
ստեփի : Ճոնկանն ննջեցելոյ ՚ի քոյ յիշ աղաչ . զմե. .
զաւոր զորդ Ճոնակ

Բ. ՚ի թհ ՇՊԳ կանգնեցաւ խաչս ՚ի բարեխաւսութն
դաւթի անյաղթ ֆիլիսովիքաի յիշեցէք ՚ի քոյ աղա. .
չեմ զմեղուցեալ գէորդ Ճոնակս յիշե

Գ. պողոս վարդապետ հանդուցեալ ՚ի քոյ յա. .
(զսմանէ ասեն աւանդութեամբ թէ Տարօնեցին է)

Դ. տը զազարա եւ տը ստեփանոսի ՚ի թհ : ՇՀԳ : կանգ. .
նեցաւ խաչս և նորոգեցաւ որ առաքեալքս ած ո. .
զորմի աշխատողաց սորա

Ե. . . : Եւ պատուական պետրոս քահանայ որ կանգնեց

**զիսաչս զայս՝ ի բարեխաւսութեն ու ՇՀԲ զյեսու
գծողս**

Զ. (անդիք)

Է. 'ի թհ ՈՒԱ թումա վարդապետ հանգուցեալ՝ ի քո
յու ՚ի առ մեր

Ք. 'ի թվականոթն հասց ՇՊ կանկ : ('ի կողմանէ) . . .
պետրոսի քահանափ և կոստանդէ յիշեսջիք ՚ի քո
աղաչեմ եւ զգործողս . . . 'ի սու . . . 'ի նվարի . . . ժ. կա

Թ. 'ի թվի հ ՈՒԱ ես խաչիկ որ զիսաչս կանգնեցի փրկու-
թն հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց յիշեսջիք ՚ի քո ա-
ղաչեմ

Ընդ մեջ հինգերորդին և վեցերորդին կայ միւս ևս անդիք :

Ի հանդիպոյ խաչաթոռոցդ յարևելից են երկու գերեզմանք առընթեր մի-
մեանց՝ ոչ կանգունք իրրե զայլս, այլ սովորական գրիք, զորոց աւանդեն եթէ
Խորենացոյ և Մամրիէ իցեն: Նովին գրիք են և այլ ևս երկու գերեզմանք ՚ի
հիւսիսայ նոյցա, նոյնակէս առընթեր միմեանց և երկայնաձեք, և զսոցանէ ասեն
եթէ իշխանացն Սահակայ և Համազապայ են: Երկուստեք եկեղեցւոյ վանացս
են և այլ ևս երկու մասորունք, հարաւայինն առյօր Ստեփանենոս և հիւսիսայինն
առյօր գերորդ, երկորին ևս ամայի և անդործածելի. ՚ի սուրբ Գէորգ ասեն թա-
ղեալ զօրտովին Հայոց արքայ կոչեցեալ, որ թերեւս Զորտուանէլ իցէ մամիկո-
նեան, զոր յիշեցաք և յիշելոց եմք գարձեալ, այլ գերեզման նորա անյայտ է
այսօր ՚ի մատրանդ: Քարբնկէց մի հեռի ՚ի մենաստանէն է այլ մատուն մեծ
վայելչան սաքաչէն հանդերձ կափողիկէիւ, նուիրեալ յանուն Աստուածածնի:

Զորք աղբիւրք են մշամհաք ներբոյ և արտաքրյ մենաստանիս: յորոց մի է և
թաղէի առաքելոյ ասացեալն աղբիւր պատուական քան զայլն. զի է հանդէպ
նորա խաչաքար հին զոր սրբոց առաքելցն ասեն օծեալ և կանգնեալ ՚ի տեղովն: ՚ի
հասոյթ մենաստանիս բազում թեմն կապեաց Լուսաւորիչ հանդերձ Տըրդա-
տաւ: յորս յաւել յետ ժամանակայ և Զորտուանէլ մամիկոնեան, յորմէ երեխ
թէ յոյժ շէն և պայծառ էր մենաստանս առ նախնեօք բաղմութեամբ միարա-
նից ՚ի նմա:

Այսորիկ և որ սոցին նման այլ ևս ցանկալի զիսելիք զվանացս՝ պատմին մի
ըստ միանէ ՚ի հնագիր մագաղաթեայ արձանագրի: զոր նախ սրբոց Լուսաւոր-
չն արձանագրեալ ձեռամբ իւրակ յառնարէն, և յետ ժամանակաց ՚ի հայ թարգ-
մաննեաց զայն Զորտուանէլ, որոյ մատանց գիր է որ պահի ցարդ ՚ի վանսն զոր
նից ՚ի նմա:

և կցեալ են յետոյ ՚ի կատարած երկաթագիր մագաղաթեայ մեծի ճառընտրին : Աբձանագիրդ սկիզբն առնէ զերթալց որբոյ Լուսաւորչին ՚ի Հռոմ ընդ Տրդատայ , պատմէ զդաշխնսն , զնշխարս որբոցն ածել և ամիտոփել ՚ի տեղւոչս , զշխնութիւնն մենաստանիս , և հասոյթս կապել նոմս : Եւ քանզի ոչ ամենեցուն դիւրլնթեռնելի էր զրութիւն Չորտուանէլսց , ՚ի Շիլ թուին գաղափարեալ է զնյոյն բանս ՚ի ներբը նորա սովորական տառիւք ժամնակին , յաւելեալ ՚ի նմա ուրեք ուրեք յանուանս տեղեացն զայլ անուանս , որպէս կարծի , ՚ի բացարութիւն այլոցն : Նշխար արդարեւ ցանկալի , եթէ անկորուստ պահել կարասցեն մինչև ցվախճան : Եւ այս պատճէն է նորին .

« Ես Գրիգորիոս պալհաւելի որդի անսկա յազգէ արշակունեաց . յետ բա-
» զում չարչարանաց և վտանկից զոր կրեցի վասն անուանն Քրիստոսի : Խնամաք
» և տեսութեամբ կոչմամբ ամենասուրբ հոգւոյն կացի յաթու եպիսկոպոսապե-
» տութեան տանս թորդուն և ազգանապեան աղինս : զոր զութ և խնամ մեծի
» ողորմածին Աստուծոյ ծագեաց ՚ի նոսա ՚ի ձեռն իմոյ անվիտանութեանս ըլ-
» լոյս գիտութեան աւետարանի փառացն Քրիստոսի որ զարդարեալ պայծա-
» ռացան եկեղեցիք հայաստանեացս : Արդ խնամաւքն Աստուծոյ եւ առաջնոր-
» դութեամբ , կամ եղև ինձ և աստուծանել և քրիստոսապսակ արքային
» Հայոց Տրդատա . գնալ ՚ի տես ՚ի սէր և ՚ի միաբանութիւն մեծ քրիստոսասէր
» և բարեպաշտ աշխարհակալ կայսերն Հռոմայեցոյ կոստանդինոսի հանդերձ
» բարում ապատագունդ զաւրաքս Հայոց : Հ : Հազարաւ . որով հասեալ ՚ի մեծ
» մայրաքաղաքն և յարքայանիստ գահն Հռոմ . մեծամեծ պատվով և ամենա-
» ռատ սիրով ընկալեալ եղաք յաստուծանել և բարեպաշտ արքային կոստան-
» դիսենոսէ . եւ ՚ի սուրբ առաքելանման հայրապետէն Սեղբեատրոսէ . կացեալ
» ժամանակ ինչ առ նոսին . դաշն սկրոյ և միաբանութեան եղաք առ միմէանս
» Քրիստոսի արեամբն զրել և միջնորդել : Զի անջրելի լիցի ուխտ և միաբանու-
» թիւն Հայոց և Ֆրանկաց մինչեւ ՚ի կատարած աշխարհէ : Խակ զինի գառնալցն
» մեր յաշխարհս Հայոց ՚ի ժամ բաժանմանն պատվեաք եղաք ՚ի նոցանէ փա-
» ռատէ մեծամեծ և անթվելի պարզեաւք : Զոր ամենայնի կատարեալ հաւա-
» սով և Ներմեռանդ սիրով իննորեցաք մեք ՚ի նոցանէ կապ սիրոյ և հաստա-
» տութեան դաշնոց զոր եղաք ՚ի նշխարաց սուրբ և զիսաւոր առաքելցն Պետ-
» րոսի և Պաւլոսի : և նոյա շարժեալ ՚ի սիրոյ մանաւանդ թէ ՚ի վերին խնամոցն
» ավին զահեկ բազուկսն Պետրոսի և Պաւլոսի . և զաջ ձեռն սուրբ առաքելցն
» Անդրէի հանդերձ այլ բազում նշխարաք պարզե հայաստանեաց դանձ անկո-
» զոսպանելի և պատճառք վրկութեան ազդի մարդկան : մեք ընդալեալ մեծաւ ու-
» բախութեամբ բերաք յաշխարհս հայաստանեաց . եկեաք ՚ի գաւառս տարատ-
» նոյ . ՚ի տեղովն յորում հանգուցեալ էր նշխարք սրբոյ կարապետին և Յովէ
» հաննու Մկրտչին ժողովեալ զամենայն եպիսկոպոսունս և զիվրդեցաք ՚ի Քրիստոսի
» զրոյը գասս պաշտանէից բազում պաղպատանաւք խնդրեցաք ՚ի Քրիստոսի
» յայտնել տեղի արժանաւոր հանգստեան նշխարաց սրբոց առաքելցն ՚ի հայտ-
» ստան աշխարհիս : զոր լուաւ Աստուծած սյն որ զիամն երկեղածաց իւրոց առն

» և աղաւիթից նոցալոէ . և յայտնեաց ՚ի ձեռն հրեշտակի իւրոց առաքելով յերկնից
» եցոյց զտեղին արժանաւոր առ ստորոտով լերինն ջարոսի յարեւելից կողմանէ
» ՚ի տեղո՞ն որ կոչի արեգակնած ադ ոչ ՚ի ներընադուրն և ոչ ՚ի վերնագուրն այլ
» ՚ի միջնադուրն . ուր բերեալ ամիսիցեցին զնշարս սրբոց առաքելոցն զոր հիմ
» նարկեցաք ՚ի վերա մեծ և երկնանման խորան եկեղեցի . յարինեալ զտեղին ընա
» կութեան մաքուր միանձանց և աստուածահաճանց ճգնաւորաց . առաջնորդ կար
» գեալ նոցա զոմն ՚ի հանճարեղ և ՚ի մաքուր կրանաւորաց եղիազար անուն աղ-
» գաւ . ասորական բայց հաւասով ճշմարիս քրիստոնեայ յաստիճան քահա-
» նայտվեան կարգել մերով ձեռնադուրով եւամբ : յորում ժամանուի աստուած-
» ասէր և բարեպաշտ արքայս մեր ծրուատ փարթամացոյց զսուրբ ուխոս պայ-
» ծառ սպասիւք և բազում շինանիստ գեղերաւք յամենայն գաւառս իշխանու-
» թեան իւրոց եւ հասաստեաց սահման վանից ՚ի դ . գեհաց . յարեւելից կողմա-
» նէն : առզաց հոդվայրիքն . դայ ձորովն յերիցգումոյն աղբիւրն . և ելանէ քա-
» բազվաստն ու մայրաբերանովն դայ ՚ի միջին ճանապարհն որ երթա ի . . . գաւ-
» թայ և գոզուց աղբիւրն . ելանէ ՚ի մոկաց խաղն ՚ի հարսաւոյ կողմանէ անցանէ
» յետե . մինարերդոյ . յանդիման այլին դայ ՚ի մոկձորոյն ճանապարհն վերե-
» ջրտանն կարէ զնշարին քարն , և անցանէ գիմաց սաթուեանց . որ գնա ՚ի ջրը-
» հորցյան իջանէ ճանապարհովն ՚ի գավիլանկ ու անցանէ ՚ի ձկանիսուց ու ելանէ
» ՚ի ջհառող ու երթա ներքի վանամարդա դիմաց ըլաւապատուն զոր կարէ կաք-
» վուց աղբիւրաձորն ընդ . կախամխուտն ՚ի վայր մինչ ՚ի մեծ ձորն . և երթա ձո-
» րովն ներքի քաւշմեռնին ՚ի մեծ ճանապարհն որ գնա ՚ի բերդն դառնա ճանա-
» պարհին հասովն երթա ՚ի ջոկերն անցանէ յետե ողինն և իջանէ ՚ի հորձոր
» յառուն ելանէ յանջրեաց խաղն զնա սարովն ծծմակին դիխովն ՚ի կրծիլսնց
» խաղն ջախուց ճանապարհաւան և հավատավորուց խաղոմն իջանէ կարմիր փլովն
» ՚ի ջրազաց . . նէ յեզր դաշտակին ՚ի խաշն . և երթա ճանապարհաւան ՚ի հոգ-
» վայրին : Այս է սառուգութեամբ սահման վանացն որ էր յառաջ մեծ գղեկին
» տիրինկատար կոչեցեալ . զի էր նա տեղի անահիստ պատկերի զոր մեք զաւրու-
» թեամբն քրիստոսի խորտակեցաք և տալով զբերդն տիրինկատարի իւր քազա-
» քովն և ամենայն սահմանաւրն ընձա սուրբ առաքելոցն . և զրել կնքեցաք
» հայրապետական մեծու . գրաւորական մատանեւստ . զի անխախտելի լիցի մինչև
» ՚ի կատարած աշխարհի : Այդ յետ մեր անցման որ տիրեն այսմ աշխարհի թա-
» գաւուրք կամ իշխանկ ՚ի մերոց կամ յաւտարաց մի իշխեսցեն հանել զսա ՚ի
» սուրբ ուխտէն յափշտակելով կամ խորելով կամ զինչ և է պատճառաւանսոք ,
» և թէ որ յանդզնեացի զայս դործել անէծս սոցէ ընդ կայենի և ընդ այլ
» չարագործացն և յամենայն լեզվէ նալարդ լիցի : Ես Զարտուանէլ մամիկոնեան
» որդի տաճատա մեծի , իշխան տարաւոյ և ամենայն աշխարհիս Հայոց տեսի
» զայս գիր սահմանաց գրել հեղէն և յոյն զրով ՚ի լուսաւորչէն մերմէ սրբոյն
» Դրիգորէ պարթեէ և թարգմանեցի ՚ի հայ գիրս և հաստաեցի զի մնացական
» հայրենիս լիցի սուրբ առաքելոցն . և յինէն յաւելեալ ՚ի հայրենիս նորա զիմ
» ծննդեան գեղն զբերդակին կայսրովն և իր ամենայն սահմանովն այգեստանսոք
» և բուրաստանսոք » :

« ի թվ հայոց Շիր . և զեղեկելի զրիւ . յիշէ տէր թաղէոս ած ողորմի ինձ և նորա :

Յարձանագրիդ յիշատակեալ բազում նշխարք սրբոցն ածեալք 'ի ձեռն լուսուրչին 'ի Հռովմայ՝ պահին ցարդ աստին, այլ զոմանս 'ի նոցանէ յարծաթապատացն՝ որք անթաղ պահեալ էին յեկեղեցւոնդ արտաքոյ 'ի յարդութիւն ուժուորաց, չորս ամեր յաւաշ (1840) գորք 'ի Քրդաց 'ի բաց տարին գիշերայնընդ այլ աւարի մասին արծաթեղինաց. ընդ որս էր և զայիձ կոչեցեալ աւետարանն հռչակաւոր, յորմէ 'ի բաց զերծուցեալ զարծաթի կողմն արկեալ էին զաւետարանն ուրեք արտաքոյ վանաց, զոր ապա դժին միարանին: Եւ է մատեանն փոքրադիր ութածալ բոլորդիր անհարթ, և ոչ աւելի քան զչորեքհարիւր ամաց դրութիւն նորս:

Թթեմ վանացս են գիւղորէք հարաւային կողմանն Մեղրագետոյ, սկսեալ 'ի Մշց յարեւելս կոյս՝ մինչև ցանդ ուր աւարտի դաշտավայրն:

Մենաստանս Առաքելցց կոչի և Գլանորոյ վանք, թերեւս վասն խորանգունդ ձորոցն որ է յաջմէ մենաստանին. իսկ առուգութիւնն անուանակոչութեանս է 'ի յիշատակարանի դրոց այսպէս. « Գրեցաւ սուրբ աւետարանս 'ի թուականութեանս Հայոց Զէ 'ի գաւառու Ցարօնոյ 'ի վանս Գլանորոյ 'ի դրունս սուրբ առաքելցցն, յառաջնորդութեան սուրբ ուխտիս թագէսոս եպիսկոպոսի »: Ա՛յլ է 'ի սմանէ և Գլանոր վանք 'ի Վայոց ձոր գաւառի յաշխարհին Սիւնեաց :

Հանդէպ Առաքելցց վանաց 'ի մէջ դաշտին կիսաժամաւ հեռի 'ի Նորշէն գեղջէ՛ է հնաշէն եկեղեցի մի սուրբ Սովիիս կոչեցեալ, ժամաստամբն և տաճարանն 'ի չափաւոր մեծութիւն, առ հասարակ քարաչէն, թէպէտ և այժմ ամսպի կոյ. իսկ թուական հնութեանդ դտանի գարձեալ 'ի յիշատակարանի իրիք. « Գրեցաւ սա 'ի Ցարօն որ այժմ Մուշ ասի, 'ի դիւլն որ Նորշէն կոչի հանդէպ սուրբ Առաքելցցն, ընդ հովանեաւ սրբոյն Սովիիայ պատուական և պանչելագործ եկեղեցւոյս որ է փարատիչ ամենայն ցաւոց ևս առաւել այսահարացն, ձեռամբ Նահապետ երիցուս 'ի թվին Զլի »: Նորոգութեան եկեղեցւոյս թուական է որ կոյ 'ի վերաց ներքին դրան կամ տաճարին ՌՃ՛ՅԸ: Են և այլ թուականք 'ի վերաց քարի միոյ 'ի տանիսն ԶԾԲ: ՌՃ՛Յ: Ըստ վկայելց յիշատակարանիդ, որպէս և Նորշէնցիք աւանդութեամբ ունին, դիւլն Նորշէն առ սուրբ Սովիիս էր շինեալ յառաջնորդոյն, և ապա որպէս կարծի, կամ առ ճահճաց տեղւոյն և կամ զի առաւել մօտ իցեն Մեղրագետոյ, կիսաժամաւ բացական շինեցին անտի. այլ գերեղմանատուն նոցա է գարձեալ սուրբ Սովիիս :

ՍՈՒՐԲ ՅՈՎՃԱԽՆԻՍ. — Յարևմտից կոյ Մշց 'ի կողաց միոյ Երին Ցօրոսի, չորս ժամաւ տարակաց 'ի քաղաքէն. դիւլք նորա իբրև զիսաքելց վանսն բարձրահայեաց 'ի վերաց դաշտին, այլ տարածութեամբն փոքր քան զնա: Եկեղեցին ուր պաշտօն կատարի՝ անշուք է և մթին. այլ միւս եկեղեցին սուրբ Ստեփանոս ուրմակից նորա վայելուշ ճարտարապետեալ է, բարձր և գմբէթաւոր: Ա՛յլ ամենայն շինուածք մենաստանին, սենեկացն և անձուկ սրահիցն և փողցացն գիծին և աղմանից և մթին և ամեննեին անշուք են: Առ որմնիք մենաստանին արտաքոյ է մասուռան փարբիկ և առ նմա ծառ եղրդուտի, յորոյ անուն կոչի երբեմն և մենաստանն 'ի յիշատակարանս գրոց՝ եղրդուտի վանք :

Ծնդ մենաստանս Մշց համարելի էր արդեօք և եկեղեցին սրբոյն Մեղրու-

պայ ՚ի գիւղն Հացիկ ՚ի հիւսիսակողմն Մեղրագետց ՚ի մէջ դաշտին . թէպէտ չփ սյժմ կանգտան ոչ եկեղեցի և ոչ մատուռն մի փոքրիկ , այլ երեխ աւերակ նորա . և առ նման քարընկէց մի հեռի այլ տեղի շրջապատեալ ՚ի վարկարազի քարտնց և ՚ի միջի կոսորը գերեզմանաքարի բացօթեայ իսպատ . և պատուեալ ՚ի բնակչաց : թերեւս մատն մի ՚ի նշանարաց սրբայն ամփոփեալ իցէ ՚ի տեղունչն , կամ նախ աստէն թաղեալ իբրև ՚ի հայրենի գիւղն իւր յորում ծնեալն էր , և ապա փոխագրեալ յօշական գիւղ յԱրագածոտն գաւառի :

Ի նախնի ամբոցաց Մշց , յորոց բազումք յիշին յանուանէ , կանգուն կայ ցարդ և կիսաւեր Ասդնիքերդ ՚ի կողաց լերինն օօրոսի մօս ՚ի գիւղն Մակոնք . կարի փոքր է տարածութեամբ , աշտարակս ունելով և գետնափոր սենեակս . այլ շենուածն անչուք և ՚ի մանր քարանց : Ի նոյն լերինն յոյժ ՚ի բարձու քան զԱսդըն բերդ է կատուի քար տացեալն ամբոց առ լեռնային ճանապարհաւն՝ որ տանի ՚ի բնաշչն , և առա աւերակին երեխն նոյնակն ՚ի մանր քարանց :

Ճ Ա. Տ. Խ

Գաւառ սահմանակից Մշց ՚ի հարաւոյ նորա , յարեւմից իւր ոնելով զԲըռնաշչն գաւառն . և է ՚ի վերայ լերանցն Տօրոսի , գաշտավայր ոչ հաւասար , այլ բարձունս ունելով ուրեք ուրեք գեղեցկագիրս : թէպէտ և չչն էր գաւառս , այլ ՚ի հարաւահարութենէ քրդաց ամսայցեալ՝ ՚ի յոյժ սակաւաթիւ աղքատ գիւղութիւ սահմանի արդ . նմին իրի ընդ ամենայն գաւառն անթիւ արտորայք անշակելի կան : Շատուիս կոչեցաւ գաւառս յանուանէ Շատախօսիկ իշխանին , որոյ թեւաղբութեամբն գողացան զԾիծառանէց խաչն ՚ի վանաց սրբոյ կարապետի և բերին այսր : Մենաստան մի կայր ՚ի գաւառսին յանուն Աթանագինեայ՝ ՚ի ուսմաց Անրանեա ասացեալ , կործանեալ և ամայի մնացեալ բաց ՚ի փոքրիկ եկեղեցւոյն , ՚ի բաղում ամաց հետէ . և շինեաց ՚ի հմանց յամին 1849 Պօղոս վարդապետ ՚ի Մեղսեայ գեղջէ Մշց , միաբան Առաքելոց վանաց : Շուրջ զմենաստանան է անտառ կազնի ծառոց գեղատեսիլ բլրակօք , և գետակ առաջի նորա ընթանայ , և առ եզր գետակին մատրանաձև տեղի յորում բխէ ջուր առողջարար : Բատ կարծելոյ ոմանց ասս թերեւս պահեցաւ ՚ի հնումն խաչն ծիծառնէոյ : Այլ է ՚ի մանէ միւս Շատուիս գաւառ . ՚ի վասպուրական աշխարհին :

Երբեկաւը կամ Տիրակաւը . — Ե բարձրածայր լեռան ՚ի մասանց լերանցն Տօրոսի ՚ի թիկանց Առաքելոց վանաց , և սահման համարի գայ յայնմ կողմանէ Բըռնաշինոյ և Տարոնոյ : Բուն գագաթն լերինդ՝ սքանչելատես դիտարանն ուստի ակների լինին դաշտավայրն Մշց ծայր ՚ի ծայր առ հասարակ և մանուածաւալ ընթացք երկոցուն գետոցն , ապառաժ սալայտակէ , ունելով տարածութիւն երեւ . քարընկէց մի Անդ էր ՚ի հնումն պատկեր Անահայ կոոց , ՚ի դէպ ընտեալ վասն նորա զվայրն ամենացանկալի և վսեմատես , իբրու ակնարկող ՚ի վե-

բայ ամենայն գաւուին մշտատես խնամնկալու լինել ըստ հեթանոսական մը-
տաց: Զայդ պատկեր կործանեալ սրբյ լուսաւորչին, վտեղին ետ ՚ի կալուած
մենաստանին Առաքելոց, որպէս պատմի յիւրում արձոնագրին՝ զոր եղաք ՚ի
վերոյ, յորում Տիրինկատար կոչի լեառնս, և թուի ՚ի ռամկէն փոխեալ ապա ՚ի
Նիրինկատար:

Բ. Ռ. Ա. Շ. Լ. Ն.

Գաւառ. առ. հասարակ լեռնային, յարեւելից Շատախու և սահմանակից Խութայ
յարեւմոց նորա, և ՚ի հարաւոյ գաշտին Մշց: Եի են առ. հասարակ լերինք գա-
ւառին կաղնի ծառովք, յորոց հանապազ հատանէ երկիր Մշց ՚ի պէտ տանց
և շնուռածոց, կարծեմ առաւել քան զՍօզանը լեառն՝ որ մայրիսքն իւրովք լիա-
ցուցանէ զերկիրն կարնոյ: Խոտ առ. խոտ են լերինք և բարձունք թանաշինոյ, և
ձորին անզնդախորք, զիւզորէս ունելով յոյժ նուազունս ՚ի ձորամշջն, և ար-
տորայս մշակելիս անբաւական: Առ. կողինք միոյ ՚ի լերանցդ շինեալ է մենա-
ստանն Ս. Ալյբերիկ կոչեցեալ մի յերեւելի ուխտատեղեաց, վեց կամ եօթն ժա-
ման հեռի յերկրէն Ցարոնոյ, անտա՞ ուր առարտի գաշտալային և լերինքն սկսա-
նին: Զեկեղեցի նորա շինեաց թագէսս առաքեալ. և նոյն է անշոշտ որ մինչի
ցայժմ անկործան կայ. վկայէ այդմ և հասարակաց տանդութիւնն: Քանզի ան-
հարթութիւն կամարացն և ՚ի կիսոյ նոցա այլոց կամարաց ձգեալ կողմնակի, և
տեղի խորսնին և առաջինորա բեմն ոչ ՚ի միջավայրի, այդ ամենայն տձեւութիւն
ընդդէմ ամենայն արուեստի ճարտարպետութեան, և զի հին ևս է և բազում
ուրեք կարկատեալ, ցուցանեն յայտնի զի անարուեստ ժամանակաց է շինու-
թիւն նորա ՚ի բարբարոս գաւառականայ, որպիսի են խութեցիք ՚ի սկզբանէ և
այսոր. և երկորին դրա կարծեմ մի սահման էին ՚ի հնումն, զի ոչ յիշի թանաշին
առ նախնիս, և զի չիք ՚ի միջի գետ կամ լեառն որոշիչ սահմանին խութայ ՚ի
թանաշինոց ըստ այժմու բաժանման: Թալէի առաքելոց քարոզութեամբ եկեալ
՚ի կողմանս յայստիկ, և հրաշխիք բժշկեալ զորդի թանիկ իշխանին գաւառապե-
տի երկրին՝ որ նատէր ՚ի բերդի շինելոց ՚ի գագամժան միոյ ՚ի լերանցն, ուր և ե-
րեկի ցարդ աւերակ նորա, և գարձուցեալ զնա ՚ի հաւասա՛ խնդրէ ՚ի նմանէ շի-
նել եկեղեցի մի ՚ի պաշտօն ճշմարտին Աստուծոյ յոր հաւասա՛. թանիկ իշխան
հիացեալ ընդ նոր զբանչելիսն և խնդամտեալ յոյժ ՚ի վերայ զաւակին, առա-
տամիտ գաաւ խոստմար. ասէ. Զոր խնդրեալ, ոչ ՚ի քարանց այլ յոսկւոյ ՚ի
յարծաթոյ շինեցից, հիւսեալ զորմոնս նորա ձոյլ մի ոսկի և ձոյլ մի արծաթ:
Ասէ առաքեալ. Զեն պէտք անդ մետաղացդ, զի եկեսցէ ժամանակ գոլոց և ա-
ւաղակաց և պէսպէս երուղակաց բոնաւորաց յորոց վեր ՚ի վայր լիցի եկեղեցիկ
զոր շինիցես յոսկւոյ և յարծաթոյ. այլ ՚ի քարանց շինեսցես զդա. և որդ պաշ-
տօն տարցին դմա՛ շատ է զի ներմեռանդն ՚ի ծառայութեանն Աստուծոյ լեալ
իրեւ զոսկի փայլեցի առաստածպաշտութիւնն նոցա: Եւ թանիկ կատարեաց ըստ
խրտու առաքելոցն: Յետ ժամանակաց շինեցաւ այլ եկեղեցի զմբէթաչէն որ-

Ցակից եկեղեցւոյն թագէի վայելածե ըստ սովորական օրինի, զոր լուսաւորչին շինեալ ասեն, որ և միջնադրամի հազարգի ընդ միւսոյն, և այլ միջնադրամի յեկեղեցւոյ առափելցին լինի մոտանել յայլ մասուռան որ է իբր տաճար նորա : Ընդ խորանաւ մատրանդ է պահելաբուխ աղքիւրն թագէի, յորմէ և սուրբ Աղքերիկ կոչեցաւ մենաստանն, և ընդերկվեայ ճանապարհաւ հոսի յայլ աղքիւր արտաքց մենաստանին, յորմէ հրաշանայ ամենայն որ ըմզէ՝ իբր ՚ի հիւանդութենէ յանկարծակի ասողութեան հանգիպեեալ, զի աննման իմն է քաղցրութիւն նորա և թեթեութիւն, և վարծեմ թէ գտանի ուրեք ՚ի հայտաստան աշխարհի նման նման : Յակն աղքերս արկեալ է, ասեն, սուրբն թագէոս զիի ՚ի ըևեռացն Քրիստոսի զոր ընդ իւր տնէր . նմին իրի յարբումն եեթ վարեն ըղծուրն զայն զոր և սրբացուր անուանեն և կամիլ մի ՚ի գետին թափել խոցնեն, և բնաւ ՚ի լուացումն անօթոց չվարեն : Ե ՚ի մենաստանիս և սուրբ նշան մականուանեալ Գործելյարոյց . իբր զի ՚ի Մանազկերս որդի գտաւառապետին մանուկ մատաղ, յանդդուշութենէ ընտանեաց անկեալ ՚ի թոնիր բորբոքեալ և այրեալ ՚ինի գործելի, այն է ածուխ . և ապա ՚ի ձեռն սրբոց նշանիր կենգանացեալ մանկանն հայր նորա զամենայն երկիրն Մանազկերսի սեփականէ ՚ի թեմ վանացն մինչև ցայսօր : Այս ամենայն պատմութիւնք ընդարձակ աւանդին ՚ի հին կոնդակս վանացն :

Ի հարաւոյ մենաստանին խորաձոր լայն և ընդարձակ գաշտավայր է մշակեալ, և գիւղորեք ՚ի նմա . և գաշտավայրդ այդ մատամի բանաշէն է, այն որ ՚ի հիւսիսոյ է, իսկ հարաւայինն համարի մասն գաւառին խութայ, ոչ մի ՚ի լեռանց կամ ՚ի գետոց անջրափետ ՚ի միջի ունելով, որպէս ասացաք ՚ի վերոյ . և Երինք խութայ անուանիք անոտի սկսանին ուրանօր աւարտի գաշտավայրդ :

ԲԱՂԵՇ

Ի գաւառին և ՚ի ձորավայրին մեծի՝ Սալնոյ ձոր ՚ի հնումն կոչեցելոյ, որ յայլ և այլ ձորս բաժանի, բարձանց անջրափետ ՚ի միջի կալով, շինեալ է քաշաքս : Զորամէջ տեղիք թէպէտ և աննախորժ բազմաց թուիցին, այլ չգիտեմ որպէտ և բնութեանն ջանացեալ ախորժելի զվայրս այս յօրինեալ է . մինչև համարձակիմ ասել՝ եթէ չիք ոք որ միանդամ ակն արկեալ ՚ի տեսիլ քաղաքիդ և ոչ հիասայի . գովեմ քաջ Դիմիագրի նորին զախորժակ, որպէս զանապատաշեալն ձոր և անշուք զառաջինն՝ գուշակեաց գեղատեսիլ լինել ապա ժամանակաւ : Ծնդ ամենայն կողմն ձորավայրին մեծի, որոյ ՚ի թիկանց ամբարձեալ են բարձոնք մեծամեծք, ոչ միահետք և ոչ միաշափ բարձրութեամբ՝ այլ խասանիւնուն և այլ և այլ տեսարաննաւ, իբր աստիճանածի երեւմամբ շինեալ կան տունքն՝ առ հասարակ քարտիկար կոփածոյք, թէպէտ և աղքատին տուն իցէ :

Զիմանայ ոք անդ՝ ՚ի բնակչացն զինչ սրտնեղութիւնն իցէ, թէ և աւորդրք բազմօք ՚ի տան արգելեալ կայցէ. զի ընդ պատուհանն միանդամ ակն արկեալ մանաւանդ կացեալ ՚ի տանիս, ահա բազմապատիկ ընութեանն գեղեցկութիւն յաշն նկարի, ոչ միայն տեսիլ երկնից, այլ և բարձունք ՚ի հանդիպոյ, և ՚ի կողաց նոյց և ՚ի վայր մինչև ՚ի ձորամէշն՝ տանց կարդ նոյն օրինակ: Եւ եթէ քանի գեղեցկութիւն ական ածեն պարտիզացն վայրք զուարճալի առ իւրաքանչիւր տան և ծառաստանաց հցըք ՚ի նոսին, նաև միայն գիտէ որ անձամբ զփորձ առեալ իցէ: Ի փողոցամէջս բարձրագոյն թաղիցն ընթացեալ, ոչ արգել ական լինին սրմունքն ըստ ամենայն երկայնութիւն փողոցացն, զի տանցն զատ ՚ի միւմեանց կացեալ, առ անջրապետօք իւրաքանչիւրոց ակներև լինին պարտէզքն. և ըստ այլ և այլ առաջն բաժանեց ձորավայրին՝ փոփոխ տեսարանք թաղիցն անտաղուկ ընծայեն զբաղաքն ողջոյն:

Իբր ՚ի միշնավայր ձորաբերանացն շինեալ է բերդն բարձրապարփսայ՝ հիմնեալ ըստ ամենայն տարածութեան խրոյ ՚ի վերայ ապառաժի, զորով շրջապատեալ կայ շուկայն: Շինուած բերդին ահաւոր ըստ բարձրութեան և ըստ ներքին կամարաձև տեղեացն, խաթարեալ կայ խապառ ՚ի ներքուստ, անկործան կացեալ մեծաւ մասսամբ արտաքին պարսպացն: Գտանին ՚ի նմաս տունք եօթն ևեթ և ոչ աւելի, և ումբագործիք երկեք: Երկու գրունք են նորա և ՚ի վերայ առաջնոյն արձանագիր տաճիկ և թուական 190: Անձանօթ է և ծերունեաց քաղաքին կործանումն նորին, և թէ յորմէ շինեալ է զառաջինն և զինչպիսի անցու կրեալ. այս միայն յայտնի է աւանդութեամբ զի ձեռն լէկմիմուրայ չեհաս անդը հարուածովք, այլ սպառնայր յետ դարձին խրոյ ՚ի փոքրն Ասից հասուցանել նմա, և չեհաս ըղձիցն: Բարձրութեամբ պարսպացն զբեթէ հաւասարի վերին թաղից որ ՚ի վերայ շուրջանակի հանդիպակաց լերանցն. սակայն ՚ի նոյն լերանց մարթ էր թշնամույն ումբաձիդ: ՚ի ներքս լինել, մանաւանդ յարևմտեան կողմանէ որ մօտագոյն է:

Զկարեմ ասել եթէ յասիակողմանն գտանիցի քաղաք այլ՝ քարանցն շատութեամբ հաւասար քաղաքիս. և ոչ ՚ի հեռաստանէ ուստիք ածեալ է զբարինսն, կամ ՚ի գիւղօրէից, այլ յամենայն վայրաց ՚ի քաղաքամիջն. զի լերինք յորոց ձորավայրին են ձեւցեալ՝ առ հասարակ սպառաժք են ՚ի ներքոյ, զերեսօք ևեթ հողախառն. և քարինքն մի տեսակ կակուղ զօր փորտ քար անուանեն, յորմէ շինեալ են և բերդն և տունքն որմունք երկայնաձիգ փողոցացն և պարտղացն, և առ հասարակ կոփածոյք քառակուսիք, այլ աղիսս անմիւրծ ընստ չուեսանի յորմունս, թէօչտ և կարի ազքասին տուն իցէ: Գտանի և կիճ սովորի ոչ սակաւ: Այլ ոչ գիտեմ էր աղագաւ կրոյ գործածութիւն չիք անդ, այլ առ հասարակ հողոյ շաղախսաւ մածուցեալ են քարինքն: Որ զինչ և է, վսեմութիւն մեծ ընծայէ քաղաքին քարակերտութիւն որմոցն. և եթէ պարսաւելի ինչ կայ ՚ի նմա, և աննմանութիւնն ներքին կողման տանցն ընդ արտաքնոյն շունիմ ասել՝ առ թերութեան ախորժակաց արգեօք զայդ սովորութիւն կալեալ ընակչացն, եթէ առ երկիւղի Քրդաց բռնութեան:

Գետք երեք մտանեն ՚ի մէջ քաղաքիս, առաջինն ՚ի ձորոյն գումաց, որ

անցանէ առաջի Ամրատուու մենաստանին. Երկրորդն 'ի ձորոյն յապոկորու, և գորա Երկրեան միանան առաջի բերդին. Երրորդն 'ի ձորոյն Ավելսու, որ 'ի ներքնակողմն նորին ձորոյ, որ հանէ ընդ ճանապարհ կուղէլ-աէրէ կոչեցեալ դաւառին, բխեալ 'ի կոզաց միոյ լերին տհագնաձայն խոխովմամբ. և Երեքեան դորա Երթեալ միանան առաջի խնդրակատար մենաստանին 'ի մի առաջ, որ անցեալ գնայ 'ի հարաւակովմանն դաւառին: Բազում են և աղրիւր 'ի քաղաքիս, յստակութեամբ, քաղցրութեամբ և թեթեռութեամբ առաելեալ յոյժ քան զբաղմաց այլոց քաղաքաց, թէպէտ ջուր զետոցն առաել ախորդելի է և թեթե քան զաղբերցն:

Իսկ օդոցն քաղցրութիւն մրցի գոդցես ընդ պատուականութեան ջուրցն: Յաղագս կրկին ձրիցդ բնութեան չորեկողմեան մօտաւոր դաւառացն ընակիչք Ամթայ, Սղերսու և Մուսլայ, Վանայ և Տարօնայ, գովեն մեծապէս զբաղէշ, յուրոց միանգամբ որ անձամբ զիմորձ առեալ է ընակութեամբ 'ի քաղաքին. Իսկ ընիկին ոչ յաւուրս կիւրակէից միայն՝ այլ գրեթէ, յամենայն երեկոյի շմորուն զժամն զուարձութեան յայլ գործ աշխատութեան անցուցանել, այլ 'ի պարտէզ ասանց կամ արտաքրոյ քաղաքին և յեղերս գետոցն 'ի ծաղկազրոս մարգս՝ որ անբաւն են և բազմատեսիլ: Այլ ոչ կարեմ գովել զնորա ձմեռնային սառնամանեացն սաստկութիւն, ոչ 'ի քաղաքամիջն անդ միայն, այլ և 'ի գիւղօրէս և 'ի շրջակայ մօտաւոր դաւառան ևս. զի առ հասարակ լերինք են և ձորք ընդ ամենայն երկիրն: Փայտից կարեւորութիւն ոչ է ըստ բաւականին, որպէս արժանն էր. բաց 'ի պտղասու ծառոց բազում առատութիւն է անդ բարսի ծառոյ, զոր և իննամով բազմացուցանեն. քանզի առ 'ի չզոյէ մայրի ծառոց՝ անսի հաստանեն զգերանս և զտախտակ և զամենայն կազմած յարկաց տանցն. այլ զտանիսն հողայարկս յօրինեն, աղաջուրս հասեալ 'ի վերայ և լոգբարիւ պնդեալ, որ ամշագոյն լինի քան զգաւառին Մշոյ:

Չորեկին եկեղեցիք քաղմանկամարք և վայելքաձեք, թէպէտ և յանհողութենէ պաշտօնէից ոչ մաքրազարդեաք, կոփին, առաջին՝ կարմրակ, նորուգեալ 'ի ՌԱՄՊԴ. այս եկեղեցիք 'ի նախնի ժամանակս սուրբ Կիրակոս կոչէր. այլ յորմէնետէ բերաւ անդ 'ի Սպահանէ մասն 'ի կենաց փայտէն 'ի ձեռն վարդապետի առուրուք՝ կոչեցաւ կարմրակ: Եւ է նշխարդ ամփոփեալ և ամբավնդեալ 'ի փոքրիկ քառակուսի առուր արծաթի, և 'ի վերայ ազուցեալ 'ի միջավայրին՝ ակն կարմրագոյն, յորմէ զայդ անուն կալեալ է և սուրբ նշանն և եկեղեցին: և քան զամենայն նշխարս 'ի պատուի է անդ մինչև յանուն նորա երդնուլ և Տաճկար կարմրակ նախսի իւուն ասելով՝ թէպէտ և բազումք 'ի ռամպէտ զվարդիկ հօրն զէպս ասեն վասն նշխարիդ, և այլք թէ յիսկական արենէն Քրիստոսի եցէ, ասկայն սույցն այն է զոր ասացաք: Ի ամին եկեղեցւոյ է և փոքրիկ մասն մի 'ի նշխարաց սրբոյն Ստեփաննոսի նախավիպային: Երկրորդ եկեղեցին է սուրբ Սարգիս, որոյ ընդ աւագ խորանաւն ջուր անցեալ գայ 'ի գտաիթնորա: Հանդէպ նորա է Երրորդ եկեղեցին Հինգ խորան կոչեցեալ, զի վերոյ կազմական խորանացն երկու այլ խորանք են: Իսկ չորրորդն է սուրբ Գեորգ: Հնամբիւն երից եկեղեցեաց, որպէս յայտնի է 'ի թուականացն, չանցանէ քան զերկերիւր ամաց:

Զորքը մենաստանքը են ՚ի քաղաքիս, երեքն արտաքոյ շինին և միւսն ՚ի միւսն ՚ի թաղիցն, որ և կոչի Ամրատոյ, կամ լաւ ևս Ամրդոգւյն վանք. զի յանուն սրբոյն Յովի աննու կարապետին կառուցեալ է ՚ի թաղի անդ՝ որ ՚ի նոյն անուն յորդորջի: Մենաստանին շինուած չունի ինչ արժանի գովեստից. զի խրմանութեամբ և մժութեամբ և անձուկ տարածութեամբն չռայ ինչ զուարճութիւն ումեք. ոյլ զրիցն վերմաժեամբ զանցանէ յոյժ քան զրազում շինուածովք քաղաքին. քանով ՚ի ձորամիջի զուով նիստ նորա և ՚ի վերայ կողաց էրին նորին ձորավայրի՝ երեսը պատուհանացն հային ընդ ամենայն երկայնութիւն ձորոյն, ընդ որ և մի ՚ի գետոցն անցանէ, զոր ՚ի վերն ասացաք. և ՚ի բարձրաւթենէ անոտի տեսիլ սրանչելի երեւցուցանէ, մանաւանդ որոց ՚ի տանիսն ելեալ ՚ի զնին կայցեն. ձորն մեծ ակներել լինի ական մինչև ցրազաքամեջն, պարտէզն և ծառաստանք խառն ընդ տանց շինուածոց, և գետն անընդհատ խոխոջմամբ անցանելով զառաջեստ, և գետեզն ընդ ամենայն երկայնութիւն մենաստանին է պարտէզ աստիճանաձե յօրինմամբ. եկեղեցին ընդարձակ, սինազարդ և գմբեթաւոր մեծ է քան զամենայն եկեղեցիս միւս վանորէից և քաջաքին: ի միջամայր դասին ժագեպեալ կան առընթեր միմեանց վարդան և բարսեղ վարդապետք, որը երեւելք գտան ՚ի ժամանակի իւրեանց. երկրորդն աշակերտ է առաջնոյն: Քարընկեց մի հեռու ՚ի նոյն վանաց ՚ի հիւսիսակողմն և բարձրահայեաց քան դնա՛ և սուրբ Սիմեոն եկեղեցին, փոխեալ այժմ ՚ի մզկիթ:

Իշու ժամաւ հերախ յԱմրատոյ ՚ի նոյն կողմն, կամ թէ ասել ՚ի պլուխ նոյն ձորոյն՝ է գումաց աստուածանենի մենաստան, ՚ի դուրսնի առ գոմն զիւզիւ, յորմէ հանունն առեալ է:

Երրորդն է Ավելիուշ աստուածանին, որում որմակից է եկեղեցին Յակոբի Ասորւոց: Քարընկեց հեռաւրութեամբ ՚ի վանացս է ազրիւր, զոր բիսեցուցեամ առեն թագէի առաքելցն. քանով եկեալ նորա յայս քաղաք սրպէս աւանդեն բնակիչը, և տեսեալ զի հեթանոսացն ոտվորութիւն կալեալ է յամենայն ուրբաթու զոհել գիւաց մանսակ մի առ աղբեր ուրեք որ մինչև ցայսօր ցամաք աղբիչը կոչի, որպէս զի ջուր հոսեցէ, քանով ցամաքէր միշտ, տեսեալ առաքելցն զանօրէնութիւն նոցա՝ պատուհանէ զնոսա կուրութեամբ աշաց և հեռանայ յամբուխէն մինչև. ՚ի տեղին Ավելիու վանից. անդ ՚ի նորոյ ջուր բիսեցուցեալ, զոր յիշեցաք, տայ տանել և ցանել յերեսս կուրացելցն, յորմէ լուսաւորեալ հաւատան յԱստուածն թագէի:

Չորրորդ մենաստանն Խնելիրկատար ասացեալ՝ մեծ քան զայլ երեսին է, թէպէս և աեղեաւ գրիցն ոչ այնքան գեղատեսիլ, զի ՚ի ձորավայր տեղուո՞ւ է կառուցեալ: Աւանդեն բնակիչը զպատճառ անուանակոչութեան վանացս այս պէս. թագէի առաքելցն, ասեն, հաստատեալ ՚ի մտի հազար եկեղեցիս շինել յանուն Աստուածանի, վերին զսա շինեաց. և ՚ի կատարել նորա, ամսոյ հովանաւորեալ երեխ նմա յերկինց սուրբ կոյսն յարևմտից կողմանէ վանացն, և ձայն յամպոյն լսէր առաքեալն՝ եթէ ահա խնդիր քո կատարեցաւ. յայնունանէ անմուաց մեաց ցայսօր անուն վանացն, և գեղին անուն յորոյ վերաց ամսոյն հովանի եղեալ էր՝ կոչի մինչև ցայսօր Ամպ:

ի նոյն դիւզին Ամայ յորում՝ հինգ տունք միայն կան, է մատրանաշափ եկեւ զեցի յանուն սրբայն Յակոբայ պատուեալ յոյժ ՚ի բնակչաց քաղաքին. և ուստի աստիճանը Երուսաղեմի նախ աստ հաւաքեալ՝ որպէս թէ ՚ի բարեխօսութիւն սրբայն ապաստան արարեալ զանձինս, ապա մեկնին և լինին ուղղով: Անուանի է և ցուրտ ջաւին փոքր մի հեռի ՚ի մատրանէն բխեալ ՚ի ներքուստ ապառաժիցն՝ որոց ՚ի թիվանց կան բարձունք լերանց: Մի յանուանի աղբերացն է բխեալ նոյն օրինակ ՚ի ներքուստ քարանց առ ստորոտով ապառաժ լերին՝ ՚ի գիւղն կոչեցեալ նշապնիկուր, և առաւել ցուրտ և պատուականագոյն քան զիւրինն: Ինախնի ժամանակն՝ որպէս աւանդեն, վէճ բազում լինէր ՚ի գիւղականան վասն ոռոգելոյ զարուրայս ՚ի նոյն ջրոյ, մինչեւ ՚ի պատճառու նորա սպանանել առն ղընկեր. և ՚ի միում զիշերի վէճ մեծ զմորեալ ՚ի լեռնէ և անկեւալ ՚ի վերայ աղբերականն՝ յերկուս սուածն բաժանէ և գագարի ամենայն կուիւ, և մինչեւ ցայսօր տեսանի նոյն քար ահապին և առաջը ջրայն, և զի՞ յառաջիցն ընթացուցեալ են արդ ՚ի քաղաքին:

ի Եապուկորոյ ձորէն ուղիղ ընթացինք ընդ արևելակողմն հարաւայ քաղաքին դուրան ճանապարհու անցանելով ընդ գուտարձալի մարդու, յաջմէ ունելով զիետակն ձորոյն և յահեկէ զցածագոյն բլուրան, երկուց ժամուց հեռաւորութեամբ հասանես ՚ի գիւղն Պոռ, յորմէ այլ ևս քառորդաւ միով բացակայեալ հիւրընկալ լինի քեզ մենաստանն սրբայն Յովիչաննու: Պոռայ վանք ասացեալ Անդ խալսու մոռացեալ լինին զուարճատեսիլ և վուեմ հայեցուածք և գիրք վանորէից քաղաքին: Խորթնութիւն և մթութիւն եկեղեցւոյն հանդերձ ամենա փոքր տաճարաւն և մենաստանին խաթարած չսոյց բնաւ տաղոսով եթէ միով ակնարկիմամբ շատասցիս, զի զայդ ամենայն մոռացուցանէ պրանչելի տեսիլ գըրից նորին առ ստորոտով լերին՝ սարարարձը ընդարձակիլ. առաջի նորա գոտշապայցին սատիճանարար ցածացեալ հասեալ յեզր գետոյն, և հանդէպ նորա և ՚ի կողաց բարձունք մեծամեծք. համաւու ասել, անդ փոփոխ տեսարանք մի զիմով եկեւը առնեն, արտորայք և բլուրը և բարձունք, մարդադեմինք և գետառոյն խոխոչումն ՚ի հանդիպոյ և ծառաստանին չուրջանակի և գաշտային ծաղկանայն փաղիիւն: Սովորութիւն կալսու ուամիկն և Նարեկացւոյ վանք կոչել զսա, ոչ զի ասս ևս բնակեալ իցէ երանելուոյն, այլ զի գըշագիր աղօթամատոց՝ նորին մասանց գիր, որպէս ասեն, պահէր աստէն. որ և զայն սակաւ ամեզք յառաջ գողացան: ի մէջ եկեղեցւոյն է զերեզման գտնաւուաց Առաքել վարդապետին բաղիշեցւոյ:

ի մէջ քաղաքին Բաղիցոյ ՚ի գագաթան միոյ ՚ի բարձապոյն լերանցն որ անը քրպեմէ զթաղն Ամէխու յայլոց՝ է քայլքայեալ մասուռն ամայի, առար գերզ կոչեցեալ, որ ՚ի Տաճկաց զկնի ժամանակաց կոչեցաւ Գլավուզք-թէվիւսի. զի անդ զահ կալեալ պահապանի դիտէր ՚ի բազում հեռաստանէ, մանաւանդ ՚ի կողմն Ասհայի, որ է ճանապարհ Աշոյ և Վանայ, զյարձակումն թշնամեցաց ՚ի ժամանակս պատերազմի:

Հաստ մասին ազգային հնութեանց չիք ինչ մնացորդ ամենելին ՚ի Բաղէ՛ բաց ՚ի վանորէից, և այնորիկ զայլ և այլ նորոգութեանց ունին զթիւ, որպէս յիշե-

շաք : Քանզի յառաջ ժամանակաւ բազում՝ քաղաքական մարտիւք աւերեալ կործանեցան . զի ոչ միայն Քրդաց բռնութիւն սաստիկ էր անդ, այլ և Տաճկաց , որ և անէ շարդ . մասամբ : Ցէրութիւն քաղաքին էր ՚ի ձեռու խանից , որք անդադար կռուալ վարեալ ընդ այլ կռուակալու՝ ըսուին գքաղաքն աւերմամբ և անտանելի հարստահարսութեամբ մինչեւ ցայսօր , յորում ըստ նորոյ օրէնտրութեան Օսմաննեանց փաք մի ողի էաւ , և յայլ կերպարան փոխեցան և աւերութիւնն և տիրեալին :

Սակայն ըստ մասին վաճառականութեան մի յերեւելի քաղաքացն է Բաղէշ . թէպէտ ոչ են նորա աղնիւ գործուածք ոսկեթել և մետափսեայ դիակակաց և այլ բարականիւթ հանդերձից , սակայն խոչոր գործուածովքն լիացուցանէ զամենայն շրջակայ գտառուն , զջարօն , զՊուլանուիս , զլան , զբաղու և զկարին իսկ և դամենայն հարաւային կողմաննն : Զի է նորա սպիտակ կտաւ թանձր , չիր նոյնօրինակ . այլ արդոյ յոյժ ամենայն ուրեք՝ կտաւ կարմիր տորոնաներկ , զոր և շլյա անուանեն , որոյ ներկարարք ոչ աւելի են քան զ²Կ . իսկ կտաւագործացն թէզեանք իրը 400 : Օրէնք են ամենայն կանանց շապիկս ՚ի նոյն շիլայէ զգենուլ ՚ի վերայ ամենայն հանդերձից առ ՚ի ծածկոյթ մեծագին զարդուց և ըլք գեստուց , ոչ միայն յելանելն ՚ի հրապարակ , այլ և ՚ի տան ևս : Ճինսած կըրպակացն և փողոցաց շուկային ոչ է համեմատ առևերրոցն , զի անշուք են և կտարի մթին . և մթութիւնն կամաւ արարեալ է առ խարզախելց զվաճառան , յորում համբաւեալ են բնակիչքն : Տանիքն որ և հողայարկ է ըստ ամենայն տարածութեան շուկային , տեղի է ճեմելց և վաճառոց ցորենոյ և այլոց նմանեաց :

Զմկիթս և զրադանիս քաղաքին սակաւաթիւս և ոչ նշանաւորս աւերըրդ համարիմ յիշել յանուանէ , բաց ՚ի միոյ մղկթէն որ ՚ի կեօք-մեյտան հրապարի , որ մեծութեամբն և քառակողմեան կամարգն ոչ վարկապարազի վաեմութիւն ածէ ըստ տաճկական ախորժակաց . թէպէտ և այսօր խամթարեալ հանդերձ շուրջանակի կամարաշէն մահարձանօքն ամսյի թողեալ է :

Են ՚ի քաղաքին և առ գետեղերըն յայլ և այլ տեղիս բորսակային ջուրը տուագորդ և մշտահոռք , յորս ներկարարք զկտաւան լուանան : Է և այլ նոյնատեսակ ջուր քառորդաւ հեռի յԱմպայ գեղղէն՝ Շօռկեօլ կոչեցեալ , ծանծաղ և փոքր տարածութեամբ ՚ի ստորաւ լերին , յորում մտեալ լուանան բնակիչքն . և ջուրն հոսեալ արարաքս մինչեւ ցգետեղըն՝ առ հասարակ քարացուցեալ է զգետինն բորսակային նիւթովն :

Ժամաւ հեռայեալ ՚ի Շօռկեօլէ նովին ուղիղ ընթացիւք՝ ՚ի ձախմէ ունելով զգետն , յանդիման լինի ծակքար , որ Ցէլիրի գայա կոչի յայլազգեաց . և է երկայնածիգ ապառաժ , կամ թէ ասել միապաղալ պարսպաձեւ քար , ՚ի կողաց լերին ձգեալ վերտաստ ՚ի վայր մինչեւ ցեղը խորանդունդ ձորոյն . և ՚ի կիսայ ՚ի վայր ծակեալ է ապառաժդ չափաւոր բարձրութեամբ և ընդարձակութեամբ : Ճիմք յըոյն ողողեալ զերեսս ապառաժին և զներբին կողմանս փորուածոյն և քարացեալ՝ բազմաստակ ծալուածովք պասեալ են զառ . հասարակ քարավեանն : Բնդ այս ծակ հարկ է անցանել ամենայն կարաւանաց և ճանապարհորդաց որ գնան ՚ի կողմանս արևմտեան հարաւայ : Նախ քան զրանալ կրճիգ ոնց էր ճա-

Նասպարչն լեռնային և դժուարագնաց . և երաց զայդ այր ոմն չփխեմ յորմէ ազգէ և յորում գարու , ծախեալ վասն նորա զամենայն դրամն զոր պատրաստեալ էր ՚ի պէտո ուխտաղնացութեան :

Ի պատց ունի բազէշ տանձ քառատեսակ և սուրբ եռատեսակ , խնձոր , նուշ , թութ սպիտակ և սեւաւ թթու , սերկելիլ , ծիրան , կաղին , ընկոյզ , կեռաս և բալ . իսկ խաղող սակաւ յոյժ , նմին իրի և բնակիչքն օղի ըմպեն փոխանակ դինույ :

Գիւղորէք քաղաքիս առ հասարակ զուարճալի են դրիւքն և պաղատ ծառովքն . յորս անուանի է խուզրիկ զիւղ , շուրջանակի պատեալ լերամբք և ինքն ՚ի միջի յընդարձակ դաշտավայրի , և շուրջանակի ծառասանք գեղատեսիլ , ցանկալի վայր քաղաքայնոց և ամենայն եկաց , եթէ մոռասցին զանհնարին ներզութիւն ուղղոյն ՚ի գագամին լերին ելանելով և անսուսու ՚ի խորանդունդ իջաներով : Աւան փոքր զիսովմեկ արժան է կուել , զի կարեռքն յարհեսակց գտանին անդ ՚ի պէտո գիւղականաց . բնակարանքն վայելուչք և բնակիչքն աւելի քան զըրքերհարիւր տուն , ամենայն հայզագիր : Համեմատ նմին բազմութեան է և վայելուչ եկեղեցի նորա կամարաշէն սուրբ Գէորգ կոչեցեալ և նորաշէն :

Բաղիշեցիք անձնատուրը են ՚ի վաճառականութիւն , չգտանի ՚ի նոսա դատարկ որ և անդորք յարհեսատէ , սակա բազում երթեւեկութեան վաճառաց յայլեայլ գաւառաց և նորին բամբակեղչէն գործուածոցն , որոց բազում գործավարաց պէտո են . զի և մանկունք անդամ փոքր մի ընդ նախադրունս ընթերցանութեան մոռեալ վազվազակի յարհեսու կտաւադործութեան անցանեն : Նմին իրի և ընդ քաղաքն համօրէն չգտանի որ հմուտ զբաւոր արհեսակց . քանզի և նիւթեական արծաթսիրութիւն չտայ նոցա թոյլ մոռաւոր արհեսակց լինել հետամուտ , յորում աջողէն արդեօք բատ աշարուց բնաւորութեանն . խարիլ չգիտեն յայլոց , այլ խարել կարի քաջ . ոչ զրկեն զմիմեանս և ոչ պարսաւեն զանուն ընկերին առաջի օտարի՝ որում թանկադնի վաճառեալ իցէ ինչ : Աշխարհացիկն են , և որ ինչ ՚ի տեղեաց իւրաքանչիւր մասնասորեն անձանց յաշալը թութենէ իրիք , այն հերիք է նոցա . արխասիրուք են ՚ի քաղաքի իւրեանց , այլ արտաքոյ երկոսոք :

Այսկորութիւն Համբարձման ՚ի բաղէլ : ի նախընթաց երեկոյի տօնին ՚ի մուտս արեւու աղջկունք եօթն միաբանեալ երթան ՚ի միասին կժովլ միով առնուլ ջուր յեօթն աղբերաց , և անտի ՚ի գետն յորում խառնեալ իցեն եօթն ջուրը կամ առուակք , անխօս և անշշոնչ ամենենին յերթալն և ՚ի գաւանայն : Եւ յառնուն զջուրն յաղբերացն և ՚ի գետոյն՝ արկանեն յանօթ յրոյն խիճս եօթն յաղբերացն և այլ եօթն ևս ՚ի գետոյն . և բերեալ զանօթն դնեն ՚ի պարզի : Եւ յառուք համբարձման ՚ի հասարակել աւուրն ժողովին ՚ի մի՛ դրացի կանայքն և եօթն աղջկունքն ընդ նոսա , յորոց զմին զգեցուցեալ հարսանեկան սարազու՝ բոլորին ՚ի մի , և իւրաքանչիւր ՚ի կանանց նշան մի արկանէ յանօթ յրոյն ՚ի ծածուկ՝ մատանի կամ այլ ինչ , և առ իւրաքանչիւրն ասացեալ տուակաւուս , և հարսանազգեստ աղջիկն հանէ ՚ի դուրս զմի ՚ի նշանացն . և որոց նշանն իցէ , նմա և զառակաւոր բանն պատշաճեցուցանեն , իբրու գուշակ լինելով ապագայ աջող բազգից : Եւ այսպիսիք են ահա առակիքն .

Խամբարձման ժկմին նստեր եւս պախճան, կալ կենես, Աստուծոյ կը խնդրեմ՝ ուսկի օրոց, որորես: Այ իմ սարերաց սալամ, ձորերաց սուրբ Աստուծածածին: Ժողվարեր եկէք: Խարս, խանակ վիճակն 'ի բարին:

Աստուծած ետուր 'նծի քառսուն որդի, քառսուն որդուն քառսուն մարի, քառսուն մաքուն պճեղն ուզի: Այ իմ սարերաց, և այլն:

Ես ունէի երկու թուխու ու թամբ կորիճ: անչափ քարուխիճ երին, ինչուր հանին աղբուրն 'ի սահրիճ: որն որ էն աղբուրի ջուր խմէք, ամէն կարիճ ու մանուկ բերէք: Այ իմ սարերաց, և այլն:

Խատիկ մի նուան խատի իմ խէրանց շեման տակն է, ճուղ տամ ճուղ առնիմ, ելլամ զիմ խէրան պակարներ ծածկեմ: ամմէկ ճղին ճուխտակ ճրագ, ամմէկ ճղին սիւման խաւը: Այ իմ սարերաց, և այլն:

Բալլին երկնով անցաւ, մեր բարոց գոներ բացաւ, մեր տուն արեալ լցվաւ, մեր սեղան կարմիր խնձորով քաշվաւ: Այ իմ սարերաց, և այլն:

Քեզի զարնեմ ճուխտակ փարոց, ինալ սարկաւ քու բաղդն 'ի քո ծոց' ինչ կարմիր կովու կաթն 'ի կթոց: Այ իմ սարերաց, և այլն:

Խամբարձման ժկմին տիլապարն իջաւ մեր էղին, քաշեց զոսկիկով դանակ, պատրուց վըր փարդի թփին: Այ իմ սարերաց, և այլն:

Խամբարձման ժկմին տիլապարն իջաւ մեր էղին, կոսկեց տիլիման տիլապին, ծանտրացաւ՝ ալ չի զուրացեր: Այ իմ սարերաց, և այլն:

Խամբարձման ժկմին տիլապարն իջաւ մեր էղին, քաշեց զոսկիկով դանակ, քաղեց որթու խաղողին եղիր 'ի յոսկի սինին, որովհեց շամ շահէնին: դու լալ ես 'ի յոսկի սինին ճամփահիր մէջ սոսկի խաղոնին, ոտ ու ձեռքդ մէջ կարմիր խինին: Այ իմ, և այլն:

Միամիտա Աստուծած իրիչկեցի, բեռներս 'ի ջուր բաղեցի: գնաց էն տեղն ելաւ, տուտին ու մէմար 'ի տեղ կու բաներ: Այ իմ սարերաց, և այլն:

Ոսկին 'ի Մսրայ բերեմ: ոսկերիչն 'ի Մսրայ միջն: աւուր որ տաղկեախ նստեր, քամար ք միջաց ձգէք: Այ իմ սարերաց, և այլն:

Տղայ տղայ տանսի մամուռն երեսի մընչ (ոնչ) վարդ եմ որ վեր գուր, մընչ շուշն ծաղիկ քաղելի: իմ մէր զիս ըստա է բերէր, վարդէջով զիս ըստա է տնկեր: Այ իմ սարերաց, և այլն:

Աիրատ ինչ ոիրունիկ եմ, տիրաստ ինչ տնուրիկ եմ: ջուր տուր զիտ ինչ պահը տակ: Այ իմ սարերաց, և այլն:

Ծուռ շիտակ, բաղդն խստակ, քանի մաղ ծակ, քե մաղ ու ըռդակ: Այ իմ սարերաց, և այլն:

Վիճակ վիճակ անուի վիճակ, թափտա շապիկ, ոսկի կոճակ: Այ իմ, և այլն:

Դեղնապոյն մանուկ վըր ձիուն: խաց խացին դիղեցին մեր տէք խրամեց, ասոց տակ քու ճակտիքն է զրած: Այ իմ սարերաց, և այլն:

Բարձ բարձին զիղեցին: նստեր ես խումաշ բարձին, խամրեց զալն ու զիրուզին: Այ իմ սարերաց, և այլն:

Երկնուստ մատնին իջաւ, մատիս 'ի վրայ խաչեցաւ. ես զիմ եար քամ զիտէի, ճամփահիր քար գարձաւ, Այ իմ սարերաց, և այլն:


Մանուկն է պառկեր ծառի տակ, ծարինծալ խումաշն է զլիսու տակ. մանուկ ելիք վեր ջուրն եկաւ տակդ: Այ իմ սարերաց, և այլն:

Ելայ կայնայ վրէն բերգին, ոսկի թուր վրէն թեին, ելայ խաղայ հետ լուսնին, դացի Պաղտասան ու եկայ. Պաղտասան հալապին է կորսուեր, ճիրն 'ի ծառ կու ձիէք, պսպղուն վլացը կենէք:

Ա. Հ. Վ. Ա.

Փոքր ինչ հեռացեալ 'ի քաղաքէն բազից ընդ հասարակաց ճանապարհն՝
որ հանէ 'ի հանդիպակաց կողմն, կամ թէ ասել յարեւել կոյս և յարեւելս հիւ-
սիսոյ 'ի Մուշ, լինի մտանել 'ի հուչակաւոր ձորամէջն Ռահվա կոչեցեալ: Ոչ խո-
րութեամբ և ոչ անձկութեամբ և կամ այլով իւկը անուանի եղեալ է սա, այլ
վասն բազմավտանդ բքյ ձմերայնոյն, որոյ նման սակաւ ուրեք լինի լսելի: Եւ
պատճառքն ինքնին յայտնի կան. քանզի արեւելեան հողմոյն փշեալ 'ի ծովա-
կողմանէն վանայ և չգտեալ եւս, զի 'ի միոյ կողմանէն արդելուն դրուու և նեմ-
րութ, և 'ի միւսոյ կողմանէ լերինքն բաղից աստի և անտի, ուղղակի ընդ-
ձորամէջն անկեալ 'ահեղ մրրկաւ և բքալից ձեամբք ընու զայն: Շատ է փոքր
մի խառնակութիւն օդոց յարեւելոց կուսէ, և ահա զուարճալի ձորավայրն լինի
վտանգավից. եթէ ամսոն իցէ՝ կարկուտ և հեղեղ, և եթէ ձմեռն ձիւն և բուք.
յորում եթէ գէու լինիցի գտանել կարաւանաց յայնմ պահու հեռսի յօթեա-
նայ, զմահ առաջի աչաց նկարեն: Նմին իրի շնեցան 'ի նախնի կուսակալաց
հինդ մեծագործ ինքանք 'ի պատսպարութիւն կարաւանաց և ճանապարհոր-
դաց. շրեքին 'ի վերայ ճանապարհին՝ որ հանէ 'ի Մուշ, և կոչին բարչենոց խան, Օղերով խան, Պաշ խան, և Մորիսայ խան, կիսաժաման կամ երեք քառոր-
դաւ տարակացք 'ի միւսեանց. յորոց Պաշխան միայն անարաս մնացեալ է, այլքն
խարխալեալ և կսափուլ և անխնամ թողեալ: Ամենայն կարաւանաց և ու-
ղեորաց յոյս 'ի ձմեռնային ժամանակի ինքանք են. անդ գաղարեն աւուրզք
բազմք մինչև ցիսազաղի օդոց, և ապա ուղույ լինին բազում տառապանօք ընդ-
լեռնացեալ կոյսու ձեանց, մինչև կարասցեն արկանել զանձինս 'ի միւս ինքան: Հինգերորդ ինքանն է 'ի վերայ ճանապարհին որ հանէ 'ի Գաստվան, Ալամենց
խան կոչեցեալ, յանուանէ մերձակայ գեղջն Ալամեք կոչեցելոց: Հիսցեալ զար-
հուրի ամենայն որ միանդամ ընդ ահագին տարածութիւն ինքանիդ ակնարկէ,
և քաջ 'ի միտ առնու զարհաւիրս ճանապարհին, որոյ աղագաւ կառուցեալ է
ահեղ շնուռածդ 'ի մեծի անդ գաշտավայրին. քանզի Ռահվա անձկագոյն մկը-
սեալ առ Բաղիշաւ, և ապա առ Պաշխանաւ լայնացեալ գաշտանայ մինչև ցիսա-
վան: Գաւիթ ինքանիդ մեծի իբրև զբանակեալու մի է զօրաց. իսկ յարկեալ շի-
նուածքն զարմանալի յոյժ. քառաթեւեան հիմն արկեալ նորա՝ առ իւրաքանչիւր
թէ երկուստեք սենեակը են մեծ և փոքր, այլ մնարդկան և այլ անասնոց և դար-
մանաց. և 'ի վերայ սենեկաց ուրեք ուրեք այլ խցկունք. և 'ի կողմն ինքանին
կրպակաձև սենեակը. իսկ 'ի ծայր շինուածդյն մեծի եռակարգ կամարաձև տե-
ղիք, 'ի բնակարան արդեգք տեսան ինքվանին սահմանեալ թէ յայլ ինչ պէտս՝
չունիմ ասել: Բայց այդ ահեղ և զարմանալի շինուած, թէպէտ և պատսպա-
րան լինի ցայսօր ուղեորաց, սակայն կիսափուլ կայ ըստ արսագին պարսպաց, և
ներբին սենեակըն կամարգն հանդերձ բազում ուրեք խարխալեալ և փետալ՝ ան-

ձեռնամերձ կան 'ի նորոգութիւն առնուլ։ Շրջապատ իջևանիս երեքհարիւր մեղք է . և չգտանի բնաւ կոսորակ մի փայտի 'ի բովանդակ շինուածի անդ , այլ առ հասարակ քարակերտ կամարակառ է :



Շրջապատ Արամենց խանին .

ՏԱՏԻԿ

Մի ՚ի գաւառացն է սա Աղջնեաց աշխարհին, Երկայնաձոր և անձուկ, գետոյ ընդ մէջ անցանելով, և իբր հնգետասան գիւղօրէք ՚ի ձորամիջի անդ զուարծալիք յոյժ, պտղատու ծառովք և մանր արտարէիւք: Ի վերջին ծայր գաւառիս լայնացեալ գաշտանայ ձորն հարուստ տարածութեամբ, և լերինքն հանդիսպակաց սահման հաստանեն նորա և գաւառին խիզանայ: Ի հիւսիսոյ կուսէ գեղատեսիլ գաշտավայրիդ ՚ի բարձր դորի է փոքրիկ մենաստան Աթանագինէ հայրապետին՝ Մոձկունից վանք կոչեցեալ, յանուանէ գիւղին որ է առընթեր նորա: Եկեղեցի նորա մատղանաշափ, և զուրկ ՚ի միաբանից և ՚ի բնակարանաց չիք նորա թերմ և ոչ մի:

Կ Ի Խ Զ Ե Լ - Տ Ե Բ Լ:

Գաւառ սահմանակից ջառկայ, բարձրաբերձ լերանց ընդ մէջ լինելով. են նորա գիւղօրէք երեսնիւ չափ, որոյ և ծայրն հասանէ մերձ ՚ի ծովին բնունեաց: Երկայնաձիդ լայնաձոր է գաւառու, զուարճալի արդարեւ ըստ անուանն, սակա խոտաւէտ արգասաւորութեանն, թէպէտ և զուրկ ՚ի ծառոց: Դաշտավայր է առհասարակ, և ջրարբի իբրեւ զջատիկ, գետոյ ընդ մէջ անցանելով՝ որ ապա անցեալ առ թուխաւ հոսի ՚ի ծովին վանայ: Աւանդութեամբ ունին ընակիչըն եթէ սուլդան Մուրաստյ յանցանելն ընդ սց ձոր ՚ի գալնայնի յորժամ՝ երթայր յարձակել ՚ի վերայ բաղստատայ՝ հաճեալ ընդ վայրն պարարտարօտ, կոչեցեալ իցէ զայն կիշգէլ տէրէ, և այն անուն մեաց մինչև ցայսօր:

ՈՂՈՐԾ ՎԱՆԱԾ ԾՈՎՈՒՆ

Տեղագրեալ ցարդ մասն մի ՚ի թզնունեաց գաւառէն և մասն մի փոքր յաշխարհէն Աղձնեաց, անցանեմ ՚ի վասպուրական աշխարհ՝ ՚ի հնագոյնն և ՚ի ճոխն աղգային հնութեամբ, զորոտ ծովուն աստօրագլելով նախ, սակաւ ուրեք լուսուրեալ ՚ի ներքին կոյս ցամաքին: Արդ առաջն տեղի՝ որ ակներե լինի յեղերս ծովուն յարեւմոց է գիւղն Դատշափ, իրու զիսաւոր նաւահանդիստ այդմ' կողման, ուր իջնեն վաճառք բեռանց անցանել նաւակաւ ՚ի վահ:

Անտի յաջակողմն ուղեորեալ կիսաժամու միջոցաւ ընդ գաշտալայրու՝ ընդ առաջ լինի գիւղն Ռւրտափի: Հնութիւն գեղջս մասամբ իմի երեխ յարձանագիրս գերեզմանասամնն, յորում մեծամեծ խաչաքարը են մանրաքանդակ զարդուք ըստ ախորժակաց ժամանակին: յորս գտանի մուական մինչեւ ցՊ. (1350) և է գիւղն պտղաւէտ:

Ի վանորէից վասպուրական աշխարհին առաջին յանդիման լինի յայնո՞ կողման մենաստանն Ս. Յիզտիբուզուի, յանշուք գիւղն թուշիս, քառորդաւ հեռի ՚ի նմանէ ՚ի վերայ բարձրագոյն ասպառամի, առ ՚ի կողաց լերին: Ճանապարհն վերելից ողբատաձեւ է երկուստեք խիստ առ խիստ ծառաստանօք, թէպէտ և փոքր մի գյուտարին, այլ գիլլը վանացն բարձր և ծովահայեաց շրջապատեալ ՚ի ծառոց. ՚ի թիկանց և յանձէ բարձունք վարկպարազի պրակար ուռանացեալ, և յահեկէ և յաւաջոյ գիւղօրէք, է որ ՚ի մօտց և է որ ՚ի հեռաստանէ, ուրեք գաշտաձեւ և ուրեք մանր բլրակիք զարդարեալ, և զլուխ ամենայնի տեսլի ծովուն. այդ ամենայն հիացոցանէ զորս անդն գտանին: Խոկ շինուած վանացն թէպէտ և փոքր և ոչ համեմատ գեղատեսիլ գրիցն, որ և ամայի կայ արդ անդնակ ՚ի մալդիկանէ, սակայն եկեղեցին համակ քարաչէն, գեղեցիկ և հինգխորանեսմն անարատ կոյս: Առընթեր պարապին արտաքոյ կոյս և այլ մասուռն կիսափուլ և քարաչէն: Ի ճակատ եկեղեցւոյն յիշատակի Մեսրոպ վարդապետ շինող նորա ՚ի թուիս Ռծծիլ: Առ թուխաւ մայեն գետն կիւղեւաէրէ գաւառին թափի ՚ի ծովն վանայ, քարաչէն կամուրջ ունելով ՚ի վերայ առ ծովեղին:

Խարզիիք. — Պատմեն զսրբացն Գրիգորէ Նարեկացւոյ հովուութիւն արարեալ ՚ի գիւղս յայս մինչ չե էր կրօնաւորեալ. և յաւուք միում թշնամեաց ունան ՚ի վերայ յարձակեալ՝ հարկանել զնա. յորոց խոյս տուեալ նորա ՚ի կապանն կոյս արտաքոյ գեղջն՝ զայ և թագի ընդ կողիւք վիմի միոյ՝ որ է առ ճանապարհաւ ծովափին. և վէմն սրանչելոք զոգաւորեալ ընդունի զնա. և թշնամեացն անց ցեալ առ նովաւ չտեսանեն զնա և զերծանի ՚ի նոցանէ: Խոկ վէմն այն կայ այն պէտ մինչեւ ցայսօր գոգաւոր ըստ ձեւոյ թիկանց մարդոյ և բազկաց, և ծառ մի առընթեր. և յետ ժամանակաց որպէս թուի՝ խաչաքար կանգնեալ են հանդէպ նորա, նշան ուխտատեղի լինելոյ:

Առափի: — Ա՞ի ՚ի պտղաւէտ գիւղորէիցն է սա ՚ի գաշտալայրի որ երկայնեալ



Challenging the Right to Privacy

ձդի 'ի ծովին կոյս՝ ապառաժուտ՝ 'ի ծայրին գործիք։ Իբրև քառորդաւ հեռի 'ի գեղջին յայնկոյս ծովեզրին՝ որոյ քարաժայու կապանն հետզետէ բարձրանայ 'ի վեր, անդ 'ի վերաց մեծի բարձրաւանդալիին կառուցեալ կայ մենաստան յանուն սըրբոյ կարսափետի . զրիւքն զուարճայի և վաեմ և ծովահայեաց : Չունիմ ասել որպափսի ոք էր շինող նորա և զինչպիսի նորա ախորժակ, որ ընդ վնեմատես վայրացն չկարաց միաբանել զշինուածն խրթին և մթին և զամենելին անշուքն : Թէպէտ և մարթի տօել գեղատեսիլ լեալ զառաջն հիմնարկեալն մինչքեռ չեն էր երկիրն առ արծրունի թագաւորօք. այլ յետ աւերելց երկրին և բանանալց Քրդաց, յայդ խրթնութիւն սահմանեցին զմենաստանն, զի մի դռնեայ անհետ լիցին սրբազն վայրիքն : Աւանդի 'ի բնակչաց հաստատութեամբ, զի բոնաւորի ուրուք յայլազգեաց յախշտակեալ զարտորսյու վանայն, և սրբանչելին տեսեալ և զարհուրեալ՝ յետս դարձուցանէ ոչ միայն զօր առն, այլ և զիւքն զամենայն :

Գումաց վաենք . — Յանուանէ գեղջնայապէս կոչեցեալ, որ ժամաւ հեռի է 'ի դաշտի . լերամբ անջրպետի վանքն 'ի գեղջին, և է անլոնդմիջաբար առ ափն ծովուն երկուստեք անբնակ 'ի զիւզրէից, և լեամն 'ի թիկանց խոր ունելով . շըրջակայ վայրը նորա անբուսաբեր և ապառաժ, և ինքն ամայի թողեալ, թէպէտ և անկործան կայ, և առաջնորդն 'ի նոյն գուման գեղջ բնակի, որ յայնկոյս լերինն : Մենաստանն շինեալ է յանուն սրբոյն գէորդայ, որոյ զլուխն պահէր անդ . և այժմ առ անբնակ լինելց մենաստանին պահի 'ի գուման գեղջ : Առ շինականն յորոշումն յայլոց գումաց վանք ասացելոց՝ կոչի սա Զուզլուի սորդր գերոդ :

Բեկու . — Այս զիւք է, ասի յոմանյ, յորում էր գերեզման ներբութայ կամ թելայ. ստուգիւ արգեօք եթէ յանուանէ այնպէս յարմարեալ՝ չմարթի հաւաստեաւ ինչ գուշակիւ : Այլ զայսամանէ երկարագոյն լիցին բանք 'ի տեղադրութեան գաւառին հայոց ձորյա :

Կապուտկող . — Մի 'ի բարձր լերանց է սա 'ի վասպուրական աշխարհին, և 'ի հնուան կոչեցեալ բնձաքիարս, (կամ բնձաքիսար) թերեւ յանուանէ բնձաք դեղջն որ առ երի կայ նորա . լեամն լայնանիստ, ոչ այլ և այլ ձորովք կցելզք ընդ միմեանս, այլ միապազաղ : Մինցոց դագամթանն բարձրացեալ, և 'ի հիւսիսոյ կուսէ տակաւ ցածուցեալ՝ երկայնեալ ձգի 'ի մէջ ծովան, այնպէս զի 'ի բազում կողմանց ծովեզրին երևելի լինի : Այս լեամն է յոր ել սուրբն Յակով յետ դարձին 'ի Մասեաց և յարարաւեան աշխարհէ և անձ գերկիրն Մանածհրի, որ է Ռշտունիք, ԳՈՒԱՆ կոչեցեալ այժմ . քանզի երթեալ սրբոյն առ Մանածհրի զի արձակեացէ զարիկաւագունս իւր, և նորա խատացեալ ոչ միայն չարձակեաց, այլ և 'ի ծով ընկէց զամենեսին 'ի բերդէն իւրմէ՝ որ առ Բարպաշաշտիւ, զորմէ լիցին բանք զինի : Ի կողայ մի լերինս որ հայի յարեելս հարաւոյ, յետ ժամանակաց շինեցաւ մենաստանն յանուն սրբոյն Յակովայ, համբաւատեհնչ առ նախնեօք, որպէս ցարդ աւանդութեամբ պատմի . 'ի հարկէ և ըստ անուանն կարգօք և կրօնիք և միաբանից բազմութեամբ ճոխացեալ . այլ արդմի յանչուք վանորկէիցն է, շինուածքն ամենելին զուրկ յախորժակաց, մթին և անմարտուք, արեղայիւ միավ եեթ կառավարեալ : Ճկցիթ սրբոյն ասս պահէր և մասն մի 'ի նոյաց տապանէն, այլ սակաւ ամօք յառաջ գողացեալ եղին 'ի Քըր-

դաց : Արտաքրյ մենաստանին են և այլ մատրունք թողեակը ամսցի : Առ արեւ մտեան մատրամբն կայ ազգիւր բարեհամ ջրոյ, և ակն նորա վերոյ կողից լերինն, զոր պանչելեօք բխեցուցեալ է սուրբն Յակոր :

Սաշրբ թովմայի վանք .— Ի վանաց սրբունք Յակորայ շրջան առեալ զկողիւք նոյն լերինն կապուտկողսց և անցեալ ՚ի ծովակողմն կոյս՝ ՚ի վերոյ սարարարձք լայ- նանիստ բլրի յանդիման լինի մենաստանս գեղեցկադիր և ծովահայեաց . շի- նուածովք փոքր մի առաւելեալ քան զվերողքեալման, այլ նշանաւոր ինչ չկը ՚ի նմա : Ասեն թէ մարմին առաքելոցն ամփոփեալ կայ վերոյ գրան եկեղեցւոյն, թէպէտ և արտաքրուստ չինի յայտնի նշանաւ իւիք : Այլ ըստ հասարակ աւան- դութեան ահեակ բաղրմկ սրբոյն սպահի անդ :

Լուսապտուղ Ս. Սահակ .— Քառորդաւ հեռոի ՚ի Գանձակ գեղջէն կառուցեալ զկողիւք բարձաւ լերին : Փոքր է մենաստանս և անշուք ամեննեին ըստ օրինակի առանցոցն : Սահակս այս էր ճգնաւոր ոմն ՚ի միաբանից կարմրակայ վանաց . և աղօթատեղի ընտրեալ նորա աստ մինչդեռ անշէն էր վայրս, գայլ անտի երրեմն աստ աղօթել . և քանզի ինքն միականի էր, ինդրէր ՚ի տիրամօրէն առնուլ ըլ- լոյս և զմիւսայ ականն . միայն զի տեսից գրեգ, ասէ, միանդամ . և ըստ անձուկ փափաքանացն տեսեալ զտիրամայրն, խաւարեալ ակնն լուսաւորի և լուսաւորն խաւարի . և անտի և այսր ուխտասեղի է ամենայն աշացաւաց : Մարմին երա- նելոյն թաղեալ է մերձ ՚ի վանս կարմրակայ, իսկ պտուղ աշացն է ՚ի միւս վանսն :

Կարմրակ Աստուշածնի վանք .— Ի սուրբ Սահակայ վանաց անցեալ զգագա- թամբ լերինն մեծաւ աշխատոթեամբ, յետ հանդիպելոյ ընդ վերելմն աղըերա- կան յոյժ բարեհամիր, և իշեալ ՚ի խսնարհ՝ ՚ի ծորամիջի անդ . և ՚ի շրջապատ լերանց կառուցեալ է մենաստանս շինեալ ՚ի գագգայ արքայէն Արծրունեաց : Կոչեցաւ կարմրակայ վանք, զի է անդ մասն ՚ի կենաց փայտէն ամփոփեալ ՚ի տփի, և ՚ի վերսայ ակն կարմրագոյն : Ենիուած մենաստանին ընդ բաղրմա՛ փոփոխութեամբ անցեալ, իբրև զայլոցն և սա անշուք է, այլ էկեղեցին փառահեղ և բարձր : Առ դրան նորա երկուստեք ՚ի բարձաւ որ հասանէ մինչեւ ցկամարսն՝ տեղիք են վան- դակապատ, յորս աղօթէին թագաւորն է թագուհին : Առ նախնեզք մենաստանս այս Միանձն անապատ յորջորջէր, և միաբանից բաղմութին էր իբրև երկը- հարիւրոց, յորժամ չէն էր երկիրն . և պատկառելի առ ամենեսեան վասն մասին կենաց փայտին : Յաւանին Գաւաշու մեծատան ուրումն որդի հիւմնդացեալ մերձ ՚ի մահ, առաքեալ ինդրէ ՚ի վանահօրէն ածել զսուրբ նշանն ՚ի տուն իւր վասն բժշկութեան որդւոյն իւրոյ . և վանահօրն ելեալ հանդերձ ամենայն միա- բանիք, և զնշանն սուրբ փոխ առ փոխ յածեցուցեալ ՚ի զլուխս ամենեցուն՝ գան ՚ի տուն իշխանին . որոյ տեսեալ զաքանչելիս առժամայն բժշկութեան որ- դւոյն՝ տայ ՚ի պարզեմ մասին ՚ի մենաստանն զիւր գութանն ամենայն սարզն :

Մոխրաբերդ .— Այս այն տեղի է յորում զկնի գարձին վարդանանց ՚ի Պարսից՝ եկին ընդ նոսա մողք և քուրմք և շինեցին ատրուցանս պաշտաման կրակի . և Սահակ եպիսկոպոս կործանեաց զայն, և յետոյ վկայեցաւ ընդ Ղեկնդեանս : Սակայն բուն և հին Մոխրաբերդն ուր այդ ամենայն եղեւ, առեալ է այժմ ՚ի ծո- վէ, և գիւղն նորոգեալ վերոյ քան զնա :

Նարեկ . — Գիւղ պտղաւէտ գեղեցկանիստ 'ի գաշտի և 'ի վերայ ցածագոյն ըլլրակի , ժաման . հեռի 'ի ծովեզերէն : Ի միջավայր գեղջն , կամ' թէ ասել 'ի գաշտամն ըլլրակին 'ի վերայ խոնարհ կանաչագոյն ապառաժի , կառուցեալ է մենաստանն՝ անուանի մինչև ցայսօր ժամանակի սակա բնակեց անդէն Գրիգորի նարեկացոյ : Եկեղեցի նորա հոյակապ յերիս բաժանի կից ընդ միմեանս . միջննե Աստուածածին կոչի չորիսք քառակուսի սեամբք . աջակողմեանն անսփան՝ սուրբ Սանդուխտ , յորոյ աջմէ առ 'ի ներքս յետոյ խորանին կայ մատոււն ուր գերեզմանն է սրբոյն . իսկ ձախակողմեանն դարձեալ յանուն Աստուածածածնի նմանաձև միւսոյ կողմանն : Առ դրամբ եկեղեցւոյ է գերեզման Անանիսի նարեկացոյ որ էր քեռի սրբոյն . և առ դրամբ տաճարին գերեզման Յովհաննու եղրօր նորին սրբոյ : Իսկ զանգակատունն որ առ դրամբ եկեղեցւոյն կից նմին՝ յետոյ շինեալ է :

Նարեկացոյ ձգնեարանն . — Ժաման . հեռի 'ի Նարեկայ 'ի հիւսիսոյ է քարալիւան երկայնանիստ , անուանի եղեալ 'ի բաղում դարուց հետէ ստկո աղօթատեղի լինելոյ սրբոյն Գրիգորի նարեկացոյ : Ապառաժն է 'ի ծակոսակէն քարէ , և բաղում ուրեք անձեռագործ սյյրք մանունք 'ի նմա , ունանք հաւասար գետնոյ և ունանք 'ի վերայ : Այլ զարմանալի ևս են այլքն յարհեստէ կուանագործաց յօրինեաք , չգիտեմ՝ յորում դարու . սյս միայն յայտնի է զի յառաջ քան զնարեկացին լեալ է որ անդ աղօթէք : Շինուածն յերկուս բաժանեալ 'ի ներքնայարի և 'ի վերնայարիկ՝ ինն սենեկօք սահմանի , հինդ 'ի ներքինն և չորս 'ի վերինն , պատուհանաձև բայցուածն ունելով յարկաց խւաբանչւոր ծովահայեացս : Մի միայն է նախագուռն , ընդ որ փարք մի գժուարաս լինի ելանել ընդ քարաժայուն և մուանել . այդ առաջին մուստ մէջ ընդ մէջ դրամբք համնէ յամենայն սենեակս ներքնայարիկին , յորոց 'ի միումն 'ի կողաց լերինն փորեալ է բողորչի տեղի կանդնաշավ խորութեամբ , յաւազան ջրոյ արգեազ թէ յայլ ինչ պէտս չէ յայս : Ի ներքնայարիկին դիւրապօյն ելանելեօք լինի անցանել 'ի վերնայարիկն . 'ի սմա ևս մէջ ընդ մէջ դրամբք հազրորդին ընդ միմեանս սենեակին չորեքին . յորոց մին է փոքրիկ մատուան հանդերձ վիմեղէն սեղանով . անդ , ասեն , պատուագործ ուրբրն : Աստի ետես նա զիիրամայրն աստուածորդւովն , առ որ անձուկ սիրով մաշէր հանապաղ , 'ի վերայ Աստէր կզզույն լուսափայլ տեսլեամբ և ճառագայթարձակ նշողիւք ցորացեալ 'ի վերայ ծովան , յայն տեսիլ էջ փութով յայրէ անտի և ընթացեալ ընդ ծով իրրե ընդ ցամաք՝ հասանէ առ անձկալին իւր . և Տիրամօրն տուեալ զաստուածորդին 'ի գիրկս նորա , Առ զուէր քո , ասէ : Զայս քանինչիս մանր ստորագրէ նա ինքն երանելին 'ի տաղն Աչքն ծով 'ի ծով . յիշէ և յալօթմն 'ի բանն ժի և իլ :

Տշող . — Որք զիէլու գեղջէն ասեն լինել գերեզման Ներբովթայ , զայս գեղջէ ևս զայս օրինակ բան յարմարեն . զներբովթ , ասեն , սպանեալ Հայկայ 'ի Հայոց ձոր՝ հրամայէ զրի նորա բառնալ և տանել 'ի թէլու . և յանցանել ընդ գիւղս այս՝ զի տակաւին սպաքն 'ի կուրծս նորա միսեալ կայր , իրրե արտաքս քարշեալ հանին , շող արեւուն , ասեն , թափ անցեալ ընդ վիրամեջն՝ անտի անուն գեղջս կոչեցաւ Տշող :

Փշաւանն . — Եւս սա այն գիւղ է՝ ընդ որ յանցանել սրբոյն Յակոբայ՝ իրրե եւ-

ուես զայդեպանս զի աշխատէին, եհարց թէ զի՞նչ գործէք. և յասել նոցա վառշա
տնկեմք, առէ ցնոսա. Եղիցի ըստ բանի ձերում. և անտի մինչև ցայսօր ժամա-
նակի կարի վշափից է վայրն :

Իլոց վանք կամ՝ Քարտուն խորսան. — Ընդ ձորահովան որ առ Ռոստանու՝ ուղ-
ղեալ զընթացս 'ի ներքո կոյս, 'ի ձախով ունելով զԱրտոս լւառն և յաջմէ ըդ-
բարձունս, երկժամու միջոցաւ հեռաւորութեամբ լինի հասանել 'ի գլուխ ձո-
րոյն ուր երկուստեք լերինքն եկեալ միանան, անդ է դիւդն իլի, սակաւարնակ
այսօր. և 'ի մէջ նորա մենաստան կիսակործան և ամսյի Քաւսուն խորսան կո-
չեցեալ, յորոց տան հազիւ մնացեալ են: Մեծահաշակ աւանդի լինել մենա-
ստանս առ նախնեգք, ոչ այնու միայն զի Գաղկաչէն է, այլ զի և հոյակապ և մե-
ծանիստ քան զայլս 'ի շինուածոց նորա և ճոխ միաբանիք. արդ մենաստանին
խսպառ գետնոյ հաւասարեալ, եկեղեցին և եթ կանդուն կայ հանդերձ կիսամաս-
նեայ շինուածով որ կից ընդ նման է. և բաց յաւադ խորանէն այլք 'ի խորանացն
են մի ոմբովոնք կամ թէ ասել փոքրիկ մատրունք յայլ և այլ անկիւնս եկե-
ղեցոյն. ոմանք գետնոյ հաւասարը և այլք 'ի վերնայարկս նորա, առ հասարակ
գաղտար անասնոց եղիւալ:

Քարաւաշչու. — Սա այն է որ 'ի հնումն Մանակերսան անուանէք. ապառաժ ցա-
ծագոյն 'ի ցամաք կուսէ կցեալ երկայնեալ 'ի մէջ ծովան, յորոց վերայ էր բերդն
Մանաճհրի, և ոյժմ աւերակ է խսպառ: ի բերդէ տասի արկ Մանաճհր զար-
կաւագունս օրբայն Յակորայ ի ծով: Բայց այժմեան Քարագառը գիւղն փոքր ինչ
հեռի է 'ի ծովեղերէն:

Ոստան. — Մնուանի աւան 'ի հնումն ի Ռշտունեաց գաւառիս, առ ծովափ-
ամբն 'ի բարձր սարաւանդի՝ որ հետզետէ բարձրացեալ լեռնանայ: Գաղիկ
արբայ հաճեալ ընդ գիրս տեղոյն, ընդ քաղցրութիւն աղբերացն և ընդ օդոցն
բարեխսառնութիւն, որ անարդել չնչեն 'ի նման յարեելից, 'ի հիւսիսոց և յարե-
մալց, 'ի թիկանց հարաւակողմանն և եթ արգել լինելով հարաւոյ, շինեաց 'ի
նման զառաջինն շինուածս հոյակապս, տաճարն և մենեեակս և փողոցս հրաշալիս
և տաճար մի ճեմարանաց զարմանալի յոյժ. համառօտ ասել զաթունն արբունի
աստին հաստատեաց մինչ չե ձեռն արկեալ 'ի շինութիւն Աղթամարայ: Եւ-
այդ ամենայն ճոխագոյն պատմի առ թուղմոցի արծրունոց և 'ի հին կոնդակին
Աղթամարայ: Այլ 'ի հնդետասաներորդ գարու անմարդաբնակ արարեալ 'ի Արան-
դարայ, անհետ եղեն խապառ. հրաշալիքն Գաղկայ, եթէ ցայնվայր նշխար ինչ
մնացորդ կայր 'ի շինութեանց արբային. և արդ 'ի նոյն կործանման կայ մնայ՝
'ի սակաւոց շինական տանց ընակեալ իրրե զմի 'ի գիւղորեից: Բերդն որ կայ
ցարդ 'ի գաղաթման լերին՝ բարձրագիր 'ի վերայ աւանին և ծովահայեաց, ըստ
մասին հիմանն թերիւ մնացորդ. համարելի է յառաջնոյ ամրոցէն. և յետ կոր-
ծանման աւանին կարկատեալ, որպէս ակներե. 'ի քարանյն տեսանի: Յամբոցէ
անտի սատրերկեայ ճանապարհն՝ որ և այն խաթարեալ է, հանէր մինչև յե-
կեղեցի սրբայն Ստեփաննսի որ է արտաքը բերդին 'ի ստորե:

Արտոս. — Մի 'ի բարձր լերանց Վասպուրական աշխարհին, կիսով չափ 'ի վեր-
տնբեր ապառաժ ըստ ծովահայեաց կողմանն, և անտի 'ի վայր գալարաբեր. եր-

կայնանիստ է ըստ արևելից և ըստ հարաւոյ կողմանցն . զի մի կողմն ՚ի ձորաբերանոյն Ռատանայ ձգի յարևելս կցոյս մինչև ցմիւս ձորաբերանն հանդէպ լինդղայ . իսկ միւս կողմն ՚ի հարաւոյ կցոյս՝ յորմէ և ձորն որ առ կողիւք Ռատանայ ձևացեալ . հանէ մինչև ցդիւղն իիի , զորմէ ՚ի վերն ասացաք : Առ ստորոտով ծովեղերին գիւղրէք են և պարտէքք պաղաւէտք հարուստ մի տարածութեամբ , որպէս և ՚ի ձորաբերանն ՚ի վեր ՚ի հարաւոյ : Եւ այդ ամենայն բարելից գիւղրէք՝ սահման Ռատանայ համարին :

Զադար Ա . Նշան (կամ Զարաւանն) . — Վանք Աստուածածնի առ ՚ի կողաց Արտոս լերին , գեղեցկադիր և բարձրահայեաց ՚ի վերայ ձորաբերանոյն Ռատանայ : Զէ ինչ նշանաւոր մենաստան փոքր և անշուք , այլ ցանկալի ամենայն հայրենասիրաց , զի անդ է գերեղման Եղիշէի վարդապետի սրբոյ . որ նախ յեկեղեցւով Վասնիշատ գեղջն ժաղեալ էր , որ առընթեր նորա կոյ և արդ ամայի , և իրեւ քառասուն ամօք յատաջ վարդապետ ոմն եհան անտի զնշամարսն և բերեալ հանդոյց ՚ի վանս յայս : Եւ այս ամենայն հանդերձ խստակրօն կենաք պրբայ վարդապետին յԱրտոս լեառնն , ճոխագոյն պատմի մի ըստ միոնչ ՚ի կոնդակի վանաց :

Սպիտակ վանք Աստուածածնի . — Եւ այլ մենաստան փոքր շինեալ ՚ի գաղկայ արքայէ ՚ի վերայ բարձր ըլլիք , որ է նոյնակն ՚ի կողաց Արտոսի :

Անգորայ Աստուածածնի վանք . — Յանուանէ գեղջն այսպէս կոչեցեալ որ քառորդաւ . հեռի է ՚ի վանայն . և շինեալ է առ գետավն որ գայ ՚ի խօշապայ : Առ ափն գետայն ստորև վանդից ըլսէ ջուր պատուական՝ ուր լուանան ախտաժէտք : Նշանաւոր է վանս այս վասն ինքնարուխ ձիթոյն . զի ՚ի հիւսիսային որմն եկեղեցւոյն յերկից զաշափ գարանի վերեսոք ներընոյ հանդիպակաց քարին՝ որ օծեալ խաչար է , ասեն ՚ի թագէուէ առաքելոյց , հօսի ձելին իրբէ զշիթս քրտանց :

ԱՐՏԱՎԵՏ . — Ի հնումն մի ՚ի պայծառ քաղաքաց կողմանցս էր , յորում Բ Արտաշէս շինուածս զարմանալիս և ամրոցս յօրինեալ բնակեցաւ ըստ Արծրունուոյն պատմութեան . այլ այժմ հազիւ թէ հետք երեխն այնց հնութեանց . և է իրեւ զմի ՚ի գիւղրէից : իսկ պարափակայն բաղմութեամբ և պտղաւէտ արդասաւութեամբն երեկի յոյժ : Շինուածք տանցն ՚ի բարձր ըլլիք , և պարտէքքն հանդէպ նորա ստորեւ . որ ըստ լայնութեանն հասանէ մինչև ցծովելլին , և երկայնութեամբն երկուստեք ցմեծ տարածութիւնն : Ամենայն տեսակք պտղոց որ անդ մինին աղնիւ են ըստ համեյն և ըստ մեծութեանն , և խնձորն հոտաւէտ . իսկ առաստութեամբն լիացուցանէ ոչ զվան միայն , այլ և զշրմակայ սահմանս : ՅԱրտամետ ՚ի վերայ հասարակաց ճանապարհին է առքիւրն այն՝ յորում առ ժամանակօք սրբոյն Յակոբայ ՚ի լուանալ աղջկանց անպարկեշտից՝ անիծիւք սպիտակակացոյց զշերս զիսաց նոցա . և ասի թէ մինչև ցայսօր բոլորչի սպիտակութիւն զահեկանապափ երկի ՚ի զլուխս նորածնեալ աղջկանց : Ներքին կողմն պարբեր յորմէ հօսի ջուրն՝ վիմափոր է լայն և բարձր քան զհասակ մարդոյ և երկայնաձիգ . այդ գործ թէ չիցէ ՚ի Շամիլրամայ մնացորդ , անշուշտ մերսյն Արտաշէսի ձեռակերա է : Շամիլրամայ ստուն ընդ Արտամետ անցեալ ուռոգանէ զայդեստանն նորա , և անտի անցեալ զնայ յոյզեստանս վանայ :


կոնկուր վաճիք աստուշածաջնի .— Այսաժաման հեռիլլը լրտամետայ և ժաման և կիսով 'ի վանայ , շններալ 'ի բարձր բլրի գեղեցկանիստ և ծովահայեաց , ամեննեկն անշոք : Զայդ անուն ընկալաւ մենաստանս 'ի դիպուածոյն , իբր զի 'ի սկսաններ երբեմն խօրհրդոյ պատարագին իբրև չփոթէին իմն թէ զինչ արասցեն քանզի չդոյր բաժակակ 'ի պատրաստի , կունկան ողկոյդ խաղողոյ բերեալ ելից զպակա-սոթիւն կարեսոր գործոյն :

Վարժ .— Յարեւելակողմն քաղաքին վանայ երկժամաւ հեռիլ 'ի նմանէ է լեռոնդ , բարձրագոյն քան զրոյ ցարդ սորութեցաք , այլ ոչ քան զվիփան : Կիսով չափ բարձրութեանն գալարաբեր և անտի 'ի վեր առհասարակ սպառաժ և անմա-տոյց . բարձրութեամբն և երկայնանիստ դրիւքն ահաւոր ձգեալ 'ի հիւսիսոյ ընդ-հարաւ՝ յարեւուտաս կոյս զհայեցածն ունելով : Ի հեռաստանէ թէպէտ և միա-պաղադ երեխ , այլ անձկաղոյն ձորով յերկուս բաժանեալ լանջակողմն , առան-ձին անուամբ ներքին վարագ ձայնի այն որ առաջակողմն է և ցիս վերնոյն հասանէ բարձրութեամբն . իսկ միւս յետակողմն վերին վարագ , որ և ահազդին բարձրութեամբն երեսի է յամենայն կողմանց աշխարհին :

Ներքին վարագ .— Մենաստանն ներքին վարագայ կոչեցեալ Սուրբ Նշան՝ սակս անդ լինելոյ երբեմն չուփափմեայ սուրբ նշանին , է 'ի լանջակողմն լերին 'ի դուր-տեղով պատեալ բարձր պարապատ յանթուրծ աղիւտոյ : Ընդարձակ շնուա-ծովին և մեծաստարած գեղատեսիլ պարտիզօքն 'ի ներքս և արտաքոյ պարը-պացն յարեւելից կուսէ և 'ի հիւսիսոյ արդարեւ ցանկալի վայր , թող և զողոցն բարեխասութիւն . մրգաւէտ ծառք պարտիզացն մեծաւ մասամբ են ծիրա-նիք , որ 'ի պաղարերութեան ժամանակի գեղատեսիլ հաճութիւն ընծայեն ա-կան : Ի մէջ գաւթին է աղրիւր յորդառաստ և ուռենիք , և այլ աղրիւր արտա-քոյ պարապին և հանդէպ նորա յրազաց , որոյ ջուրն գայ 'ի ձորյն որ բաժանէ զներքին վարագ 'ի վերնոյն : Վերջին շինութիւն սենեկաց միարանիցն և ուխ-տաւորաց և առաջնորդին եղեալ է 'ի ձեռն զազար վարդապետի . թէպէտ և մեծագործութիւն չերեսի 'ի նմա , այլ բարձրահայեաց դրիւքն 'ի վերայ ընդպար-ձակ գաւթին՝ գեղատեսիլ է : Սակայն մեծագործ է 'ի մենաստանիս եկեղեցին մեծ՝ յեօթանց եկեղեցեաց գումարեալ , առ հասարակ քարաշէն , յայն սակս և 'ի Տաճկաց կոչի եւտի-քիլիսէ , հնգեցուն կցեալ ընդ միմեանս մէջ ընդ մէջ դրամբը , և երկուցն փոքր խորցաւ տարակաց յայլոցն , որպէս և 'ի պատկե-րիդ ճշգրիս ցուցանի :



Առաջին յեկեղեցեացդ որ շինեալ է առ Փիլիպսոս կաթողիկոսի յամի ՌԴէ , է բուն եկեղեցին՝ ժամանուն ասացեալ ըստ սովորութեան չայտաստանի , ուր ըլ-ժամերգութիւնն կատարեէն . նուիրեալ է յանուն սրբոյն Գէորգայ , չորիւր քա-ռակուսի սեւամբը ամբարձեալ կամար նորա , և պատկերազարդ որմնելքն : Յա-ջակողմեան դասի է ընդ փայտաշէն կաթողիկէիւ գերեզման Պետրոսի գետա-դարձին և արքային Սենեկերիմայ , արձանագիր ունելով առաջնոյն այսպէս .

Ծին ԴՃԱ: այս է հանգիստ տն պետրոսի կԾղկոսին որ 'ի տրապիզոն զգեան ճրոխ արդելաց առաջի վասիլ ար-



Արքայի վարչութեան թագավոր ճշման

- 1 Առաջ Գնդար
- 2 Գեղարկութեան պահապահին
- 3 պարզութեան պահապահին
- 4 Առաջ Խաչ
- 5 Գնդապահին
- 6 Պարզութեան պահապահին
- 7 Առաջ Եղափակին
- 8 Առաջ Ապիթան



Հայոց պատմութեան համար կազմակերպութեան վայրին

Խալ երկրաբուղին որ է առ ընթեր նորա՝ այսպէս .

այս է հանդիստ սենեքերիմ Ծ-գորին Ծ-վին ԴՃՀԸ .

զերեզման գետագարձին որ կայ և՝ ի վասն սուրբ Նշանին՝ ի Սերաստիա՝ թուի թէ մասնաւորեալ է աստի:

Երկրորդ եկեղեցին է տաճարն ժամատան բարձր և կաթողիկելիւ, գրամիր և որմազ անջրապեսեալ՝ ՚ի ժամատանէն յարելից կուսէ, ըստ սովորովեան գրեթէ ամենայն եկեղեցեաց քաղաքին և վանորեկից երկրիս. և է նույիեալ յանուն սուրբ Աստուածածին:

Երրորդն է սուրբ Նշանի կիսափուլ՝ յաջմենածագրին:

Չորրորդն գետարգել սուրբ Նշան 'ի նոյն կողմն ժամատան , յորս ՚ի նորոգ շինելն յամի թթվի , ՚ի մէջ կամարաց նորա դտաս զետարգել սուրբ նշանն Պետրոսի կաթողիկոսի փայտեայ գլորցաւ ամփոփեալ ՚ի տեղունչն , և ՚ի վերայ նորա արձանագիր . և մեծապէս ուրախացեալ ամենեցուն ընդ անակնկալ գիւտ նորա , և առ ապահով լինելոյ փոխադրեն ՚ի քաղաքն ՚ի սուրբ նշան եկեղեցւոյ առ Հովհաննեայ սուրբ նշանաւն , ուր կայ մինչեւ ցայսօր : Խոկ միւս զետարգել սուրբ նշանն որ կայր երբեմն ՚ի Ցրապիղն՝ ՚ի մասնէ սորա , և թուի առ ժամանակօք գետարձին մասնաւորեալ ժողովրդեան Ցրապիղնի , ուր եղեալ էին պահանջնելին ՚ի ձեռն սրբոյ նշանին առաջի վասի :

Հինգերորդն կոչի սուրբ Ախոն, յահեկէ ժամատանն և դմբէթաւոր:

իսկ վեցերորդն սուրբ Յովհաննես և Եօթներորդն առքի Սովորակամկեցը լրերաց և յայլացն զատուցեալ. գմբէթաւոր է առաջինն և ընդ կամարօքն գաղտնի գարանք, և երփորդն կիսափուլ, յորոյ որմն արևմտեան է մնացորդ. արձանագրի մինչև գայսօր խոշորաւու դարս օրինակ .

ՆԼ. Թվին : ես խուշուշ խաթունս դուստր գագկայ յազ-
գէն բագրատունեաց կենակից սենեքերիմ ար + + + ար տա-
ձարագս լիշեղէք 'ի մաքուր

Յորմեն թուի թէ այս երկրքին եկեղեցիք և թիվը խոշոշայ տիկնոջ դաստակերգը են: Խոկ այսպիս չիք չին արձանագիր:

Արտաքյալ պարսպին 'ի հարաւոյ կուտէ երևին աւերակը մատրանն 'ի հնութիւն և ցայսօր Ուրբարայրը կոչեցելոյ, ուր բնակէին քահանայը երկու առ ժամանակը Հսկիվամեանց նախ քան զլուստորչին դաշլ 'ի կողմանս յայսոսիկ, և յամեանայն ուրբաթու մասուցեալ զպատարագն հաղորդէին զՀսկիվամեանսն, զորոց ասադուքը դինի:

ի մենաստանին նեղբին վարագաց գտանին երեք քանդակը մեպածեւ արձա-
նազրաց . առաջինն աղոցցեալ յարևմտեան որմն եկեղեցւոյն յաջմէ դրանն ՚ի
կարծրագոյն որձաքար վիմի . երկորոշն է վէմքարն Գետարգել տուրբ նշանին .
երրորդն դարձեալ վէմքար սուրբ Ախոնի . երեքին ևս աեսցին ՚ի հանդիպոյ : (Ծիւ-
լ. թ. գ.)

վերին վարագ. — Անցեալ ՚ի ներքին վարագայ առ հարաւակովմամբ ընդ ձորամեջն, և եղեալ ամրարձեալ ՚ի լանջակողմն միւսայ բարձրագայն մասին լերին, որ և է բուն լեառն, ՚ի բարձրաւանդակ վայրի՝ յաջմէ և յահեկէ և յառաջակողմանէն զատ ՚ի վայր զդիրսն ուներով, երեկ աւերակ մենաստանին վերին վարագ կուցեցը, որոյ չորեքին որմունք եկեղեցւոյն եեթ մնացեալ են: Աւընթեր նորա ազրիւր ականակիւր և պատուական յորդ ջրոյ ՚ի լեանէն իջանէ: Ի բարձրութենէ աստի երկիրն բավանդակ երևէ ՚ի հանդիպայ նորա, և յաջմէ ՚ի հեռուստ ինքնին այրարատեանն Մասիս:

Գալիշեա. — Ի վերնոյն վարագայ ուղերորեալ վերագոյն ևս, առաջին յանդիման լինի տեղի ճգնութեանն թողկայ: Եւ ապա ընդ քարաժայուն ահագին և անսմատչելի մեծաւ գյուարութեամբ եղեալ ՚ի գաղաթն լերին, ՚ի խորչս և ՚ի փապարս քարայլերինն երեկին տեղիք փախստեան և բնակութեան սրբոց Հոփիսիմեանց, և առանձինն խորչն այն յորում ամիսովեալ եր Հոփիսիմեայ դուրը նշանն որ էր ՚ի պարանոցի խւրում, պատուեալ յուխտաւորայ: Նշանդ սուրբ յեօթներորդ գարստ յայտնեալ ազօթիւր ճգնաւորին թողկայ՝ թուոցեալ ՚ի գաղաթմանէ լերինդ լուսափայլ պայծառութեամբ եկն եմուս ՚ի տեղի եկեղեցւոյ վերնոյն վարագայ. և ընդ ամենայն լեռունն աստ և անդ երկեցան լուսեղին սիմզ երկուստան, եօթն ՚ի ներքին վարագ, և երեք ՚ի վերինն, և երկու ՚ի սուրբ Գրիգոր և ՚ի Կարմրուոր. և ՚ի տեղիս իջման լուսեղին սեանցն շննեցան եկեղեցեցիւրդ երկուստան: Այլ յայտ է թէ վերին վարագ նախաչէն քան վայրն է, բայց կամ առ կարի բարձրութեանն և կամ առ անհնարին ցըրտութեան վայրացն՝ փոխագրեցան բնակութիւն միանձանցն ՚ի ներքին վարագ: Վայրը ճգնութեանն Հոփիսիմեանց ՚ի գաղաթն լերին՝ Գալիշեա կոչի ՚ի բնակչաց երկրին. և են ամենայն վայրդ ուխտասեղիք՝ ցանկալի ամեննեցուն ոչ միայն բնակչաց, այլ և եկացն ՚ի հեռաւոր աշխարհաց. որոց յոշինչ գրեալ զանհնարին աշխատութիւն վերելիցն չմեկնին տեսութեամբ եեթ մենաստանացն շատացեալ, մինչեւ տեսցեն և դդայիլեա:

Սուրբ Գրիգոր. — Ի վերնոյն վարագայ իջեալ ընդ սաստիկ զատ ՚ի վայրն ՚ի կողմանէ հիւսիսց, և հառեալ ՚ի ձորամեջ մի զջապատեալ ՚ի լերանց որք մասն են նոյն լերինն վարագայ, կառուցեալ կայ ՚ի փոսի անդ ձորամիջոյն փոքրիկ մենաստանն սուրբ Գրիգոր, ՚ի հնումն կոչեցեալ Սալենապատու վանք և Զորավանք ևս, որպէս գրի ՚ի կոնդակի վանացն և մեկնի այսպէս, և որ է սարսւ անապատ»: ուրանօր թէպէտ բազմաթիւ էին միանձանք ըստ պատմելոյ կոնդակին՝ այլ արդ ոչ ևս: Ի շինուածս այժմեան մենաստանին չերեկ մեծաւ գործ ինչ, զի և եկեղեցիքն իսկ երեքին մատրանաչափը են. այլ աւանդի անդինել ամիսովեալ ՚ի կամար եկեղեցւոյն հողաթափ և փողպատ Հոփիսիմեայ, և զի բնակեալ է աստ սուրբ Լուսաւորիչն ճգնութեամբ, որոյ վայր ճգնութեանն է արտաքրյ մենաստանին՝ ՚ի վերոյ լերին՝ ՚ի գտարան և ՚ի զուարճակի վայրի, ուր յետոյ շինեցաւ մատուան և կայ մինչեւ ցայսօր: Ասի թէ ազօթէր սուրբն արտասուզ առ Տէր զի յայտնեացէ զուրբ նշանն Հոփիսիմեայ. և ՚ի աեւլեան աստցան եթէ ոչ այժմ այլ յիւրում յամանակի յայտնեացի. և է ժամանակին

ուստի լուսաբան, և այլ ուր պատճեղ մասին,

N I

M-4

>-->-->--Y-E-Y=--YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 --Y-->--Y-E-Y=EEEY>YY-->YY-->YY-->YY
 EE-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 <<-->YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY

N II

M-4

-->-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 EE-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 <<-->YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY

N III

M-4

-->-->--Y-E-Y=EE-->YY-->YY-->YY-->YY
 YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 EE-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 >YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY
 YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY-->YY

N IV

M-4

-->-->-->YY-->YY-->YY
 YY-->YY-->YY
 -->-->--Y-E-Y=EE-->YY
 <>-->YY-->YY-->YY-->YY

այն առ թողիւս, զորմէ աստցաք՝ 'ի վերն: Առաջ է ջար մենաստանիս, որ և գետօրէն հոսի առ նովաս՝ 'ի ձորոյն. է և առ մատքամի ճգնութեան սրբոյն Գրիշորի ապրիլսկը՝ զոր սուրբն ըլսեցուցեալ է:

կարմրուոր. — Անցեալ ընդ ձորամակիցն սուբր Գրիգորի, և շրջան առեալ կարմրուոր. — Անցեալ ընդ ձորամակիցն սուբր Գրիգորի, և շրջան առեալ ընդ բավանդակութիւն նորին և ելեալ արտաքս ընդ ձորապերաննն, ի լանջա- ընդ բավանդակութիւն նորին և ելեալ արտաքս ընդ ձորապերաննն, ի լանջա- կորմն ներքնայն վարագայ առ Շահանիւ զիւղիւ ի բացահայեաց վայրի հան- կորմն ներքնայն վարագայ առ Շահանիւ զիւղիւ ի բացահայեաց վայրի հան- կեալ քաղաքին շինեալ է մենաստանս յանուն Աստուածածին, պանչելեօք ե- րեկը երբեմն աստանօր, որպէս ասի, կարմրագոյն հանդերձիւ: Փոքր ինչ հեռի ի մենաստանէն է ազրիւր ջրոց՝ պատուականագոյն համարեալ քան զայլ ի ջրոց երպիքն վանայ: Ոչ նշանաւոր ինչ է ի վանա յայս, բայց բենուաքանդակ արձան մի ի գաւթիւ եկեղեկցուոյն: (Թիւ Գ.)

Արդ Վանքաք շինեալ 'ի գուրան տեղըով, յարևմտից կումէ սելթ պահա-
ժաման մօտենորեալ ծովուն՝ ըստ այլ կողմանց երկու և երեք ժաման զդաշտն
շրջապատ տնելով, առ հասարակ պատեալ է յերից կողմանց ցածրագոյն կրկին
պարսպաւ, և առ արտագնունի խրամ անձուկ որ արդ բաղում որեր լցեալ հոգով,
ներքին պարիսպն փլեալ է մեծաւ մասամբ: Երեք դրունք են պարսպի քաղա-
քիդ. Թէ լիրիզ-գաբրուսի յարելու, յարեմուսա՞ խորէլ-գաբրուսի, զի մօտ յայն
կողմն է ծովն, և Օրբա-գաբրուսի 'ի հարաւոյ: Պարիսպի քաղաքին որ պատեալ
են յերից կողմանցդ՝ հասանեն երկուստեք և կցին ընդ քարավերինն մեծի, որ
է նոյն ինքն բերդն Շամիրամայ, ասացեալն Շամիրամակերտ, 'ի հիւսիսոյ կումէ
ամրավակելով գրաղպն: Ի քաղաքին սակաւամիւ մզկիմք և շոկայն և ինե-
վանք չեն նշանաւորք. և եթէ հնաշէն ինչ գտցի 'ի նոսա, խաֆթարեալ և կիսա-
կործան կայ, և յետին գարուց արալք են: Այլ յորմէհնետէ զերծեալ է քաղաքը
'ի հարսաւահպրութենէ բոհաւորաց, սկսեալ են շինել առնո և կրպակս վայե-
լուս:

Ուժ եկեղեցիք են ՚ի վան մեծաւ մասսամբ տաճարաւորը, սյս լիկն է այլ ժամանակ՝ յորում զժամերգութիւնն կատարեն, և այլ ուր պատարագ մատչի,

դրամի և որմնով անջրպետեալ՝ ի ժամասանէն։ Եւ անուանկը եկեղեցեացդ են՝ Ա. Էջմիածին որ արգ սուրբ Նշան առի ։ զի ի տաճարի նորս առանձին խորանաւ պահին յերկաթի գլորոցի սուրբ Նշանն Հովիսիմեայ և Գևորգել սուրբ նշանն, մեծաւ եռանդեամբ պատուեալք յամենայն ժողովրդենէն, որը զօր մենայի յաճախեն անդ, մանաւանդ յաւուր ուրբաթու, յորում սահմանեալ է մենիսավան պատարադ մատուցանել՝ ի պատի սուրբ նշանացն։ Առ եկեղեցեաւ է առաջնորդարանն ։ զի անդ նատի առաջնորդն եւ ոչ ՚ի վարագ, սակայ յաճախ երթեւեկութեանց դասից և վճռոց և որոշեցոց իրաց ազգին՝ որք անդ աւատուն ժողովրդն է Տիրամայր։ Երբորդն սուրբ Պողոս։ Զորբորդ սուրբ Պետրոս, որմակից սրբայն Պողոս։ Հինգերորդ սուրբ Սահակ։ Վեցերորդ սուրբ Ստեփանոս։ Եօթներորդ սուրբ Վարդան։ Ութերորդ Միրանաւոր Աստուածածին։ Ի տաճարի սրբայն Պետրոսի կրկին արձանագիրը են սեպաձև տառից։ մին ագուցեալ կողմնակի առընթելք դրանն, և միւսն ՚ի ճակատ աջակողման աւանդատանն։ (որ է թիւ Ե.)

Ցոհնը Հայոց յառաջադպոյն թէպէտ և բայլում, այլ արդ հազիւ հասանեն մինչև յերկու հազար հանգերձ որ յլպեսատանն կան, զորոց զինի։ Զուրբ քաղաքին և այգեստանացն եթէ ապրերաց և եթէ ջրհորոց կարի անախորժք և ծանր կոչ բնաւ զովացոցիչ ծարաւեաց, չգիտեմ առիմել այնշատի զովեստի յիշաւակեալ ՚ի սպատմութիւնս նախնեաց. գուցէ ոչ անձամբ առեւալ զիորձ արտակերպ, կամ թէ երկարութեամբ ժամանակաց ծովան մօտեւուեալ ՚ի քաղաքն՝ ընդերկաւ խառնեալ ՚ի ջուրս քաղաքին դառնացուցեալ անախորժւս գործեաց։ Իցէ այդ որպէս և է, ես ընդ այն կարի զարմացեալ եմ զի որ ՚ի ջուրցդ ըմպէն առ հասարակ մովագորդք քաղաքին, առայդ են և անձնեսովք և կարմրայսք, ուժեղը և ձայնեղը։ Իսկ քաղցրահամ ջուրք որ միանգամայն ախորժելի են եկին և բնակին, քանիզի և բնակին ինքնին խոսսովանին զանհամութիւն ջուրց քաղաքին իւրեանց, առ հասարակ ՚ի կողմանն լերանց գտանին, ՚ի վարագ և այլ լուր, որ ըստ գետնաշատիութեան բարձր են յոյժ քան զծնիլ, և նմին իրի անխառն ՚ի նմանէ։ Այսպիսէ ևնթ շատոցեալ տեղագրութեամբ քաղաքին, անցցուք ՚ի վերին բերդն կամ ՚ի քարավեանն զոր յառակե Շամիրամակերսոն ասացաք, յորում մասցըրզք դաստոկերացն են Շամիրամայ համապիք։

Այդ քարավեանն անձուկ ըստնութեամբ՝ երկայնանիստ յարեւմտից յարեւելս իւրու ժաման միով պատեալ է գրաղաքն, որպէս ասացաք, ՚ի հիւսիսոց կուսէ, երկու ծայրիւքն կցեալ ընդ պարսպի քաղաքին։ Երեսք լերինդ որ հայի անընդ միջարար ՚ի վերաց քաղաքին և հանգէպ հարաւոյ ուղղաձիր ամբարձեալ ՚ի վերի բրնձ պարփակ անմատոց և առ հասարակ քարավայ։ Յերմացեալ ՚ի տօթով արեգական տօթակիվզ քրաղաքն ողջին յամարայնի, որ զուրկ է ամեննին ՚ի պատմութեան հովութիւն հողմոյ։ Իսկ յետակողմն լերինդ որ հայի ՚ի հիւսիս քարա ժայռիւք և ճաճով իւտան ուրեք անմատչիք մինչև ցեղացին պարփակ քաղաքին, և ուրեք ոչ այնպէս։ Ի միջավայր գագաթան քարավերինդ, ուր ըստը ճաճով անմատչիք մինչև ցեղացին պարփակ քաղաքին, է բուն ներկին բերդն դրամի յարեւմտակողմանէն և շուրջանակի առան-

31



988

Copyrighted material

զարքին, է բուն նելքին ըերդն՝ գրամի յարեւմոակողմանեն և շոքանակի առ

ձին պրատիակեալ։ Անդ շարեալ կան թնդանօթք ՚ի բացի, և ոռոմիք և այլ պատերազմական անօթք և զէնք ՚ի յարկածածուկ ամրափակ տեղիս շխնեալ ՚ի պէտս նոցա։ Ճանապարհ վերելից բերդիդ է առ ՚ի ներքս խրէլէ-գարուսիին, որ և տանի մինչև ցներքին դուռն և ՚ի ներքս՝ միշտ զառ ՚ի վեր ելանելով։ Բնակարանք են ՚ի բերդիդ վասն արքունի զօրաց, այլ քաղաքացւոյ և ոչ մի։ Ամենայն պարիսպք քարալերինս ծայր ՚ի ծայր շինեաքք են յետ ժամանակաց առ Պարսկը կամ առ Տաճկը որպէս յայտնի տեսանի, յորս չերեկ բնառ մեծագործութիւն։ Միայն ՚ի միջավայրին որ բարձրագոյնն է՝ ուր թնդանօթքն կան, որպէս ասացաք, քարինք հիմանն հարուստ մի բարձրութեամբ մեծամեծք և սուսարք ոչ թերեւս յետին ժամանակաց գործ են, սակայն և ոչ խել կարծեմ մացորդք ՚ի Շամիրամանց։ Այլ ՚ի գործոց սորա զարմանապլյ արժանիք են խորենացւոյ աւանդեաքն։ « Կասոցց և պէսպէս տաճարս, սենեեակս օթից, տունս գտնածոց և վիհա երկարս ՚ի յարեգդէմ կողմն անդ քարանձաւին »։ Այս սենեեակք են թուով վեց փորեալ կուսնա, երկու ՚ի նոցանէ յարևմտեան ծայրն և մի յարենելեանն և այլք ՚ի միջավայրին ուր ներքնարերդն է, իւրաքանչիւր ՚ի նոցանէ ունելով և մէջ ընդ մէջ սենեեակս։ Մուտք նոցա և ներքին որմունքն շորջանակի, և առաստաղբն ունանց տափարակ և այլոց կամարաձև, անեղծ կան ցայսօր։ Որ միանդ ամ տեսեալ է զվիմափոր սենեեակս քարալերինն Ամասից զշինեալն ՚ի Միջրդաստայ, զիւրաւ իմանայ զացա մեծագործութիւն։ և խտիր ընդ սոսա և ընդ նոսա, զի նորա իւրաքանչիւր մի մի սենեեակք սահմանեալ և փոքր, այլ սորա մեծատարածք և մէջ ընդ մէջ սենեեակք սուտելուն քան զնոսաւ։ Անազգելի գտեալ ներմութեան արևուն ընդ թանձրութիւն քարաժայուին, դուռն մի ևեթ ունելով դոցա իւրաքանչիւր, կարի զովագին է ՚ի ներքս ամարանի։ Ի պատկերիդ յանդիմանն ցուցանի ձև և ճշգրիտ չափ երկուց ՚ի նոցանէ։ յորոց առաջննն է յարենելից ծայր քարալերինն, արտաքոյ քան զովարիսապ միջնարերդին։ Գաւիթ գործեալ է առաջի դրան նորա մեծի փորեալ ՚ի նոյն ընունէ։ և իջաննն ՚ի գաւիթ անդք միակոտուր բազմաստիճան սահմզգօր։ Խակ երկորութն է յարենմոց կուտէ քարալերինն, յամէն ճանապարհինն որ ՚ի միջնարերդն տանի։ զի և սա արտաքոյ կայ նորա իբրև զառաջինն։ Ի շրջապատ դրան նորա արտաքոյ վերուստ ՚ի վայր և երկուստեք յոզորկեալ սպասաժինն մեպաձեանակարութիւնք են անթիւք, բազում մասսամբ եղծեալք ՚ի բանութենէ տարելրաց։ և զմնացելոցն գտուարինն է ումեք առնուլ զպատկեր, զի չիք զաւիթ առաջի նորա առ աներկեւլ և անվտանգ ՚ի բացէ կացց որում զննէն զիւրին կողմնն, այլ սակաւ աստիճան միակոտուր սահմուռք ՚ի կողմանէ մինչև ցմուսանորա, որոց առաջի անընդմիջաբար անդունդք են մինչև ցատուստ լերին։ Այսոր քարանձաւի մուտք ՚ի հարկէ չէր այլպէս վտանգաւոր զաւաջինն, այլ գաւթիւստիմաննեալ։ սակայն ՚ի տարերաց բոնութենէ զերծեալ անկեալ են մասսանք քարալերին, որով և գտակիթն անհնառացեալ։ և երկեւ ընդ ամենայն երկայնութիւնն լերինն՝ մեծամեծ հասորոց փրթուցեալ զիղեալ զստորով նորա։ Արդ վեցեակ մէջ ընդ մէջ սենեեակք սահմաննեալ երկորոգի քարանձաւին՝ յորմունս իւրաքանչիւր նոցա այլեայլ քառակուսի խորչք են և ծակ ՚ի մէջ նոցա և ՚ի շրջ-

յասպատ ծակուցն փորեալ փոքր մի զերեազը որմոցն քառակուսի : Զքարանձաւ զայս երկրորդ՝ բաղանիս Շամիրամայ կոչեն բնակիչք, համարեալ դժակսն տե-



զիս ծորակաց ջուղոյն, թէպէտ և մարդաչափ և աւելի ևս բարձր են 'ի գետ-նոյն :

Ի ներքոյ դորա է քարանձաւն երրորդ, և ճանապարհ նորա դարձեալ միա-կտուր քարեղին սանդղօք, որ փորեալ է 'ի կողմանէ միւտոյ սանդղոցն ցածագոյն քան զնա և առաւել վտանգաւոր. քանզի յաջմէ նորա չիք բառական միջոց ա-պահով լինելոյ իջանողին անդր :

Խակ միւս երեքին 'ի քարանձաւաց 'ի միջնարերդին են, և նախ չորրորդն, և առաջի նորա գտնիթ ընդարձակ, և ինքն հինգ սենեկօր սահմանեալ, յորոց 'ի մուտմն էր գմբեթաձև աղխառակերտ շինուած մի. բնակչոց համարեալ զայն իրեւ պահարան գանձուց և զի չիշխէ ոք մօտել առ նա, մի 'ի փաշայից քաղաքին սա-կաւ ամօք յառաջ յոյնչ զրեալ զկասկածն՝ և քակեալ զշինուածն՝ գտանէ թաղեալ 'ի գետնի սափորիս միով սոկերոտի :

Հինգերորդն է առընթեր չորրորդին 'ի կողաց նորա, և 'ի նմաս սենեկիք երթն :

Վեցերորդն է ընդ գաւթիւ չորրորդին և մուտ նորա ոչ ամենեցուն համար-ձակելի, զի չուանաւ պարտ է իջանել 'ի վերուստ առաջի գրան, և չիք այլ ճա-նապարհ, զի և ասափ զերծեալ է մասանց լերինն և անկեալ :

Բայց 'ի վեցից քարանձաւացը՝ է և ջրհոր մեծ 'ի 'ի հարաւոյ կողմն քարալե-րինն, նոյնապէս մնացորդ 'ի նախնեաց :

Սեպաձև արձանագրութիւնք 'ի քարալերինն բաց 'ի շրջապատէ գրան երկ-րորդի քարանձաւին զորմէ ասացաք 'ի վերոյ, են և այլ 'ի չինգ տե-ղիս նորս : Առաջինն 'ի հարաւակողմն կամ յերեւ նորա, ակներեւ երեւեալ 'ի քաղաքէն, գրեթէ 'ի միջավայր անդ լերինն, ուր ոչ հասանէ ձեռն մարդոց առ-մեծի բարձրութեանն, չոնենը և կուտան սոփց ոչ 'ի վերուստ և ոչ 'ի կողմա-նէ, ընդ որ հիանայ ամենայն մարդ. զի կամ մերենայիսք մօտեալ 'ի տեղունչն վորագրեալ են, և կամ կուտանք էին վերելից և ժամանակաւ. զերծեալ՝ ան-մասայց գործեցին զվայրին : Արդ յայնմ տեղունչն որ է իրեւ սիրու քարալերինն, ողորկեալ կուտանաւ. քառակուսի փորագրեալ է արձանագիրդ (Զ) սեղաձև խոչո-րատառ, անեղծ կացեալ մինչև ցայսօր, այլ գիտակաւ. ևեթ որոշելիս : Երկորորդն և երրորդն 'ի հարաւակողմն լերինն սուրնթեր իրերաց՝ ցածագոյն և մերճ գետ-նոյ. առ անպիտանութեան մասանց քարին կիսեղծ 'ի բնութենէ, և կէս մի խոր-տակեալ 'ի ձեռաց մարդոց : Չորրորդն է մերճ Դէվրիզ-գարաւասիին նոյնապէս ցած-երկայնաձիւք քառակուսեաւ, որ և սա եղծեալ է : Խակ հինգերորդն է 'ի մէջ միոյ 'ի կուտանայն, որ են առ 'ի կողաց նոյն հիւսիսակողման լերինն. և են կու-տունքրդ, քանզի այսպէս կոչեն զնոսա բնակիչք, զցոց որմակից իրերաց, փոք-րաստարածք կամարաձեք, իրեւ զեկեղեցւոյ խորանս կուտանահարք 'ի քարալե-րին : Եւ թուի հաւաստեաւ. կոչեցեալ այսպէս, զի և զառաջեաւ նոյս վերուստ 'ի վայր 'ի քարալերինն երեւ մինչև ցայսօր ագռագայ կուտանահարեալ, զոր ըն-թացս արեան զենմանցն ասեն լինել : Արդ յաջակողմեան կուտանադ 'ի վերոյ կողմնակի սրմայն վերուստ 'ի վայր անեղծ կայ մինչև ցայսօր արձանագիրն մեծ :

Շառմիրամակերախն տեղագրութեամբ շատացեալ, մի անյիշատակ մնացակն

՚ի մեծի բարձրութեան անդ բարեխառն օդոց վիշտունք : Յամբարայնի մինչդեռ տօթակիզեալ բորբոքի քաղաքն ամենայն , և չնչասպառ տաղնապի ամենայն ոք , անդ ՚ի բարձր միայն ոգի առեւալ զուարթանայ . եթէ օրէն էր ամենայն ու մեք համարձակ ելանել անդը հանապազ . թուի իմն չպակասել անդէն վիշտան քաղցրասիւդ օդոց վասն բարձրութեանն , և զի անարգել է յամենայն կուսէ . թուզ զտեսիլ նորա պանչելի , աստի ծովոն ծածանումն և անտի այդեստանեայ սաղարթաղուարձ վաղվիւն , և ՚ի թիկանց և յառաջ գաշտավայրք , զիւզորէք , բարձունք և վանորայք . համառօս ասել տեղի ամենայն վշտաց վարատիչ : Եւ անշուշտ վասն այսր տեղլոյ են առ ՚ի խորենացւոյ աւանդեալ գովեստք զախորժակացն Շամբրամայ աստին անցուցանելոյ զամանայինն ժամանակ :

Լզեաւուան . — Այդեստանք վանայ անուանիք են ընդ ամենայն չայտատան սուկս մեծի ընդարձակութեան և բերրի ստղաբերութեան իւրեանց : Եւ են գոքա յարևելակողմն քաղաքին գատուցեալ ՚ի պարապէն . մերձաւորն իչս ժաման հեռի ՚ի նմանէ , և առաւել բացականն երկու ժաման : Այլ և այլ գիւղորէք են սորա , կամ ըստ ևս ամարանոցք , կոչեցեալ Հայկավանք , Արարք , Նորաշէն , Ցանկուսներ , և այլք , եկեղեցիս անելով խրապանցիւր , և առնս մեծամեծս և վայելուս : Բաղումք ՚ի քաղաքացւոց յայդեստանն ընակեն և զօր ամենայն իշաննեն ՚ի շուկայ քաղաքին , ուր նոցա կրպակըն են , թէպէտ և երկշամաւ հեռի իցէ . և բաղումք իշով երթեւեկեն ՚ի քաղաքն : Արդ իւրաքանչիւր յայդեստանացդ գատուցեալ են յիրերաց ցածրագյն որմովք յանթործ աղիւսայ կամ ՚ի սինդ շաղախայ որ յաճախէ ՚ի վան և երկարատեսէ , որպէս ասեն : Բազմասեւ սուկք են պատուքք այդեստանեաց , խաղող և խնձոր և սանձ և սալոր և կեռաս և սերկեիլ և ընկոյզ , և առաւել քան զամենայն ծիրան . այլ թուզ և լիմն և նարինջ ոչ բնաւ : Առաստթիւն է և ջուրց յայդեստանս ընդերկրեսայ ջրանցիւք , զոր քահրէզ կոչեն :

Ի կողմն այդեստանացդ է Ոկորի կոչեցեալ գիւղ . և քառորդաւ հեռի ՚ի նմանէ գարձեալ յիշատակ ՚ի հնութեանցն Շամբրամայ . զերեսօք ասպառաժ լերին կռանսաւ իրեւ խորան գործեալ , ՚ի միջավայրին մեծասարած երկայն քառակուտի գոնաձեւ , և ՚ի վերաց սեպածեւ արձանադրութիւն վերուստ ՚ի վայր , թէպէտ մեծաւ մասամբ եղծեալ . զառաջնեաւ նորա նստարանք և աստիճան սանդոց առ հասարակ միակտուր ՚ի քարաժայակէն :

Ի քաղաքին վանայ թէպէտ բաղումք իրաց առաստութիւն է , այլ ոչ նոյնպէս և փայտի , որ և կարի թանկապնի վաճառի . քանդի և մօտ առ նմա չգտանի անտառ , այլ ՚ի ընանակողմանս հարաւային ծովեղերին . նմին իրի բաղումք ՚ի քաղաքին աթար վառեն փոխանակ փայտի :

Աշան . — Կիսաժաման հեռի ՚ի քաղաքէն առ ծովեղերին է գիւղս այս , և է նաւահանդիսաւ քաղաքին , զի անդ մերձենան ամենայն նաոք բեռանց : Այդիկ բաղումք են և աստ մեծամեծք ըստ օրինակի այդեստանաց քաղաքին զորց ասացաք ՚ի վերոյ :

Լէզք . — Վերոյ քան զԱւանս է գիւղս փոքրիկ . զորմէ ասի յոմանց տեղի լինել անկմանն Արայի ՚ի Շամբրամայ , որոց զոմն ՚ի հոմանեացն զԱրայ կարծեցու :

ցեալ՝ լուր եհան եթէ դիք լիզեալ ողջացուցեալ են . և յայնմանէ , ասեն , մնաց անուն գեղջն լէզր :

Անդը քան զԱւան ժամնաւ միով առ ծովեղին տեղիք են բորակի . զի ածուս դործեալ և ՚ի ջուրց ծովան թողեալ ՚ի նոսաւ և ցամազեալ , լինի բորակ առաստ :

Մարմետ . — Գիւղ երկու ժաման հեռու ՚ի վանայ առ ծովեղերն . յորում թէ պէտ և նշանաւոր ինչ չպատճի , այլ անուանի է սակաւ առաստ որսորդութեան տառեխ ձկանն . զի առ նովաւ անցանէ դետն համանուն , որ ընդ ժամանակս ժամանակս աճեալ ծովանայ անդանօր :

Ի Մարմետայ մինչեւ ցկուոց կղզի սակաւ են գիւղորէք ՚ի ծովեղին . այլ վերոյ քան զնա բազումք ՚ի լանջակողմն և ՚ի ստորսաս բարձանց ՚ի գուր վայրի , գիրս քաղցրահայեաց ունելով իւրաքանչիւր . յորոց մի է և Ալուր գիւղ , յորում և վանկը Աստուածածինի անշոք , արտորայս մեծամեծս ունելով և պարտէզս պտղաստու ծառոց : Ի գագամին վերինն որ ՚ի թիվանց նորա կանգուն կան ցայսօր որմունք եկեղեցւոյ , զորմէ ասեն մենաստան լինել ՚ի հնումն : Աւանդեն վասն անուանակոչութեան գեղջս , եթէ թագէի առաքելց եկեալ աստ և հաճեցեալ ընդ զուարճապի գիրս աեղեայն՝ ասացեալ իցէ , Ա.Ա. ուր երթամք . և յայնմանէ մնայ անուն գեղջն Ալուր , և ՚ի ասմին կոչչի Ալուր . որ և հանդերձ շնչակայ գիւղորէիսք անկանի հանդէպ կղզւոյն կտուցայ :

Մեկնեալ ՚ի գիւղորէից այտի և ընդ ծովեղին ուղեղորեալ ժամն երիս յարելս հիւսիսոյ , քանդի ՚ի կտուցայ սկսեալ յայն կողմն երկայնեալ ձգի ահազին խորշ ծովան , առաջին հանդիպի գիւղն իջմիւածին , յանուանէ մենաստանն որ ՚ի վերոյ նորա է՝ այսպէս կոչեցեալ , որ արդ անրնալ է : Եւ է կըմիածին հանդերձ ամենայն արտորէիսքն ուրվական կմայ կղզւոյն իբրև ագարակ նորա :

Երեկ քառորդաւ . հեռու յէմիածնէ կայ գիւղն երերին , և ՚ի վերոյ նորա անընակ փոքրիկ մենաստանն Ս . Ասմակ կոչեցեալ :

ԱՄԲԻԿ . — Երեւելի էր և անուանի առ նախնեաք սակս խորոյ ամրոցին , և սեփական Արծրունեաց : Ա.Ա. ՚ի նախնի շնուռածոցն և ամրութեանց գագիկայ և որ նախ քան զնա՝ չէ ինչ մնացեալ արդ . բայց միայն լոկ ապառաժն ահազին և դըժուարամասոց և առ նովաւ գիւղն ՚ի ձորամիջն և ՚ի խորցս բարձանց : Ալիսցն էր ՚ի գագամին ապառաժիդ , որ սեղացեալ ամբարձեալ է ուղղածիդ ՚ի վեր , և չիք նորա պարիսպ , և է փոքրաստարած : Խակ նախնի շնուռածք թուու եթէ յամբոցէն ՚ի ծովեղին կոյս էին : այլ արդ ծովուն առեւալ զամենայն հասանէ մինչև ցոսորոտ քարամայսիդ , ճանապարհ անձուու ունելով նորա իբրև կապան առ ծովեղերին ՚ի բարձաւ : Ի գեղջէն Ամիոյ մինչեւ ցփական կամ ցծովեղերեայ տունն կմայ՝ տեւէ ժամն երկուս :

Առ ձանիկ գիւղիւ՝ կիսաժամն հեռու ՚ի նախն է հանդ ջրապի :

Տիրամայր . — Հեռու է ՚ի տանէն կմայ իբրու երեք ժամնաւ . և է ուլստանեղի անուանի յոյժ , մինչեւ ՚ի հեռաւոր աշխարհայ յաճախն բաղմութեան : Յառաւ չառոյն մենաստան էր , այլ եկեղեցին և մեջ մնացեալ է տաճարաւան , յորում և գերեզման , ամիսովեալ ունելով յինքեան զախակ կամ զգիմասպատ Տիրամօրն իբրեալ ձեռամք թագէի առաքելոյ : Գիրք նորա հանդերձ առընթեր գիւղիւն :

բարձրահայեաց և զբարճալի : Զընծայս ուխտաւորացն անխիզճ վարեն 'ի պէտու իւրեանց զիւղականքն , այսպէս սահմանեալ 'ի միջի իւրեանց , օրինօք արդեօք թէ բոնութեամբ և յորոց ժամանակաց հետէ՝ չոնիմ ասել : Ամենայն խեղանդամք և կոյլք և որ անբժշկելի վիրօք են ցեղալ՝ գան 'ի զիւղս յայս գտանել բժշկութիւն , և կեան յողորմութենէ ուխտաւորաց : Զվիրալիցսն զայնպիսիս սովոր են կոչել Տիրամի կամ Տիրամօր հարաձ կամ առաջ : Եռուիրակը ուխտատեղոյս համարին նորին խեղանդամքն , որը ընկերակցութեամբ առն քաջողի հրամանաւ զիւղականացն ելանեն յայլ և այլ գաւառու 'ի հաւաքել զողորմութիւն յանուն ուխտին . և գարձեալ 'ի գիւղն յինքեանս բաժանեն զայն գիւղականքն : Եռուիրակքդ 'ի շրջադաշելն եթէ առ ումեք տեսայն յեղանց կամ 'ի կովուց խայտախարիւս , որպէս ինչ սահմանեալ են յինքեանս , ազդ առնեն տեառն իւրում թէ այդ անասան Տիրամօր է սեփական , զի նշան նորա յայտնի երեկ 'ի գա . և տէրն երկուցեալ 'ի խղճէ մոտաց և կամ յանիծից նոցա՝ տայ ցնոսա անհակառակ . զի և ամենայն ուրեք ուր և սովոր են շրջադաշիլ նորա՝ ծանօթեն բնակչաց իրքս այս :

Բերանոս ԴԱՏ . — Ի Տիրամօր գեղջէ ժաման . և կիսով հեռաւորութեամբ լինի մոտանել 'ի գաշտն բերկրոյ , Արերանի գաւառ ասացեալն 'ի նախնեաց . և ծովեղըն նորա է վերջին սահման երկայնաձիգ խորշի ծովուն վանայ : Բերկրոյ գաշտ կոչի յանուանէ բերկրի գեղջն , որ 'ի հնումն էր մի 'ի քայլաքացն Արծրունեաց , և արդ մի յանշուք զիւղորեիցն է ինքն , և հանդէպ նորա բերդն 'ի բարձր բրի կործանեալ և խսպառ ամսայի :

Ի բերկրոյ գաշտիդ մի 'ի հնդից գիւղորեիցն որ առ հասարակ 'ի ստորոտ շրջապատ լերանցն կան , երեւելի է բազմամարդութեամբ գործու կոչեցեալ , և հանդէպ նորա քառորդաւ հեռի 'ի նմանէ 'ի բարձր բլրակի տմայի բերդն կործանեալ , ոչ աննշան ձեռին դաստոկիերտ , որպէս 'ի ստուար քարանցն յայտնի երեկ : Բերկրոյ գաշտու արդասաւոր է և առ հասարակ մշակեալ :

Տէր Յուսկան որդի . — Առ Բերկրոյ յայնկոյս գետոյն , որ և կոչի Պանտումանի զետ , որ 'ի ձորամիջոյն եկեալ հոսի 'ի ծովն , 'ի բարձր քարամերին որ յաջմէ գաշտին է յահազնատեսիլ փապարս քարաժայուին մեծի շինեալ է մենաստանս յանուն սրբոյն Ստեփաննոսու որդւոյ տեառոն Յուսկան , որ էր յԱլստամետոյ , որպէս պատմեն Յայտաւորք : Բարձրահայեաց գիրք մենաստանին 'ի վերայ գաշտին Բերկրոյ գեղատեսիլ է յոյժ . որ եթէ և յընդարձակ վայրի էր բարձրութեամբն և 'ի գուրան տեղուո՞ և վերելք նորա գիւղին , քան զբազումն 'ի վանորեից ցանկալի էր , եթէ և քարաժայուք նորա 'ի բարձանց ցցեալ ուղիդ 'ի վերայ մենաստանին ոչ սահաբեկէին զոք . թէպէտ ըստ վկայելց միաբանից՝ աւանդութեամբ հասեալ է առ նոսա , 'ի շինութենէ և այսր ոչ մի վտանգ եղեալ կամ զերծեալ մասանց քարաժայուին : Յեկեղեցւո՞ է վերեղման նորին սրբոյն Ստեփաննոսի պատուեալ մեծապէս յուխտաւորաց : Ի վերայ նոյն լերին որ առ հասարակ գաշտավայր է , գոյ և այլ վանք Արգելան Աստուածածին կոչեցեալ , որ արդ կործանեալ է , եկեղեցին ևեթ կայ ամայի : Նախ աստ բնակէր սուրբն յորժամ շէն էր մենաստանն . և 'ի քահանայանալն աստ մատոյց զառաջին պա-

տարապն, որ և վերջին համարի. զի և ցայսօր բնակիչք կողմանցն յերդմոնս խրեանց վարեն՝ Տէր Եռուկան որդուն մէկ Պատարագ վկայ: Քանզի տեսիլ ահեղ երեւալ նորա ՚ի պատարագին, որպէս գրեալ կայ ՚ի վարս նորա, ոչ ևս իշխեաց մերձենալ ՚ի խորհուրդն ահաւոր, այլ ահիւ և գողութեամբ կրօնաւուրեալ ՚ի վանսն եկաց մինչև ցմահ իւր:

Ի վանաց այսի ինեալ և ընյան առեալ ընդ հիւսիսակողմն ծովուն նշանաւոր ինչ չերմի ուրեք մինչև ցգիւլն Հայուար-պէկ, ընդ որ անցեալ փոքր մի և մերձեցեալ ՚ի դաշտն Արճիշյ, ՚ի վերայ ճանապարհին յերկուս տեղիս առընթեր միմեանց ՚ի վերայ քարալերին փորագրեալ կան դարձեալ սեպաձե արձանաւութիւնք. այլ աստի յառաջ ոչ ևս ուրեք տեսանին:

Արձէն. — Աւանացեալն երբեմն՝ արդ սակաւաթիւ գիւղորէիսք սահմանի ՚ի մեծի գաշտավայրին, որ Քաջը երտունեաց գաւառն էր, մշակեալ և բերրի մինչև ցայսօր: Ենրդ նորա առ ծովեցերբն՝ արդ ՚ի մէջ ծովուն կղղիացեալ նստի. զի ջուրն առեալ և ողողեալ զնա ընթանայ ՚ի դաշտն կոյս հարուստ տարածութեամբ, վասն որոյ և բնակիչք բերդին փախուցեալ ցրուեցան ՚ի գիւղորէս դաշտին:

Մէծովիայ վանք. — Ի հիւսիսակողմն դաշտին Արճիշյ՝ ուր սահման հատանեն նմա բարձունքն, ՚ի ծորամէջն լերանց յանձուկ տեղով կառուցեալ է մենաստան Աստուածածնի: Մէծովի կոչեցաւ զի վերոյ մենաստանին ոփ մեծ՝ որ է փոս՝ ՚ի նախնեաց պարապապատ շնիեալ է վասն ջուրց հաւաքրման: Շինուած մենաստանին ըստ օրինակի այլոց՝ անշուք միթին և խրմին, եկեղեցեաւն և եթերես անուանի գտաւ ՚ի նախնեաց և այսր, ժամատամբ և տաճարաւ բոլանդակեալ և գմբեթաշէն: Ի կամարս եկեղեցւոյն են գաղտնի դարանք. ՚ի նոսաթերես ամբարեալ կային գրչագիրքն՝ զօրոց գրեալ կայ ՚ի կոնդակի վանացն և ցայսօր խակ գովութեամբ հուչակի ՚ի ռամկէն: Քանզի լէնկիթիմուրայ, ասեն, բազում մենաստան կործանեալ և կողովատեալ ՚ի բրիւ մերձեցաւ ՚ի սա՝ կոչեաց առ ինքն զվանահայր ուլստին զսյրն նզնազգեաց և առաքինի, թերես զի գանձս առեալ ՚ի նմանէ մեկնեացի ՚ի տեղովչէն: Իրեւ եկն առ նա վանահայրն միայնակ, տեսիլ այնպէս երեւեցաւ բռնաւորին եթէ բիւրաւորը ՚ի զօրաց շուրջ պատեալ են զնովաւ, եհարոց ցնա թէ առ իմէ իցեն զօրքդ ընդ քեզ, ոչ ապաքէն միայնակ զալ հրամայեցի քեզ: Խակ առաքինի այրն քանզի չտեսանէր զօր ընդիւր, շիմթեալ յայսկոյս յայնկոյս հայէր թէ զորոց արդեք զօրաց ասիցէ: Խմացեալ բռնաւորին եթէ ձեռն Ցեառն է ընդ նմա, խաղաղութեամբ արձակեաց զնա՝ անվնաս թողեալ զվանան. և զի որդի նորա հիւանդութեամբ մերձեալ ՚ի դրունս մահու՝ բժշկեցաւ յազօթից նորա, հրացայեալ մեծապէս՝ ՚ի յիշատակ պահնեւեցն պարզեէ մենաստանին զգըչեայ մատեանսն զորս կողովատեալ էր յայլոց վանաց՝ բեռինս 65, յորոց արդ երկու հատորք մնացեալ են, ճառընտիր մի և Սարգիս: Քանզի յետ բազում ժամանակաց ՚ի զօրանալ բրդաց՝ ամս բազում ամայի մեացեալ մենաստանին կողովատեցաւ յամենայն զարդուց և յամենայն ցանկալեաց: Ի զերեղբանաստան՝ որ է հանդէպ վանաց ՚ի կողաց լերին, երեխն մինչև ցայսօր արձանագրեալ գերեզմանք թովմայի Մէծովիեցւոյ, Պօղոսի

եպիսկոպոսի եղրօր նորա , Միմիթարաց Աստունցւոյ և Ստեփաննոսի նահատակին : Կրկին մատրոնք են արտապրոյ խորանին յարեւելից կուսէ սրմակիցը նմին . մին յանուն սրբոյն Յակոբաց Եղրօր Տեառն , և 'ի միւսումն է գերեզման Աստուածաբատոր վարդապետի տան նանագործի՝ որ Մեռելայարոյց կոյի :

Ի հարաւոյ կուսէ Մեծութիւ ձգին լերինք անջրպետք՝ դաշտին Արճից , ընդոր հարկ է անցանել ուղեորին որ երժայ 'ի Մեծութիւ : Ի ստորոտ նոցին կայ Յարուշիւն գիւղ , որց համեմատ ՚ի բրի մատուռն , և 'ի նմա գերեզման Շովիշաննու Ռսպնակերի , այսու արձանագրաւ .

այս է յարկ տապանի յովհաննէս վարդապետի + 'ի Ծու . ԶՀԶ :

իսկ յեկեղեցւով Յարութիւն գեղջ կայ մնայ արձանագիրս այս .

'ի Ժամանակս տէրութե՛ ուլառւն զանին ես ծառայ ծառայիցն այ տէր աբրահամ տեսուչ դաւառիս քաջըերունու + տվաւ ինձ տեղիս այս անէ սորին սահմագին կոչեցել + և շինեցի զեկեղեցիքս նախ զնը ածածինս : իսկ 'ի թագաւորութե՛ս արդուն զանին 'ի հայրապետութե՛ն ան ստփսի զնը յարութիւ 'ի կորդոյ շինեցի : եւ զամենայն շինուածս նորոգեցի : արդ աղաչեմ զամենիսեն յիշեսջիք 'ի քն զպարոն սահմագին նախին իւր եւ հարազատաւք եւ զխոգեւոր հայրն իմ զմէլէք ստեփանոս եւ զքեւայրն իմ զիսաչիկն : քերին իմով : եւ զաւակաց իւրեանց + զի բազում նպաստ եղեն տեղոյս շինութե՛ : եւ զծնողսն իմ : եւ զեղբարս իմ եւ զազգատոհմնն իմ յիշեսջիք 'ի ար : եւս եւ զաւանդատուքս եկեղեցեացս : զպարոն սահմագինն : տանուտէրաւքն ասպիսնկայ զի սեփական աւանդմն որ կարգեալ էր յառաջնոցն նախ քան զաւերն 'ի խորազմէն : դարձեալ հաստատեցին տեղոյս : 'ի մարգէն : ծ : բարդի տեղ : եւ : բ : արտ մին : ժե : մոթոյ տեղի եւ միուսն ժ : եւ 'ի սեւակին : ի : բարդ խոսեղի եւ զզուրն վրհաւնից յամէն բ շաբաթ զտիւ եւ զգիշեր եւ ետ պարոն սահմագին զգեղն մածոփի իւր մզրայիւքն եւ խարհանիւք եւ քրդագեղերովն ետ մէլիք ստփս տանուտէրաւքն աղոյի խոտէն : 'ի բարդի տեղ : եւ ըլարերի տանուտէրբն : ի : բարդի

տեղ ետ խաչիկն զայդին 'ի գողիսն : Այս տակ ետ աւտարշախն եւ մեթարն զիւրեանց այդին 'ի գողիսն : Եւ տակ ետ պարոն ժուանդն արտ մին 'ի քաղաքն : Եւ մոթոյ տեղ գնեցի արտ մին ես ոչ հեռի յայն արտէն : Ֆա : մոթո տեղ եւ տվի եկեղեցեացս և տվին 'ի քաղաքն աներ եւ : Եւ կուղակ եւ սուքա են աւանդ եկեղեցեացս աւանդատուքն յիշեալ եւ աւրհնեալ լիցին 'ի առեւ : Եւ պակասեցուցանողքն պակասին : 'ի թուոյ արդարոցն ամին : Եղիցի եւ շինեցաւ որ յարութիւն 'ի թուիս : Զլս : 'ի փառս քիւ :

Ի մեծի դաշտի անդ Արծիշոյ է և Ականց գիւղ, յորում է եկեղեցի սրբոյն Դէորդայ պատուեալ յուխտաւորաց :

